5006

…ԱԳԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 2

ՍԷԼՄԱ ԼԱԿԷՐԼՕՖ

ԵՐՈՒՍԱՂԷՄ —

ՏԱԼԷՔԱՐԼԻԻ ՄԷՋ

Թարգմ. Ֆրանս.

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀՐԱՏ. „ՀԱՅՐԵՆԻՔ"-Ի ԹԻՒ 24
1914

839.71
L-15

23 SEP 2009

ԵՐՈՒՍԱՂԷՄ — ՏԱԼԷՔԱՐՂԻՒ ՄԷՋ

839.71
L-15
03 AUG 2005

ՍԷԼՄԱ ԼԱԳԷՐԼՕՖ

ԵՐՈՒՍԱՂԷՄ —
ՏԱԼԵՔԱՐԼԻԻ ՄԷՋ

Թարգմ. Ֆրանս.

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀՐԱՏ. ,,ՀԱՅՐԵՆԻՔ‘‘-Ի ԹԻՒ 24
1914

03 AUG 2005
3006

Hairenik Press 7 Bennet St · Boston, Mass ·

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ · АрмССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(928·61)
29740-61
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ · АрмССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԻԿԻՆ ՍԷԼՄԱ ԼԱԿԷՐԼՕՖ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՏԻԿԻՆ ՍԷԼՄԱ ԼԱԿԷՐԼՕՖԻ՝

ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐԱԳԻՏՈՒՀԻ

Ամենախոր գմայլանքով է որ, օգտուելով ֆրանսերէն թարգմանութենէն, հայերէնի վերածեցի ձեր «Երուսաղէմ»-ը։

Փափաքեցայ իմ հայրենի երկրիս՝ Հայաստանի զաւակներն ևս հաղորդակից ընել այն խոր յուզման՝ զոր կը ներշնչէ ձեր գիրքը, և այն անսահման ու սակայն այնքան մարդկային Բարութեան՝ որով թաթաւուած են անոր էջերը ու անոր մէջ ապրող բոլոր տալէքարլեան հոգիները։

Այդ մարդկային Բարութիւնն է որ իր շըրջապատին մէջ կը փնտռէ իմ ցեղս, մէկը աստուածաշնչական այն հին ժողովուրդներէն՝ որուն հայրենիքն եղաւ Արարատեան Աշխարհը, Տիգրիսի և Եփրատի ափունքներով, և որ այսօր տանջաչար ու հալածական՝ իր պատմական նոյն ծննդավայրին մէջ, շրջապատուած է ասիական բարբարիկ ու խաւար ուժերէ, նշաւակ՝ ամէն վայրկեան, չարութեան և եղեռնի։

Դուք կը հաւատաք Բարութեան զգացումին, որպէս միակ գեղեցկագոյն ուժը մարդկային հոգիին մէջ, որ կ'առաջնորդէ երջանկութեան: Իմ ժողովուրդս ալ կը հաւատայ անոր. և այդ հաւատքը այնքան անսասան է իր մէջ՝ որ հակառակ իր պատմական դառն ճակատագրին և հակառակ դեռ ցայսօր զինքը հարուածող ջարդերուն ու սարսափներուն, միշտ կառչած կը մնայ Բարութեան՝ իր արիւնով ոռոգուած հայրենի դաշտերուն, և նոյնիսկ այն օտար երկիրներուն մէջ՝ ուր իր զաւակները հազարներով տարագրուիլ հարկադրուած են ասիական տապարն ու եաթաղանը:

Այդ տարագիր հայութեան մէկ հատուածն է Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայ գաղութը, որ լոյս կ'ընծայէ ձեր «Երուսաղէմ»ի հայերէն թարգմանութիւնը, նախապէս հրատարակելով իբրև թերթօն Պոսթոնի «Հայրենիք» լրագրին մէջ, ապա միևնոյն ժամանակ կազմելով զայն իբրև գիրք:

Կրնա՞մ համարձակիլ արդեօք կոչում ընելու ձեր վեհանձնութեան և ապաւինելու այն Բարութեան՝ զոր կ'ուսուցանէք սրտերուն, խնդրելով մէկ քանի բառ իբրև նախաբան թարգմանութեանս, ուղղուած ձեզ կարդացող Հայերուն, որոնք, այս առիթով, կրկնապէս շնորհապարտ պիտի մնան ձեզի:

Ընդունեցէք, մեծանուն գրագիտուհի, խորին սքանչացմանս հաւաստիները և սրտագին մեծարանքներս:

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

1913 դեկտ. 1/14
Կ. Պոլիս

ՏԻԿ. Ս. ԼԱԿԵՐԼՕՖԻ ՆԱՄԱԿԸ

—o—

Բոլոր այն ժողովուրդներուն մէջ՝ ուր Քրիստոսի ոգին թափանցած է—ըլլայ Եփրատի ափունքներուն թէ Սկանտինաւիոյ անտառներուն մէջ—կ'ապրի համերաշխութեամբ և արդարութեամբ լի թագաւորութեան մը երազը, իբր գերագոյն նպատակը մեր երկրային տենչանքներուն:

Ասոր համար, կը կարծեմ թէ Հայաստանի ժողովուրդը պիտի հասկնայ շուէտացի այն խեղճ գեղացիները որ ձգեցին հեռացան իրենց հայրենիքէն, փնտռելու համար Աստուծոյ նուիրական քաղաքին՝ Երուսաղէմի մէջ խաղաղութեան թագաւորութիւն մը:

Կը սիրեմ հաւատալ որ Հայ ժողովուրդը ուրախ պիտի ըլլայ տեսնելով թէ Արևմուտքի մէջ կ'ապրի տակաւին կարօտը՝ իրականացնելու Քրիստոսի վարդապետութիւնները, կարօտ մը՝ որ գոհացում կը գտնէ միայն այն ատեն—ի՛նչ հոգ թէ շատ յաճախ վրիպի անիկա իր նպատակէն—երբ երկրիս վրայէն վերջ գտնեն հարստահարութիւնը, բռնութիւնն ու չարիքը, և միայն սէրը թագաւորէ հոն:

ՍԵԼՄԱ ԼԱԿԵՐԼՕՖ

14 յունուար, 1914
ՍԹՈՔՀՕԼՄ

Ի Ն Կ Մ Ա Ր Ս Օ Ն Ն Ե Ր Ը

I

Երիտասարդ մը իր դաշտը կը հերկէր ամառուան առտու մը։ Արեւը կը փայլէր հանդարտիկ. խոտը թրջուած էր ցօղով. կարելի չէր բերնով բացատրել օդին թարմութիւնը, և ձիերը որ կարծես գինովցած էին այդ թարմութենէն՝ խաղի մը պէս կը քաշէին արօրը. մարդը գրեթէ վազել ստիպուած էր՝ հասնելու համար անոնց ետեւէն։ Մութ սեւ գոյնով հողը՝ երեսի վրա դառնալով խոփին տակ՝ կը փայլէր պարարտ խոնաւութեամբ մը և հերկողը կ'ուրախանար մտածելով թէ շուտով ցորեն պիտի ցանէ անոր մէջ։ Ինքն իրեն կը մտածէր. «ինչէ՞ն է որ ատեն ատեն ծանր մտահոգութեանց մէջ կիյնամ և ապրիլը ինծի այնքան դժուար կը թուի։ Քիչ մը արև ու լաւ օդ որ եղաւ՝ մարդ երջանիկ կըլլայ ինչպէս Աստծոյ արդար զաւակը երկինքին մէջ»։

Երկրագործը կ'աշխատէր երկար և բաւական լայն հովիտի մը մէջ, որ աղիւսագծուած

Փր դեղին ու կանաչ-դեղին ցորեններով, հնձուած առուոյտներով, ծաղկած գետնախնձորներով և փոքր քառակուսիներու բաժնուած ու կապոյտ ծաղիկներով ծածկուած վուշի արտերով՝ որոնց վրա կը շարժտկէին ճերմակ թիթեռնիկներու տարմեր։ Հովիտին գոգին մէջ վեր կը բարձրանար գեղացիի ագարակ մը՝ իր յարակից գործ մասերովը և կարմրահողէ շինուած իր բնակարանովը։ Երկու բարակ տանձենիներ վեր կը տնկուէին և իրենց ճիւղերը կը հասցնէին մինչև պատին վերևը։ Իսկ դուրսի դռան առջև կ'աճէին երկու մատաղածիլ և բարակուկ ցարասիները։ Կանաչ բակին մէջ կային իրարու վրայ շարուած փայտի բարձր կոյտեր և ախոռներուն ետևի կողմն ալ՝ չոր խոտի դէզեր։ Հարթ դաշտին վրայ երևցող այս ագարակը կուտար այն գեղեցիկ տեսարանը՝ ինչ որ կուտայ ընդարձակ ծովին վրայ երևցող մեծ նաւ մը իր կայմերով ու առագաստներով։

«Գիտե՛ս թէ ի՛նչ ագարակի տէր ես դուն, մտածեց հերկողը։ Գեղեցկաշէն տուն, լաւ տաւար, զօրաւոր ձիեր և ծառաներ, որոնք իրենց կշիռքովը ոսկի կարժեն. գիւղին մէջ ամենէն հարուստը դուն ես և երբէք վախու տեղ չունիս թէ կրնաս օրին մէկը աղքատնալ...։ Թող որ, աղքատութիւնը չէ գիս սարսափեցնողը, յարեց ինքնիրեն։ Ես երջանիկ կըլլայի՝ եթէ միայն ես ալ հօրս ու մեծ-հօրս պէս արժանաւոր ըլլայի։

«Բայց ի՛նչ ախմախութիւն է այս բաները խորհիլ, շարունակեց հերկողը։ Քիչ ատեն առաջ լաւ քէֆ ունէի՛։ Հօրս կենդանութեանը, ինչ որ ըներ ան՝ բոլոր դրացիները անոր օրինակին

կը հետևէին։ Այն առտուն որ հայրս սկսէր հնձուած խոտերը վեր վար ընելով չորցնել, անոնք ալ կը սկսէին իրենց խոտը չորցնել։ Այն օրը որ հերկելու կը սկսէինք մենք, անոնք ալ իրենց արօրը կը քշէին հովիտին բոլոր զառիթափներուն վրայէն. իսկ հիմա, ահա երկու ժամ է որ կաշխատիմ, բայց մէկ հոգի չի կայ որ մինչև իսկ իր խոփին ծայրը սրէ՛։ Եւ սակայն ես կը կարծեմ թէ այնքան լաւ կը կառավարեմ ագարակը՝ որքան Ինկմար Ինկմարսօն անունը կրող ո՛և է մէկը կառավարած է մինչև հիմա։ Խոտս ծախեցի այնպիսի գնով մը որ դեռ հայրս չէր կրցած ծախել. ես հիմա չեմ գոհանար այլևս խոտով լեցուած այն փոքր փոսերովը, որոնց ջուրը, երբ ինքն էր ագարակը մատակարարողը, կը վազէր մեր արտերուն մէջէն։ Վերջապէս, ես աւելի կը խնայեմ մեր անտառներուն՝ որոնք ինք կը կտրտէր վառելիք ընելու համար...։ Ա՛խ, ի՛նչքան դժուար կուգայ ինծի՝ դիմանալ ասոր. շա՛տ բան պէտք է որ ամեն օր ալ այսօրուան պէս սիրտս տեղն ըլլայ։ Հօրս ու մեծ-հօրս ողջ եղած ատեն, ամենքը կը պնդէին թէ Ինկմարսօններուն պէս աստուածավախ հին ընտանիք չի կայ։ Կաղաչէին անոնց՝ գրեթէ ծունգի եկած, որ իշխեն գեղին վրայ։ Եւ Ինկմարսօններն էին որ տէրտէրն ու լուսարարը կ'որոշէին։ Անոնք կ'որոշէին գետին մէջէն տիղմերն հանելու ժամանակը և դպրոցին շինուելիք տեղը։ Բայց ինծի խորհուրդ հարցնող մը չի կայ, և գեղացիները ինծմէ ո՛և է որոշումի մը չեն սպասեր... Զարմանալի՛ բան է որ առտուն մարդ ցաւերը թեթև կը զգայ. բայց ահա կուգայ աշուն՝ և այդ

ուները պիտի ծանրանան։ Եթէ միտքս դրած ընեմ, ճշմարիտ որ ամէն տեղ ո՛չ տէրտէրը և ոչ ալ դատաւորը բարև պիտի տան ինծի կիւրակէներուն՝ եկեղեցիին առջև, ինչպէս որ մինչև հիմա միշտ բարևած են»։

Ձի կայ ատեն մը որ մարդ աւելի զուարթ մտածէ, որքան երբ կելլէ ու կիջնէ արօրին ետևէն։ Մարդ միս մինակ կըլլայ և մէկը միտքը չի խանգարեր, ագռաւներէն զատ՝ որ կը հետևին ակօսներուն, կտցելու համար որդերը։ Այսպէս էր որ Հերկող երիտասարդին կը թուէր թէ՝ այնպէս միտքերը իր գլխուն մէջ կուգային, որ կարծես մէկը զանոնք իր ականջներուն տակ կը փսփսար։ Եւ ինք որ գրեթէ երբեք այդքան պայծառ ու կենդանի կերպով չէր խորհեր, ուրախացաւ այս բանէն, կը սկսէր գտնել թէ աւելորդ տեղն է որ վրան տրտմութիւն կը բերէ, թէ երբ մարդ լաւ խորհի, իրաւունք չունի որ ինք իր ձեռքով դժբախտութեան մէջ ձգէ գլուխը։ Ա՛խ, միայն թէ ինչ լաւ բան պիտի ըլլար որ հայրը ողջ եղած ըլլար. պիտի երթար խորհուրդ հարցնելու անոր, ինչպէս որ ատենօք կը հարցնէր դժուար պարագաներու տակ։ Եւ նոյնիսկ անհամբերութիւն մը զգաց որ անմիջապէս քովը չէ ան։

«Եթէ ճամբան գիտնայի, մտածեց ինքնիրեն՝ խնդալով իր այս գաղափարին վրայ, շիտակ իր քով կ'երթայի։ Ի՞նչ պիտի ըսէր մեծ Ինկմարը իրեն քով երթալս տեսնելով։ Կենթադրեմ որ ինք վե՛րը, երկինքը՝ նստած է գեղեցիկ ագարակի մը մէջ, ունենալով արտեր, մարգագետիններ, մեծ տուներ, բազմաթիւ տաւարներ, թուխ և ուժեղ, ինչպէս որ կեն—

դանի եղած ատեն կը փափաքէր, ո՛չ սև, ոչ ալ պիսակաւոր։ Ահա՛, երբ տունը կը մտնեմ...»

Հերկողը կանգ առաւ արտին ճիշտ մէջտեղը, վեր վերցուց գլուխը և սկսաւ խնդալ։ Իր երևակայութիւնը անլուր ուրախութիւն մը կը պատճառէր իրեն և ա՛յնքա՜ն արագ կը յափշտակէր զինք, որ հեռացած էր երկրէն և իրեն այնպէս կուգար թէ հասած է երկինքը, մեծ Ինկմարին քով։

«Երբ սրահը կը մտնեմ, չարունակեց ան, բերնէ բերան լեցուած կը տեսնեմ զայն ծերունի գեղացիներով՝ որ նստեր են պատերուն երկայնքն ի վար. ամէնքն ալ գորշ կարմիր մազեր, ճերմակ յօնքեր ու թանձր պռկունքներ ունին, և ամէնքն ալ հայրիկին կը նմանին՝ ինչպէս կուտ մը կը նմանի միւս կուտի մը։ Այդքան մարդոց առջև, կանգ կառնեմ շփոթած՝ դրան սեմին վրայ։ Բայց հայրը, որ նստեր է սեղանին վերի ծայրը, զիս տեսածին պէս կըսէ. «բարի՛ եկար, պզտի՛կ Ինկմար Ինկմարսօն»։ Յետոյ ոտքի կ'ելլէ և կուգայ քովս. «երկու խօսք ունէի քեզի ընելիք, հայրի՛կ, բայց շա՛տ մարդ կայ քովդ»։—«Օտար մարդ չի կայ, մեր ընտանի՛քն է, կըսէ հայրը։ Այս բոլոր մարդիկը միշտ ապրած են Ինկմարսկարտի մէջ և անոնցմէ ամենէն ծերը հոն գտնուեր է հեթանոսական ժամանակներէն ի վեր»։— «Այո՛, բայց ես կուզէի մէկ երկու խօսք ըսել մինակ քեզի»։

«Հայրը վայրկեան մը իր չորս բոլորը կը նայի և կարծես ինքնիրեն կը հարցնէ թէ արդեօք մտցնէ՞ զիս կիւրակէ օրերու փոքր սենեակը. բայց, քանի որ մինակ ես եմ, կը մտցնէ խոհանոցը։ Կը նստինք հոն, ինք՝ օճախի քարին

վրայ, ես՝ կոճղին։

— «Գեղեցիկ ագարակ ունիք այստեղ, հա՛յր, կըսեմ իրեն։

— «Այո՛, գէշ չէ. բայց, ըսէ՛ նայինք, ի՞նչ կայ չի կայ Ինկմարսկարտի մէջ։

— «Աղէկութիւն. անցած տարի մեզմէ յիսուն ղուրուշ խոտի տուրք առին։

— «Կարելի՞ բան է։ Ինծի այնպէս կուգայ որ եկեր ես վրաս խնդալու, պզտի՛կ Ինկմար։

— «Բայց, իմ բանս աղէ՛կ չերթար. աս ու ան միշտ ա՛կանջիս կը հասցնեն թէ՝ դո՛ւն, հա՛յր, դուն մեր Տիրոջը Յիսուսի չափ իմաստութիւն ունէիր, մինչդեռ ես բան մը չեմ արժեր։

— «Թաղական չ'ընտրուեցա՞ր տակաւին, հարցուց ծերունին այն ատեն։

— «Ո՛չ թաղական, ոչ ալ դպրոցի հոգաբարձու։

— «Ի՞նչ գէշ բան ըրած ես, ուրեմն, պզտի՛կ Ինկմար։

— «Ա՛խ, պատճառն այն է որ կըսեն թէ ուրիշին գործերը տեսնողը՝ նախ ցոյց տալու է թէ կրնայ լաւ տեսնել իր գործերը»։

«Ասոր վրայ, ծերունի հայրս աչքերը գետին կը ձգէ և մտախոհ կը մնայ լռին։

— «Պէտք է որ ամուսնանաս, Ինկմա՛ր, կ'ըսէ վերջապէս, և ջանաս շատ կարող կին մը ունենալ։

— «Բայց ահա, հա՛յր, ճիշտ ատ է որ անկարելի է. գեղին մէջ յետին աղքատ մը անգամ չի կայ որ աղջիկը ինծի տալ ուզէ։

— «Ըսէ՛ նայիմ, պզտի՛կ Ինկմար, ի՛նչ է պատճառը»։ Եւ հայրիկին ձայնը կը դառնայ

շատ քաղցր։

— «Ըսեմ ուրեմն, հա՛յր. ասկէ չորս տարի առաջ, ճիշտ այն օրը որ ագարակը կը ժառանգէի, ինծի կնութեան ուզեցի Պէրկսքօգցի Պրիթան։

— «Նայի՛մ, կըսէ հայրը, մեր ազգականներէն մարդ կա՞յ որ Պէրկսքօգի մէջ», որովհետև ծերունին այս աշխարհի մարդոց և բաներուն վրայ քիչ մը կորսնցուցած է իր յիշողութիւնը։

— «Ո՛չ, կըսեմ իրեն. բայց բարեկեցիկ մարդիկ են և թերևս կը յիշես թէ Պրիթային հայրը երեսփոխան եղած է։

— «Այո՛, այո՛, բայց մե՛ր ազգականներէն մէկը առնելու էիր. այն ատեն կին մը կունենայիր որ տեղեակ կըլլար մեր հին սովորութիւններուն։

— Ճի՛շտ է ըսածդ, հա՛յր, և ես ալ շատ լաւ զգացի ատ»

« Բերաննիս գոց՝ կը մնանք քանի մը վայրկեան, յետոյ խօսք կ'առնէ հայրը. «ըսել է՝ շա՞տ խորոտիկ աղջիկ էր»։

— «Այո՛, կըսեմ. թուխկեկ մազեր, վճիտ աչքեր և կարմիր երեսներ ունի։ Գործունեայ ալ էր։ Մայրը կը հաւնէր իմ ընտրութեանս և ամէն բան իր կարգին պիտի ըլլար, եթէ մինակ աղջիկը չըլլէր չ'ուզէր զիս։

— «Կը կարծեմ թէ աղջկան մը ուզելն ու չուզելը շատ կարևորութիւն չունի։

— «Իր ծնողքն ալ կը ստիպէին զինք որ այո ըսէ։

— «Ինչէ՞ն գիտես որ կը ստիպէին. կը կարծեմ թէ աղջիկը գոհ ըլլալու էր որ քեզի պէս հարուստ մէկու մը հետ պիտի ամուսնանայ,

պզտի՛կ Ինկմա՛ր Ինկմարսօն։

— «Օ՛հ, ո՛չ, ապահովաբար գոհ չէր, բայց ամուսնութեան ծանուցումը տեղի ունեցաւ, որոշուեցաւ հարսնիքին օրը և Պրիթա բնակելու եկաւ մեր ագարակը՝ ամուսնութենէն առաջ... օգնելու համար մայրիկին, որովհետև, ինչպէս գիտես, մայրիկը կը սկսի ծերանալ և գործի չդիմանալ...

— «Ատոր մէջ պակաս բան մը չեմ տեսներ, պզտի՛կ Ինկմար», ըսաւ հայրը քաջալերանքի ձևով մը։

— «Բայց այդ տարին բան մը չէր ուզեր բուսնիլ արտին մէջ։ Գետնախնձորները արդիւնք չէին տար, կովերը հիւանդութիւն առած էին, այնպէս որ՝ ես ու մայրը որոշեցինք հարսնիքը գալ տարուան ձգել։ Ինչպէս կը տեսնես, միտքս մինակ սա էր թէ քանի որ անգամ մը ամուսնութեան ծանուցումն եղած է՝ ձևականութիւնը կարևոր բան չէ. բայց այսպէս մտածելը թերևս այն ատենուան խելքս ըլլայ։

— «Եթէ մեր ազգականներէն մէկը առած ըլլայիր, թերևս աւելի համբերանք ունենա՛ր, ըսաւ հայրս։

— «Կարելի է. կը հասկնայի թէ ասիկա Պրիթային աղէկին չէր երթար, բայց ուրիշ ել ճանապարհ չունէինք։ Մտածէ որ գարնան ունեցած էինք քու թաղումդ և չէինք ուզեր ձեռք դպցնել պանքային մէջ մեր ունեցած դրամին։

— «Կարծիքս այն է որ խե՞լացութիւն ըրած ես սպասելով, ըսաւ հայրը։

— «Միայն չէի տարակուսեր թէ Պրիթա դժգոհ պիտի մնար՝ երբ կնունքը պսակէն ա-

առաջ ընէինք։

— «Ա՛հ... բայցև այնպէս մարդ ստիպուած է նախ և առաջ քսակին մէջ նայիլ։

— «Օրէ օր Պրիթա աւելի գաղտնապահ ու աւելի տարօրինակ եղաւ, այնպէս որ շատ անգամ ես ինծի կը հարցնէի թէ ի՛նչ կանցնէր կը դառնար անոր մէջ։ Կը կարծէի թէ իր գեղին կարօտը կը քաշէ, որովհետև շատ կը սիրէր իր տունն ու իր ծնողքը. կանցնի՝ երբ որ սորվի, մտածեցի։ Ետքը գացի հարցուցի մայրիկին թէ ինչո՛ւ Պրիթան այնքան տժգոյն էր և աչքերուն մէջ այդքան կատաղի նայուածք ունէր։ Մայրը պատասխանեց ինծի թէ՝ պատճառն այն է որ մանկիկի մը կը սպասէ ան, թէ՝ վերջը նորէն հինին պէս կը դառնայ։ Ես իմ մէջ կը զգայի որ Պրիթա անդադար կը մտածէ թէ ինչո՞ւ պսակը ուշացուցի. բայց չէի համարձակէր խօսիլ հետը։ Միշտ ըսած էիր, հայր, ինչպէս կը յիշես թէ այն տարին որ կարգուիմ, ագարակը կարմիր ներկել պէտք է։ Իսկ այդ տարին ինծի համար բացէ ի բաց անկարելի էր այդ բանը»։

Հերկողը կը քալէր՝ շարժելով շրթունքները. բայց այնքան հեռու այս երկրէն որ իր հօրը դէմքը որոշապէս կը տեսնուէր իր երազանքին մէջ։ «Ջանանք, ըսաւ ինքնիրեն, խնդիրը իրեն պարզելու որոշ և յստակ ձևով մը՝ որպէսզի ինծի բարի խորհուրդ մը տայ»։

— «Ձմեռը այսպէս անցաւ ուրեմն և շատ անգամ կը խորհէի որ եթէ Պրիթան շարունակ այսպէս դժբախտ պիտի ըլլայ, լաւ է որ ձեռք քաշեմ իրմէ և զինքը ճամբեմ Պէրկսքօգ. բայց շատ ուշ էր։ Այսպէս, հասանք մայիս ամիսը, և, իրկուն մը, տեսանք որ ձգեր փախեր է տու-

նէն: Գիշերը մինչև լոյս զինք փնտռեցինք․ առ- տուն, ագախիններէն մէկը գտաւ...

— «Մեռած չէր, այնպէս չէ՞», ի սէր Աստու- ծոյ, կը հարցնէ հայրը լռութենէ մը վերջ:

— «Ո՛չ, ինք ողջ էր», կըսեմ: Եւ հայրը կը լսէ ձայնս՝ որ կը դողդոջէ:

— «Մանուկը ծնա՞ծ էր:

— «Այո՛, բայց կը հանգչէր անոր քով՝ մե- ռած, խեղդուած...

— «Անշուշտ խելքին պակասութիւն մը ե- կած ըլլալու էր:

— «Խելքը գլուխն էր սակայն... իսկ այդ բանը ըրած էր, ինչպէս կերևի, վրէժ լուծելու համար ինձմէ, որովհետև բանի տիրացած էի իրեն: Այդ բանը պիտի չընէր, կըսէր ինք, եթէ զինքը եկեղեցի տարած ըլլայի․ բայց, իր խել- քովը, քանի որ պատուով չ՚ուզեցի զաւակս, պէտք ալ չէր որ ունենայի զայն»:

«Հայրը կը մնայ այլայլած․ «ուրախութեամբ կը սպասէի՞ր այդ մանկիկին, պզտի՛կ Ինկմար, կըսէ վերջապէս»:

— «Այո՛, հա՛յր:

— «Կը ցաւիմ վրադ որ դէշ կնկան մը հան- դիպեր ես: Կ՚ենթադրեմ թէ բանտն ըլլալու է ան հիմա:

— «Այո՛, երեք տարուան դատապարտեցին զինք:

— «Եւ ա՞յս պատճառով է որ քեզի աղջիկ ալ չի գտնուիր:

— «Այո՛, բայց մէկէ մըն ալ աղջիկ չուզե- ցի դեռ:

— «Եւ ատո՞ր համար է որ լեզուդ կարճ է գեղին մէջ:

— «Այո՛, գեղացիները կը գտնեն որ Պրի- թային գլխուն այդ փորձանքը բերելու չէի: Կը հաւատեն որ՝ եթէ քեզի պէս մէկն ըլլայի, հա՛յր, խօսած կըլլայի Պրիթային հետ և յաջո- ղած անոր սրտին կրակը հասկնալու:

— «Այդքան դիւրին չէ, ըսաւ հայրը՝ գլու- խը երերցնելով, այդքան դիւրին չէ մարդու մը համար՝ դէշ կնիկ մը հասկնալը:

— «Ո՛չ հա՛յր, Պրիթա դէշ կնիկ չէր․ մինակ թէ հպարտ էր:

— «Միևնոյն բանն ըսել է, յարեց ծերու- նին»,

«Երբ կը տեսնեմ թէ հայրը ինծի թեր կելլէ, կը շարունակեմ․

— «Բողներ կան թէ՝ ա՛յնպէս ընելու էի որ ամէն մարդ հաւատար թէ մանուկը մեռած ծնած է: Գնդողներ կան նոյնպէս որ՝ եթէ դուն ըլլայիր, պիտի կրնայիր այս բանը գիտցող ա- ղախինին բերանը բռնել:

— «Ու այն ատեն, պիտի ամուսնանայի՞ր Պրիթային հետ:

— «Ո՛չ, ա յ ն ա տ ե ն պէտք պիտի չունե- նայի ամուսնանալու հետը․ քանի մը շաբաթ ետքը կը խրկէի իր ծնողքին քով և քանի որ ինք չախորժեցաւ մեզմէ, նշա՛նը ետ եղած կ՚ըլ- լար:

— «Կարելի է, բայց մարդ չի կրնար պա- հանջել որ այդ տարիքիդ մէջ ծերի մը փորձա- ռութիւնն ունենաս:

— «Վերջապէս գեղ մը գեղով կըսեն, թէ դէշ վերաբերուեցայ Պրիթային հետ:

— «Ինք աւելի շատ դէշ վարուած է, ինք՝ որ ամօթ բերած է պարկեշտ մարդոց վրա:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ - Арм.ССР
Им. А. Мясникяна

— «Այո՛, բայց ես ալ բռնադատութեամբ տէր եղած էի իրեն։ Չե՞ս դատեր որ իմ յանցանքիս հետեւանքով բանտ մտաւ ինք։

— «Իմ կարծիքս ա՛ն է որ ինք իր ձեռքով բանտ մտած է»։

«Այն ատեն, ոտքի կելլեմ եւ ծանր ծանր կը հարցնեմ.

— «Կարծիք չե՞ս տար ուրեմն որ պարտաւոր եմ բան մը ընել իրեն՝ երբ բանտէն դուրս ելլէ այս աշնան։

— «Ի՞նչ կրնաս ընել, ամուսնանա՞լ հետը։

— «Թերեւս այո՛։

«Հայրը կնայի երեսս.

— «Սէր ունի՞ վրադ։

— «Ո՛չ, գրեթէ վստահ եմ որ միեւնոյն հարուածով սպաննեց նաեւ իմ վրայ ունեցած իր սէրն ալ»։

«Հայրը գետին կը խոնարհեցնէ աչքերը եւ կը սկսի մտածել։

— «Կը տեսնե՞ս, հա՛յր, չեմ կրնար ես գլխ ազատել այն գաղափարէն թէ՝ չարիք ըրի իրեն։

«Հայրը նստած կը մնայ, առանց պատասխանելու։

— «Վերջին անգամ դատարանին առջեւ էր որ զինք տեսայ։ Սիրտը աւելի կակուղցած էր եւ արցունք կը թափէր որ ա՛լ զաւակ չունի։ Մէկ գէշ խօսք չըրաւ ինծի դէմ. ամէն յանցանք ինք իր վրայ առաւ։ Շատեր կուլային իրեն հետ, հա՛յր, եւ դատաւորն ալ հեռու չէր աչքերուն մէջ արցունք ունենալէ։ Ասոր համար, երեք տարի միայն օր կտրեցին իրեն։

«Հայրը դարձեալ բառ մը չը հանեց բերնէն։

— «Շատ դժբախտ կեանք մը պիտի անցնէ

աշնան, երբ իր տունը դառնայ։ Պէրկսքօզի մէջ լաւ աչքով չը պիտի նային իրեն։ Իր ծնողքը այնպէս կը նկատեն թէ՝ անպատուեց զիրենք, եւ տարակոյս չի կայ որ այս բանը ամեն ատեն երեսին պիտի տան։ Իրեն պիտի մնայ որ մինչեւ վերջը տունը կենայ եւ հազիւ կարող ըլլայ նոյնիսկ եկեղեցի երթալ։ Ամէն կերպով շատ դժբախտ կեանք մը պիտի ունենայ»։

«Հայրը չի պատասխաներ։

— «Բայց իրեն հետ ամուսնանալս, նոյնպէս յարմար բան չէ։ Երբ մարդ մեծ ագարակի մը տէրն է, անուշ բան չէ կին մը ունենալը, որուն վրայ աղախիններն ու ծառաները վերէն նային։ Եւ յետոյ, մայրիկն ալ գոհ պիտի չըլլայ։ Մնաց որ, երբէք պիտի չի կրնանք, անկէ ետք, գեղին երեւելիները հարսնիքի ու թաղումի հրաւիրել»։

«Հայրը կը շարունակէ լռութիւն պահել։

— «Դատարանին առջեւ ջանացի օգնութեան հասնիլ իրեն՝ ձեռքէս եկածին չափ։ Դատաւորին ըսի թէ միակ յանցաւորը ես եմ, քանի որ բռնութեամբ ձեռք բերած էի իր հաճութիւնը։ Ըսի թէ այն աստիճան անմեղ կը ճանչնայի զայն որ հետը պիտի ամուսնանայի այն օրն իսկ, եթէ միայն ինք իր զգացումները փոխէր ինծի նըկատմամբ։ Այս բանը կըսէի դիտմամբ որ թեթեւ պատիժ մը տան իրեն։ Իրաւ է թէ անկէ վերջ երկու նամակ գրած է ինծի, բայց նշան մը չի կայ կարծելու թէ, իր զգացումները փոխուած են իմ մասին։ Ինչպէս կը տեսնես այս բառերէս, հա՛յր, երբէք կապուած չեմ անոր»։

«Հայրը կը մտածէր եւ կը մնար անխօս։

— «Ես ալ թերեւս մեր գեղացիներուն պէս

կը մտածեմ, բայց, մե՛նք, Ինկմարսօններս, միշտ ուզած ենք բարի համաձայնութեամբ ապրիլ Աստծու հետ... շիտակն ընելով, ատեն ատեն կը խորհիմ թէ Աստուած չուզեր թերեւս որ սպաննիչ մը փրկուի այսպէս: Բայց, գեղին մէջ ամէնքը կըսեն թէ ճիշդ չէ:

«Հայրը կը մնայ լուռ:

— «Յիշէ՛ սակայն, հա՛յր, թէ ո՛րքան չարչարանքով լեցուն է մէկու մը կեանքը որ կը ձգէ արարած մը տառապելու՝ առանց անոր օգնութիւն հասցնել ջանալու եւ այս երեք վերջին տարիները իրաւ որ ես շատ տանջուեցայ»:

«Հայրը ճիկ չի հաներ:

«Այն ատեն արցունքը պուկս կըկպի եւ կը յարեմ·

— «Մտածէ թէ երիտասարդ եմ ես եւ շատ բան պիտի կորսնցնեմ՝ զայն տունս ընդունելով»:

«Բառ մը անգամ չըսեր հայրը:

— «Զարմանալի բան է որ մե՛նք Ինկմարններս հարիւրաւոր տարիներ մնացած ենք այս ագարակին մէջ, մինչդեռ բոլոր միւս ագարակները այնքան տէր փոխած են: Անտարակոյս պատճառն այն է որ Ինկմարները ջանացած են Աստծոյ ճամբուն հետեւիլ: Ինկմարները մարդոցմէ վախնալու բան չունին, հերիք է որ քալեն Աստծու ճամբէն»:

Այն ատեն ծերունի հայրս գլուխը վեր կը վերցնէ եւ կըսէ·

— «Դժուար խնդիր մըն է աս, Ինկմա՛ր. կարծեմ թէ պէտք է որ անդիի սենեակն երթամ եւ միւս Ինկմարսօններուն հարցնեմ թէ ի՛նչ է իրենց կարծիքը այդ մասին»:

«Ասոր վրայ, հայրը կը վերադառնայ մեծ

սրահը եւ ես կը մնամ խոհանոցին մէջ կը սպասեմ. Հայրը չի վերադառնար: Երբ քանի մը ժամ կը սպասեմ, կը ձանձրանամ եւ կերթամ հայրը վերագտնելու:

— «Համբերութի՛ւն, պզտի՛կ Ինկմար, կըսէ ինծի, համբերութի՛ւն: Դժուար խնդիր է:

— Եւ բոլոր ծերունիները հոն են, աչքերնին գոց, խորհրդածութեան մէջ: Ու կը սպասեմ, կը սպասեմ միշտ, կը սպասեմ դարձեալ...»

Հերկողը ժպտելով կը հետեւի արօրին՝ որ կը դանդաղեցնէր իր ընթացքը, իբր թէ անասունները հանգստի պէտք ունենային: Հասնելով խրամի մը եզրը, քաշեց երասանակները եւ կեցուց լծկան անասունները. «Անհեթեթ բան է, ըսաւ ինքնիրեն ծանրութեամբ. մարդ երբ մէկէ մը խորհուրդ կը հարցնէ, խնդիրը բացատրած ատեն ինք անձամբ կը տեսնէ այն բանը՝ որ երեք երկար տարիներ փնտռած ու չէ գտած: Հիմա թող ըլլայ այն՝ ինչ որ կուզէ Աստծոյ կամքը... ու մանաւանդ Աստուած թող օգնութեան հասնի ինծի», յարեց հառաչանքով մը:

Բայց մինակ Ինկմարը չէր առտուան այս ժամուն դուրս գտնուողը: Հեռո՛ւն, դաշտերուն մէջէն օձապտոյտ անցնող ճամբէն ծերունի մարդ մը կը քալէր: Դիւրութեամբ կարելի էր գուշակել իր արհեստը՝ տեսնելով ուսին վըրայ դրած ներկարարի իր երկայն վրձինը եւ այն կարմիր բիծերը որ արատաւորած էին ոտքէն մինչեւ կօշիկներուն ծայրը: Կը քալէր՝ քըննելով բնավայրը, տեսնելու համար թէ չի կա՞յ արդեօք ներկուելու կարօտ կամ արեւէն գոյնը նետած եւ անձրեւէն աւրուած ագարակ

մը։ Եւ ահա նշմարեց հովիտին տափարակ խորքին մէջ փոքր գերակայութեամբ մը տեսնուող Ինկմարսկարտը՝ վաղնջական ու յարգելի ագարակը.— «Տէ՛ր Աստուած, ըսաւ մարդը, և ուրախութենէն կանգ առաւ կեցած տեղը։ —«Ահա բնակարան մը որ հարիւր տարիէ ի վեր ներկ տեսած չէ. ժամանակը սեփ-սև դարձուցած է զայն Գալով իր յարակից մասերուն, անոնք բնաւ ներկի երես տեսած չեն։ Եւ ի՛նչ չէնքեր. ես անոնց մէջ կրնայի մինչև աշուն գործ ունենալ»։

Սկսաւ նորէն քալել. նշմարեց հերկողը և ուղղուեցաւ անոր կողմը՝ հասկնալու համար թէ որո՛ւնն էր այդ ագարակը և կրնա՞ր արդեօք գործ գտնել հոն։ Երբ Ինկմար տեսաւ մարդը և լսեց անոր խօսքերը, նայեցաւ անոր երեսը այնպիսի մէկու մը պէս որ կարծես անդի աշխարհէն կուգար։ Ամէն անգամ որ իր հօրը ըսեր էին թէ «ե՞րբ ներկել պիտի տաս այս մեծ կեղտոտ տունը», իր հայրը պատասխանած էր. «ա՛յն տարին որ տղաս ամուսնանայ»։ Ներկարարը կրկնեց իր հարցումը, բայց Ինկմար կարծես չի հասկցաւ անոր ըսածը։ Կը մտածէր թէ «արդեօք պատասխանը գտա՞ն վերջապէս երկինքին մէջ. հա՞յրս խրկած է այս մարդը՝ որ գայ ինծի ըսէ թէ իր փափաքն է որ ամուսնանամ այս տարի»։ Այս միտքը այնքան տպաւորուեցաւ իր մէջ՝ որ առանց վարանելու, սակարկեց մարդուն հետ։

Հիմա կը քալէր արօրին ետևէն խիստ յուզուած, գրեթէ երջանիկ. «տեսնելու ես որ, ըսաւ ինքնիրեն, ընելիքդ այնքան ալ դժուար չէ, հիմա որ վստահ ես թէ հայրն ալ այնպէս կը փափաքի»։

II

Բանի մը շաբաթ ետքը Ինկմար յղկելու վրայ էր ձիու կաշեսարք մը։ Միտքը նեղ կերևէր և գործը կը քաշքշուէր. «եթէ ես բարին Աստուած ըլլայի, կը մրթմրթար քթին տակ՝ չփելով ու նորէն չփելով իր կաշեսարքը, պիտի չվարանէի. բան մը որ միտքս դրի, անմիջապէս կը գործադրէի։ Մարդոց ատեն պիտի չձգէի որ գլուխնին ճաթեցնեն և իրենց մտքին մէջ նորէն ու նորէն որոճան իրենց խոչընդոտեցող բաներուն վրայ։ Ջէ՛, ճշմարիտ որ ատեն պիտի չձգէի իրենց՝ ո՛չ կաշեսարք մը յղկելու և ոչ ալ իրենց սայլակը ներկելու. զիրենք պիտի քաշէի իրենց արօրին վրայէն և պիտի ղրկէի հոն՝ ուր պարտաւոր են երթա՛լ։»

Ճամբուն վրայ անիւներու աղմուկ մը լսելով՝ գլուխը վեր վերցուց և տեսաւ Պրիթային հօր ձին ու կառքը։

— Ահաւասիկ Պէրկսքօգի երեսփոխա՛նը... պոռաց դէպի խոհանոցը, ուր իր մայրը տնարարութեամբ կը զբաղէր։

Լսեց անմիջապէս որ մայրը փայտ կը դնէր կրակին մէջ և կը դարձնէր սուրճի իր աղօրիքը:

Երեսփոխանը անցաւ բակին դուռնէն, բայց վար չ'իջաւ իր կառքէն:

— Ո՛չ, ո՛չ, ներս մտնել չեմ ուզեր, յայտարարեց անիկա. միայն երկու բառ ունիմ ըսելիք, Ինկմա՛ր, և ժամանակս կարճ է, որովհետև քաղաքապետարան կ'երթամ:

— Մայրը կը փափաքի գաւաթ մը սուրճ հրամցնել ձեզի, ըսաւ Ինկմար:

— Շնորհակալութիւն, չե՛մ կրնար:

— Երկար ատեն է որ երեսփոխանը հոս եկած չէ, պնդեց Ինկմար:

Եւ մայրն ալ սեմին վրայ երևցաւ՝ միանալու իր տղուն պնդումներուն:

— Չենք թողուր որ երեսփոխանը մեկնի՝ առանց ումպ մը սուրճ առնելու:

Ինկմար քակեց կառքի առիդածին կոճակները և երեսփոխանը պարտաւորուեցաւ իջնել:

— Է՛հ, Մարթա մայրիկը կը համոզէ զիս, հնազանդիլ պէտք է իրեն, ըսաւ:

Խոշոր ու գեղեցիկ մարդ մըն էր երեսփոխանը՝ համարձակ շարժումներով և կարծես բոլորովին տարբեր ցեղէ մը Ինկմարէն ու անոր մօրմէն, որոնց մարմինը ծանրադանդաղ էր և ադեղութիւնը քնէած: Բայց երեսփոխանը խոր յարգանքով մը կը պատուէր Ինկմարսկարթի հին ընտանիքը և յօժարակամ յանձն կառնէր իր գեղեցիկ տեսքը փոխել Ինկմարին հետ՝ բաւ է որ Ինկմարսոն կոչուէր ինք: Միշտ իր փեսին թեր եղած էր՝ ընդդէմ աղջկան և հիմա իր այսպէս լաւ կերպով հիւրասիրուիլը՝ ա՛լ աւելի

թեթևցուց իր սիրտը:

Երբ Մարթա մայրիկը սուրճը բերաւ, յայտնեց իր այցելութեան առարկան:

— Կը խորհէի, ըսաւ՝ լրջացնելով իր ձայնը, ձեզի հետ խօսակցիլ քիչ մը Գրիթային համար մեր առած որոշման մասին:

Գաւաթը որ կը դողար մայր Մարթային ձեռքին մէջ՝ դողդղաց և դգալը շաչեց սկահակին վրայ. ապա տեղի ունեցաւ անձկագին լռութիւն մը:

— Մենք համաձայնեցանք թէ լաւ ան է որ խրկենք զինք Ամերիկա...

Ընդհատեց իր խօսքը: Նոյն լռութիւնը. և Պէրկսքօգի երեսփոխանը ախ մը քաշեց այս անթափանցելի մարդոց նկատմամբ:

— Իր տոմսակը արդէն գներ ենք...

— Բայց, հարցուց Ինկմար, նախ ձեր տունը պիտի գայ, այնպէս չէ՞:

— Ո՛չ. գայ ի՞նչ պիտի ընէ:

Ինկմար լռեց, արտևանունքները կիսախուփ և հանդարտ՝ քնացողի մը պէս. հարկ եղաւ որ մայր Մարթան ընէ հարցումը.

— Անշուշտ լաթ առնել պէտք է իրեն, ըսաւ:

— Ամէն բան պատրաստ է. իր սնտուկը կը սպասէ նպարավաճառ Լէօֆպէրկին քով, որուն տունը կիջնենք միշտ երբ քաղաք երթանք:

— Հապա ձեր տիկինը, տեսնելու պիտի չ'երթա՞յ զայն:

— Կուզէր, բայց իմ կարծիքովս պէտք չի կայ:

— Թերևս աղէկն ալ ատ է:

— Տոմսակն ու դրամը պատրաստ են Լէօֆ-

պէրկին քով, այնպէս որ պէտք եղածը ունի արդէն։ Ասոր համար, կուզէի որ այս տեղեկութիւնները տամ Ինկմարին՝ որպէսզի այս խնդիրին համար պարապ տեղը չի նեղուի։

Մայր Մարթան ինք ալ անխօս դարձած էր․ գլխուն եազման ինկած էր վզին վրայ և աչքերը յամառօրէն յառած էին իր գոգնոցին։

— Ինկմարը, յարեց երեսփոխանը, պէտք է որ ուրիշ ամուսնութեան մը մասին մտածէ…

Ոչ մայրը, ոչ ալ տղան ձիկ մը հանեցին։

— Մարթա մայրիկը օգնականի մը պէտք ունի այսքան մեծ տան մը մէջ։ Ժամանակ է որ Ինկմար իրեն ապահովէ հանգիստ ծերութիւն մը։

Երեսփոխանը կեցաւ, ինքնիրեն հարցնելով թէ արդեօք իր ըսածը լող կա՞ր։

Ես ու կինս, եզրակացուց ան, կը փափաքինք որ ուրախ ըլլաք դուք։

Բայց և այնպէս Ինկմար անձնատուր եղած էր մեծ ուրախութեան մը։ Այսպէս ուրեմն, Պրիթա կ՚երթար Ամերիկա․ հարկադրուած պիտի չըլլար անոր հետ ամուսնանալու․ մարդիկ պիտի չտեսնէին որ մարդասպան մը սանտիրուհի կըլլար Ինկմարներու հինաւուրց ագարակին մէջ։ Բայց կը լռէր, որովհետև պատշաճ չէր դատեր ցոյց տալու իր գոհունակութիւնը։

Երեսփոխանը ալ բան չէր ըսեր․ գիտէր թէ այս հին ընտանիքին անդամները որոշ ատենի մը պէտքն ունէին՝ խորհրդածելու համար։

Վերջապէս խօսք առաւ Ինկմարին մայրը․

— Այո՛, հիմա Պրիթան իր պատիժը կրած է․ կարգը եկաւ մեզի։

Այս տարտամ բառերով հասկցնել կու զէր որ՝ եթէ երեսփոխանը օգնութիւն մը կակնկալէ Ինկմարներէն, իր ըրածին իբրև շնորհակալութիւն, Ինկմարներէն, փրցնելիք բան մը չունի․ բայց, իր տղան ուրիշ կերպով հասկցաւ։

Ինկմար սարսռաց կարծես ընդոստ․ «Ի՞նչ պիտի խորհէր հայրը, հարցուց ինքնիրեն։ Ի՞նչ պիտի ըսէր՝ եթէ խնդիրը իր դատաստանին յանձնէի։ Ի՛նք է ապահովաբար որ կը հսկէ իմ վրայ և հոս խրկած է Պէրկսքօգի երեսփոխանը։ Պիտի պատասխանէր ինծի․ «Մի՛ կարծեր թէ կրնաս խաղալ Աստծոյ արդարութեան հետ։ Մի՛ յուսար թէ քեզ անպատիժ պիտի թողու, եթէ Պրիթային վրայ ձգես յանցանքին բոլոր ծանրութիւնը։ Թող անոր հայրը ուրանայ զայն՝ հաճելի ըլլալու համար քեզի․ և նոյնիսկ քեզմէ փոխ դրամ առնելու համար․ այս ամէնը արգելք ըլլալու չէ քեզի՝ որ դուն հետևիս Աստըծու ճամբուն, պզտի՛կ Ինկմար Ինկմարսոն»։

Ինկմար ոտքի ելաւ և քօնեակ լեցուց իր սուրճին մէջ․

— Շնորհակալութիւն երեսփոխանին՝ այսօր հոս գալուն համար, ըսաւ, իր գաւաթը զարնելով անոր գաւաթին։

III

Առաւօտն ամբողջ, Ինկմար աշխատած էր ծռելու դռան ցարասիներուն գագաթները՝ յաղթական կամարի ձեւով: Ծառերը չէին հպատակեր. կը փատրնէին և նորէն կը տնկուէին՝ ա՛լ աւելի ուղիղ կերպով:

— Ի՞նչ է ըրածդ, հարցուց մայր Մարթան՝ վրդովուած այս քմայքէն, որ իրեն կը յիշեցնէր հարսանեկան հանդէսները:

Սա՛ է թէ, պատասխանեց Ինկմար, կը կարծեմ որ տուն մըն ալ կրնան այսպէս աճիլ:

Հասաւ կէսօրուան հանգստի ժամանակը. գործաւորները, իրենց ճաշն ըրած, բակը ելան և երկնցան հոն՝ քուն մը առնելու:

Ինկմար ինք ալ կը քնանար. բայց, պառկած լայն անկողնի մը վրայ այն փոքր սենեակին մէջ՝ որ պատկից էր մեծ սրահին, ուր ամբողջ տանը մէջ միս մինակ արթուն կը մնար մայր Մարթան և գուլպայ կը հիւսէր:

Գաւիթին դուռը բացուեցաւ յամրաբար և փոքրահասակ պառաւ մը ներս մտաւ, անուրամ մը վիզէն կախած երկու կողովներ: Նստաւ սեմին մօտ և առանց բառ մը ըսելու՝ վեր վերցուց իր կողովներուն կափարիչները: Մէկը լեցուած էր կէվրէկներով և չոր պակսիմաթներով, միւսը՝ թարմ ու ոսկեգոյն հացով: Տանտիրուհին իսկոյն մօտեցաւ անոր՝ գնելու. որովհետեւ, եթէ մայր Մարթան քիչ դրամ ծախսող էր, բայց կը սիրէր նոյնպէս որ կտոր մը լաւ բան ունենայ իր սուրճին մէջ թաթխելիք: Զատելով հացերը, սկսաւ խօսակցիլ այդ փոքրահասակ պառաւին հետ, որ նման տունէ տուն պտտող և աւանին բոլոր պատմութիւնները գիտցող փոքր պառաւներուն՝ շատախօս էր: Ու յետոյ, Ինկմարին մայրը մտքին մէջ ուրիշ նպատակ մը ունէր:

— Դո՛ւն, Բայսա՛, դուն խելացի և վստահելի կնիկ ես, քու վրադ մարդ կրնայ հաւատք ունենալ, ըսաւ:

— Հարկա՛ւ. եթէ ես իմ բոլոր լածներս իմ մէջ չ՛պահէի, հիմա շատ մարդ իրարու աչք պիտի հանէին:

Բայց երբեմն ալ չափէն աւելի լռութիւն կը պահես:

Փոքր պառաւը գլուխը վեր վերցուց և ըմբռնեց դիմացինին միտքը:

— Թող Աստուած մեղքս չյիշէ, ճի՛շտ է ըսածդ, յարեց, և արցունքներ լեցուեցան աչքերուն մէջ...: Պէրկաքօդ էի գացեր՝ խօսելու երեսփոխանին կնոջ հետ, բայց պարտաւոր էի նախ քեզի հետ տեսակցելու...

— Ա՛հ, երեսփոխանին կնոջը հետ խօսե՞ր

ես ըսել է, ըսաւ մայր Մարթան անասելի արհամարհանքի չեշտով մը։

Ինկմար թեթեւ ցնցում մը ունեցաւ՝ իր դըռան կամացուկ ճռնչիւնէն, որ կիսով բացուեցաւ։ Մէկը ներս չի մտաւ, բայց դուռը կիսաբաց մնաց։ Ինքնիրե՞ն բացուած էր թէ մէկը բացած էր զայն։ Ինկմար չի կրցաւ գիտնալ, և, իր կիսաքուն վիճակին մէջ մնաց հանգիստ ու լսեց ձայները։

— Ըսէ՛, տեսնեմ, Բայսա՛, ի՞նչպէս իմացար թէ Պրիթան չէր սիրեր Ինկմարը, հարցուց մայրը։

— Օ՜հ, չգիտցող չի կար թէ ծնողքը կը բռնադատէին զինք, պատասխանեց պառաւը խուսափողական կերպով։

— Շիտա՛կը խօսիր, Բայսա՛, քանի որ ես եմ հարցնողը ծածկելու պէտք չունիս ճշմարտութիւնը։ Ըսածդ ամէնը սիրով պիտի լսեմ։

— Ըսեմ ուրեմն թէ այդ ատենները ամեն անգամ որ Պէրկսքօգ կ'երթայի, կը տեսնէի որ անոր աչքերը կարմրած են։ Օր մը որ ես ու ինք մինակ էինք խոհանոցին մէջ, ըսի իրեն. «գեղեցիկ ամուսնութեամբ պիտի բաղդաւորուիս, Պրի՛թա»։ —«Այո՛, պատասխանեց ան, տարօրինակ նայուածք մը ձգելով վրաս, չա՛տ շիտակ կ'ըսես, գեղեցի՜կ»։ Երբ որ այսպէս կը խօսէր, աչքիս առջեւ եկաւ Ինկմար Ինկմարսոնը· և ի՜նչ մեղքս պահեմ, կարելի չէր ըսել թէ գեղեցիկ է Ինկմար, բայց այս բանը չէի մտածած՝ ամէն ատեն Ինկմարսոնենց ընտանիքը յարգած ըլլալուս համար։ Չի կրցայ չժըպտիլ քիչ մը։ Այն ատեն Պրիթա կրկնեց. «այո՛, գեղեցի՜կ», և կռնակը ինծի դարձուց ու արտորանքով գնաց սենեակը ուր լսեցի թէ կուլար։ Բայց երբ անկէ մեկնեցայ՝ կը խորհէի թէ աղջիկը վերջը վերջը այդպէս չէր մնար, որովհետև Ինկմարսոններուն բաղդը բանուկ է։ Աղջկան ծնողքին ընթացքը զիս չէր զարմացներ բնաւ. եթէ ես ալ աղջիկ մը ունենայի և Ինկմար Ինկմարսոնը ուզէր, աղջկանս բերնին պիտի չնայէի»։

Ինկմար, երկնցած իր անկողնին վրայ, ականջ դրած էր։

«Մայրը դիտմամբ խօսեցնել կուտայ Բայսան, մտածեց։ Իմ վաղուան դէպի քաղաք ճամբորդութիւնս անհանգստութիւն կը պատճառէ իրեն։ Կը խորհի թէ Պրիթան բերելու կերթամ։ Մայրը չի տարակուսիր թէ ի՛նչ թըշուառական վատին մէկն ե՛մ ես»։

— Երբ նորէն տեսայ Պրիթան, շարունակեց պառաւը, արդէն եկած տեղաւորուած էր ձեր ագարակին մէջ, և որովհետև շատ բազմութիւն կար մեծ սրահին մէջ՝ չի կրցայ իրեն հարցնել թէ ուրա՞խ էր արդեօք հիմա. բայց ցարասիներու պզտիկ անտառը չէի հասած դեռ՝ երբ եկաւ բռնեց զիս.— «Բայսա՛, ըսաւ ինծի, վերջին օրերս Պէրկսքօգ մեր տունը գացի՞ր արդեօք»։—«Երէկ չէ առջի օրը հո՛ն էի», պատասխանեցի իրեն։—«Ա՜խ, Տէ՜ր Աստուած, երէկ չէ առջի օր, մինչդեռ ես, ինծի կուգայ թէ, տարիներ կայ որ չեմ գացած»։ Ու դեռ բերանս չբացած՝ սկսաւ հեծկլտալով լալ։—«Կրնաս երթալ տեսնել ծնողքդ» ըսի իրեն.—«ո՛չ, կը կարծեմ թէ երբէք պիտի չվերադառնամ հոն»։— «Ինչո՞ւ չերթաս, կըսեմ իրեն, գնա՛. գիտե՞ս ինչքան գեղեցկացեր է հոն ամէն բան. անտառը լեփ

Լեցուն է հաստատուններով և անոր այրած տեղերն ալ կամ կարմիր են հապալասներով»:— «Հապալասները հասա՞ծ են որ» բացագանչեց, և իր աչքերը բացուեցան խոշոր խոշոր:—«Հա՛րկաւ, օրուան մը համար կրնաս բացակայիլ և երթալ ափափ հապալասի ուտել»:-«Ո՛չ, չեմ ուզեր. ինծի կուգայ թէ նորէն հոս գտնուիլը ա՛լ աւելի դժուար պիտի գայ»:— «Ես միշտ լսած եմ որ մարդ Ինկմարսօնենց տունը հանգիստ կըլլայ. անոնք լաւ մարդիկ են:»—«Այո՛, լաւ մարդիկ»:—«Գեղին ամենէն լաւը, և պարկե՛շտ մարդիկ»:—«Այո՛, բռնադատել աղջիկ մը որ իր կինը դառնայ՝ անպարկեշտութիւն չի համարուիր»:—«Եւ կարող մարդիկ են»:- «Այո՛, բայց իրենց բոլոր գիտցածը իրենց կը պահեն»:—«Ըսել է երբեք մարդու հետ չե՞ն խօսիր»:-«Երբեք անհրաժեշտ բառէն աւելի բառ ըսող չի կայ».—«Հարսնիքը հո՞ս պիտի ընէք թէ մարանցդ տունը»:-«Հո՛ս, անիկա աւելի ընդարձակ է»:-«Աշխատիր որ պսակը շատ ուշի չի մնայ»:-«Ամիսէ մը պիտի ամուսնանանք» ըսաւ: Բայց, մեկնելու ատենս միտքս ինկաւ այդ տարուան ծեր դէշ հունձքը և իրեն ըսի թէ թերևս պսակը այս տարի տեղի չունենայ. «այն ատեն, պատասխանեց Պրիթա, կը մնայ որ ես զիս լիճը նետեմ»: Ամիս մը ետքը իրօք լսեցի թէ պսակը յետաձգուած էր և Պէրկսքօգ գացի՝ իր մօրը լուր տալու: «Ինծի այնպէս կուգայ թէ բան մը կատարուելու վրայ է որ դէշի պիտի վերջանայ Ինկմարսօնենց տունը», ըսի անոր: —«Ձեռքերնիս բան մը չի գար, պատասխանեց. ինչ որ ընեն՝ մենք դիտողութիւն մը չունինք. շնորհակալ ենք Աստծոյ ամէն օր որ մեր աղ-

ջիկը այսպէս լաւ տեղ մը գտաւ:»

Պառաւը կեցաւ: Ինկմար, որ բառ մը անգամ փախցուցած չէր խօսուածներէն, մրմնջեց ինքնիրեն. «Ճշմարիտ որ այս տունէն մաղի չափ անգամ փափաք ունեցող չի կայ որ երթայ Պրիթան բերէ: Մայրս երբեք սիրտը պղտորելու պէտք չունէր՝ տեսնելով որ այս առաւօտ ցաբասինները կը ծռեմ: Այնպիսի բաներ են ատոնք՝ որ մարդ կընէ, միմիայն համարձակելու Աստծոյ ըսելու,—շատ կուզէի և կը տեսնես որ փափաքս ալ ատ է, բայց այն իրագործել տարբեր խնդիր է»:

—Վերջին անգամ որ Պրիթային հանդիպեցայ, վերսկսաւ Քայսան, ձմեռուան մէջտեղերն էր, կէս մէջքով ձիւն կար: Նեղ կածանէ մը քովընտի կ'երթայի անտառին մէջտեղերէն և կը քալէի դժուարութեամբ, որովհետև հալած ձիւնը կը սահէր ոտքերուս տակէն: Կին մը նըշմարեցի որ նստեր է և երբ մօտեցայ՝ ճանչցայ Պրիթան.— «Միս մինակ կը պտտիս հո՛ս», ըսի իրեն:—«Այո՛, կը պտտիմ»: Սկսայ երեսը նայիլ՝ առանց բան մը հասկնալու.— «Այո՛, եկայ այս տեղուանքը՝ տեսնելու համար թէ ցից լեռներ չի կա՞ն»:— «Ի՞նչ, անուշի՛կս, փախնամ ինքզինքդ վար նետել կուզես լեռներէն, ըսի իրեն», որովհետև կեանքէն վազ անցած մէկու մը տպաւորութիւնը կընէր վրաս.— «Ա՛խ, ըսաւ, ինքզինքս լեռնէ մը վար պիտի նետեմ՝ մինակ թէ ուզած ցից լեռս գտնեմ»:— «Չե՞ս ամչնար այդ տեսակ խօսքեր ընելով»:—«Պատճառն ա՛յն է որ, Քայսա՛, կը զգամ թէ վատ բան պիտի ընեմ. աւելի լաւ է մեռնիլը»:— «Ահա քեզի տղայութիւննե՛ր, պզտի՛կ»: Այն ատեն, եկաւ

քովս, աչքերը բոլորովին վայրագ. «Անոնք ուրիշ բան չեն խորհիր՝ եթէ ոչ տանջել զիս, ըսաւ. ես ալ կը խորհիմ զիրենք տանջել»:— «Բայց, Պրիթա՛, բարեսիրտ մարդիկ են անոնք»: —«Այո՛, բարեսիրտ մարդիկ, որ կը խորհին միայն զիս անպատուել»:— «Իրենց հետ խօսա՞ծ ես այդ բոլորը»:— «Իրենց հետ չեմ խօսիր երբեք. մէկ մտածելիք բան ունիմ՝ որ չարիք հասցնեմ իրենց. վառեմ այս ագարակը՝ որ կը սիրեն, թունաւորեմ անոր կովերը՝ այնքան տըգեղ, այնքան ծեր, իրենց աչքերուն շուրջը այնքան ճերմկոտիկ՝ որ կարծես թէ անոնք ալ այդ ընտանիքէն են»:— «Հաչան շունը խածան չըլլար» կըսեմ իրեն:— «Օ՜հ, ինչ ալ ըլլայ, չարիք մը պիտի բերեմ իրենց գլխուն. եթէ չբերեմ, հոգիի խաղաղութիւն պիտի չգտնեմ երբեք»: —«Բայց հոգիիդ խաղաղութիւնն է որ պիտի ըսպաննես ատով»: Այն ատեն յանկարծօրէն փոխուեցաւ և սկսաւ արցունք թափել: Շատ մեղմացաւ և կը գանգատէր թէ շատ դժուար է ապրիլ այն չար մտածումներուն տակ՝ որ իր միտքը կուգան: Իրեն ընկերացայ մինչև տունը և բաժնուելու ատեն, խոստացաւ ինծի որ խելօք պիտի կենայ՝ պայմանով որ ես ալ լածներս ուրիշին չյայտնէի: Կը խորհէի թէ արդեօք որո՛ւ կրնամ ըսել լածս, բայց չի համարձակեցայ երբեք գալ ձեզի պէս անձնաւորութեանց խօսիլ...»

Զանգակը հնչեց ախոռին պզտիկ զանգակատան մէջ. կէսօրուան ճաշը վերջացած էր: Մայր Մարթան փութաց ընդմիջել Քայսան:

— Լսէ՛, Քայսա՛, բառ մըն ալ. կը կարծե՞ս թէ կարելի է երբեք հաշտութիւն մը գտնել Պրիթային ու Ինկմարին մէջ:

— Ինչպէ՞ս, հարցուց ծերուկ կինը՝ ապշութեամբ բերանը բաց մնացած:

— Ըսել կուզեմ որ եթէ Ամերիկա չերթայ, կը կարծե՞ս որ պիտի ընդունէ Ինկմարը:

— Այդպիսի բան մը չեմ կարծեր. ո՛չ, ապահովաբար ո՛չ:

— Պիտի բաժնուի՞ ուրեմն:

— Կարծեմ թէ այո:

Ինկմար նստած էր իր մաճակալին վրայ, աչքերը վար կախած: «Ահա քեզի վերջին հարուածը, Ինկմա՛ր. այնքան բան լսեցիր որ ա՛լ եթէ կրնաս՝ ճամբայ ելիր վաղը, կը մրմնջէր տղան՝ բռունցքովը զարնելով իր մաճակալին եզերքին... Եւ մտածե՛լ թէ մայրը կերևակայէ որ զիս տունը պահել պիտի տայ՝ ցոյց տալով ինծի թէ Պրիթան չի սիրեր զի՛ս:» Եւ ձեռքով կը զարնէր անկողնին, կարծես դիմադրող բան մը ծեծելով: «Հիմա, անգամ մըն ալ պիտի մտնեմ ես այս գործին մէջ: Մե՛նք, Ինկմարներս, սովորութիւն ունինք ամէն չյաջողած բան նորէն սկսելու: Չի կայ էրիկ մարդ մը որ հանդուրժէ, որպէսզի կին մը զինք ատելուն համար խենդենա՛յ»:

Ինկմար երբեք աւելի խոր կերպով չէր ըզգացած իր պարտութիւնը և կը տոչորէր իր փոխ վրէժն առնելէ: «Գրողին բերա՛նն երթամ, եթէ Պրիթային չսորվեցնեմ հաճոյք գտնելու այստեղ» ըսաւ:

Բռունցքի վերջին հարուած մըն ալ տուաւ իր մաճակալին եզերքին՝ ոտքի ելլելով գործի երթալէ առաջ: «Այն բանը որու վրայ վստահ եմ, օրինակի համար, աւելցուց Ինկմար, սա՛ է որ՝ մեծ Ինկմա՛րը խրկած է Քայսան, որպէսզի ճամբայ իյնամ դէպի քաղաք:

IV

Ինկմար քաղաք հասած էր և յամրաբար կը բարձրանար դէպի համայնքային բանտը՝ որ կը կանգնէր բլրակի մը վրայ, փարքին վերօքը։ Ջէր նայեր իր չորս բոլորը, այլ՝ ծանր արտևանունքները վար խոնարհած, ոտքերը ետին կը քաշէր կարծես դրեթէ ծերունիի մը պէս։ Օրուան պատշաճութեան բերումով՝ հանած էր տալէքարլիցիի գեղեցիկ հագուստը և հագած էր վերէն վար սև ասուիէ ու չոհուած, բայց արդէն հնամաշ չապիկ մը։ Ինքզինքը կը զգար հոգեկան կատարելապէս հանդիսաւոր, բայց տակաւին անհանգիստ և հեստ տրամադրութեան մը մէջ։

Ինկմար կանգ առաւ բանտին առջև, նշմարեց ոստիկան մը և անոր հարցուց թէ այսօ՞ր էր որ Պէրկսքօգցի Պրիթան ազատ պիտի արձակուէր։

— Կարծեմ թէ, ըսաւ պահապանը, այսօր կին մը պիտի ելլէ բանտէն։

— Իմ ըսածս այն կինն է որ մանուկ մը սպաննած ըլլալուն համար բանտարկուած էր։

— Ա՛հ, ճիշտ է․ ան պիտի ելլէ այսօր կէսօրէն առաջ։

Ինկմար կռնակը տուաւ ծառի մը՝ սպասելով։ Իր աչքերը չէին զատուիր ծանր դռնէն։ «Որոնք որ այդ դռնէն ներս մտած են՝ տրտմալից ըլլալու են, մտածեց․ բայց, առանց չափազանցելու կրնամ հաստատել թէ անոնցմէ շատերը ինծի չափ ընկճուած չեն եղեր՝ թէև ես դուրսը գտնուած ըլլամ։ Վերջապէս Մեծ Ինկմարը դարձեալ գիս հոս առաջնորդեց՝ փրկելու համար բանտին հետ ամուսնացած կինս..։ Կը խաբուի, ով որ կըսէ թէ պզտիկ Ինկմարը գո՛հ է։ Անոր ուզածը ա՛ն էր որ իր տունը գայ՝ յաղթական կամարի մը տակէն, քովին վեր ունենալով իր մայրը։ Յետոյ երկուքը միասին եկեղեցի երթային՝ մեծ հանդիսաւորութեամբ և նշանածը իր քովը նստէր իր հարսանեկան շրջազգեստը հագած, ժպտելով ոսկեթել պսակին տակէն»։

Դուռը բացուեցաւ մէկ քանի ա՛նգամ․ դուրս ելաւ քահանայ մը, յետոյ վերատեսուչին կինը՝ աղախիններուն հետ, որոնք քաղաք կիջնէին։ Բացուեցաւ անգամ մըն ալ։ «Այս հեղ, ա՛ն է», ըսաւ ինքնիրեն Ինկմար՝ սիրտը վեր խոյանալով։ Իր աչքերը գոցուեցան և երբ քաջութիւնն ունեցաւ նայելու, Պրիթան կանգնած էր դռան առջև։ Վայրկեան մը անշարժ, Պրիթա ետև նետեց իր գլխուն եազման և իր մեծ, պայծառ աչքերով դիտեց բնանկարը․ քաղաքին, բլուրներուն և անտառին վրայէն իր նայուածքը կերթար մինչև իր ծննդավայրի լեռներուն։ Յե-

տոյ Ինկմար տեսաւ թէ, կարծես անտեսանելի զօրութենէ մը ցնցուած, անիկա ձեռքերը դրաւ իր աչքերուն դէմ և նստեցաւ քարէ աստիճաններուն վրայ։ Եւ իր տեղէն, ականջին հասաւ հեծկլտուք մը։ Ինկմար անցաւ սալարկուած բակէն, կեցաւ անոր մօտ և սպասեց։ Գրիթա կուլար այնքան սաստկութեամբ որ չի լսեց թէ մէկը եկած էր իր քովը։

— Մի՛ լար այդպէս, Գրիթա՛, ըսաւ Ինկմար վերջապէս։

Գրիթա վեր առաւ աչքերը։

— Ա՛խ, Տէր Աստուած, դուն հո՛ս, ճչաց Գրիթա. և նոյն հետայն տարօրինակ պայծառութեամբ մը իր առջև տեսաւ թէ ի՛նչ էր ըրած ինք, և թէ ի՛նչ դժուարութիւններու յաղթած էր Ինկմար՝ իր քով գալու համար։

Գրիթա ուրախութեան ճիչ մը արձակեց և փաթթուեցաւ անոր վզին՝ ա՛լ աւելի ուժով հեծկլտալով։

— Մտածէ՛ թէ ինչպէ՛ս հալ ու մաշ կըլլայի ետեւէդ։

Ինկմարի սիրտը սկսաւ բաբախել՝ այն մտածումէն թէ Գրիթա ուրախացուցած էր զինք տեսնելով։

— Ի՞նչ կըսես, Գրիթա՛, հալ ու մաշ կըլլայիր իմ ետեւէ՛ս։

— Կուզէի ներողութիւն խնդրել քեզմէ, կիմանա՞ս։

Ինկմար չխկուեցաւ իր բոլոր հասակովը, ցուրտ՝ քարէ արձանի մը պէս։

— Շտապողականը աս չէ, ըսաւ. երկար չենք կրնար մնալ հոս։

— Ո՛չ, կենալիք տեղ մը չէ հոս, յարեց

Գրիթա հլութեամբ։

— Նպարավաճառ Լէօփպէրկին տո՛ւնը իջայ, ըսաւ Ինկմար՝ երբ կը քալէին դէպի քաղաք։

— Հո՛ն է որ իմ սնտուկս ալ կը գտնուի։

— Այո՛, տեսայ, բայց այնքան խոշոր է որ սայլակին ետևը չի դրուիր. ուրիշ ատեն մը կուգանք կառնենք։

Գրիթա նայեցաւ Ինկմարին երեսը. առաջին անգամն էր որ Ինկմար իր մտադրութիւնը կը յայտնէր թէ զինք պիտի տանէ իրեն հետ։

— Այս առտու հօրմէս նամակ մը ստացայ թէ՝ հաճութիւն տուած ես որ Ամերիկա երթամ։

— Կը մտածէի որ լաւ է որոշումը քեզի ձգել, որովհետև վստահ չէի թէ ինծի հետ պիտի գայիր։

Գրիթա նշմարեց թէ Ինկմար զինքը տանելու փափաք չի յայտներ։ Թերևս այն պատճառով որ կը վախնայ դարձեալ իր վրայ բռնադատութիւն բանեցնելէ։ Ու յետոյ, ի՞նչպէս ուզել որ իրեն պէս մէկը նորէն Ինկմարսկարտ գայ։ «Ըսէ՛ իրեն ուրեմն, մրմնջեց ինք իր մէջ, թէ կուզես Ամերիկա երթալ։ Ա՛ս է ան միակ ծառայութիւնը՝ որ կրնաս ընել իրեն։ Ըսէ՛ իրեն, ըսէ իրե՛ն»։ Եւ երբ այսպէս կը խորհէր, լսեց ձայն մը որ կարծես իր ձայնին կը պատասխանէր բարձր.— կը վախնամ թէ պէտք եղածին չափ զօրաւոր չեմ՝ Ամերիկա երթալու համար. կ'երևի թէ այն տեղի գործերը դժուար են։

— Այո՛, այդպէս կ'երևի, պատասխանեց կամացուկ Ինկմար։

Գրիթա ամչցաւ ինքիրմէ. քահանային ըսած

չէ՞ր, այս տարուն, թէ ինք բանտէն դուրս կելլէ աւելի լաւցած և վերանորոգուած:

Յանկարծ, Ինկմար տեսաւ թէ Պրիթա կըռնակը կուտայ պատի մը՝ կրթնելով:

— Խե՛ւքս կը դառնայ, հառաչեց Պրիթա, այս աղմուկին ու այս բազմութեան մէջ:

Ինկմար բռնեց անոր ձեռքէն և չարունակեցին իրենց ճամբան՝ այսպէս ձեռք ձեռքի բռնած: «Երկու նշանածի կը նմանինք» կը մտածէր Ինկմար: Եւ ամբողջ ժամանակը մտքով զբաղած էր թէ ի՛նչ խօսք պիտի հասկցնէ իր մօրն ու ուրիշներուն:

Երբ մտան նպարավաճառին բակը, Ինկմար Պրիթային ըսաւ թէ իր ձին հանգչած էր և եթէ արգելք մը չէր տեսներ ինք՝ կրնային այսօր իսկ կտրել իրենց առաջին կայանը: Պրիթա զգաց թէ վայրկեանը հասած էր մերժելու: Աղաչեց Աստծոյ՝ յայտնելու իրեն թէ արդեօք Ինկմար եկած էր գորովէ՞ն թէ գթութենէն մղուած, որովհետև չէր ուզեր ապերախտ ըլլալ ինք:

Բայց ահա Ինկմար դուրս հանեց սայլակը սայլատունէն, նոր ներկուած սայլակ մը, որուն առիգածը կը փայլէր և բարձիկները նոր ծածկոցներ ունէին: Առջևը կար կէս-չորցած ցորեններու փոքր փունջ մը: Պրիթա տեսաւ զայն և սկսաւ մտմտալ: Ինկմար մտաւ ախոռը, դըրաւ ձիուն ասպազէնը և երբ լծեց սայլակը, Պրիթա տեսաւ թէ ուրիշ կէս մը չորցած փոքր փունջ մըն ալ կը զարդարէր կենդանիին մանեակը: Այն ատեն մտածեց թէ Ինկմար ուրախ ըլլալու է՝ զինքը գտած ըլլալուն համար, և որոշեց լռել, վախնալով թէ Ինկմար զինքը երախտա-

մոռ և իր ըրած բարիքին գեղեցկութիւնն ըմբռնելու անկարող չկարծէ:

Ճամբայ ինկան. և լռութիւնը խզելու համար՝ Պրիթա գիւղին վրայ տեղեկութիւններ հարցուց Ինկմարէն: Ամէն մէկ հարցում Ինկմարին կը յիշեցնէր մարդ մը՝ որուն կարծիքէն վախ ունէր: Այսպէս, Ինկմար պատասխան կուտար միավանկ բառերով. ու դարձեալ Պրիթա քիչ մնաց որ պահանջէ ետ դառնալ. «Գըթութեան համար է որ եկած է տանելու զիս»:

Շուտով Պրիթա դադրեցաւ հարցուփորձ ընելէ, և մղոններ անցան՝ մէկը միւսին ետևէն՝ խոր լռութեան մէջ: Բայց, պանդոկ մը հասնելով, Պրիթա սուրճ ու թարմ հաց գտաւ՝ իրեն համար նախապատրաստուած և ափսէին վրայ ալ ծաղիկներ դեռ: Անտարակոյս, Ինկմար այս բոլորը հրամայած էր նախընթաց օրը: Գըթութեա՞ն համար էր ասիկա ալ. և կամ եթէ երէկ ուրախ էր, այսօր արտմած չէ՞ր իր բանտէն դուրս ելլելը տեսնելէ ետք:

Գիշերը քնացան պանդոկի մը մէջ և առտուն կանուխ ինկան ճամբայ: Ժամը տասին մօտ՝ նշմարեցին իրենց գիւղական եկեղեցիին զանգակատան սլաքը: Երբ անցան, եկեղեցիին ճամբան արդէն լեցուն էր բազմութեամբ և կը հնչէին զանգակները:

— Ա՛խ, Տէ՛ր Աստուա՛, այսօր կիրակի է, ըսաւ Պրիթա՝ ակամայ ձեռքերը միացնելով իրարու:

Մոռցաւ ամէն բան՝ միտքը դնելով շնորհակալ ըլլալ Աստծոյ և իր նոր կեանքը սկսիլ՝ հինօրեայ եկեղեցիին կամարին տակ աղօթքով մը:

— Կուզեմ ժամերգութեան ներկայ ըլլալ,

ըսաւ :

Պրիթա՝ լեցուած հոգեզգածութեամբ ու երախտագիտութեամբ, չի մտածեց անգամ թէ իր այս առաջարկութեան մասին ի՛նչ կրնար զգալ Ինկմար, որուն պատասխանը քիչ մնաց որ ըլլայ շ ո ր ո շ մը : Ի՛նչ, դիմագրաւել գեղացիներուն ծակող նայուածքներն ու չարախօս լեզո՞ւն : Բայց, կամայ ակամայ օր մը տեղի պիտի չունենա՞ր ատիկա·· և Ինկմար քշեց իր ձին դէպի եկեղեցիին ճամբան :

Շատեր կը սպասէին ժամերգութեան, նըստած քարէ փոքր պատին վրայ : Երբ տեսան Ինկմարին ու Պրիթային գալը, սկսան արմուկով իրար հրմշտուկներն ու փսփսուքները : Ինկմար նայեցաւ Պրիթային՝ որ մատները խաչաձևած, կարծես չէր գիտեր թէ ուր կը գտնըուի : Պրիթա մա՛րդ չէր տեսներ, բայց Ինկմար տեսաւ ամէնքը ու ամէն բան : Շատերը նոյնիսկ կը վազէին սայլակին ետևէն և Ինկմար չի զարմացաւ : Գեղացիները կրնայի՞ն մտքէ անցընել թէ իր կառքով եկեղեցի պիտի բերէր այն կինը՝ որ խեղդած էր իր զաւակը : «Է՛, չափէն աւելի է աս, մտածեց Ինկմար, չա՛փէն աւելի» :

— Աղէկ կ՚ըլլայ որ անմիջապէս ներս մտնես, ըսաւ Ինկմար՝ օգնելով Պրիթային որ վար իջնէ կառքէն :

— Հարկա՛ւ, պատասխանեց Պրիթա. ինք եկեղեցիին համար եկած էր և ոչ թէ մարդոց :

Ինկմար քակեց ձին, հանեց սանձը և յարդ տուաւ անոր, առանց աճապարանքի : Ամէնքն ալ ուշադրութեամբ կը նայէին իրեն, բայց մէկը խօսք մը չ՚ուղղեց իրեն :

Երբ որ Ինկմար ներս մտաւ եկեղեցիէն, աղօթողները արդէն կեցած էին իրենց տեղերը և խ ո ր հ ո ւ ր դ-խ ո ր հ ի ն ը կ՚երգուէր : Ակնարկ մը ձգեց կիներուն կեցած կողմը և առաջ անցաւ · բոլոր նստարանները բռնուած էին, բացի մէկէն՝ որուն վրայ մէկ հոգի մը նստած էր, Պրիթա՛ն : Ինկմար հասկցաւ որ դիտմամբ անոր քով նստող չէր եղած : Քանի մը քայլ ալ առաւ, դարձաւ կիներուն նստած կողմէն և գընաց նստեցաւ Պրիթային քով : Պրիթա գլուխը վեր վերցուց և սաստիկ զարմացաւ, որովհետև մինչև այդ ատեն բան մը նկատած չէր : Երբ հասկցաւ թէ մարդիկ խոյս կուտային իրմէ, անհետացաւ իր կրած կրօնական հանդիսաւորութեան զգացումը և անոր յաջորդեց անհուն տրտմութիւն մը : Չլալու համար, առաւ նստարանին վրայ դրուած հին աղօթագիրքը և խորասուզուեցաւ անոր մէջ · բայց իր արցունքները կարգիլէին զինք ո՛և է բան կարդալու աւետարաններէն ու առաքեալներու թուղթերէն, զորս կը թղթատէին իր մատները :

Հազիւ քահանան վար իջած էր ամպիոնէն, երբ անոնք դուրս ելան եկեղեցիէն : Ինկմար մեծ աճապարանքով լծեց ձին · իրեն կ՚օգնէր նոյնիսկ Պրիթան, և աղօթողները դեռ վերջացուցած չէին սաղմոսը՝ որ անոնք ճամբայ ինկան, երկուքն ալ միևնոյն մտածման յաճախանքին տակ · — ով որ այդպիսի ոճիր մը գործած է՝ չի կրնար ապրիլ միւս մարդոց հետ : Եւ երկուքն ալ կը զգային թէ եկեղեցիին մէջ նըստած էին ամբաստանեալի աթոռին վրայ :

Իրենց այս սրտի անձկութեան տակ, Պրիթա յանկարծ նշմարեց Ինկմարսկարդը, բայց հազիւ կրցաւ ճանչնալ հին ագարակը՝ իր հող–

Շողուն կարմիր գոյնին տակ։ Պրիթա յիշեց որ լսած էր թէ ազարակը պիտի ներկէին՝ Ինկմարի ամուսնութեան առեն և պատկը յետաձգած էին այն պատճառով որ ներկելու ծախքը չէին ուզած ընել։ Հասկցաւ թէ Ինկմար հիմա ուզած էր մոռցնել տալ իր յանցանքը, բայց հասկցաւ միևնոյն առեն թէ այս բանը շատ դժնդակ կերևէր իրեն։

Երբ մտան բակը, տնեցիները սեղանի նստած էին։

— Ահա այան, ըսաւ ծառաներէն մէկը՝ դուրս նայելով։

Մայր Մարթան հազիւ վեր առաւ իր քնաթաթախ արտևանունքները։

— Ամէնքդ ալ տեղերնիդ նստեցէք, ըսաւ. մէկը սեղանէն թող չ'ելլէ։

Ծերունի կինը ծանրադանդաղ կերպով անցաւ սենեակէն, և ծառաները որ աչքով կը հետևէին անոր՝ տեսան թէ, իր արժանապատուութիւնը բարձր ընելու համար, հագաւ իր տօնական լաթերը, ձգեց մետաքսէ շալը իր ուսերուն վրայ և կապեց մետաքսէ եաղման գլուխը։

Մայր Մարթա կը կենար դրան շրջանակին մէջ՝ երբ ձին կանգ առաւ։ Ինկմար վար ցատկեց սայլակէն, մինչ Պրիթա կը մնար նստած։ Ինկմար անցաւ անոր քովէն և քակեց կառքին առիդածին կոճակները։

— Ջե՞ս իջներ։

— Ո՛չ, չեմ կարծեր որ պիտի իջնեմ։

Պրիթա փղձկած էր և յամառօրէն ձեռքերը կը պահէր աչքերուն դէմ։

— Բնաւ գալու չէի ես, ըսաւ հեծկլտուքի

մը մէջ։

— Ինչո՞ւ պիտի զգայիր. իջի՛ր կըսեմ, կրկնեց Ինկմար։

— Թո՛ղ որ քաղաք վերադառնամ. ես պէտք եղածին չափ արժանի չեմ քեզի։

Ինկմար տնկուած կը կենար իր տեղը, կառքին առիդածը ձեռքին մէջ։

— Ի՞նչ կըսէ, հարցուց մայր Մարթա դըռնէն։

— Կըսէ թէ ինք պէտք եղածին չափ արժանի չէ մեզի, պատասխանեց Ինկմար, որովհետև Պրիթային ըսածները լսելի չէին ըլլար՝ իր արցունքներուն պատճառով։

— Լալո՞ւն պատճառն ի՛նչ է հապա, հարցուց ծերունի կինը։

— Պատճառն այն է որ թշուառական մեղաւոր մըն եմ ես, պատասխանեց Պրիթա, երկու ձեռքերը դրած իր կուրծքին վրայ՝ որ կը ճաթէր։

— Ի՞նչպէս, հարցուց նորէն մայրը։

— Անոր համար որ՝ թշուառական մեղաւոր մըն է, կրկնեց Ինկմար։

Երբ Պրիթա լսեց թէ Ինկմար այդ բառերը կը կրկնէ ցուրտ ու անտարբեր ձայնով մը, ճշմարտութիւնը շատ յայտնի դարձաւ։ Ո՛չ, երբե՛ք, Ինկմար կրկնած պիտի չըլլար զանոնք՝ եթէ սիրած ըլլար զինք, եթէ ամենափոքր զգացում մը ունենար իրեն նկատմամբ։

— Ինչո՞ւ կառքէն վար չ'իջնար, հարցուց պառաւը։

Պրիթա կռուեցաւ իր արցունքներուն դէմ և պատասխանեց վերջապէս հասկնալի ձայնով մը։

— Որովհետեւ չեմ ուզեր ինծի հետ Ինկմարը դժբախտութեան տանիլ։

— Կը գտնեմ որ իրաւունք ունի, ըսաւ Ինկմարուկարտի տիրուհին։ Թո՛ղ որ մեկնի, պզտի՛կ Ինկմար։ Ապա թէ ոչ, ես պիտի մեկնիմ տունէն։ Մէկ գիշեր անգամ պիտի չքնանամ այդ կնոջ հետ միեւնոյն յարկին տակ։

— Աստուծո՛ւ սիրուն համար, թո՛ղ տուր որ մեկնիմ, հեծեծեց Գրիթա։

Ինկմար դարձուց ձին յիշոցով մը եւ ցատկեց սայլակին մէջ, հոգին բերանն եկած՝ պայքարէն եւ զզուած ամենէն։

Ճամբուն վրայ, շատ անգամ հանդիպեցան մարդոց որ կը վերադառնային ժամասացութենէն։ Ինկմար նեղուեցաւ ասկէ եւ ձին քշեց անտառը՝ դէպի գիւղին նեղ, քարոտ, փոս ու ցած հին ճամբան, բայց ուրկէ կրնար անցնիլ կառքը։ Այն պահուն որ կը բռնէր այդ ճամբան, մէկը կանչեց զինք. նամակատան ցրուիչն էր որ նամակ մը կերկնցնէր իրեն։ Նամակը դրաւ իր գրպանը եւ մխրճուեցաւ անտառին մէջ։

Երբ որ ապահով եղաւ թէ ա՛լ ոչ մէկէ մը չէր տեսնուեր, կեցուց ձին եւ դուրս հանեց նամակը. բայց անմիջապէս Գրիթա իր ձեռքը դրաւ անոր թեւին վրայ։

— Մի՛ կարդար, ըսաւ։

— Կարդալու չե՞մ։

— Ո՛չ, չ՚արժեր։

— Ինչէ՞ն գիտես թէ չարժեր։

— Ես եմ գրեր նամակը։

— Այն ատեն դուն անձամբ կրնաս ըսել թէ ի՛նչ գրուած է մէջը։

— Չեմ կրնար։

Ինկմար նայեցաւ անոր երեսը, որ կաս կարմիր կտրած էր՝ տեսակ մը անձկութիւն ալ վայրագ կը դարձնէր անոր աչքերը։

— Բայց եւ այնպէս, կը կարծեմ թէ հարկ է որ կարդամ այս նամակը, ըսաւ Ինկմար։

Սկսաւ բանալ զայն. Գրիթա զուր տեղը ջանաց խլել անոր ձեռքէն։

— Ա՜խ, Տէ՜ր իմ Աստուած, հառաչեց, ըսել է բան մը պիտի չխնայուի՞ ինծի։

Եւ աղաչեց.

— Ինկմա՛ր, սպասէ քանի մը օր ու նոր կարդայ՝ երբ որ ես նաւուն վրայ ըլլամ։

Բայց Ինկմար արդէն բացած էր թուղթը եւ աչքով կ՚անցնէր անոր վրայէն։ Գրիթա ձեռքը դրաւ թուղթին վրայ։

— Լսէ՛, Ինկմա՛ր, քահանան գրել տուաւ ատիկա ինծի. խոստացեր էր ինծի որ քովը պիտի պահէ զայն եւ քեզի պիտի ղրկէ միայն այն ատեն՝ երբ ես ծովուն վրայ ըլլամ։ Իրաւունք չ՚ունիս կարդալու զայն։ Թող որ առաջ մեկնիմ ես։

Ինկմար զայրալից ակնարկ մը ուղղեց անոր եւ վար ցատկեց կառքէն՝ կարենալ ազատ կարդալու համար։

Գրիթա անձնատուր էր եղած այն ընդվզումներէն մէկուն, որոնք ատենօք կը յուզէին զինք՝ երբ իր կամքէն աւելի զօրաւոր կամքի մը կը բաղխէր։

— Ճշմարիտ չէ ինչ որ գրուած է ատոր մէջ, պոռաց։ Տէրտէ՛րը գրել տուաւ ինծի ատոնք։ Չեմ սիրեր քեզ, Ինկմա՛ր, կը հասկնա՞ս։

Ինկմար վեր առաւ աչքը եւ անոր ուղղեց զարմացած նայուածք մը։ Այն ատեն Գրիթա

ըլլալ և հլութիւնը, որ սորված էր բանտէն, արթնցաւ իր սրտին մէջ. արդարև, ինք չէր տառապեր այնքանէն անդին՝ որքանին արժանի էր:

Ինկմար կը մնար աթոռի վրայ, զբաղուած իր նամակովը: Յանկարծ ճմրթկեց զայն իր կոշտ մատներուն մէջ և իր կոկորդէն դուրս ելաւ հռնդիւնի պէս ձայն մը:

— Բան չեմ հասկնար, ըսաւ՝ ոտքը գետնին զարնելով: Աչքիս առջև ամէն բան պար կը պարէ:

Դարձաւ սայլակին շուրջը և ուժով բռնեց Պրիթային թևէն:

— Շիտա՞կ է ասոր մէջ գրուածը թէ դուն զիս կը սիրես:

Իր ձայնը բիրտ էր և դեռահաս կինը մնաց համր՝ զայն տեսնելով այսքան սոսկալի:

— Նամակին մէջ գրուած է որ կը սիրես զիս. այո՞ թէ ոչ, կրկնեց կատաղութեամբ:

— Այո՛, ըսաւ Պրիթա անմեղ ձայնով մը:

Իր դէմքը կծկուեցաւ դժնդակ և դժուարին ծիծաղով մը:

— Աստուած գիտէ թէ, ըսաւ Պրիթա հանդիսաւորապէս, իմ ամէն օրուայ աղաչանքս էր՝ մեկնելէ առաջ անգամ մըն ալ տեսնել քեզ:

— Ո՞ւր մեկնելէ առաջ:

— Ամերիկա:

— Գրողին բերանն երթամ՝ եթէ թողում որ Ամերիկա երթա՛ս:

Ինկմար ա՛լ ինք իրեն տէրը չէր. քանի մը քայլ առաւ սայթաքելով դէպի թաւուտը, նետուեցաւ գետինը և հեծկլտաց: Պրիթա գնաց անոր մօտ և նստեցաւ քովը. ինքզինք կը զգար

երջանիկ, երջանի՛կ, բայց խնդալու չափ երջանիկ:

— Ինկմա՛ր, պզտի՛կ Ինկմար, մրմնջեց՝ տալով անոր գգուական անունը. թո՛ղ որ խօսիմ քեզի. կը յիշե՞ս թէ դատարանին առջև, երեք տարի առաջ, ըսիր որ՝ եթէ զգացումներս փոխեմ, պիտի ամուսնանաս հետս: Չէի կրնար հաւատալ թէ կրնա՛ր մէկը այդքան գեղեցիկ բան մը ըսել՝ մանաւանդ իմ ըրած գործէս ետքը: Այն ատեն քեզ գիտեցի և ինծի թուեցաւ թէ դուն ամեն երիտասարդէ աւելի աղուոր և անոնց ամենէն աւելի կարող էիր ու միակը՝ որուն հետ լաւ էր ապրիլը: Դուն այնքան սիրելի դարձար ինծի որ վստահ էի թէ պիտի գաս փնտռես զիս. յետոյ՝ չէի համարձակեր հաւատալ ասոր:

Ինկմար վեր վերցուց գլուխը:

— Ինչո՞ւ համար չգրեցիր ինծի:

— Բայց չէ՞ որ գրեցի:

— Գրեցիր՝ ներողութիւն խնդրելու համար ինձմէ. այո՛, բայց իմ ըսածս աս չէ...

— Ի՞նչ գրէի հապա:

— Միւս բանը:

— Ո՛հ, ինչպէ՛ս, ինչպէ՛ս. ես աս ալ գրեցի՝ վստահելով քահանային խոստումին թէ նամակս քեզի պիտի խրկէ իմ մեկնելէս ետքը:

Ինկմար բռնեց Պրիթային ձեռքը, բացաւ զայն գետնին դիմաց և զարկաւ անոր վրայէն:

— Կուզեմ ծեծել քեզ, ըսաւ:

— Ինչ որ ուզես՝ կրնաս ընել ինծի, Ինկմա՛ր, պատասխանեց Պրիթա:

Աչքերը ձգած անոր դէմքին վրայ՝ ուր տառապանքը նոր գեղեցկութիւն մը դրոշմած էր,

Ինկմար չխտկուեցաւ և ծանրապէս կրթնեցաւ իր ուսին վրա։

— Քիչ էր մնացեր որ Ինկմար թողուր քեզ՝ որպէսզի մեկնիս... ա՛հ, գոհ եղած էի իմանալով որ Ամերիկա կերթաս...

— Այո՛, գիտե՛մ. հայրս գրած էր ինծի։

— Եւ երբ մօրս կը նայէի, անկարելի կը թուէր ինծի որ իրեն հարս տայի քեզի պէս աղջիկ մը...

— Անկարելի է դարձեալ, Ինկմա՛ր։

— Ու այնքա՛ն գլխու ցաւանք, այնքա՛ն խնդիրներ ունեցած եմ քեզի համա՛ր... Ասոնք չեմ ըսեր անոր համար որ ցաւ պատճառած են ինծի. ո՛չ, միայն մտածէ թէ կրնայի թողուլ քեզ որ մեկնի՛ս։

Եւ Ինկմար կը հարցափորձէր զայն, կը ըստիպէր, անոր կրկնել կուտար թէ ո՛րքան մըտածած էր իր վրայ, ո՛րքան հալ ու մաշ եղած էր իր յիշատակովը։ Եւ հանդարտեցաւ, կամաց կամաց՝ տղու մը պէս որուն օրօր մը կ'երգեն։

Ցանկարծ ընդմիջեց զայն և անոր ըսաւ մեծ քաղցրութեամբ մը.

— Բան մը չի կա՞յ որ ուզես պատմել ինծի։

— Կայ։

— Շա՞տ անգամ կը խորհէիր անոր վրայ։

— Գիշեր ու ցորեկ։

— Եւ այդ մտածումը կը խառնուէր ամէ՞ն բանի։

— Ամէ՛ն բանի։

Պատմէ ուրեմն, որպէսզի երկուքով տանինք զայն։

Ինկմար տեսաւ անոր լայն աչքերուն մէջ այն արհաւիրքն ու այն խելառանքը՝ զորս ճանչ-

ցած էր ատենօք, բայց որոնք ցրուեցան ու անհետացան քանի սկսաւ խօսիլ անիկա։

— Հիմա նորէ՞ն մեկնիլ կուզես։

— Ա՛խ, գիտես որ կուզեմ մնալ. բայց անկարելի է, պզտի՛կ Ինկմար, անկարելի է։

— Իսկ ես կը մտածեմ թէ կարելի է. որովհետև, ասկէ վերջ աշխարհիս մէջ քեզմէ զատ ա՛լ ուրիշ բանի մը հոգը չունիմ։ Դառնանք ագարակը։

— Ո՛չ, չեմ համարձակիր, ըսաւ Պրիթա։

— Մայրը այնքան վտանգաւոր չէ՝ երբ հասկընայ թէ ես իմ ուզածս գիտեմ... և յետոյ, ըսեմ քեզի որ, աւելցուց խորհրդաւոր ժպիտով մը, վախնալու բան չունիս. մէկը ունինք մենք որ կ'աշխատի մեզի համար. հա՛յրս։ Պիտի տեսնես թէ ամէն բան կարգին պիտի դնէ անիկա։

Մէկը կը մօտենար ճամբէն. Քայսա՛ն էր. բայց առաջ չի ճանչցան զայն, որովհետև կողով չունէր հետը։

— Բարև՛, բարև՛, ըսաւ Քայսան շատ հեռուէն՝ նշմարելով զանոնք։ Ահա դուք հանգիստ հանգիստ նստեր էք հոս, մինչդեռ Ինկմարակարտի բոլոր ծառաները ձեզ փնտռելու ելեր են։ Այնքան աճապարանքով ելաք եկեղեցիէն որ չը կրցայ բարև մը տալ Պրիթային. անոր համար՝ իջայ ագարակը։ Քահանան ալ արտորանքով հոն եկաւ և տակաւին իր աչը չ'առած՝ անիկա սրահը մտած էր և կը պոռար մայր Մարթային. «Հիմա, մա՛յր Մարթա, պիտի խնդաս Ինկմարին երեսէն։ Անիկա ցոյց տուաւ թէ արժանի զաւակն է հին գերդաստանին և ա՛լ ժամանակը եկած է զինքը կոչելու Մեծ Ինկմար»։ Մայր Մարթան կը մնար կեցած տեղը, հան-

կուշտելով ու քակելով իր եղմային ծայրերը· — «Ի՞նչ կըսէ Տէր-Հայրը» հարցուց վերջապէս մայր Մարթան։— «Տուն է բերեր Պրիթան· հաւատա՛ ինծի, մա՛յր Մարթա, ասոր օրհնութիւնը պիտի առնէ իր բոլոր օրերուն մէջ։ Երբ զինքը տեսայ եկեղեցին, կորսնցուցի քարոզիս թելը, որովհետեւ իմ խօսած բոլոր քարոզներէս աւելի գեղեցիկ քարոզ մըն էր այդ բանը։ Ինկմար մեզի օրինակ պիտի դառնայ՝ իր ողորմած հոգի հօրը պէս»։— «Տէր-Հայրը դժուարին լուրեր է որ կուտայ»։— «Ի՞նչ, ըսել է որ դեռ տուն չէ՞ եկեր»։—«Ո՛չ, տունը չէ· թերեւս նախ Պէրկսքօգ գացեր են»։

— Մայրը այդպէ՞ս ըսաւ, աղաղակեց Ինկմար·

— Այո՛, և մինչդեռ մենք կը՛սպասէինք, ծառաներ մէկը միւսին ետեւէն խրկեց որ գան ձեզ փնտռեն...

Բայսա կը շարունակէր խօսիլ, բայց Ինկմար ալ չէր լսեր անոր ըսածները։ Ինք հեռուն, շա՛տ հեռուն էր իր մտածումներով... «Հիմա, կը մտնեմ երկինքը, այն սրահին մէջ ուր կը գտնուին ծերունի Ինկմարները»։— «Բարե՛ւ, Մեծ Ինկմար Ինկմարսօն», կ՚ըսէ հայրը դիմաւորելով զիս— «Բարեւ, հա՛յր, և շնորհակալութիւն՝ քու աջակցութեանդ համար»։— «Այո՛, հիմա կրնաս ամուսնանալ, կ՚ըսէ հայրը, և մնացածը ինքնիրեն կ՚ըլլայ»։— «Երբեք չպիտի յաջողէի՝ եթէ չ՚օգնէիր ինծի»։— «Բայց, պէտք չի կար կախարդ ըլլալ ասոր համար, կըսէ հայրը։ Մե՛նք, Ինկմա՛րներս, ուրիշ բանի պէտք չ՚ունինք՝ եթէ ոչ հետեւելու Աստծոյ ճամբուն»։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ՏՈՒՆԸ

Քսան տարիէ ի վեր, այն գիւղին մէջ ուր կ'ապրէր Ինկմարսօններու հին գերդաստանը, ոչ մէկուն մտքէն անցած էր նոր հաւատք մը ընդունելու կամ հետեւելու հինէն տարբեր կրօնական պաշտամունքի մը։ Կը լսուէր թէ հոս ու հոն, Տալէքարլիի գիւղերուն մէջ նոր աղանդներ կազմուած էին. բայց, իմանալով թէ մարդիկ գետին կամ լճին մէջ մտնելով կընդունէին կրկնամկրտականներու մկրտութիւնը, գեղացիները կը խնդային՝ ըսելով. «աղէկ բաներ են ատոնք՝ Ափէլպօցիներուն կամ Գակնէֆցիներուն համար, բայց մեր գեղին մէջ չեն կրնար մտնել»։ Եւ որովհետեւ Ինկմարսկարտի գեղացիները կապուած կը մնային հին սովորութիւններուն, ամէն կիւրակի կ'երթային պաշտամունքի։ Նոյնիսկ ձմեռուան մէջտեղուանքը,

ամենէն գէշ օդերուն, կրցողները ամէնքն ալ կերթային ժողովարան: Եւ իրա՛ւ որ կարևոր էր երթալն ալ, որովհետև դիւրին բան չէր երկու ժամ կենալ առանց կրակի և քառասուն աստիճան ցուրտ ժողովարանի մը մէջ՝ եթէ հոն բերնէ բերան լեցուն աղօթող չգտնուէր:

Եթէ մարդիկ այսպէս բազմութեամբ կը լեցուէին ժողովարանը՝ թող չկարծուի թէ նըշանաւոր երէց մը ունէին: Երէցը որ Մեծ Ինկմարի երիտասարդութեան ատենուայ մարդոցմէն էր, պատուական մէկն էր, բայց ինչքան ալ ուզէիր որ աղէկ ըսես իրեն, դարձեալ պարտաւորուած էիր խոստովանելու թէ՝ պերճախօսութեան տաղանդ չունէր անիկա: Այդ ատեններուն, մարդիկ եկեղեցի կ'երթային՝ պատուելու Աստուած և ոչ թէ գեղեցիկ քարոզ մը վայելելու: Եւ երբ տուն կը դառնային՝ քթերնին կաս-կապոյտ կտրած ցուրտէն, կ'ըսէին իրարու. «Բարին Աստուած ընդունական կը համարի աղօթքդ որ այս ցուրտին եկեղեցի գացիր»:

Էականն ալ ա՛ս էր: Որո՛ւն հոգը թէ երէցը դարձեալ տուաւ այն քարոզը՝ որ տուեր է ամէն կիւրակի, քառասուն տարի անընդհատ իր երիցական պաշտօնն ստանձնելէ ի վեր: Շատերը գոց կը վերադառնային տուն՝ իրենց լսածէն: Գիտէին թէ իրենց կարդացուեր էր Աստըծոյ խօսքը, և այդ խօսքը կը գտնէին բարի: Միայն, գեղին վարժապետը և մէկ քանի խոհական ծերեր ատեն ատեն կը փսփսային իրարու ականջի. «Ճշմարիտ որ մեր երէցը մէկ քարոզ ունի միայն. Ի՛նչ է Աստծոյ նախախնամութիւնը և ինչպէս կը կառավարէ Աստուած: Բայց

անիկա կը դիմանայ այնքան ատեն՝ որքան ատեն որ նոր աղանդաւորները այս կողմերուն մօտեցած չեն. սակայն խնդիրն ան է որ բերդը լաւ պաշտպանուած չէ և կրնայ կործանիլ առաջին յարձակման իսկ»:

Իրաւ ալ, Շրջիկ քարոզիչները միշտ գեղին հեռուներէն կանցնէին՝ առանց ներս մտնելու. «Ի՞նչ կարժէ ներս մտնելը, կըսէին. այդ մարդիկը չեն ուզեր կրօնական Արթնութեան խօսքը լսել»: Մօտիկ գիւղերու Աւետարանիչներն ու Արթնցողները մեծ մեղաւորներ կը սեպէին Ինկմարսոններն ու անոնց գեղացիները. և երբ կը լսէին անոնց ժողովարանի զանգակներուն ձայնը, համոզուած էին որ այդ ձայները կ'ըսեն. «Քնացէ՛ք ձեր մեղքերո՛ւն մէջ. քնացէ՛ք ձեր մեղքերո՛ւն մէջ»:

Գեղացիները, մեծ ու պզտիկ, շատ բարկացան, նոյնիսկ կատաղութիւն զգացին՝ իմանալով որ այդպէս կըսեն իրենց զանգակներուն համար: Գիտէին որ իրենցմէ ոչ մէկը ետ չէր մնար իր տէրունական աղօթքն ըսելէ՝ երբ կը հնչէին այդ զանգակները. ամէն ետինքի անոնց թնդիւնը դադար կուտար աշխատանքին ամէն տեղ՝ դաշտին, ինչպէս տուներուն մէջ: Էրիկ մարդիկ վար կ'առնէին իրենց գլխարկը. կիները իրենց գլուխը կը ծռէին. ամէնքը կը մնային անշարժ, Տիրոջը աղօթելու ժամուն մէջ: Եւ երբեք Աստուած իրենց չէր երևեր այնքան հզօր և այնքան մեծարելի՝ որքան ամառուան իրիկուններուն, երբ կը տեսնէին թէ դադար կառնեն գերանդիները, կը կենան արօրները ակօսներուն մէջ և կընդհատուի վայրկեան մը բեռներուն պարպումը սայլերէն, պարզապէս ա-

նոր համար որ ժամուն զանգակը հնչած է: Իրենց այնպէս կը թուէր թէ, այդ պահուն, Աստուած ինքն է որ կը սաւառնի գեղին վերեւէն, նստած իրիկուան գեղեցիկ ամպի մը վրայ, մե՛ծ, բարի՛, և ցանելով Լիաբուռն օրհնութիւն ամբողջ գաւառին վրայ:

Վարժապետը հասարակ գեղացի մըն էր որ իր գիտցածը սորված էր ինքնաշխատութեամբ և վարժապետանոցի երես չէր տեսեր բնաւ: Բայց կարող մարդ մըն էր և միս մինակը կրնար կարդացնել հարիւր մանուկներ: Մեծապէս կը յարգէին զինքը, և երեսուն տարիէ ի վեր դըպրոցին վարժապետը մնացած, ծերունի Սթօրմը չէր դադրած միշտ իր խղճին վրայ զգալու գեղին բարոյական բարիքը: Երէցին անկարողութիւնը մտմտուք կը պատճառէր իրեն: Մինչև միւս գիւղերուն նոր մկրտութեան խօսքը չէր ելեր, Սթօրմ տեղէն չէր շարժած. բայց երբ իմացան թէ այդ հաւատացեալները կը հաւաքուէին նոր հաղորդութիւն առնելու, ա՛լ չի կըրցաւ ինքզինքը բռնել: Աղքատ մարդ էր ինք, ուստի գեղին երևելիներէն մէկ քանին համոզեց որ դրամ տան իրեն՝ մատուռ մը շինելու:

— Գիտէք թէ ի՛նչ է նպատակս, ըսաւ անոնց: Կուզեմ քարոզել՝ որպէսզի հոգիները միան հին հաւատքին մէջ: Ի՛նչ պիտի ըլլայ վիճակնիս, եթէ Քարոզիչները յանկարծ մեր գեղին մէջ ալ բերեն իրենց նոր մկրտութիւնն ու նոր հաղորդութիւնը, և մէկը չգտնուի մեր գեղացիներուն ուսուցանելու որ՝ ճշմարիտ վարդապետութիւնը սուտէն զանազանեն:

Վարժապետն ու գեղին երէցը սիրով էին իրարու հետ: Շատ անգամ միասին կը պտտէին

երիցատան ու դպրոցին մէջտեղ գտնուած ճամբուն վրայ: Կերթային կուգային երկար ատեն ճամբուն վրա՝ երկու մարդոց պէս, որոնք անգամ մը իրարու քով ըլլալէ ետք, կարծես ալ չեն ուզեր բաժնուիլ: Իրկունը, երէցը կուգար վարժապետին տունը և ընտանեբար կը նստէր խոհանոցին մեծ օճախին մօտ, զրոյց ընելով Սթօրմին կնոջ՝ Սթինա մայրիկին հետ: Շատ իրկուններ վրայէ վրայ հոն կըլլար, որովհետև կը ձանձրանար իր տանը մէջ, իր կինը միշտ անկողնի ինկած և տանը գործերն ալ տակնուվրայ վիճակի մէջ ըլլալուն համար:

Զմրան իրկուն մը, վարժապետն ու իր կինը, նստած կրակետղին քով, կխօսակցէին ցած ձայնով և ծանրօրէն, երբ իրենց տասներկու տարեկան փոքր աղջիկն ալ կը խաղար սենեակին մէկ անկիւնը: Ցարդագոյն խարտեաշ մազերով, մուտ ու կարմիր երեսներով, պայծառ աղջիկ մըն էր Կէրթրուտ և չունէր այն խոհական ու պառաւուկ երևոյթը՝ որ կ'ունենան ընդհանրապէս վարժապետներուն զաւակները:

Այն անկիւնը ուր նստած էր Կէրթրուտ՝ իր խաղերուն տեղն էր: Հոն հաւաքած էր չէչէ գունաւոր կտորուանքներ, կտրած գաւաթներ ու պնակներ, կլոր փոքր խիճեր, քառակուսի փայտի կտորուանքներ և ուրիշ ասոնց պէս առարկաներ: Թէ՛ հայրը, թէ՛ մայրը չէին խանգարեր զինք: Պըպըզած գետինը, մէկ մէկու վրայ և իրարու ետև շարելով իր փայտի ու ապակիի կտորները, աճապարանքի մէջ էր՝ վախնալով թէ զինքը դասի ու աշխատելու կը կանչէն: Բայց, բարեբաղդաբար, այդ իրկուն, հայրը կարծես մտքէն անգամ չէր անցներ թուա-

բանութեան խնդիրները։

Պզտիկ Կէրթրուտ մեծ ծրագիր մը յղացած էր իր փոքր անկիւնին մէջ։ Կուզէր իրենց գիւղը շինել՝ եկեղեցիով, դպրոցով, մինչեւ իսկ գետակովն ու կամուրջովը, որովհետեւ կուզէր որ իր շինածը կատարեալ ըլլայ։ Ահա արդէն խիճեր ու քարեր՝ կը ձեւացնէին լեռներու այն պատը, որուն մէջ փակուած էր գեղը։ Եղեւնի մանր ոստեր՝ անկուած կատարներուն միջեւ՝ կը ձեւացնէին անտառները. իսկ Քլաքպէրկի եւ Օլոֆչաթանի երկու լեռնագագաթները հովիտին վերեւէն իրարու կը նայէին, ներկայացուած ըլլալով երկու սուր քարերէ։ Թաղարի մը հողը կը ձեւացնէր բոլորաձեւ հովիտը. կը պակսէին միայն կանաչ հերկերը. բայց երեւակայել պէտք էր որ տակաւին գարնան մէջ էինք ու դեռ խոտերն ու ցորենը չէին բուսած։ Ապակիի նեղ ու երկայն կտոր մը հրաշալի կերպով կը պատկերացնէր Տալէլֆը՝ որ կը հոսէր, լայնատարած ու շքեղ, գաւառին մէջէն. ու անհաստատ կամուրջը՝ ձգուած գիւղին երկու մասերուն միջեւ, երկար առենէ ի վեր կը հանգչէր այս գետակին թափանցկութեանը վրայ։ Կարմիր կղմինտրի կտորներ կը նշանակէին ագարակներն ու ամենէն հեռաւոր հիւղակները։ Հիւսիսային կողմը, շրջապատուած իր դաշտերովն ու իր մարգագետիններովը, կը բարձրանար Ինկմարսկարտը, իսկ լեռան զառիթափին վրայ կը նշմարուէր Քօլասէնի աւանը։ Հեռո՛ւն, դէպի հարաւ, կը ճանչցուէր Պէրկսանայի ջրաշարժ մեքենան, ճիշտ այն տեղը՝ ուր գետը, դուրս գալով հովիտէն հեղեղներով ու անկումներով, ուժգնօրէն կը տիրանար բարձունքներէն փակ-

ուած օղակին։ Ճամբաները, աւազ ու խիճ, կանցնէին ագարակներուն արանքէն եւ կէրթային գետին երկայնքէն ի վար։ Հոս ու հոն, դաշտին մէջտեղը, բնակութեանց մօտիկ՝ վեր կը բարձրանային ծառերու փոքր փունջեր։ Պզտիկ աղջիկը այսպէս իր աչքերուն առջեւ ունէր ամբողջ գիւղը. բայց, ամէն անգամ որ գլուխը վեր կը վերցնէր՝ կանչելու իր մայրը որ գայ դիտէ այս հրաշալիքը, կը կենար եւ աւելի խոհեմութիւն կը սեպէր անոր ուշադրութիւնը չ'հրաւիրել իր վրայ։

Հիմա կը շինէր եկեղեցիին աւանը՝ որ՞կը տարածուէր գետին երկու ափերուն վրայ։ Քանի՜ քանի՜ հեղ հարկ եղաւ որ քարերը փոխէ իրենց տեղէն։ Դատաւորին տունը կուզէր տեղահան ընել նպարավաճառին խանութը. իսկ դատաւորին տունն ալ կը նեղուէր բժիշկին տունէն։ Յետոյ, ի՛նչ ընելու էր որ բան մըն ալ չմոռցըուէր. եկեղեցի, երիցատուն, դեղարան, նամակատուն, մեծ ագարակներն ու անոնց յարակից մասերը, պանդոկը, Անտառապահին բընակարանը, հեռագրատու՛նը։ Վերջապէս, ճերմակ ու կարմիր տուները՝ եզերուած կանաչութեամբ, ամբողջ աւանը հո՛ն էր. միայն կը պակսէր դպրոցը։

Դպրոցը պէտք է շինուէր գետակին մօտ, ճերմակ, իր երկու յարկերովը, իր պարտէզովը եւ բակին մէջի վրանին խոշոր սիւնովը։ Փայտի իր լաւագոյն կտորուանքը ձեռքին մէջ, Կէրթրուտ կը մտածէր, ոչ առանց վարանումի, թէ ի՛նչ կերպով կրնայ ճիշտ ու ճիշտ յարմարցընել երկու դասարանները, մէկը՝ վերը, միւսը գետնայարկին վրայ, ինչպէս նաեւ իր ծնող-

քին խոհանոցն ու սենեակը՝ որ իր ալ սենեակն էր։ Երբեք ժամանակ չպիտի ձգէին իրեն՝ որ աւարտէ այսքան գեղեցիկ գործ մը։

Այդ րոպէին, կէրթրուտ լսեց որ մէկը կը քալէր դաւիթին մէջ և ոտքը գետինը կը զարնէր՝ թոթուելու համար ձիւնը։ Երբոր այցելուն երէցն ըլլար, գիտէր թէ ամբողջ իրիկունը ազատ պիտի ըլլար ինք. այս պատճառով էր որ ուրախ սրտով դրաւ գեղին կիսուն չափ մեծ դպրոցի մը առաջին քարը։

Սթինա մայրիկը լսած էր ոտնաձայնը և փութացած էր օճախին մօտ քշելու հին թիկնաթոռ մը։

Իրեն պիտի ըսե՞ս այս իրկուն, հարցուց իր ամուսնին։

— Այո՛, պատասխանեց ամուսինը, առաջին պատեհութեամբ։

Երէցը ներս մտաւ՝ սառած, փուտ կորած, սովորականին պէս հաղորդաբարոյ, և ուրախ որ պիտի կրնայ նստիլ տաքուկ սենեակի մը մէջ։ Իրմէ աւելի հաճելի մարդ կարելի չէ՛ր երևակայել, երբ կուգար այսպէս խօսակցիլ այս ու այն բանին վրայ։ Մէկը երբ անոր դիւրութեամբ ու համարձակութեամբ խօսակցիլը կը լսէր մանր մունր խնդիրներու վրայ, բնաւ չէր կրնար մտածել թէ իր քարոզներուն մէջ այնքան վարանում ունեցող մարդն էր ան։ Բայց, խօսքը կրօնական հարցերու վրայ եկածին պէս՝ կը կարմրէր, կը թոթովէր, բառ կը փնտռէր և չէր կրնար մտքերը արտայայտել։ Միայն լաւ կը զգար ինքզինք՝ մէկ նիւթի մը առջև, — թէ ի՛նչպէս կը կառավարէ Աստուած։

Ցանկարծ վարժապետը դարձաւ անոր և զը-

ւարթ ձայնով մը ըսաւ.

— Հիմա, հարկ է որ երէցին պատմեմ թէ մատուռ մը պիտի շինեմ ես։

Երէցը ուժգունեցաւ և կարծես պիտի կքէր այն թիկնաթոռին մէջ՝ որ մայր Սթինան հրամցուցած էր իրեն։

— Ի՞նչ կըսես, Սթօ՛րմ. մատուռ մը շինել. հապա ե՞ս ի՛նչ պիտի ըլլամ, ժողովարանն ի՛նչ պիտի ըլլայ. աւելո՞րդ ենք մենք։

— Ժողովարանն ու երէցը միշտ պէտք են իրենց տեղը՝ յարեց Սթօրմ։ Մատուռը պիտի կրթնի եկեղեցիին, ահա իմ միտքս։ Եւ այս կողմերէն այնքան քարոզիչներ կանցնին որ պէտք է գօրացնենք ժողովարանը։

— Սթօրմը ինծի բարեկամ կը կարծէի, ըսաւ տխրութեամբ երէցը։

Եւ ինք որ հոն եկած էր գոհ ու հանգիստ, կերևնար հիմա ահաբեկ։ Վարժապետը շատ լաւ կը հասկնար անոր մտահոգութիւնը։ Ամէն մարդ գիտէր թէ երէցը ատենօք լաւ գլխու տէր մարդ էր, բայց իր երիտասարդութեան ատեն խիստ չէն կեանք մը անցուցած էր և կաթուածի մը հետևանքով շատ բան կորսնցուցած՝ իր մըտաւորական կարողութիւններէն։ Դժբա՛խտ մարդ. եթէ շատ անգամ կը մոռնար թէ ինք ուրիշ բան չէ՝ եթէ ոչ իր անձին մէկ աւերակը միայն, ահա ատեն ատեն պարագաները կուգային իր միտքը ձգելու զայն և անմիջապէս մըթին յուսահատութիւն մը կը համակէր զինք։

Այսպէս ուրեմն ջախջախուած կը մնար իր թիկնաթոռին մէջ և ոչ ոք կը համարձակէր խզել լռութիւնը։

— Չէի փափաքէր որ գործին վրայ այսպէս

նայէր Երէցը, ըսաւ վերջապէս Սթօրմ՝ ձայնով մը, որ կը ջանար դարձնել ցած ու մեղմ։

— Ուրիշ բառ մի՛ աւելցներ, Սթօրմ, պատասխանեց Երէցը։ Գիտեմ թէ անուանի քարոզիչ մը չեմ ես, բայց սրբեք մտքէս չէի կրնար անցնել թէ դուն կրնաս օր մը իմ պաշտօնս ձեռքէս առնել մտածել։

Սթօրմ ձեռքերը առաջ երկնցուց, կարծես ետ մղելու համար այդպիսի ամբաստանութիւն մը, բայց լռեց։

Հակադրութիւնը այս երկու մարդոց միջև՝ ակնբախ էր․ վարժապետը՝ հակառակ իր վաթսուն տարեկան հասակին և իր ուսերուն վրայ առած ծանր աշխատանքին, միշտ աւելի քաջառողջ, տալէքարլիցիի բարձր հասակով, գլուխը շրջանակուած սև գանգրահեր մազերով, պղնձագոյն մօրուքով և ուժեղ դիմագծերով՝ բելխար մը կերևնար երէցին քով, որ կարճըճուկ, տափակ կուրծքով և ճաղատ գլխով մարդ մըն էր։ Ասոր համար Սթինա մայրիկն ալ կը մտածէր թէ պէտք է որ իր ամուսինը աւելի հաշտարար երևնայ՝ քանի որ աւելի քաջակազմ է։ Մայր Սթինա նշան ըրաւ իր ամուսնին՝ որ անուշը կապէ․ բայց Սթօրմ ինք ալ, իր կարգին, նշան ըրաւ թէ՝ հակառակ իր զգացած վշտին, չէր կրնար վազ անցնիլ իր նպատակէն։

— Ճշմարտութիւնն այն է որ, կը բացատրէր ան յամրաբար և շատ յստակութեամբ, աղանդաւորներ կը մտնեն գիւղը։ Տեղ մը պէտք է ուր մարդ ժողովուրդին խօսի աւելի յստակ կերպով՝ քան ժողովարանին մէջ․ տեղ մը՝ ուր մարդ իր ուզած բնաբանն 'ընտրէ, ուր մարդ

մեկնաբանէ Աստուածաշունչը, ուր մարդ իր ծուխին սորվեցնէ դժուար հատուածներուն իմաստը, ճշմարիտ իմաստը․․․»։

Իր կինը պարապ տեղը փորձեց կեցնել զինք․ մայր Սթինա կըմբռնէր թէ Երէցը ինքնիրեն կ'ըսէ իր լսած ամէն մէկ բառին վրայ․ «ըսել է թէ ես չեմ կրցա՛ծ լուսաւորել և պահպանել իմ ծուխիս հաւատքը․ ի՞նչ է ուրեմն իմ տկարութիւնս՝ որպէսզի իմ իսկ դպրոցիս վարժապետը, որ ինքնուս գեղացի մըն է, ինքզինք ինծմէ աւելի լաւ քարոզ տուող համա՛րէ»։

Սթօրմ կը շարունակէր խօսիլ և կը ծանրանար հօտը գայլերու յարձակման դէմ պաշտպանելու անհրաժեշտութեան վրայ։

Ես գայլի հետք չե՛մ տեսած, ընդմիջեց Երէցը։

— Իսկ ես գիտեմ թէ անոնք ճամբան են, կուգան, յարեց Սթօրմ։

— Եւ դո՛ւն ես, Սթօրմ, որ դուռը կը բանաս անոնց առջև։

Երէցը ոտքի ելաւ իր թիկնաթոռէն։ Վարժապետին խօսքերը գրգռած էին զինք և քիչ մը կարմրութիւն հանած իր երեսներուն վրայ։

— Սիրե՛լի Սթօրմ, վրայ բերաւ ան տեսակ մը արժանապատուութեամբ, չխօսինք ա՛լ այս բանին վրայ։

Եւ դարձաւ դէպի տան տիրուհին և սկսաւ կատակներ ընել այն գեղեցիկ նոր հարսին վըրայ՝ որուն լաթերը վերջերս ինքը՝ մայր Սթինան հագուեցուցեր էր, որովհետև՝ հարսնիքէն օրերուն, գիւղին հարսերը հագուեցնողն ինք էր։ Բայց ազնուասիրտ գեղջկուհին՝ որ կը կռահէր թէ երէցին անկարողութեան զգացու-

մը, յանկարծ արթննալով որքա՜ն կը տանջէր զայն, չէր կրնար պատասխան տալ անոր՝ այն արցունքներուն պատճառով, զորս իր դժասըրտութիւնը կը բերէր իր աչքերուն մէջ։ Եւ երեցը մինակ կը մնար իր կասկածներուն մէջ. ներքնապէս խորհելով ինքնիրեն. «Աւա՜ղ, եթէ հիմա ունենայի երիտասարդութեանս ուժն ու կարողութիւնները, դիւրութեամբ կը սորվեցընէի այս գեղացիին թէ ո՛րքան գէշ բան է իր ըրածը»։

Եւ յանկարծ, դարձաւ դէպի վարժապետը.

— Դրա՞մ ունկից է հապա։

— Ընկերակցութիւն մը կազմած ենք, պատասխանեց Սթօրմ։

Եւ վարժապետը համրեց շատ մը անուններ՝ ապացուցանելու համար թէ այդ մարդիկը մազի չափ դիտաւորութիւն ունեցած չէին ո՛չ վնասելու եկեղեցիին, ոչ ալ վիրաւորելու երէցը։

—Ինկմար Ինկմարսօ՛նն ալ անոնց մէջ է, ընդմիջեց երէցը՝ կարծես լախտի նոր հարուածէ մըն ալ զարնուած...։ Ա՛հ, յարեց, Ինկմարին վրայ ալ այնքան վստահ էի որքան Սթօրմին։

Եւ, առանց բառ մը ըսելու, նորէն ձեռք առաւ մայր Սթինայի հետ ունեցած իր խօսակցութիւնը։ Նշմարած ըլլ՞լու էր անոր արցունքները, բայց չտեսնելու զարկաւ։

Վայրկեան մը ետքը, նորէն նոյն խնդրին դարձաւ։

— Վա՛զ անցիր, Սթօ՛րմ, աղաչեց, վա՛զ անցիր խաղերս համա՛ր. դուն կուզէ՞ր որ մէկը գար քու դպրոցիդ քով ուրիշ դպրոց մը բանար։

Տէրունի վարժապետը խորհեցաւ վայրկեան մը, աչքերը սեւեռած տախտակամածին վրայ։

— Զեմ կրնար, երէ՛ց, պատասխանեց վերջապէս Սթօրմ՝ ջանալով առնել արիասիրտ և հանդարտ երեւոյթ մը։

Մահահոտ լռութիւն մը տիրեց տասը րոպէի չափ. յետոյ երէցը հագաւ իր մուշտակը, դրաւ իր մաշկեայ գլխարկը և ուղղուեցաւ դէպի դուռը։ Բոլոր այդ ժամերուն մէջ որ միտքը չարչարած էր՝ գտնելու խօսքեր, որ կարող ըլլան համոզել Սթօրմը թէ Սթօրմ գէշ բան կընէր ո՛չ միայն իր անձին, այլ ամբողջ գեղին դէմ՝ որուն փճացում կը սպառնար իր անմիտ ծրագիրը։ Թէև շատ մը բառեր ու շատ մը խօսքեր գլրար հրմշտկած էին իր գլխուն մէջ, բայց ոչ մէկ յստակ ու վճռական բան եկած էր իր շրթունքներուն վրայ, որովհետև մարդ մըն էր ինք՝ որմէ ալ խեր կարելի չէ սպասել։

Երբ որ կը քալէր դէպի դուռը, աչքերը ինկան Կէրթրուտին վրայ որ անկիւնը նստած կըխաղար իր ապակիի ու փայտի կտորուանքներովը։ Սկսաւ դիտել զայն։ Տարակոյս չի կայ որ Կէրթրուտ բառ մը անգամ լսած չէր տեղի ունեցած խօսակցութենէն. ուրախութիւնը կըփայլէր իր բիբերուն մէջ. իր երեսները կարմիր էին՝ սովորականէն աւելի։ Եւ երէցը զարմացաւ՝ իր ճնչիչ տրտմութեան քով տեսնելով այնքան անհոգութիւն ու զուարթութիւն։

— Ի՞նչ կընես, հարցուց անոր։

Փոքր աղջիկը շատոնց աւարտած էր իր գեղը. նոյն իսկ փլցուցած էր զայն և սկսած էր նոր ձեռնարկի մը։

— Ա՛հ, ըսաւ մանուկը, ո՛րքան լաւ պիտի

ըլլար որ երէցը վայրկեան մը աւելի շուտ եկած ըլլա՛ր․ գեղեցիկ գեղ մը շինած էի՝ եկեղեցիով ու դպրոցով։

Ի՞նչ ըրիր հապա։

— Հիմա փլցուցի զայն, որովհետեւ Երուսաղէմ մը շինելու վրայ եմ...

— Ի՞նչ կըսես, ընդմիջեց երէցը։ Փլցուցիր գեղդ՝ Երուսաղէմ մը շինելու համա՛ր։

— Այո՛, վրայ բերաւ Կէրթրուտ։ Աղուո՛ր գեղ մըն էր․ բայց, երէկ, դպրոցին մէջ մենք Երուսաղէմի պատմութիւնը կարդացինք։

Երէցը կը նայէր մանկան․ ձեռքով շփեց իր ճակատը՝ լուսաւորելու համար իր մտքերը։

— Քեզմէ աւելի մեծ մէկն է որ կարծես կը խօսի քու շրթունքէդ, մրմնջեց երէցը։

Աղջկան խօսքերը իրեն այնքան զարմանահրաշ կը թուէին՝ որ զանոնք մտքովը կրկնեց քանի մը անգամ․ այդ խօսքերը կը մնէին իր խորհրդածութեանց սովորական շարքին մէջ, որովհետեւ միշտ կը մտածէր այն եղանակին վըրայ՝ որով Աստուած կը կառավարէ եւ այն միջոցներուն վրայ, որոնք Աստուած գործ կը դնէ, որպէսզի իր կամքը կատարուի։

Այն ատեն ետ դարձաւ դէպի վարժապետը եւ անոր ըսաւ իր սովորական բարի ձայնովը, բայց աչքերուն մէջ ունենալով ուրիշ պայծառութիւն մը։

— Ա՛լ ցաւ չ՚ունիմ քեզի դէմ, Սթօ՛րմ։ Դուն կընես հաւանաբար այն բանը որ հարկադըրուած ես ընել․ Ես ամբողջ ժամանակը շատ խորհեցայ այն եղանակին վրայ՝ որով Աստուած կը կառավարէ, թէեւ դեռ յաջողած չեմ շատ պայծառ կերպով ըմբռնելու զայն։ Չեմ յաջողած ըմբռնել նա՛եւ քու ընելիքդ, բայց կը հասկընամ թէ կընես այն՝ ինչ որ բռնադատուած ես ընել։

II

ԿԸ ԲԱՑՈՒԻ ԵՐԿԻՆՔԸ

Այն գարնան որ շինուեցաւ մատուռը, տեղի ունեցաւ սաստիկ ձիւնհալք մը եւ Տալէլֆը սոսկալի կերպով յորդեցաւ։ Երբեք ուրիշ գարնան մըն ալ ջուրերը այդքան առատ չէին եղած։ Կը թափէին երկինքէն, կը վազէին լեռնէն, դուրս կը պզկային հին ճամբաներէն ու ակօսներէն եւ շաչելով ճամբայ կը փնտռէին դէպի գետը՝ որ կ՚աճէր խօլական արագութեամբ մը․ Տալէլֆը ա՛լ ոչ մռայլ, ոչ պսպղուն, ոչ ալ խաղաղ էր, այլ մութ դեղին գոյն մը ունէր՝ իր մէջ հոսած բոլոր ցեխոտ ալիքներուն պատճառով․ ու այսպէս, տեսնելով իր վրայ լողացող ծառի կոճղերն ու սառի ճերմակ կտորուանքը, մարդ տարօրինակ կերպով չարաշուք տպաւորութիւն մը կունենար։

Սկիզբը, երբ հասակաւոր մարդիկ մտատանջութիւն չէին զգար բնաւ գարնանային այս ջուրերէն, պզտիկները, ընդհակառա՛կը, ազատ ատեն գտածնուն պէս կը վազէին դարանդը և աչքով կը հետևէին բոլոր այն բաներուն՝ որ գետը կը քշէր կը տանէր. ու կը քշէր կը տանէր ո՛չ միայն սառի կտորներ ու ծառի կոճղեր, այլ լուացքի լաստափայտեր, նաւակներ ու խորտակուած կամուրջներ: «Մեր կամուրջն ալ պիտի քշէ շուտով» կ'ըսէին անոնք, քիչ մը սրտերնին դող ինկած, բայց աւելի շատ գոհ՝ որ այսպէս տարօրինակ բան մը պիտի պատահէր:

Յանկարծ խոշոր եղևին մը անցաւ՝ ծփալով իր արմատներովն ու ճիւղերովը, ետևն ունենալով բարտի մը՝ որուն ճերմակ բունը և ուռած խոշոր ու երկար ծիլերը կուգային կարծես լիառագաստ: Եւ այս երկու ծառերուն հետ միասին՝ գլխիվար կը լողար տակնուվրայ եղած յարդի ամբար մը, տակաւին լեցուն չոր խոտով ու յարդով, ինչպէս նաև նաւակ մը՝ իր ողնափայտին վրայ: Այն ատեն մեծ մարդիկն ալ իրենց տեղէն շարժեցան և ամէն կողմէ վազեցին՝ ձողեր ու կարդաձողեր առած, որպէսզի ազատեն շինուածքներն ու կահկարասիները որ գետը կը քշէր կը տանէր իր հետ դէպի հիւսիս:

Վերևի կողմը, հոն ուր ժողովուրդը ցանցառ էր, Ինկմար Ինկմարսօն ոտքի վրայ կեցած էր գետափին մօտ: Հիմա վաթսուն տարեկան էր, բայց շատ աւելի ծեր կ'երևնար, դէմքը կոշտ ու խորշոմած, մարմինը ծռած, նոյնքան ձախաւեր երևոյթով ու նոյնքան մտա-

մոլոր՝ որքան առաջ օրերուն: Ոտքի վրայ, կռթնած երկայն ձողի մը, կը նայէր գետին՝ իր քնաթաթախ աչքովը և մեծաժխոր գետը կը փրփրէր ու կ'իջնէր, հպա՛րտ իր աւարէն, կարծես քամահրելով այդ ծանրաշարժ ու ծանրադանդաղ գեղացին: «Դուն չես որ, կարծես անոր ըսել կուզէր, պիտի գա՛ս ինծմէ առնես՝ իմ յափշտակած բանե՛րս»:

Ինկմար աչքը չէր հեռացներ գետէն և կը նայէր բոլոր խլեակներուն: Յանկարծ փայլուն դեղին գոյնով բան մը նշմարեց՝ որ առաջ կըշարժէր տեսակ մը խարխուլ տախտակամածի վրայ: Բաւական հեռացած էր խլեակը, բայց դիւրին էր ճանչնալ՝ ով որ գիտէր թէ մանկիկներ ի՛նչ լաթ կը հագնին Տալէքարլիի մէջ:

«Ահա մանկիկներ որ լուացանոցի մը մէջ կը խաղան եղեր, մտածեց Ինկմար, և ժամանակ չեն ունեցած ցամաքը դառնալու»:

Եւ իրաւ ալ ահա շուտով նշմարեց դեղին թանձր բրդէ շրջազգեստով, կլոր դեղին գըտակներով երեք փոքր մանուկներ՝ կծկտա՛ծ խարխուլ լաստափայտի մը վրայ, որ կտոր կըտոր կըլլար ալիքներէն և սառոյցի կտորներուն բաղխումէն: Գետին յորձանքներէն մէկը կը հեղէր դէպի ափը:

«Աստո՛ւած տայ որ յորձանքը գայ այս կողմը, մրմնջեց Ինկմար. դիւրութեա՛մբ պիտի կրնամ մանկիկները ցամաք առնել»:

Եւ ահա լաստափայտը՝ կարծես հզօր ձեռքէ մը մղուած, պտոյտ տուաւ և բռնեց դէպի գետափին ուղղութիւնը: Մանուկները այնքան մօտիկցան որ Ինկմար կը տեսնէր անոնց փոքրիկ սարսափահար դէմքերը և կը լսէր անոնց լացը

այց դեռ շատ հեռու էին՝ որպէսզի իր ձողը
անոնց հասնէր ու ասդին քաշէր։ Ինկմար փու-
թաց ուրեմն իջնել դէպի գետը և մտնել ջու-
րին մէջ։

Այս պահուն, գեղացին սա տարօրինակ ըզ-
գացումն ունեցաւ թէ ձայն մը կըսէր իրեն.

— Դուն ալ առաջուան երիտասարդը չես,
Ինկմա՛ր. կրնայ փորձանք մը պատահիլ գլխուդ։

Մտածեց քանի մը վայրկեան և ինքնիրեն
հարցուց թէ իրաւունք ունէ՞ր արդեօք կեանքը
վտանգի ենթարկելու։ Իր կինը, Պրիթա՛ն, մե-
ռած էր այս ձմեռ և անոր մեռնելէն ի վեր՝ իր
փափաքն էր որ ինք ալ անոր քով երթայ։
Բայց իր տղան, որ պիտի ժառանգէր ագարակը,
տակաւին մանուկ էր։

— Ինչ ալ ըլլայ՝ Աստծոյ կամքովը պիտի
ըլլա՛յ, ըսաւ։

Մեծ Ինկմարը չէր կորսնցուցած իր ցախա-
ւելութիւնն ու ծանրաշարժութիւնը։ Ուշադը-
րութիւն դարձնելով սառոյցի կտորներուն և
ծառի կոճղերուն՝ որ կրնային զինք տապալել,
գետին մէջ ոտքը դրածին պէս, իր կարթաձողը
ուժով մը ամրցուց ջուրին մէջ՝ ապահովուելու
համար հոսանքին դէմ և անմիջապէս որ ետևը
հասաւ լաստափայտին, կարթեց զայն։

— Ուշադրութի՛ւն, պոռաց մանկիկներուն.
որովհետև՝ ճիշդ նոյն վայրկեանին խլեակը կը
դառնար և իր բոլոր տախտակները կը ճարճա-
տէին։

Խարխուլ լաստափայտը դիմացաւ սակայն
և Մեծ Ինկմարը յաջողեցաւ զայն քաշել հո-
սանքէն դուրս։ Ապահով այլևս թէ անիկա
ինքնիրեն պիտի գար նստէր ցամաքին վրա,

Ինկմար ձգեց զայն և կը պատրաստուէր ելլել
դարափը՝ երբ ծանր կոճղ մը, որ կուգար սը-
րընթաց, եկաւ սոսկալի հարուած մը տուաւ
անոր ճիշդ ետևին տակէն։ Ինկմար երերաց,
բայց ձեռքով պինդ կռթնած իր կարթաձողին
վրայ, յաջողեցաւ ինքզինք ձգել գետափը։ Հոն
հասաւ թէ չէ, բերանը լեցուեցաւ արիւնով։

— Բանդ բուսաւ, Մե՛ծ Ինկմար, մրմնջեց
կքելով։

Ազատած մանուկները սկսան պոռալ կան-
չել պատահած վտանգին համար և մարդիկ
վազեցին եկան ու փոխադրեցին զինք ագա-
րակը։

Երէցը ետինքն ամբողջ անցուցած էր Ինկ-
մարսկարտի մէջ և, իրկունը, տուն վերադար-
ձին, մտաւ վարժապետին տունը։ Սթօրմ և
մայր Սթինա՝ որ իմացած էին Մեծ Ինկմարին
մահը, տխուր տրտում նստած էին՝ երբ իրենց
բարեկամը մօտեցաւ իրենց թեթևաքայլ, մարդ-
Չգիտեր տեսակ մը ի՛նչ պայծառ ու լուսաւոր
բան տարածուած իր ամբողջ անձին վրայ։

Վարժապետը անմիջապէս հարցուց թէ ե-
րէցը ճիշդ ատենին հասա՞ծ էր հիւանդին քով։

— Այո՛, ըսաւ երէցը. բայց իր գործը իմ
հետ չէ՛ր այլևս։

— Ի՞նչպէս, հարցուց մայր Սթինան։

— Ո՛չ, ճշմարիտը, յարեց երէցը՝ ժպտե-
լով խորհրդաւոր կերպով. կրնար դիւրութեամբ
վազ անցնիլ իմ օգնութենէս.. Ա՛խ, շատ
դժուար բան է միշտ՝ մահուան անկողնի մը քով
նստիլը.

— Այո՛, իրաւ որ այդպէս է, հաստատեց
Սթօրմ։

— Ու մանաւանդ այն մեռնողին սնարին քով, որ գեղին առաջին մարդն է:

— Այո՛, իրաւունք ունի՛ս:

— Բայց, երբեմն բաները կը պատահին մարդուն խելքէն չանցած կերպով:

Երէցը լռեց վայրկեան մը, և իր աչքերը՝ սևեռած դատարկութեան մէջ՝ այնպիսի շողիւն մը կ'արձակէին իր ակնոցներուն ետևէն, որոնց զօրաւոր փայլը երբեք սովորական չէր իրենց. յետոյ շարունակեց.

— Դո՛ւն, մա՛յր Սթինա, դո՛ւն, Սթօ՛րմ, լսա՞ծ էք թէ ի՛նչ բան պատահած էր Մեծ Ինկմարին՝ իր երիտասարդութեան ատենները: Բարեկամ մը ունէր, որ վարձակալ էր իր հողերուն վրայ...

— Գիտե՛մ, ըսաւ վարժապետը, անոր անունն ալ Ինկմար էր և իրեն Սթարք Ինկմար կ'ըսէին՝ զանազանելու համար զինք Մեծ Ինկմարէն:

— Ճիշտ ա՛տ, շարունակեց երէցը: Արդ, օր մը, ամառուան շաբաթ իրկուն մը, ինք ու իր բարեկամը՝ վերջացնելով աշխատանքը, հագան իրենց նոր լաթերը և աւանն իջան քիչ մը քէյֆ ընելու:

Երէցը ընդհատեց իր խօսքը և վայրկեան մը մնաց լուռ ու մտախոհ:

— Կերևակայեմ թէ, շարունակեց երէցը, խիստ գեղեցիկ իրիկուն մը ըլլալու էր, խաղաղ ու լուսաճաճանչ իրիկուն մը, մէկը այն իրիկուններէն՝ ուր, երկինքն ու երկիրը յարափոփոխ գոյներով, երկինքը քնքուշ կանաչագոյն ու երկիրը՝ թեթև մառախուղով մը քօղարկուած, կ'առնեն ճերմակ ու կապտորակ գոյներ: Երբ հասան շարժական կամուրջը, բան մը հը-

րաւիրեց զիրենք՝ աչքերնին վեր վերցնելու. և իրենց գլխուն վերև տեսան թէ բացուեր է երկինքը: Այս տեսիլքը մարդու չպատմեցին. ընաւ մէկը չիմացաւ. բայց անոնք պահեցին զայն իրենց մէջ՝ իբրև իրենց ամենէն թանկագին գանձը, իբրև իրենց երկնառաք անբիծ նըւէրը:

Նորէն կանգ առաւ երէցը, ծռեց գլուխը և խորունկ հառաչանք մը քաշեց.

— Ես կեանքիս մէջ երբեք այսպիսի բան մըն ալ լսած չեմ:

Յետոյ շարունակեց.

— Մեծ Ինկմարը տուն տարին թէ չէ և երբ պառկեցուցին զինք իր անկողնին մէջ, հըրաման ըրաւ որ երթան կանչեն Սթարքը: Բայց Սթարք վե՛րն էր, անտա՛ռը, փայտ կտրելու զբաղած, ուստի մարդ մարդու վրայ ղրկեցին՝ զինք կանչելու. մահամերձը սակայն անձկութեան մէջ էր թէ պիտի չի կրնայ տեսնել զայն: Ես ու բժիշկը ատենին հասած էինք: Բայց Մեծ Ինկմարը ուշադրութիւն չէր դարձներ մեզի.— «պիտի մեռնիմ, երէ՛ց, ըսաւ ինծի, և միակ փափաքս է Սթարքը տեսնել անգամ մըն ալ»: Պառկած էր փոքր սենեակին մեծ մահճակալին վրայ և իր վրայ փռած էին տանը ամենէն թանկագին ծածկոցը: Իր ձեռքով ագատած երեք փոքր մանուկները կը կենային հանդարտ, պպզած իր ոտքերուն տակ. և երբ իր նայուածքը կը վերցնէր այն բանէն՝ որ իր աչքին կերևնար հեռուն, ու կը ձգէր մանուկներուն վրայ, իր դէմքը կը պայծառանար ժպիտով մը: Վերջապէս գտած էին վարձակալը և Ինկմար ժպտելով լսեց Սթարքին ծանր ոտնաձայնը՝ որ կու-

գար մեծ դահլիճին մէջէն։ Սթարք անկողնին մօտեցածին պէս, Ինկմար բռնեց անոր ձեռքը, գգուեց մեղմիկ և հարցուց. «Կը յիշե՞ս, Սթա՛րք, այն իրկունը՝ ուր, չարժական կամուրջին վրայ ես ու դուն տեսանք երկինքին բացուիլը»։ —«Այո՛, ի՞նչպէս չէ, կը յիշեմ այդ իրկունը ուր երկուքս նայեցանք երկինքին մէջ», պատասխանեց Սթարք։

Այն ատեն Ինկմար ամբողջովին դարձաւ դէպի Սթարքը, դէմքը ա՛յնպէս լուսաճաճանչ որ կարծես թէ ամենէն քաղցր լուրն ունենար անոր տալիք.—«Ես հիմա հոն կերթամ», ըսաւ։ Վարձակալը իր աչքերը ձգեց աչքերուն մէջ.— «Ես ալ ետևէդ պիտի գամ, ըսաւ միւսը, բայց քիչ մը ետքը, որովհետև զաւակդ պէտք ունի ինծի»։— «Այո՛, այո՛, գիտե՛մ», պատասխանեց Ինկմար՝ գլուխն երերցնելով։ Յետոյ խորունկ հառաչանք մը քաշեց և աւանդեց հոգին։

Վարժապետն ու մայր Սթինան կը կրկնէին թէ բարի մահ է այս մահը. ու երեքն ալ բաւական երկար ատեն մնացին լուռ։

— Բայց, ըսաւ յանկարծ մայր Սթինա, ինչէ՞ն գիտէ Սթարք թէ Ինկմարին տղան պէտք ունի իրեն։

Երէցը գլուխը վեր առաւ, քիչ մը յանկարծակիի եկած.

— Չեմ գիտեր, պատասխանց. բայց իրաւունք ունիս, մա՛յր Սթինա, իր այդ հաւատումը տարօրինակ էր։

Ձեռքով կամաց մը շփեց իր ճակատը, կարծես լաւ մը պարզելու համար իր մտածումները։

— Ոչ մէկ բան այնքան տարօրինակ է, մրմնջեց ապա, որքան այն եղանակը՝ որով կը կառավարէ Աստուած։ Ո՛չ, բան մը չի կայ որ աւելի տարօրինակ ըլլայ։

III

ՔԱՐԻՆ ԻՆԿՄԱՐՍՏՕԹԷՐ

Աշնան առաւօտներէն մէկն էր։ Դպրոցին մանուկները կէսօրուայ հանգիստը կ'առնէին։ Սթօրմ և իր աղջիկը Կերթրուտ՝ մտան խոհանոցը և նստեցան սեղանի, ուր Սթինա մայրիկը իրենց սուրճ տուաւ։ Դեռ իրենց գաւաթը չէին խմած հատցուցած՝ երբ այցելու մը եկաւ. Եկողն էր Հալֆոր Հալֆորսոնը՝ որ երիտասարդ գեղացի մըն էր և եկեղեցիի աւանին մէջ խանութ բացած էր։ Զինքը կ'անուանէին շատ անգամ Թիմս Հալֆոր, որովհետև Թիմսկարտէն եկած էր։ Խոշոր ու գեղեցիկ երիտասարդ մըն էր, բայց քիչ մը վհատած կերպարանքով։ Մայր Սթինա անոր ալ սուրճ հրամցուց և հիւրը նըստեցաւ Սթօրմին քով։

Տանտիրուհին գուլպայ կը հիւսէր, նստած պատուհանին առջև՝ այն ձևով որ կարող ըլլայ դիտել անցորդները։ Յանկարծ կարմրեցաւ,

ծռեցաւ՝ աւելի լաւ կերպով տեսնելու համար, յետոյ ըսաւ ձայնով մը՝ որ անտարբերութիւն կը կեղծէր.

— Կարծեմ թէ բարձր ընտանիքի մարդիկ պտոյտի ելած են այսօր։

Երիտասարդը անոր չեչտէն հասկցաւ թէ տարօրինակ բան մը կանցնէր կը դառնար. ոտքի ելաւ և ակնարկ մը ձգելով փողոցը՝ նշմարեց բարձրահասակ, քիչ մը կորացած մէջքով կին մը և պատանի մը, որոնք դէպի դպրոց կը բարձրանային։

-- Եթէ չեմ սխալիր, ինքը Քարին Ինկմարստօթէյն ըլլալու է, ըսաւ Սթինա մայրիկը։

— Այո՛, Քարինն է, հաստատեց Հալֆոր։

Ալ բառ չ'աւելցուց, ադին քաշուեցաւ պատուհանէն և, վայրկեան մը կարծես իր շուրջ ապաստան մը փնտռելէ ետք, հանդարտօրէն նստեցաւ նորէն իր տեղը։

Անցեալ ամառ, երբ Քարինին հայրը՝ Մեծ Ինկմարը ողջ էր, Հալֆոր ամուսնութեան ուզած էր Քարինը։ Հալֆոր երկար ատեն Քարինի ետև ինկած էր՝ առանց յուսահատելու եթէներէն ու բայցերէն։ Ինկմարներու հին գերդաստանը վարանած էր, ո՛չ թէ դրամական խնդիրով—որովհետև Հալֆոր հարուստ էր—, այլ այն պատճառով որ Հալֆորին հայրը խմիչքի խաբուող մարդ էր եղեր. ասոր համար, կը վախցուէր որ տղան ալ հօրը հակումն ունենայ։ Վերջը վերջը, որոշեցին Քարինը տալ Հալֆորին։ Նշանակուեցաւ պսակին օրը և այն շաբթուն ուր երէցը ամուսնութեան ծանուցումը պիտի ընէր, Քարին ու Հալֆոր ճամբորդութիւն մը ըրին դէպի Ֆալուն՝ գնելու համար

պսակի մատնին ու Սաղմոս մը։ Բայց դառնալէ ետք այս ճամբորդութենէն՝ որ տևած էր երեք օր, Քարին յայտարարեց թէ չէր ուզեր ամուսնանալ Հալֆորին հետ։ Տեսած էր թէ Հալֆոր քիչ մը գլուխը տաքցուցած էր Ֆալունի մէջ, ուստի շատ կը վախնար որ հօրը կը նմանի։ Մեծ Ինկմար, չուզելով բռնութիւն բանեցնել իր աղջկան վրայ, տղուն յայտնեց թէ նշանը ետ եղած է։ Հալֆոր շատ աշխատեցաւ. «Դուն իմ վրաս կը բերես, ըսաւ Քարինին, անտանելի ամօթ մը։ Մարդիկ ի՞նչ պիտի խորհին վրաս՝ երբ որ այսպէս ետ ըլլաս ինձմէ։ Այդպէս վարուելու չես ինծի պէս պարկեշտ մէկու մը դէմ»։ Բայց Քարին ետ չդարձաւ իր որոշումէն, և Հալֆոր ատկէ ադին դժբախտ ու տխուր մնացեր էր, մտքէն չհանելով այն նախատինքը՝ որ իրեն հասած էր Ինկմարսոններուն կողմէ։

— Ահա Քարինը կուգայ, կը մտածէր մայր Սթինա, և ահաւասիկ Հալֆորը. տեսնենք ի՛նչ պիտի պատահի։

Ա՛լ հաշտութեան մասին խնդիր չէր կրնար ըլլալ. անցեալ աշունէն ի վեր Քարին եղած էր Էլիաս Էլօֆ Էրսօնին կինը։ Ինք ու իր ամուսինը կը բնակէին Ինկմարսկարտի մէջ և Մեծ Ինկմարին մահէն ետք՝ ձեռք առած էին ագարակին կառավարութիւնը։ Ինկմար ձգած էր հինգ աղջիկ ու տղայ մը՝ որ տակաւին իրեն յաջորդելու տարիքին մէջ չէր։

Եւ Քարին ներս մտաւ խոհանոցէն։ Քսան ու մէկ քանի տարուան կերևէր, բայց ճիշտն ըսելով կարծես երբէք երիտասարդ չէր ցոյց տար ինքզինք։ Ուրիշ տեղուանք, մարդիկ

զինք տգեղ պիտի գտնէին, որովհետև իր ընտանիքէն կը ժառանգէր ծանր արտևանունքներ, կարմիրի զարնող մազեր և հաստ գիծ մը իր բերնին շուրջ: Բայց հոս կը հաւնէին զինքը՝ տեսնելով թէ ո՛րքան կը նմանի Ինկմարսօններու հին սերունդին:

Քարին՝ նշմարելով Հալֆորը, չի ցնցուեցաւ բնաւ: Իր աւչային դանդաղութեամբը գընաց մէկէն միւսը ու բարևեց: Երբ իր ձեռքն երկնցուց երիտասարդին, Հալֆոր իրենը այնքան մը միայն երկնցուց՝ որ հազիւ կարող ըլլայ մատներուն ծայրովը դպնալ անոր: Միշտ քիչ մը ծռած, Քարին՝ Հալֆորին առջև սովորականէն քիչ մը աւելի խոնարհեցուց իր գլուխը, մինչդեռ Հալֆոր շիփշիտակ կեցած՝ բթամատի մը չափ անգամ չէր ծռեր իր հասակէն:

— Քարին այսօր պտոյտի ելած է, խօսք բացաւ մայր Սթինա, անոր երկնցնելով երէցին թիկնաթոռը:

— Այո՛, պատասխանեց Քարին. քալելը լաւ է՝ հիմա որ սկսած է սառ կապել:

— Իրօ՛ք, այս գիշեր սառ է կապեր, դիտել տուաւ վարժապետը:

Կարծես ոչ ոք ա՛լ ըսելիք բան մը չունէր, ուստի տիրեց լռութիւն:

Վերջապէս Հալֆոր ոտքի ելաւ. իր շարժումը կարծես խոր քունէ մը արթնցուց միւսները:

— Պէտք է որ խանութ երթամ, կրկնեց:

— Կարծեմ այդքան աճապարելու պէտք չունի Հալֆոր, ըսաւ մայր Սթինա:

— Կը յուսամ թէ ես չեմ որ կը վռնտեմ Հալֆորը, աւելցուց Քարին:

Երբ Քարին իր խօսքը կուղղէր անոր, իր ձայնը կը ստանար խոնարհ եղանակաւորում մը:

Հալֆոր հեռացածին պէս, պատրանքը անցաւ և բացուեցաւ Սթօրմին բերանը: Սթօրմ կը նայէր այն պզտիկ տղուն՝ որ եկած էր Քարինին հետ: Գրեթէ տարեկից Կէրթրուտին, փոքր, դէմքով խարտեաշ ու քաղցր, իր քիչ մը պառաւական երևոյթը որոշ կերպով կը մատնէր իր սերունդն ու իր ընտանիքը:

— Կարծեմ թէ Քարին ինծի աշակերտ մը կը բերէ, ըսաւ Սթօրմ:

— Եղբա՛յրս է, պատասխանեց Քարին. ի՛նք է որ հիմա ինկմար Ինկմարսօն է:

— Դեռ շատ փոքր է այդ անուան համար, դիտել տուաւ Սթօրմ:

— Այո՛, հայրիկը շատ կանուխ մեռաւ:

— Ատ ճիշտ է, ըսին միասին՝ վարժապետն ու իր կինը:

Ցալումի գոլէճն էր, վրայ բերաւ Քարին, անոր համար է որ չէք տեսեր զինք մինչև հիմա:

— Քարին նորէն չպիտի՞ խրկէ զինք հոն:

Քարին վար առաւ իր ծանր արտևանունքները և խորունկ հառաչ մը քաշեց:

— Կըսեն թէ կարդալու մէջ վարժ է, յարեց իբր պատասխան:

— Միայն կը վախնամ թէ իրեն սորվեցնելիք բան չ'ունենամ. թերևս ինծի չափ գիտուն է ինք, ըսաւ Սթօրմ:

— Ո՛հ, վարժապետը դեռ շատ կրնայ կարդացնել եղբօրս պէս տղաքը:

Նորէն լռութիւն, զոր կը խզէ Քարին վերջապէս, հետևեալ բառերով.

— Խնդիրը միայն անոր դաս առնելուն վը-
րայ չէ․ կ՚ուզէի հարցնել նաև վարժապետէն և
Սթինա մայրիկէն թէ՝ պզտիկը կրնա՞ր հոս ապ-
րիլ։

Սթօրմ և իր կինը իրարու երես նայեցան
ապշահար։

— Սա կայ որ քիչ մը նեղն ենք հոս, ըսաւ
վարժապետը։

Խորհած էի որ փոխարէնը ձեզի տայի՝ կա-
րագ, կաթ ու հաւկիթ...

— Ա՛հ, գալովատոր...

— Մեծ բարիք մը ըրած պիտի ըլլայիք ինծի։

Սթինա մայրիկ հասկցաւ թէ Քարինի կող-
մէ այս տարօրինակ աղաչանքը օգնութիւն
խնդրելու մեծ պէտք մը կը վկայէր։ Ուստի,
անմիջական որոշում մը տուաւ։

— Քարինը ա՛լ ուրիշ բան ըսելու պէտք
չ՚ունի, ըսաւ մայր Սթինա։ Մեր ձեռքէն եկա-
ծը պիտի չխնայենք Ինկմարսոններուն համար։

— Շնորհակալ եմ, պատասխանեց Քարին։

Եւ մինչ երկու կիները կը խօսէին եղած
կարգադրութեան վրայ, Սթօրմ պզտիկ տղան
տարաւ դպրոց, որ նստեցաւ Կէրթրուտին քով
նստարանի մը վրայ և ամբողջ օրը բերնէն բառ
մը չի հանեց։

Ամիս մը ամբողջ, Թիմս Հալֆոր հեռու էր
կեցեր դպրոցէն, կարծես վախնալով թէ նորէն
հոն կը հանդիպի Քարինին։ Բայց առտու մը որ
սաստիկ անձրև կուգար և կարելի չէր յաճա-
խորդ յուսալ, իր սիրտը համակուեցաւ աւելի
սև յուսաբեկութեամբ մը․ «ես բանի չեմ գար
ա՛լ, մարդ զիս չի յարգեր» մտածեց ան, վար-
ժըւած ըլլալով ինքն իսկ տանջելու զինք՝ այն

օրէն ի վեր որ Քարին մերժած էր զինք։ Եւ ո-
րոշեց մտնելու Սթինա մայրիկին քով՝ գոնէ
գթասիրտ և ցուարթ մարդու մը հետ խօսե-
լով, իր սիրտը քիչ մը զովացնելու համար։ Գո-
ցեց խանութը, կոճկեց թիկնոցակին կուրծքի
կոճակները և բարձրացաւ դէպի դպրոցը՝ հո-
վին, անձրևին և ջրացայտերուն մէջէն։

Հոն էր տակաւին և ինքզինք երջանիկ զգա-
լով որ հոն է, երբ կէսօրուան արձակուրդի ժա-
մը հասաւ և Սթօրմ ալ եկաւ սուրճ խմելու,
իր հետ ունենալով երկու մանուկները։ Երեքն
ալ եկան բարևեցին զինք․ ինք ալ ոտքի ելած
էր՝ բարևելու համար Սթօրմը, բայց երբ Ինկ-
մար ձեռքն իրեն կ՚երկնցնէր, ինք արդէն նըս-
տած էր տեղը և այնքան ոգևորութեամբ կը
խօսէր Սթինա մայրիկին հետ որ կարծես չտես-
նելու կուտար պզտիկ տղան։ Ինկմար լռին ետ-
դարձաւ սեղանին մօտ և հառաչեց այն հառա-
չանքովը որ հառաչած էր Քարին անցեալ օրե-
րուն։

— Հալֆոր իր նոր ժամացոյցը բերեր է որ
տեսնենք, ըսաւ մայր Սթինա։

Հալֆոր գրպանէն հանեց արծաթէ ժամա-
ցոյց մը, սիրուն, նոր, ոչ շատ մեծ ժամացոյց
մը, կափարիչին վրայ ոսկի ծաղիկ մը բան-
ուած։ Վարժապետը բացաւ զայն, յետոյ գնաց
գտաւ խոշորացոյց մը և աչքին դնելով սկսաւ
քննել անոր շարժումը։ Չէր կշտանար դիտելով
անիւներուն փափկութիւնը և անոնց մէկզմէ-
կու ագուցուածքին հրաշալի ճարտարութիւնը։
Իր կեանքին մէջ այս հին մարդը այդքան գե-
ղեցիկ գործ տեսած չէր։ Վերջապէս, տուաւ
ժամացոյցը Հալֆորին որ առաւ, դրաւ իր գըր-

պանը, առանց ցոյց տալու ոչ այն ուրախութիւնը, ոչ ալ այն հպարտութիւնը՝ որ մարդ կը զգայ ուրիշներուն գնահատութիւնն իմանալով իր առած մէկ աղուոր բանին համար։

Ինկմար իր ճաշը կ՚ընէր լուռ ու մունջ. բայց երբ սուրճը խմեց, դարձաւ հարցուց Սթօրմին թէ ժամացոյցէ կը հասկնա՞յ արդեօք։

— Այո՛, պատասխանեց վարժապետը. աղէկ գիտես որ ես ամէն բանէ կը հասկնամ։

Այն ատեն Ինկմար ծոցի գրպանէն հանեց արծաթէ խոշոր ժամացոյց մը՝ որ կոշտ ու տգեղ կերևնար մանաւանդ Հալֆօրին ժամացոյցէն ետք։ Շղթան ալ ժամացոյցին չափ կոշտ ու ծանր էր։ Սլաքներուն վրայ ապակի չի կար. երեսին կիտուածը թափած էր և կափարիչին վրայ իբրև միակ զարդ՝ կար խորունկ փոս մը։

— Կեցած է ժամացոյցը, ըսաւ Սթօրմ, դնելով զայն իր ականջին դէմ։

— Այո՛, պատասխանեց Ինկմար. գիտնալ կուզէի թէ կարելի՞ է արդեօք նորոգել զայն, ի՛նչ կը կտրէ խելքերնիդ։

Սթօրմ բացաւ ժամացոյցը. լսուեցաւ այնպիսի աղմուկ մը՝ որ կարծես բոլոր զսպանակները կը քակուէին։

— Այս ժամացոյցովդ կրնաս գամ գամե՛լ. բանի չի գար ալ այս խորտան։

— Չէ՞ք կարծեր որ ժամագործ Էրիքը կրնայ բանի մը բերել զայն։

— Ո՛չ, անոր ալ ձեռքէն բան մը պիտի չի գայ. լաւ է որ խրկես Ֆալու՝ որպէսզի նոր անիւներ դնեն մէջը։

— Այո՛, ես ալ այդպէս կը մտածէի, ըսաւ Ինկմար՝ առնելով իր ժամացոյցը։

— Բայց, ի սէ՛ր Աստծու, ի՞նչ ես ըրեր որ ժամացոյցը այս վիճակին է հասեր։

Փոքրիկ տղան կը կլլէր իր ճաշին փշրանքները, խեղդուա՛ծ իր արցունքներուն մէջ։

— Հայրիկին ժամացոյցն է անիկա, մրմընջեց տղան. այն ծառի կոճղը որ զարնուեցաւ հայրիկին՝ այսպէս փոսեցուցած է ժամացոյցն ալ։

Այս բառերուն վրայ՝ ամէնքն ալ լռեցին և ականջ դրին։

— Ես այն օրը տունն էի, շարունակեց մանուկը ճիգով, որովհետև Զատկուայ արձակուրդին էր. առաջին անգամ ես հասայ գետափը՝ ուր հայրիկը փռուած երկնցած էր։ Ժամացոյցը բռնած էր իր մատներուն մէջ. «իմ գործս լմնցաւ, Ինկմա՛ր, ըսաւ. շատ կցաւիմ եթէ ժամացոյցը կոտրած ըլլայ, որովհետև կուզէի որ անիկա տաս, իմ կողմէս բարև ընելով, այն մարդուն՝ որուն հետ գէշ վարուեցայ ես»։ Եւ տուաւ ինծի այդ մարդուն անունը՝ յետոյ խնդրեց ինձմէ որ ժամացոյցը նորոգել տամ՝ Ֆալուն տանելով։ Բայց ես անգամ մըն ալ Ֆալում չ՚վերադարձայ, անոր համար չեմ գիտեր թէ ի՛նչ ընեմ։

Վարժապետը սկսաւ անմիջապէս փնտռել թէ արդեօք չէ՞ր գիտէր մօտ ատենէն Ֆալում երթալու միտք ունեցող մէկը. բայց մայր Սթինա ընդմիջեց զայն։

— Որո՞ւ պէտք է որ տայիր ժամացոյցը, Ինկմա՛ր։

— Չեմ գիտեր թէ կրնա՞մ ըսել։

Չըլլա՞յ թէ Թիմս Հալֆօրն է։

— Այո՛, ա՛ն է, մրմնջեց տղան։

— Այն ատեն, տուր այդպէս․ անիկա պիտի փափաքի որ այդ վիճակով ստանայ։

Ինկմար ոտքի ելաւ հլութեամբ, թեզանիքովը սրբեց ժամացոյցը, որպէսզի հնար եղածին չափ գեղեցիկ դառնայ, և արագ քայլերով անցաւ սրահին մէջէն.

— Կուգամ բարեւելու ձեզ հայրիկին կողմէ, ըսաւ Հալֆորին, և ձեզի յանձնելու ասիկա։

Երբ Ինկմար մօտեցաւ և կեցաւ իր առջև, Հալֆոր՝ որ ամբողջ ժամանակը լուռ և մռայլ մնացեր էր, աչքերը դարձուց և տանտիրուհիին վրայ ձգեց մէկը այն ակնարկներէն ուր կարծես օգնութեան կոչ մը կը կարդացուի։

— Երանի՜ անոնց որ խաղաղութիւն կը պարգևեն, ըսաւ մայր Սթինա։

Հալֆոր շարժում մը ըրաւ՝ կարծես ետ հրելու համար ժամացոյցը։

— Կը կարծեմ թէ, աւելցուց մայր Սթինա, Հալֆոր ասկէ աւելի լաւ գոհացում մը չի կրնար ուզել. ես միշտ ըսած եմ որ, եթէ Ինկմար Ինկմարսօն ողջ մնար, վաղուց Հալֆորին պիտի ընէր պատուոյ այն հատուցումը, որուն արժանի է Հալֆոր։

Այն ատեն, Հալֆոր միշտ աչքերը միւս կողմ դարձուցած, ձեռքն երկնցուց, քաշեց ժամացոյցը և ափին մէջ առաւ թէ չէ՝ կոխեց զայն թիկնոցակին ու բաճկոնին տակ։

— Ահա ժամացոյց մը որ գողցող պիտի չըլլա՜յ, ըսաւ վարժապետը խնդալով, տեսնելով թէ Հալֆոր ինչպէ՜ս խնամքով կը կոճկէ իր լաթերը։

Հալֆոր ինք ալ սկսաւ խնդալ․ յետոյ, ոտքի ելաւ․ կարմրած էր երեսը, իր շնչառութիւնը կը դառնար խորունկ և նայուածքը՝ որ

կը պտտցնէր իր շուրջը, լի էր համարձակութեամբ և զուարթութեամբ։

— Կարծեմ թէ Հալֆոր նոր կեանք մը կը զգայ իր մէջ, ըսաւ Սթինա մայրիկ։

Երիտասարդը անցաւ սրահէն և այս անգամ ինք եկաւ Ինկմարին քով՝ որ վերադարձած էր իր տեղը ու նստած սեղանին առջև։

— Քանի որ ես առի քու հօրդ ժամացոյցը, ըսաւ, պէտք է որ դուն ալ առնես իմինս։

Սեղանին վրայ դրաւ իր նոր ժամացոյցը և դուրս ելաւ սենեակէն, առանց մէկ բառով ըսելու։

Ցորեկն ամբողջ Հալֆոր թափառեցաւ ճամբաներուն ու շաւիղներուն վրայ։ Վէրթկարտէնցի մէկ քանի գեղացիներ որ առուտուրի եկած էին, կէսօրէն մինչև իրկուն սպասեցին անոր խանութին առջև. Թիմս մէջտեղ չ'ելաւ ընաւ։

* * *

Էլօֆ Էրսօն, որ կարգուած էր Քարինի հետ, չար ու կծծի հայր մը ունեցած էր՝ որ միշտ իր զաւկին հետ վարուած էր անողոք խստութեամբ։ Փոքր եղած ատեն՝ հազիւ կտոր մը չոր հաց տուած էին իրեն ուտելու. մեծնալէն ետք՝ թող տուած չէին որ ոչ մէկ հաճոյք վայելէ. միշտ աշխատցուցեր էին. ձգած չէին որ օր մը անգամ պարի երթայ. ոչ իսկ կիւրակէները հանգիստ ունեցած էր։ Ամուսնութիւնը գրեթէ փոխած չէր իր վիճակը։ Ստիպուած ըլլալով տնտեսել Ինկմարսկարդը և հնազանդիլ իր աներոջ, հնօրեայ ագարակին մէջ ալ Էլօֆ Էրսօն գտած էր աշխատանքի և խնայասիրութեան անփոփոխ մտածումը։ Որքան ատեն որ

ողջ էր Ինկմար Ինկմարսօն, Էլլիաս գոհ կ'երենար և առանց տրտնջալու կը բանէր կը դատէր իր գերիին պէս։ Ամէն տեղ կըսէին թէ Ինկմարսօնենք վերջապէս իրենց ճաշակին յարմար փեսայ մը գտան, որովհետև Էլլիաս աշխարհքին մէջ աշխատանքէն զատ ուրիշ բան չէր գիտեր։

Բայց Մեծ Ինկմարը մեռաւ թէ չէ, օրինակելի փեսան սկսաւ խմել և սանձարձակ կեանք մը անցնել։ Կը փնտռէր կը գտնէր գեղին բոլոր զբօսասէրները, զանոնք կը հրաւիրէր Ինկմարսկարտ կամ անոնց հետ կը վազէր այս գինետունէն այն գինետունը, այս պարահանդէսէն այն պարահանդէսը։ Օր չի կար որ գինով չըլլար։ Մէկ քանի ամսուան մէջ արդէն գինովի մը բոլոր աւերածութիւնն ունէր իր վրայ։ Առաջին անգամ որ Քարին զայն գինով տեսաւ, անմիջապէս անդամալուծուեցաւ. «Աստուած պատժեց զիս, մտածեց անմիջապէս, Հալֆորին հետ գէշ վարուելուս համար»։ Ո՛չ մեղադրանք մը, ոչ ալ սպառնալիք մը ուղղեց իր ամուսնին, զգալով արդէն թէ անիկա փտութեան դատապարտուած ծառ մըն էր և անկէ ա՛լ ոչ նեցուկ, ոչ ալ հովանի կրնար յուսալ ինք։ Բայց Քարինին քոյրերը չկրնալով համբերել այս կարգէ կանոնէ ելած կեանքին, այս գինարբունքի աղմուկին և օղիի, գինիի տաղերուն—որ հնօրեայ ագարակէն մինչև ճամբաները կը լսուէին—, ամօթով կը լեցուէին և կը սկսէին ծաղրել ու լուտանքներ ուղղել Էլլիասին, այն աստիճան որ՝ գինովը, թէև ներքնապէս հեզ ու բարի, սկսաւ շատ անգամ սաստիկ բարկանալ։ Այս պատճառով ալ տանը մէջ մեծ անհամաձայնութիւն մը տիրեց։

Քարինին գիշեր ցորեկ մտմտուքն էր կար-

գել իր քոյրերը, զանոնք ազատել այն թշուառութենէն՝ որուն մէջ ինքը կապրէր։ Ամառը, կարգեց երկու մեծերը, իսկ մնացած երկու փոքրներն ալ խրկեց Ամերիկա, ազգականներուն մօտ՝ որոնք աղէկ վիճակ ունէին։ Ամէն մէկուն ժառանգութիւն ինկաւ քսան հազար Ֆրանք։ Քարինին բաժին ինկաւ ագարակը, բայց որոշում տրուած էր որ երբ պզտիկ Ինկմարը չափահասութեան տարիքին հասնի՝ պիտի կրնայ գնել զայն և Էլլիասն ու իր կինը անկէ պիտի ելլեն։

Զարմանք կը պատճառէր որ Քարին, իր անճարակութեամբն ու երևակայական վարմունքովը, միս մինակը ամէն բան պատրաստելու, այսպէս անօգնական ու առանց խորհրդատուի, այսպէս ա-կրցաւ այդքան թռչուններ թռցնել բոյնէն, օժիտ նոնց պէտքերը հոգալ, անոնց ամուսին, և Ամերիկայի համար տոմսակ գտնել։ Սակայն իր եղբա՛յրն էր որ ամենէն շատ մտադրութիւն կը պատճառէր իրեն, այն եղբայրը՝ որ միակ Ինկմար Ինկմարսօնն էր հիմա։ Ինկմար իր քոյրերէն աւելի ընդվզեցաւ Էլլիասին դէմ, և ո՛չ թէ խօսքով, այլ գործով։ Օր մը գետին թափեց իր փեսին գնած ամբողջ օղին և փեսան վրայ եկաւ. ուրիշ օր մըն ալ ջուր խառնեց անոր օղիին մէջ։

Երբ աշնան Քարին պնդեց որ Ինկմար դառնայ երթայ նորէն իր գոլէճը, ամուսինը՝ որ խնամակալն էր տղուն՝ ըստ օրինի, հակառակեցաւ.

— Ինկմար ալ ինծի պէս, իր հօրը ու իմ հօրս պէս գեղացի մը պիտի ըլլայ, յայտարարեց Էլլիաս։ Գոլէճ երթայ ի՞նչ պիտի ընէ. ձը-

մեռը կա՛մ ես, կամ ինք անտառ երթալու ենք՝ փայտ կտրելու։ Անկէ աւելի աղէկ սորվելիք բան չունի։ Ես իր տարիքը եղած ատենս ձմեռն ամբողջ ածխագործի խրճիթի մը մէջ կ՚անցնէի։

Քարին, անկարող յաղթելու անոր դիմադրութեան, պարտաւորուեցաւ համակերպիլ՝ Ինկմարը վար դնելով. իսկ Էլիաս աշխատեցաւ իրեն գրաւել Ինկմարը։ Ինչ ճամբորդութիւն որ ընէր, իրեն հետ կը տանէր զայն. բայց տըղան չ՚ուզելով կը հետեւէր անոր և յամառօրէն կը մերժէր մասնակցելու իր փեսին գինեխմութեանց։ Փեսան երդում կընէր ու եկեղեցիէն կամ նպարավաճառին խանութէն անդին պիտի չ՚անցնէր, բայց անգամ մը որ Ինկմար սայլակին մէջ նստէր՝ անիկա կանգ կառնէր կա՛մ Պէրկսանայի դարբնոցին, կա՛մ Բարմսօնի պանդոկին առջև։ Քարին սկիզբները գոհ էր որ ամուսնին հետ կը գտնուէր Ինկմար. որովհետև ապահով կըլլար որ ասով Էլիաս փոսի մը մէջ պառկած պիտի չի մնար կամ պիտի չը ճաթեցնէր իր ձին։

Առտու մը, ժամը ութին ատենները, Էլիաս տուն դարձաւ՝ Ինկմար իր ետև սայլակին մէջ պառկած։

— Եկուր վերցուր զայն և նե՛րս տար, պոռաց Էլիաս իր կնկան. խեղճ տղան գինովցեր է, չի կրնար ոտքերուն վրայ կենալ։

Քարին այն աստիճան այլայլեցաւ որ ծունկերը տակը ծալլուեցան և ստիպուեցաւ վայրկեան մը նստիլ դռան առջևի աստիճանին վրայ։ Երբ վեր վերցուց մանուկը իր գրկին մէջ, անիկա չէր քնանար, բայց մեռելի մը պէս ցուրտ ու զգայազիրկ էր։ Տարաւ փոքր սեն-

եակը և հոն փակուելով անոր հետ, ջանաց վերակենդանացնել զայն։ Քանի մը վայրկեան ետք Քարին դարձաւ Էլիասին քով՝ որ սեղան նստած էր նախաճաշ ընելու, և դրաւ իր ձեռքը անոր ուսին վրայ.

— Խորհուրդ կուտամ, ըսաւ անոր, որ կուշտ ու կուռ ուտես, որովհետև եթէ սպաննեցիր եղբայրս, հաւանականաբար ապագային այսքան լաւ կերուխում պիտի չի կրնաս ընել Ինկմարսկարտի մէջ։

— Ի՛նչ կը բրդես, յարեց ամուսինը. մարդ պուտ մը օղիով հիւանդ չ՚ըլլա՛ր։

— Դուն իմ ըսածս լսէ, կրկնեց Քարին՝ իր ուժեղ և նիհար մատներովը սեղմելով անոր ուսը. եթէ մեռնի եղբայրս, քսան տարուան բանտարկութիւնը հիմակուընէ աչք առ, Էլիաս։

Երբ Քարին վերադարձաւ իր եղբօրը քով, անիկա ուշաբերած էր, բայց սաստիկ կը ցաւէին անոր ոտքերն ու ձեռքերը՝ որոնք չէր կրնար շարժել։

— Պիտի մեռնի՞մ արդեօք, Քարի՛ն, ըսաւ տղան։

Չէ՛, մեռնի՞լն ի՛նչ է, յարեց քոյրը՝ նստելով անոր սնարին մօտ։

— Չէի գիտեր թէ ի՛նչ կուտային ինծի խմելու։

— Փա՛ռք Աստծոյ, պատասխանեց Քարին ծանրութեամբ։

— Երբէք չէի գիտեր, կ՚երդնո՛ւմ։

Ամբողջ օրը Ինկմար զառանցանք ունեցաւ։

— Չըլլա՛յ, չըլլա՛յ որ մանաւանդ հայրիկին ըսես, կը խնդրէր տղան։

— Չէ՛, ըսող չի կայ, ո՞վ պիտի ըսէ:

— Հապա եթէ ես մեռնիմ, հայրը պիտի գիտնայ և ամօթով պիտի մնամ անոր առջև, որովհետև անիկա պիտի պահանջէ թերևս որ ես պարտաւոր էի զգուշանալ Էլիասին տուած ամէն բանէն... ի՞նչ կը կարծես, կը յարէր ան, գեղացիք բոլորը գիտե՞ն արդեօք որ գինովցած եմ ես... ի՛նչ կըսեն հիմա ծառաները, պառաւ Լիզան ու Սթայքը:

— Բան չեն ըսեր:

— Դուն անոնց պիտի հասկցնես եղելութիւնը... կը տեսնե՞ս, անոնք գիշերն ամբողջ խմեցին, երբ ես կէս քուն պառկած էի նստարանին վրայ... Քէրմսօնտի պանդոկն էինք... Այն ատեն Էլիաս եկաւ արթնցուց զիս և ըսաւ ինծի շատ անուշ կերպով. «Ելէ՛ր, Ինկմա՛ր, որ քեզի տաքցնելիք բան մը տամ... խմէ՛ ասի, ջուր ու շաքար է, բան չի կայ»: Կը մսէի. և երբ խմեցի ինծի երկնցուած գաւաթը, զգացի միայն որ տաք էր ու քաղցր... շատ թունդ ալ էր... Հապա ի՞նչ պիտի ըսէ հիմա հայրը...

Քարին բացաւ դուռը, որպէսզի Էլիաս՝ որ դեռ կը ճաշէր, իմանայ տղուն ըսածները:

— Ո՛չ, եթէ հայրը ողջ ըլլա՛ր... չարունակեց մանուկը:

— Ինչո՞ւ համար, Ինկմա՛ր:

— Չե՞ս կարծեր որ պիտի սպաննէր զայն:

Էլիաս սկսաւ քահ քահ խնդալ. տղան լսելով այս խնդուքը՝ այնքան դէպի դեղին կտրեցաւ որ իր քոյրը աճապարեց նորէն փակել դուռը:

Սակայն և այնպէս, այս դէպքէն ետք, Էլիաս՝ աչքը բաւական վախցած, արդելք չեղաւ Քարինին որ Ինկմարը տանէ վարժապետին քով:

* * *

Առաջին օրերուն որ Հալֆոր ժամացոյցն առած էր, չի կար աւանը եկող մէկը որ պատրուակ մը չի գտնէր մտնելու անոր խանութը և պատմել չի տար այդ խնդիրը: Գեղացիները, փաթթուած իրենց երկար ճերմակ մուշտակներուն մէջ, ժամեր ամբողջ կը մնային՝ արմուկնին դրած հաշուեսեղանին վրայ և լուրջ ու խորշոմած դէմքերնին դարձուցած դէպի երիտասարդը, որ իրենց կը խօսէր Մեծ Ինկմարին վրայ: Պատմութիւնը վերջանալուն, անիկա գրպանէն դուրս կը հանէր փոսած կափարիչով և ճեղքած շրջանակով ժամացոյցը:

— Ա՜հ, կըսէին այն ատեն գեղացիները. այդ տեղէն է որ հարուածը եկեր է անոր:

Եւ ամբողջ տեսարանը կը վերակենդանանար անոնց աչքին առջև:

— Խաչ որ, կ՚աւելցնէին անոնք, մեծ բան է քեզի համար, Հալֆօ՛ր, որ տէրն ես այս ժամացոյցին:

Երբ Հալֆոր թող կուտար որ անոնք տեսնեն այսպէս այս յարգելի առարկան, կըզգուշանար զայն ձեռքէն թողելու և միշտ կը բռնէր շղթայէն:

Օր մը որ Հալֆոր շրջապատուած էր կարգ մը գեղացիներէ և ժամացոյցը ձեռքէ ձեռք կ՚անցնէր, Էլիաս խանութէն ներս մտաւ: Պատմութիւնը իր ալ ականջին հասած էր, առանց սակայն նախանձ մը արթնցնելու իր մէջ. բայց ծաղրելի գտաւ որ այդքան մարդիկ դիտելով կը զբաղին կոտրած հին ժամացոյց մը: Սպըրդեցաւ անոնց ետև որ ծռած էին հաշուեսեղանին վրայ և կատակելու ու խնալու համար

Հալֆորին հետ, յանկարծ երկնցուց ձեռքը և խլեց ժամացոյցը շղթային հետ: Հալֆոր վրան հասաւ. Էլիաս ոստում մը ըրաւ դէպի ետ, վեր բռնելով առարկան՝ կտոր մը հացի պէս, որով մարդ կը գրգռէ շուն մը: Հալֆոր ձեռքը դրաւ հաշուեսեղանին վրայ և ցատկեց անոր վերևէն անդին, այնքան կատաղի դէմքով մը, որ միւսը՝ փոխանակ ժամացոյցը ետ վերադարձնելու, զարհուրա՛ծ, սկսաւ փախիլ դէպի դուռը: Այս դռնէն դուրս կ'ելլուէր մաշած աստիճաններով փայտէ սանդուխէ մը: Էլիասին ոտքը անցաւ ծակի մը մէջ, սայթաքեցաւ և ինկաւ:

Հալֆոր արդէն նետուած էր անոր վրայ, առած իր ժամացոյցը, և անոր մէկ քանի ուժեղ կիցեր կուտար իր ոտքով:

— Մեծ բան մը չէ գլխս ծեծելը, հռնդաց գինովը: Լաւ կընես որ նայիս թէ ի՛նչ վիճակի մէջ է մէջքս... ոչ թևերս, ոչ ալ սրունքներս կը շարժին որ ոտքի ելլեմ... օգնէ՛ ինծի:

— Դուն քեզի մինակդ ալ կրնաս ոտքի ելլել, երբ քունը գլխէդ թափէ գինովութիւնը:

— Ես գինով չեմ, մինակ թէ դէշ ինկայ:

Չէր կարծեր որ այդքան շիտակ կը խօսի: Հալֆոր վեր վերցուց թշուառականը որ պառկած կը մնար իր ոտքերուն առջև, և ստիպուեցան հարթերես փոքր կառքի մը մէջ դնելով՝ զայն տանիլ Ինկմարսկարտ:

Մէջքը կոտրած, սրունքները կախուած մարակի մը փոկերուն պէս, անկողնին գամուած իր մնացած բոլոր օրերուն մէջ, առանց ուժի և առանց շարժումի, Էլիաս կորսնցուցած չէր բնաւ խօսելու կարողութիւնը և առատօրէն

մինչև իրկուն օղի կը մուրար: Բժիշկը արգիլած էր Քարինին որ կաթիլ մը անգամ ալքօլ չի տան անոր: Այս պատճառով ամբողջ ագարակը կը թնդար դժոխային հայհոյութեանց և կոպիտ խօսքերու աղմուկով: Հիւանդը, խմիչքի մոլի, կը ջանար իր ճիչերովը ձեռք ձգել այն բանը՝ որ կը մերժէին իր աղաչանքներուն. և այսպէս արգելք կըլլար որ մարդիկ քնանան: Այդ տարին շատ դժուար եկաւ Քարինին վրայ. շատ անգամ ուժասպառ զգաց ինքզինք, անկարող դիմանալու այս կեանքին: Վարժապետը շարունակեց պահել Ինկմարը, որովհետև Քարին չէր ուզեր որ տղան ագարակը գայ նոյնիսկ մէկ օրուան համար, նոյնիսկ Կաղանդին օրը: Ինկմարսկարտի բոլոր ծառաները աւելի կամ պակաս խնամեցած էին տէրերուն հետ, մեծցած ու ծերացած էին այս օճախին մէջ: Եւ իրօք, պէտք էր որ այդ ազնիւ մարդիկը արմատ ձգած ըլլային ընտանիքին մէջ՝ մնալու համար հոն, որովհետև Էլիաս ամէն ճարտարամտութիւն գործ կը դնէր՝ տանջելու և գիշերները անքուն թողելու համար զանոնք:

Քարին այս սև օրը ապրեցաւ ձմեռ մը, ամառ մը և նորէն ձմեռ մը:

Տեղ մը կար ուր սովոր էր երթալ նստիլ՝ երբ կը փափաքէր մինակ ըլլալ, մտածելու համար իր դժբախտութեան վրայ: Նեղ նստարան մըն էր ատ՝ որ կը գտնուէր գայլուկներու փոքր պարտէզին ետևի կողմը: Հո՛ն, նստած կը մնար, արմունկները կռթնցուցած ծունկերուն և ծնօտը ափին մէջ, նայելով առջևը՝ բայց առանց բան մը տեսնելու,—առանց տեսնելու ընդարձակ արտերը՝ որ կը տարածուէին մինչև

թլուրներուն և լեռներուն սաւերամած գիծերը։

Քարին, Ապրիլի իրկուն մը, գլուխն առեր գացեր էր հոն, տկար և վհատ, ինչպէս կը պատահի երբեմն գարնան, երբ ձիւնը կը հալի փոշոտ ու աղտոտ, և դեռ անձրևները լուացած չեն ըլլար գետինը։ Արևը խայթող էր, բայց հիւսիսային քամին կը փչէր Քարինի շուրջը արձակ ու զօրաւոր, որովհետև գայլուկը չէր պաշտպաներ զինք և կը քնանար տակաւին իր ձմեռնային քունը՝ թեղօշի մանր ոստերով շինուած իր ծածկոցին տակ։ Բուրջեր, թուղթի կտորուանքներ, չոր խոտի շիւղեր կը պտուտքէին գետնին վրայ։ Լեռներուն վերև հալող ձիւները կը շոգիանային մշուշի պէս։ Ցարասիներուն գագաթները կը սկսէին առնել իրենց մառ գոյնը, բայց անտառներուն եզերքը՝ երկայնքն ի վար կերկննար տակաւին ձիւնի բարձր եզերացք մը։ Իրաւ որ գարունը կուգար, և Քարին ամեն ատենէ աւելի յոգնած կը զգար ինքզինք։ Բոլոր աշխատանքները՝ որ անդադրում առաջ պիտի տարուէին, ցանքը, խոտունձքը, հաց եփելը, լուացքը, գուլպայ հիւսելը, կարկտնուքը, իրեն կը պատճառէին տեսակ մը սարսափ. առաջուց արդէն ջախջախուած էր ինք։

— Ի՞նչ լաւ էր որ մեռնէի, մրմնջեց կամացուկ. եթէ ողջ մնալս կ՚ուզեմ, անոր համար է որ Էլիաս ինքզինք չ՚սպաննէ խմելով։

Այս պահուն աչքերը վեր վերցուց. իրեն այնպէս եկաւ թէ մէկը իր անունը տուած էր։ Հալֆոր կանգնած էր իր առջև, կռթնած ցանկապատին և իրեն կը նայէր։ Քարին անոր գալը տեսած չէր, բայց երիտասարդը բաւական ատե-

է ի վեր հոն կեցած ըլլալու էր։

— Կը մտածէի թէ իրաւ հոս պիտի գտնեմ քեզ, ըսաւ Հալֆոր։

— Ա՞հ, կը մտածէիր...

— Այո՛, կը յիշեմ թէ ատենօք ալ միշտ հոս կուգայիր՝ փայփայելու քու վիշտերդ, երբ պարապ ատեն մը գտնէիր։

— Այդ ատենները, փայփայելու շատ վիշտ չ՚ունէի։

— Վիշտ չունէիր, բայց կը հնարէիր։

Տեսնելով զայն մեծցած ու հպարտ, Քարին խորհեցաւ թէ հիմա Հալֆոր ծիծաղելի պիտի գտնէր զինք որ ետ եղած էր իրմէ. «Հիմա վայրկեանը յարմար կը դատէ, ըսաւ ինքնիրեն Քարին, որ ծաղրէ զիս...»

— Գացի խօսակցեցայ Էլիասին հետ, շարունակեց Հալֆոր. գալս աւելի շատ անո՛ր համար է։

[Քարին չի պատասխանեց. իրանը ուղիղ և անթեք, աչքերը վար առած, մէկ ձեռքը միւսին վրայ դրած, պատրա՛ստ ընդունելու հեգնանքները։

— Իրեն ըսի թէ, շարունակեց Հալֆոր, ես ղիս կիսով պատասխանատու կը համարէի իր դժբախտութեան համար, քանի որ դէպքը իմ խանութիս մէջ տեղի ունեցած էր։

Կանգ առաւ Հալֆոր, սպասելով հաւանութեան նշանի մը, բայց Քարին մնաց անխօս։

— Այսպէս, ուզեցի գիտնալ թէ չէ՞ր ընդուներ արդեօք՝ գալ ատեն մըն ալ իմ տունս բնակիլ. ասիկա քիչ մը փոփոխութիւն կ՚ըլլար. հոն աւելի մարդու երես կը տեսնէ քան թէ

հոս։

Այս բառերուն վրայ, Քարին վեր վերցուց իր թարթիչները, առանց տեղէն երերալու։

— Եւ ահա այսպէս յարմար տեսանք. վաղը առտու գինք իմ տունս պիտի փոխադրես. գիտեմ թէ ինք ալ համաձայն է, որովհետեւ համոզուած է որ հոն օղի պիտի տան իրեն խըմելու։ Բայց, կը հասկնաս, Քարի՛ն, թէ օղին խօսք չի կրնար ըլլալ հոն՝ ինչպէս հոս, քու տանդ մէջ... վաղը կը սպասեմ իրեն։ Պիտի պառկի խանութին ետեւի պզտիկ սենեակին մէջ. իրեն խօսք տուի որ դուռը բաց պիտի ձգեմ, որպէսզի եկող գացողները տեսնէ։

Քարին նախ ինքնիրեն հարցուցած էր թէ արդեօք հնարովի բան մը չէ՞ր ասիկա՝ գինք ծաղրելու համար. բայց, որքան որ երիտասարդը կը խօսէր, դեռատի կինը նոյնքան կը զգար թէ անոր ըսածները լուրջ էին։ Քարին միշտ այն համոզումն ունեցած էր թէ Հալֆոր զինք ամուսնութեան ուզած էր՝ ինք հարուստ եւ լաւ ընտանիքէ եղած ըլլալուն համար։ Եւ որովհետեւ ինք իր աչքին բնաւ այն կիներէն չէր համարեր՝ որոնք էրիկ մարդոց ուշադրութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ, Ինկմարին աղջիկը երբեք համոզուած չէր թէ մէկը կրնայ զինք սիրել միմիայն իրեն համար։ Այս պատճառով ինք Հալֆորը աւելի սիրած չէր Էլիասէն։ Բայց երբ Հալֆոր եկաւ օգնելու իրեն՝ որպէսզի դիւրութեամբ տանէ իր ծանր բեռը, իր սիրտը խել՝ այդքան բարութեան եւ թերեւս այդքան սիրոյ մը առջեւ։ Բան մը արթնցաւ իր մէջ՝ զո՛ր երբեք կռահած չէր։ Զգաց թէ Հալֆորին բարութիւնը կտաքցնէր իր սառ կտրած ամբողջ էութիւնը եւ անկէ սէրը դուրս կը ժայթքէր՝ բոցի մը պէս։

Հալֆոր կը շարունակէր պարզել իր ծրագիրը, վախնալով թէ Քարին առարկութիւններ կ՛ընէ։

— Էլիաս ինք ալ մեղք է։ Խեղճ մարդը պէտք ունի փոփոխութեան։ Վստահ եմ թէ ինծի դէմ այնքան չար պիտի չըլլայ՝ որքան քեզի դէմ։ Տարբեր բան է միշտ այնտեղ ուր մարդ տան տէր կը զգայ ինքզինք։

Քարին լսելիքն ու ընելիքը չէր գիտեր. իրեն այնպէս կու գար որ եթէ շարժում մը ընէ կամ բառ մը արտասանէ՝ Հալֆորին պիտի յայտնէ իր բոլոր գորովն ու սէրը։ Բայց եւ այնպէս, պէտք է որ պատասխան մը տար. Հալֆոր, միշտ ոտքի վրայ, կը սպասէր իր պատասխանին։ Քարին ոտքի ելաւ՝ կարծես անդիմադրելի զօրութենէ մը մղուած, առաջացաւ եւ մեղմիկ փայփայեց անոր ձեռքը։

— Աստուած օրհնէ՛ քեզ, Հալֆօ՛ր ըսաւ ընդհատ ձայնով մը, Աստուա՛ծ օրհնէ քեզ։

Երիտասարդը դուշակե՞ց թէ ի՛նչ կ՛անցնէր կը դառնար անոր մէջ. յանկարծ բռնեց անոր դաստակները եւ զայն քաշեց դէպի գինք։

— Ո՛չ, ո՛չ, աղաղակեց Քարին սարսափահա՛ր, հեռանալով անոր գրկախառնութենէն եւ փախչելով։

* * *

Էլիաս եկաւ ուրեմն բնակեցաւ Հալֆորին քով եւ ամբողջ ամառն անցուց անոր խանութին ետեւի կողմը։ Բայց երիտասարդը պէտք չ՛ունեցաւ երկար ժամանակ հոգ տանելու անոր։

որովհետև անիկա մեռաւ աշնան:

Անոր մահէն քիչ ետքը, Սթինա մայրիկ ըսաւ Հալֆորին.

— Կը փափաքիմ որ Հալֆոր խոստովանի ինծի բան մը:

Երիտասարդը ցնցուեցաւ և գլուխը վեր վերցուց:

— Հալֆոր խոստովանելու է թէ չա՛տ համբերեց Քարինին հետ:

— Անշո՛ւշտ, պատասխանեց երիտասարդը զարմացած:

— Այո՛, այնպիսի արժանաւոր անձնաւորութիւն մըն է Քարին, որ ձեռք բերելու համար, եթէ հարկ ըլլայ, պէտք է համբերել եօթը տարի, եօթը երկար տարի:

Բայց համբերութիւնը հեշտ բան չէր Հալֆորին համար: Ելիասի թաղումէն հազիւ երկու շաբաթ անցած էր որ շշուկները սկսեր էին պտտիլ: Կը համրէին արդէն անունները անոնց՝ որ եկեր էին խնդրելու Քարինի ձեռքը: Կիրակէ ետինքի մը որ երիտասարդը նստած իր դռանը աստիճանին վրայ՝ անցնող դարձողները դիտելով ժամանակ կ'անցնէր, նշմարեց գեղեցիկ սայլակներ՝ որ ամէնքն ալ կը բռնէին Ինկմարսկարտի ճամբան: Առաջին սայլակը կը վարէր Պէրկսանայի գործարանին վերատեսուչը, միւսը՝ Բարսմունտի պանդոկապետը, իսկ երրորդին մէջ կը սիգար Պէրժէր Փէրսոնը՝ մօտակայ գիւղին խոշոր կալուածատէրը: Պէրժէր Փէրսոն արևմտեան Տալէքարլիի ամենէն հարուստ գիւղացին էր, կարող և մեծ համբաւի տէր մարդ մը,—մարդ մը՝ տարիքով ալ մեծ, որ կարգուած էր, երկրորդ անգամ կարգուած

էր և ահա դարձեալ այրի էր:

Երբ Հալֆոր ճանչցաւ Պէրժէր Փէրսոնը, չէ՛ կրցաւ նստած տեղը մնալ: Վայրկեան մը ետքը ճամբան էր և կը գտնուէր շուտով կամուրջին անդիի կողմը, ուրկէ կ'ելլուի դէպի հին ագարակը: «Կ'ուզեմ միայն իմանալ, ըսաւ մտովի՝ ինքզինք արդարացնելու համար իր առջև, թէ ո՛ւր կ'երթան բոլոր այս սայլակները»: Բայց ինչքան որ հետևեցաւ անոնց անուաճետքերուն, այնքան անհամբեր դարձաւ: «Ըրածս անհեթեթ բան է, մրմնջեց՝ մտաբերելով մայր Սթինայի վանդապատուէրը: Բայց պիտի երթամ մինչև կապատին քով, հետաքրքիր եմ իմանալու թէ ի՛նչ կանցնի կը դառնայ այնտեղ»:

Պէրժէր Փէրսոն և միւս երկու մարդիկը տեղաւորուած էին Ինկմարսկարտի սրահին մէջ և սուրճ կը խմէին: Ինկմար Ինկմարսոն՝ որ միշտ կը բնակէր Սթօրմին տունը, բայց կիրակէ կիրակի ագարակը կ'երթար, նստեր էր սեղանին առջև, տանտիրոջ տեղը: Քարին պատրուակ բռնած էր տան զբաղումները և ներս չէր եկած, առարկելով որ բոլոր սպասուհիները վարժապետին քարոզին են գացեր:

Մեծ սենեակին մէջ մեռնելու աստիճան ճանձրոյթ կը տիրէր: Կին ուզելու եկողները կը խմէին իրենց սուրճը լռութեամբ. անոնք իրար հազիւ կը ճանչնային և իրենցմէ ամէն մէկը պատեհութեան մը կ'աշէր՝ սողոսկելու խոհանոցը և խօսելու տանտիրուհուն հետ:

Բացուեցաւ դուռը և նոր այցելու մըն ալ ներս մտաւ: Ինկմար քանի մը քայլ առաւ՝ զայն դիմաւորելու և առաջնորդեց սեղանին

մօտ ։

— Թիմս Հալֆոր Հալֆորսօ՛նն է, ըսաւ
Ինկմար՝ Պէրժէրին ։
Պէրժէր, առանց տեղէն ելլելու, բարեն ա-
ռաւ ձեռքի փոքր շարժումով մը և ըսաւ թե-
թևօրէն ծաղրաբան շեշտով մը ․
— Ուրախ եմ՝ ներկայացուած ըլլալով այդ-
քան ծանօթ անձնաւորութեան մը ։
Ինկմար՝ Հալֆորին համար աթոռ մը ա-
ռաջ քշեց ա՛յնպիսի ագմուկով մը՝ որ Հալֆոր
ազատ մնաց պատասխան մը տալէ ։
Հալֆորին գալուստը քակեց թեկնածունե-
րուն լեզուի կապերը ։ Անոնք դարձան շատա-
խօս, ինքնագով․ գիրար կը ծածկէին գովա-
սանքներու տակ, մէկզմէկ կը պաշտպանէին,
մէկզմէկ կը գրգռէին, իբր թէ խօսք մէկ ը-
րած ըլլային՝ մասն ու բաժինէ դուրս ձգելու
նորեկը ։

— Այսօր հրաշալի ձի մը ունէիք, սկսաւ
վերակացուն՝ խօսքն ուղղելով Պէրժէր Փէր-
սօնին ։

Պէրժէր հասկցաւ դիմացինին միտքը և փու-
թաց ինք ալ շնորհաւորել վերակացուն որ ան-
ցած տարի մէկ արջ մը սպաննած էր ։ Ցետոյ
երկուքն ալ դարձան երիտասարդ պանդոկա-
պետին և իրենց խնդակցութիւններն յայտնե-
ցին այն նոր տանը համար՝ որ իր հայրը շինել
տուած էր ։ Վերջապէս, վերատեսուչն ու պան-
դոկապետը միացան՝ իրենց կարգին, գովելու
համար Պէրժէր Փէրսօնին հարստութիւնը ։ Ի-
րենց պերճախօսութիւնը չէր սպառեր երբէք և
ամէն մէկ բառ Հալֆորին հասկցնել կուտար
թէ իր պզտիկութեան բերնին չէր ինկեր անոնց

հետ չափուելու ։ Եւ Հալֆոր գիտակցութիւնը
կ՛ունենար իր փոքրութեան ու դառնապէս կը
ղղջար իր այս դիմումին վրայ ։
Քարին ներս մտաւ՝ երկրորդ սուրճ մըն ալ
հրամցնելու ․ Տեսնելով Հալֆորը, Քարին նախ
ժուրախութեան յուզում մը զգաց, բայց անմի-
ջապէս խորհեցաւ որ Էլիասին մահէն այսքան
քիչ ատեն վերջը անոր այցելութիւնը դէշ մեկ-
նութեան տեղի պիտի տար և անոր այսպէս շատ-
պելը ըսել պիտի տար թէ աղէկ խնամած
չէր Էլիասը, որպէսզի շուտով անոր տեղն անց-
նի ։ Քարինի փափաքն էր որ Հալֆոր համբերէր
երկու տարիի չափ ։ Այդքան ժամանակ մը
պատշաճ պիտի ըլլար և ամէն մարդ պիտի
հասկնար որ Հալֆոր դէշ բան կամեցած չ՛էր
մեռնողին ։ «Ինչո՞ւ այսպէս կ՛աճապարէ, խոր-
հեցաւ Քարին․ գիտնալու չէ՞ որ իրմէ զատ ու-
րիշի մը հետ պիտի չ՛ամուսնանամ ես» ։
Երբ Քարին ներս էր մտեր, դարձեալ լը-
ռութիւն տիրած էր սրահին մէջ․ ամէնքն ալ
աչքերնին չորս բացած էին՝ տեսնելու համար
թէ ինչպէ՛ս գիրար պիտի բարեւեն Հալֆոր ու
Քարին ։ Անոնք մէկմէկու ձեռք սեղմեցին հա-
գիւ իրենց մատներուն ծայրովը ։ Այն ատեն
խոշոր կալուածատէրը, երեց անդամը գեղի
ծերակոյտին, կարճ սուր սուլոց մը արձակեց
շրթունքներէն, ինչ որ առիթ տուաւ վերակա-
ցուին՝ քահ քահ խնդալու ։
Հալ Փոր դարձաւ խնդացողին և ըսաւ խիստ
հանդարտ ձայնով մը․
— Ի՞նչ բանի վրայ կը խնդայ վերակացուն ։
Վերակացուն պատասխան մը չի գտաւ ան-
միջապէս տալիք, որովհետև չէր ուզեր երբէք

Քարինի առջեւ վիրաւորիչ բառ մը հանել բեր-
նէն:

—Միտքը կը բերէ որսի շունը՝ որ երեւան կը
հանէ նապաստակը եւ զայն զգեստնելու հոգը
որսորդներուն կը թողու, պատասխանեց պան-
դոկապետը:

Դէմքը կասկարմիր կտրած, Քարին կը լե-
ցընէր սուրճերը:

— Պէրժէր Փէրսօ՛ն եւ դուք ամէնքդ, ըսաւ
Քարին չքմեղուելով, դոհ ըլլալու էք սուրճով,
որովհետեւ ինկմարսկարտի մէջ մեր հիւրերու
մենք ալքօլ չենք հրամցներ:

— Մենք ալ մեր տանը մէջ այնպէս կընենք,
պատասխանեց գեղի ծերակոյտին երէց անդամը:

Վերակացուն ու մանուանդ պանդոկապե-
տը լռեցին, հասկնալով թէ Պէրժէր նշանակելի
յաղթանակ մը տարած էր: Պէրժէր հաճու-
թեամբ սկսաւ ծանրանալ օղիի վտանգներուն
եւ ժուժկալութեան վրայ, եւ Քարին մտիկ կ'ը-
նէր անոր, ուրախ որ իր անձնական մտածում-
ները կը գտնէ այդքան հեռեւողական մարդու
մը բերնին մէջ:

Խօսելով հանդերձ, Պէրժէր Փէրսօն ակ-
նարկ մը նետեց Հալֆօրին վրայ եւ տեսաւ որ
նստեր է ան, մռայլադէմ ու անհաղորդական,
իր սուրճի գաւաթին առջեւ՝ առանց ձեռք դըպ-
ցուցած ըլլալու անոր: «Շիտակն ըսելով, բա-
ւական դժուար բան է այս երիտասարդին հա-
մար, մտածեց Պէրժէր, եթէ ճիշտ է, ինչպէս
որ կը խօսուի, թէ օգնած է անիկա Էլլիսին
որ չուտ ճողէ: Անկեղծօրէն, բարի բան էր որ
Քարին ազատէր այդպիսի թշուառական ամու-
սինէ մը»: Եւ մտածելով որ արդէն կիսով չա-

հած է յաղթանակը, Պէրժէր աւելի հաճոյ դար-
ձաւ Հալֆօրին նկատմամբ: Վեր առաւ իր գա-
ւաթը եւ ըսաւ.

— Կենա՛ցդ, Հալֆօ՛ր. դուն մեծ աջակ-
ցութիւն մը ըրած ես Քարինին՝ խնամելով ա-
նոր դժբախտ ամուսինը:

Հալֆօր, աչքերը սեւեռած անոր վրայ, ինք-
նիրեն կը հարցնէր թէ ինչէ՛ն է որ այս խօս-
քերը ըրաւ:

Վերակացուն խնդաց քահ քահ:

— Այո՛, մեծ աջակցութիւն մը, յարեց ան,
չատ մեծ աջակցութի՛ւն մը:

Եւ պանդոկապետը կրկնեց ժպտելով,

— Այո՛, այո՛, խի՛ստ մեծ աջակցութիւն
մը:

Անոնք չ'էին լմնցուցած իրենց խնդուքը որ
Քարին սենեակէն դուրս սպրդած էր՝ սառուերի
մը պէս: Կանգ առաւ խոհանոցին սեմին վրայ՝
ականջը լարած, իմանալու բոլոր ներսը խօս-
ուածները, տխո՛ւր, սրտակոտո՛ր որ Հալֆօր
այսքան չուտ եկաւ: Անոր այս աճապարանքը
վերջը վերջը անկարելի պիտի դարձնէր իրենց
ամուսնութիւնը, որովհետեւ չար լեզուները ար-
դէն կը քակուէին:

«Չեմ գիտեր թէ ի՛նչպէս պիտի դիմանամ՝
պայն կորսնցնելով, կը մտածէր, ձեռքը կարկա-
մած իր կուրծքին վրայ»:

Լռութեան մէջ լսեց աթոռի մը չարժուիլը.
մէկը ոտքի կ'ելլէր:

— Հալֆօրը կ'ուզէ մեկնի՜լ արդէն, հար-
ցուց պատանի ինկմար:

— Այո՛, ա՛լ չեմ կրնար մնալ. բարեներս
կը հաղորդես Քարինին:

— Բայց Հալֆօր ինք երթալու է խոհանոցը՝

մնաս բարով ըսելու:

— Ո՛չ, ըսելու բան չի մնաց այլևս:

Քարինի սիրտը սկսաւ բաբախել և մտածումները գահավիժել: Հալֆոր բարկացած էր իր դէմ: Եւ ինչո՞ւ զարմանալ: Ինք հազիւ համարձակած էր դպնալ անոր ձեռքին, և, երբ միւսները անողոքօրէն կը ծաղրէին զայն, ինք ո՛չ միայն չէր պաշտպանած զայն, այլ առանց իր բերանը բանալու, երեսն առած դուրս էր ելեր: Հիմա անիկա կը կարծէր որ Քարին չէր սիրեր զինք: Հիմա կը մեկնէր: Ա՛լ երբեք ոտք պիտի չ'դնէր ագարակը: Ի՛նչպէս էր եղեր որ Քարին այսպէս էր վարուեր, ինք որ այնքան կը սիրէր զայն: Ցանկարծ իր հօրը հին խօսքը միտքն ինկաւ. «Ինկմարսօնները մարդոց երկիւղովը ապրած չէին, այլ հետևած միմիայն Աստուծոյ ճամբուն»:

Քարին բացաւ դուռը և ելաւ Հալֆորին դէմ՝ դեռ անիկա սեմէն անցնելու ատեն չ'ունեցած:

— Կուզես մեկնի՞լ արդէն, Հա՛լֆոր, ըսաւ Քարին. կը խորհէի որ պիտի մնաս հոս՝ ընթրելու մեզի հետ:

Երիտասարդը կը նայէր անոր. Քարին բոլորովին փոխուած էր, դարձեր էր կասկարմիր ու հրավառ, ունենալով այնպիսի յուզիչ և գորովալի բան մը՝ որ մինչև այն ատեն տեսած չէր Հալֆոր:

— Կ'երթայի՛, ըսաւ Հալֆոր՝ առանց ըմբռնելու թէ ինչ ըսել կ'ուզէր Քարին. Կ'երթայի՝ ա՛լ անգամ մըն ալ չ'գալու համար հոս:

— Ջէ՛, չե՛մ թողուր, եկուր խմէ՛ սուրճդ:

Բռնեց անոր ձեռքէն 'ւ տարաւ դէպի սեղանը. Իր դէմքը փոխն ի փոխ կը կարմրէր ու կը դեղնէր. մէկ քանի անգամ քաջասրտու-

թիւնը կորսնցուց, բայց ինքզինք լաւ բռնեց, թէև հեգնութեան ու արհամարհանքի ամենէն քիչ կը դիմանար: «Գէթ անիկա պիտի տեսնէ թէ կ'ուզեմ իրեն հետ բաժնել ծանր բեռը» մտածեց Քարին:

— Պէրժէ՛ր Փէրսօն և դուք միւսներդ, ըսաւ Քարին, Հալֆոր ու ես տակաւին չենք խօսած խնդիրին վրայ, նկատի ունենալով որ շատ նոր է այրիութիւնս, բայց կը կարծեմ թէ նախընտրելին ինծի համար ի՛նքն է, թող ըսեն ամէնքն ալ. բացի Հալֆորէն ուրիշի հետ չ'եմ ուզեր ամուսնանալ:

Կանգ առաւ, որովհետև ձայնը կը դողդըղար. յետոյ շարունակեց.

— Թող ըսեն ինչ որ կ'ուզեն:

Եւ մօտեցաւ Հալֆորին՝ կարծես անոր մօտ ապաստան մը փնտռելու, բոլոր չար խօսքերուն դէմ:

Թեկնածուները կը մնային անխօս, զարմացած մանաւանդ՝ տեսնելով Քարինը իր կեանքին մէջ առաջին անգամ այդքան երիտասարդուհի դեռահաս աղջիկէ մը աւելի աղջիկ:

— Երբ ստացայ հօրդ ժամացոյցը, ըսաւ վերջապէս Հալֆոր տակաւին անհամարձակ ձայնով մը, կարծեցի թէ անկէ աւելի մեծ բան չ'էի կրնար ունենալ. բայց ինչ որ ըրիր հիմա՝ կ'անցնի ամէն բան:

Իսկ Քարին կը սպասէր միշտ անձկութեամբ թէ ի՛նչ պիտի ըսեն միւսները: Այն ատեն Պէրժէր Փէրսօն ոտքի ելաւ:

— Մենք կը փափաքինք խօսեցաւ այս պատուական մարդը, շնորհաւորել Քարինն ու Հալֆորը, որովհետև յայտնի է թէ այն մարդը որ կ'ընտրէ Քարին Ինկմարսօթէր՝ անբիծ և անըստգիւտ է:

IV

ՍԻՕՆԻ ՄԷՋ

Ինչո՞ւ զարմանալ որ ծերունի վարժապետ մը երբեմն քիչ մը մեծամիտ ըլլայ։ Իր ամբողջ կեանքի ընթացքին՝ անիկա գիտութիւն և լոյս բաշխած է իր նմաններուն։ Գեղացիները իր աչքին տակ կ՚ապրին այն բանով՝ որ ինք տուած է անոնց և գիտեն միայն այն, ինչ որ ինք սորվեցուցած է անոնց։ Մի՛ զարմանաք բնաւ որ անիկա շարունակէ անոնց վրայ նայիլ՝ իբրև թէ անոնք միշտ դպրոցական ըլլան, հակառակ իրենց տարիքին, և ինքզինք համարէ անոնց ամէնքէն աւելի խելացի։ Ճշմարիտ և ծերունի ուսուցիչ մը դժուարութիւն կը զգայ միշտ իր նախկին աշակերտներուն հետ հասուն մարդոց պէս վարուելու. անիկա շարունակ զանոնք կը տեսնէ իրենց մանկական դէմքերովը, իրենց թոնթոշիկ և խորունկ փոսիկներ ունեցող երեսներովը, իրենց մեծաբաց, անշարժ և բարի աչքերովը։

Ձմեռուան կիրակէ մը, ժամերգութենէն ետք, երէցն ու դպրոցին վարժապետը կը խօսակցէին պզտիկ աւանդական կամարին տակ, և իրենց խօսակցութիւնը եկած հասած էր Փրկութեան Բանակին վրայ։

— Տարօրինա՛կ հնարք մըն է աս, կ՚ըսէր երէցը. երբէք մտքէս չ՚էի կրնար անցնել թէ այսպիսի բան մը կուգայ մեր գլխուն։

Վարժապետը ակնարկ մը, գրեթէ խիստ ակնարկ մը ձգեց անոր վրայ, այնքան այս խօսքերը անտեղի կ՚երևնային իրեն։

— Իսկ ես ալ բնաւ չեմ խորհէր թէ այդպիսի բան մը գայ հոս, ըսաւ վարժապետը, շեշտելով ամէն մէկ բառին վրայ։

Երէցը, թէև միշտ ընկճուած իր անկումին գիտակցութեամբը, չի կրցաւ ինքզինք զսպել սակայն՝ քիչ մը իյնալու Սթօրմին հետ։

— Ի՞նչպէս այդքան վստահ կրնաս ըլլալ փախելու Փրկութեան Բանակին ձեռքէն, ըսաւ անոր։

— Հոն ուր երէցն ու վարժապետը ձեռք ձեռքի տուան, այդպիսի կռապաշտութենէ մը վախնալիք տեղ չի մնար։

— Բայց չ՚եմ տեսներ թէ Սթօրմն ու ես ձեռք ձեռքի տուած ըլլանք։ Դուն կը քարոզես անդին, մենակդ, քու Սիոնիդ մէջ։

— Երէցը երբէք լսած չէ սակայն թէ ի՛նչպէս կը քարոզեմ, յարեց Սթօրմ՝ խիստ մեղմ ձայնով մը և վայրկեան մը լռութենէ ետք։

Արդարև երէցը երբէք ոտք դրած չ՚էր այդ մատուռէն ներս՝ որ իր աչքին, ճշմարիտ քար գայթակղութեան մըն էր։ Բայց երբ խօսք բացուեցաւ անոր վրայ, երկու հին բարեկամները

վախցան գիրար Վիրաւորելէ։
«Հաւանականաբար, անարդար եմ Սթօրմին
նկատմամբ, ինք իր մէջ ըսաւ երէցը։ Զօրս տա-
րիէ ի վեր որ անիկա իր կիւրակէ օրուան յետ-
միջօրէները կ'անցնէ Աստուածաշունչը բացատ-
րելով, ես առտուները աւելի բազմութիւն կ'ու-
նենամ եկեղեցիին մէջ և շուրջս հերձուածի մը
ամենափոքր հետքն անգամ չ'եմ գտեր։ Երբէք
տակնուվրայ չ'ըրաւ անիկա գեղը, ինչպէս որ
կը վախնայի սկիզբները։ Լաւ բարեկամ մըն է
ան. պէտք է որ ապացոյց մը տամ թէ որքան
կը յարգեմ զինք»։
Եւ առաւօտուն տեղի ունեցած այս փոքր
առնել-տալէն այն արդիւնքը առաջ եկաւ որ ե-
րէցը նոյն կիւրակէ օրուան կէսօրէն ետքն իսկ
Սթօրմին մատուռը գնաց։
«Իրեն մեծ ուրախութիւն մը պիտի պատ-
ճառեմ, խորհեցաւ. տեսնենք քիչ մը թէ ինչ-
պէս քարոզ կուտայ իր Սիոնին մէջ»։
Վարժապետին Սիոնը մեծ սրահ մըն էր՝
պայծառ պատերով, որոնց վրայ կախուած էր
Լուտերի և մուշտակեզր կրկնոց հագած Մէ-
լանխթոնի պատկերները։ Փ է ր վ ա գ ի ն եր-
կայնքէն գրուած էին Ս. Գրքէն տուներ՝ գե-
ղեցիկ բոլոր-գիրով, շրջանակուած ծաղիկնե-
րով, փողերով և երկնային բերանավիներով։
Սրահին խորը, սարաւանդակի մը վերև կախ-
ուած փոքր երփնավիմագրութիւն մը կը ներ-
կայացնէր Բարի Հովիւը։ Մեծ, մերկ սրահը
լեցուած էր բազմութեամբ և ասով կը ստանար
իրօք հանդիսաւոր և զուարթ կերպարանք մը։
Ներկաներէն մեծ մասը հագած էր տալէքար-
լիցիի տարազներ. և լայն ու չօհուած ճերմակ

գլխանոցները, կիներուն գլխուն վրայ, ի-
րենց սպիտակ թևերը բացած մեծ թռչուննե-
րու տպաւորութիւնը կ'ընէին։
Սթօրմ արդէն սկսած էր իր քարոզը՝ երբ
տեսաւ երէցին ներս մտնելն ու առաջին կար-
գին վրայ նստիլը։
«Դո՛ւն, Սթօ՛րմ, մտածեց ան, իրաւ որ
տարօրինակ մարդ ես. ձեռքէդ բա՛ն չի խալ-
սիր։ Ահա տես որ էն ետքը երէցն ալ պատիւ
կ'ընէ գալ քու քարոզդ մտիկ ընելու»։
Վարժապետը իր քարոզելու սկսած օրէն
մինչև հիմա մեկներ էր Աստուածաշունչը առա-
ջին երեսէն մինչև վերջին երեսը։ Այս յետ մի-
ջօրէին կը խօսէր Յովհաննու Յայտնութեան,
Երկնային Երուսաղէմի և յաւիտենական երա-
նութեան վրայ։ Եւ իր հին բարեկամին ներկա-
յութիւնը այնպիսի ուրախութիւն մը կը պատ-
ճառէր իրեն՝ որ իր մտքին մէջ կ'ըսէր. «ո՛չ,
ճշմարի՛տը, յաւիտենական կեանքին մէջ իմ
փափաքած բանս ա՛ն է որ միշտ նստած ըլլամ
իմ բեմիս առջև և ուսուցանեմ հնազանդ և խե-
լացի մանուկներուս։ Եւ եթէ ատեն ատեն մեր
Տէր-Յիսուսն ալ գար ինծի մօտիկ ընելու՝ ինչ-
պէս այսօր երէցը եկած է, երկինքին մէջ ինծ-
մէ աւելի գոհ մէկը պիտի չ'ըլլար»։
Երէցը ինք ալ ականջները սրած էր՝ Երու-
սաղէմի անունը լսելով և տարօրինակ նախա-
զգացումներ սկսած էին յուզել իր սիրտը։
Քարոզին կիսուն՝ դուռը բացուեցաւ և ներս
մտան քանի չափ մարդիկ, որ զգուշանալով
խանգարել քարոզը, կեցան սեմին վրայ։
«Ահա՛, մտածեց երէցը. վստահ էի թէ բան
մը պատահելու է»։

Եւ իրաւ, հազիւ Սթօրմ ամմէն ըսաւ, և ահա նորէն խումբին մէջէն ձայն մը բարձրացաւ.

— Խոնարհաբար թոյլտուութիւն կը խնդրեմ մէկ երկու խօսք ըսելու:

Չափազանց քաղցր, չափազանց սիրելի ձայն մըն էր լսուածը: Երէցն ու իր դրացիներէն մեծ մասը ճանչցան որ Հօք Մաթս Էրիքսոնի ձայնն է: Գեղին մէջ անոր չափ մանկական սիրուն ձայն ունեցող մէկը չի կար: Եւ տեսնուեցաւ որ փոքր, գէր ու կարճ, բայց արտաքինով հեզ մարդ մը առաջ անցաւ մինչև սարաւանդակը, իրեն հետ ունենալով քանի մը էրիկ մարդիկ ու կիներ՝ որոնք կը պաշտպանէին ու կը քաջալերէին զինք:

Վարժապետը, երէցը և բոլոր ծխականները կարծես անդամալուծուեցան: «Կերևի թէ Հօք Մաթս եկեր է մեծ դժբախտութեան մը լուրը տալու մեզի. կա՛մ թագաւորը մեռած է, կա՛մ պատերազմ կայ, կամ թէ չէ մէկը խեղդուած է գետէն անցած ատեն»:

Բայց Հօք Մաթս չար խապար տուողի մը երևոյթը չ'ունէր. և այնքան ալ յուզուած ըլլար՝ ինչպէս որ կ'երևէր, որքան ալ հանդիսաւոր կենար, իր գոհունակութիւնը արդեւք չ'էր ըլլար սակայն իրեն որ չ'ժպտի:

— Կը փափաքիմ վարժապետին և ներկաներուն պատմել թէ, ըսաւ անիկա, անցեալ կիւրակէ երբ տունը նստած էի իմ ընտանիքիս հետ, Հոգին Սուրբ իջաւ իմ վրաս և սկսայ քարոզել: Սառնակ տեղալուն համար՝ չի կրցանք տունէն դուրս գալ և կը հառաչէինք Աստծոյ խօսքէն ետք: Այն ատենն է որ յայտնուեցաւ

ինծի թէ կարող էի ես ալ քարոզել: Քարոզեցի երկու կիւրակէ և մեր տնեցիներն ու մեր դրացիները ըսին ինծի թէ՝ պէտք է որ հոս գամ և խօսիմ նաև ժողովուրդին,

Հօք Մաթս աւելցուց թէ զարմացած էր որ քարոզելու շնորհքը իջած էր իրեն պէս խոնարհ մարդու մը վրայ:

— Բայց վարժապետը ինք ալ մեզի պէս գիւղացի մըն է, եզրակացուց անիկա քաղցր միամտութեամբ մը:

Եւ այս փոքր յառաջաբանէն ետք, Հօք Մաթս իրարու միացուց ձեռքերը և արդէն քարոզին կը սկսէր, երբ Սթօրմ՝ որ իր պաղարիւնութիւնը գտած էր, ընդմիջեց զայն.

— Արդեօք Հօք Մաթսին նպատակն է իր քարոզն սկսիլ հոս անմիջապէ՞ս:

— Այո՛, ա՛տ է նպատակս, պատասխանեց Հօք Մաթս՝ որ, Սթօրմի մռայլ դէմքին առջև՝ կարծես յանցանքին վրայ բռնուած մանուկի մը երևոյթն ստացաւ... Այո՛, նպատակս էր նախ վարժապետին թոյլտուութիւնը և ապա ներկաներուն ներողութիւնը խնդրել, աւելցուց անիկա աւելի խոնարհ կերպով:

— Շա՛տ աղէկ, բայց այսօրուան ժողովը աւարտած է, ըսաւ Սթօրմ վճռական շեշտով մը:

Փոքր, կարճ ու գէր մարդը սկսաւ աղաչել հեծեծագին ձայնով:

— Այս բոլոր բաները իմ միտքս եկան երբ որ արօրը կը քշէի եւ կը հսկէի իմ չոր խոտի դէզերուս վրայ. անոնք հիմա կ'ուզեն որ դուրս գան մտքէս:

Բայց, վարժապետը՝ որ այսօր իր փառքի գագաթնակէտին հասած էր, անողոք գտնուե-

ցաւ.

— Մաթս Էրիքսոն մեզի յայտնել կ'ուզէ իր անձնական խորհրդածութիւնները եւ զանոնք Աստծոյ խօսքը կ'անուանէ, պատասխանեց վարժապետը՝ կշտամբանքի շեշտով մը:

Հօք Մաթս չի համարձակեցաւ այլեւս ուրիշ բան ըսել և Սթօրմ բացաւ Հոգեւոր Երգարանը:

— Հիմա պիտի երգենք 187-րդ երգը, ըսաւ, և սկսաւ՝ «Պ ա տ ու հ ա ն դ ր ա ց կը պ ա հ ե՞ ս Ե ր ո ւ ս ա ղ է մ ի կ ո ղ մ է ն»:

«Ուրախալի է որ երէցը այսօր ներկայ եղաւ, մտածեց վարժապետը. պիտի տեսնէ թէ ինչպէս կարգ կանոն պահել կուտամ իմ մատուռիս մէջ»:

Բայց հոգեւոր երգը լմնցաւ չի լմնցաւ, ներկաներէն մէկը ոտքի ելաւ. ելլողն էր Լիունկ Պըյօրն Օլոֆսըն, հպարտ ու բարձրամիտ մէկը՝ որ կարգուած էր Ինկմարսոններէն մէկ աղջկան հետ և աւանին մէջ մեծ ագարակի մը տէրն էր:

— Մենք կ'ըսենք և կը մտածենք այստեղ ներկաներս, ըսաւ անիկա չափաւոր ձայնով մը, թէ Վարժապետը պարտաւոր էր մեր ալ կարծիքը առնել՝ Մաթս Էրիքսոնին մերժողական պատասխան տալէ առաջ:

— Ա՛հ, ո՞վ ըսաւ թէ այդպէս է, տղա՛ս, պատասխանեց Սթօրմ այնպիսի կերպով մը որ կարծես թէ չարաճճի փոքր տղու մը հետ ըլլար գործը... աղէկ գիտցիր որ այս սրահին մէջ մինակ ես իրաւունք ունիմ խօսելու:

Լիունկ Պըյօրն կաս կարմիր կտրեցաւ: Անիկա բնաւ միտք ունեցած չէր վէճի բռնուելու Սթօրմի հետ, այլ միայն ուզած էր քիչ մը մեղմել ազնիւ Հօք Մաթսին ստացած հարուածը՝

Բայց վարժապետին պատասխանը չափազանց Գրգռեց զ'ինք: Բերանը կը բանար արդէն պատասխան տալու, երբ խօսքն առաւ Հօք Մաթսի ընկերացող մարդոցմէն մէկը:

— Ես երկու անգամ լսեցի Հօք Մաթսին քարոզելը և կը վկայեմ թէ հրաշալի էին անոնք: Իմ կարծիքս ան է որ բոլոր հոս ներկայ եղողները պիտի օգտուին անոր խօսքերէն:

Վարժապետը անմիջապէս պատասխանեց այն հայրական բարեացակամութեամբը՝ որով կը խրատէր իր աշակերտները.

— Բայց կ'ըմբռնես հարկաւ, Քրիսթէ՛ր Լարսօն, որ եթէ այսօր Հօք Մաթսին քարոզել թող տամ, գալ կիւրակէ ալ դուն պիտի ուզես քարոզել, Քրի՛սթէր, և միւս կիւրակէն ալ Լիունկ Պըյօրնը:

Այս խօսքերուն վրայ՝ ներկաներէն շատերը սկսան խնդալ, բայց Պըյօրնի խիստ և հատու պատասխանը չուտով կտրեց այդ խնդուքները.

— Ձեմ գիտեր թէ ինչո՛ւ Քրիսթէր և ես քարոզելու կարող պիտի չ'ըլլանք և վարժապետը պիտի ըլլա՛յ:

Հալֆոր ոտքի ելաւ առաջքն առնելու ամէն վիճաբանութեան.

— Անոնք որ իրենց դրամով նպաստած են մատուռին շինութեանը, ըսաւ անիկա, պէտք է որ առաջուց տեղեկութիւն ունենային և թոյլտուութիւն տային նոր մարդու մը քարոզելուն:

— Մատուռ մը շինելով, ուժով պոռաց Քըրիսթէր՝ որ սաստիկ բարկացած էր ինք ալ, մենք ամէնքս համամիտ էինք որ անիկա ազատ տուն մը պիտի ըլլար՝ ուր կարելի պիտի ըլ-

լար ազատօրէն քարոզել, և ո՛չ թէ տաճար մը ուր Աւետարանը պիտի կարդացուի միմիայն մէկ մարդու կողմէ:

Այս խօսքերը կարծես նոր գաղափարներ արթնցուցին ներկաներուն մէջ: Ժամ մը առաջ ոչ ոք մտքէն պիտի անցնէր որ այս մատուռին մէջ Սթօրմէն զատ ուրիշ մէկը կրնայ ձայն բարձրացնել. բայց ահա ամէնքն ալ հիմա կը խորհէին. «Որքա՜ն հետաքրքրական պիտի ըլլար ամպիոնին վրայ նոր դէմք մըն ալ տեսնել և անկէ նոր խօսք մըն ալ լսե՜լ»:

Բայց արդիւնքի մը կարելի պիտի չ՚ըլլար հասնիլ թերևս, եթէ Քօլաս Կինար հոն չգտնուէր: Քօլաս Կինար Հալֆորին երկրորդ քենեկալն էր, մռայլ դէմքով, ծակող աչքերով և նիհար մարդ մը: Քօլաս՝ ինք ալ շատ կը սիրէր վարժապետը՝ ինչպէս միւսները կը սիրէին, բայց ա՛լ աւելի կը սիրէր լաւ վիճաբանութիւն մը:

— Այո՛, ըսաւ անիկա, այս տունը շինուած ատեն ամենուն բերանն էր ազատութիւն բառը, բայց շինուելէն ետք՝ ազատ խօսք չլսեցի ես բնա՛ւ:

Սթօրմին դէմքը շառագունեցաւ՝ այս առաջին ուղղակի հարուածէն ճշմարիտ ոխակալութեան մը այս առաջին վկայութենէն:

— Քեզի պիտի չ՚պատասխանեմ սակայն, Քօլաս Կինար, թէ այստեղ քարոզուած է ճըշմարիտ ազատութիւնը, այնպէս՝ ինչպէս որ կ՚ուսուցանէ Լուտեր. բայց հոս ազատութիւն չի կայ քարոզելու այնպիսի նորութիւններ՝ որ մէկ օրուան կեանք ունին և միւս օրը կը չքանան:

— Վարժապետը, յարեց Կինար, կ՚ուզէ

մեզ համոզել թէ ամէն ինչ որ նոր է՝ վնասակար է, բաւական է որ այդ նորութիւնը շօշափէ կրօնքի վարդապետութիւնը: Մեզմէ կը պահանջէ որ հետևինք երկրագործութեան նոր ձևերուն, բայց չ՚ուզեր որ գիտնանք այն նոր մեքենաները՝ որոնցմով կը հերկեն Աստծոյ դա՛շտը:

Սթօրմ կարծեց թէ սխալ ըմբռնած է Կինար Քօլասի մտքերը՝ իր մասին աննպաստ ընդունելով.

— Կինարին կարծիքն այն է որ, ըսաւ կատակով, այստեղ Լուտերի վարդապետութենէն տարբե՞ր բան քարոզելու է:

— Խնդիրը վարդապետութեան վրայ չ՚է, պոռաց Կինար խստօրէն. խնդիրը քարոզիչին վրայ է. և իմ կարծիքովս Մաթս Էրիքսոն նոյնքան լուտերական է՞ որքան վարժապետը կամ երէցը:

Սթօրմ մոռցած էր երէցը. նայեցաւ անոր: Երէցը անշարժ, ծնօտը կռթնցուցած էր իր գաւազանին գլխուն, նայուածքը յառած էր Սթօրմին և իր աչքերը կը փայլէին տարօրինակ հոգիւնով մը:

«Ի՜նչ լաւ պիտի ըլլար որ, խորհեցաւ Սթօրմ, երէցը այսօր եկած չ՚ըլլար հոս»:

Տեղի ունեցած այս բաները իրեն կը յիշեցնէին երևոյթ մը՝ որուն երկար փորձառութիւնն ունէր: Երբեմն դպրոցին մէջ՝ գարնանային բացառապէս գեղեցիկ օրերէն մէկը եթէ փոքր թռչուն մը գար պատուհանին եզերքին վրայ թառէր և սկսէր երգել կոկորդը խզտելու չափ, բոլոր տղաքը կ՚աղաչէին ծերունի Վարժապետին՝ արձակուրդ մը ընել իրենց. ի–

բար կ'անցնէին, կը դադրէին կարդալէ, շշուկ կը հանէին, խօսք չ'էին լսեր եւ անկարելի կ'ըլլար զ'իրենք զսպել. Հօք Մաթս այդ փոքր թըռչունն եղած էր։ Բայց Սթօրմ միտքը դրած էր երէցին ցոյց տալու թէ ինք ուժ ունէր զըսպելու այդ ընդվզումները։

«Նախ թ'ող տանք որ բարձրացնեն իրենց աղմուկը», ըսաւ ինքնիրեն՝ նստելով իր սեղանին ետեւ։

Փոթորիկը չղթայազերծուած էր։ «Մենք ալ պակաս չե՛նք վարժապետէն—ինչո՞ւ մինակ ինք պիտի ըլլայ մեզի սորվեցնողը թէ ասոր պէտք է հաւատալ, անոր չ'հաւատալ»։ Այնպէս կ'երեւէր թէ այս մտածումները նոր ծնունդ կ'առնէին. բայց, եղած վիճաբանութենէն դատելով՝ մարդ կը զգար որ անոնք սրտերու մէջ բողբոջած էին ա՛յն օրէն՝ երբ վարժապետը, իր մատուռը բանալով, ցոյց տուած էր թէ խոնարհ եւ պարզամիտ մարդ մըն ալ կրնայ մեկնել Աստծոյ խօսքը։

Քանի մը վայրկեան ետք Սթօրմ մտածեց՝ «Հիմա որ այս մանուկները իրենց աղմուկը ձգեցին, սորվեցնելու է իրենց թէ հո՛ս է վարժապետ՛ը»։ Ոտքի ելաւ, ձեռքով զարկաւ սեղանին եւ ըսաւ ուժգին ձայնով մը.

— Ի՞նչ է այս բոլոր շատախօսութիւնը. ես պիտի երթամ եւ պէտք է որ, բարեկա՛մներս, դուք ալ դուրս ելլէք, որպէսզի մարեմ ճրագներն ու գոցեմ դռները։

Մէկ քանի հոգի ելան ոտքի, որովհետեւ իբրեւ Սթօրմի հին աշակերտներ, գիտէին թէ սեղանին զարնուած բռունցքի այդ հարուածը այնպիսի նշան մըն էր՝ որուն պէտք էր հնա-

զանդիլ. բայց մեծ մասը տեղէն չի շարժեցաւ։

— Վարժապետը կը մոռնայ թէ, ըսին անոնք, հիմա մենք խոշոր մարդիկ ենք։ Ի՛նչ, կը կարծէ որ ձեռքով իր ամպիոնին զարնելով պիտի ձգենք երթա՞նք։

Եւ անոնք շարունակեցին վիճաբանիլ նոր աղանդաւորներուն եւ այն մարդոց վրայ՝ որ կրնային բերել տալ դեղը։

Սթօրմ իր նայուածքը պտտցուց ներկաներուն վրայ՝ ապշահար. կարծես աչքին կը ցարնէր սահմռկեցուցիչ բան մը։ Ինք որ մինչեւ հիմա բոլոր դէմքերուն մէջ մանուկներ միայն տեսած էր, ահա յանկարծ վեհօրէն կ'անհետանային այդ բոլոր կլոր երեսները, փափուկ մազերը, խարտեաշ գանգուրներն ու խելօքիկ աչքերը եւ կը նշմարէր իր առջեւ արդէն հասուն տարիքով, դժնեայ եւ լուրջ դէմքերով մարդիկ՝ որոնց վըրայ իր հին վարժապետի հոգին կը զգար թէ ոչ մէկ իշխանութիւն ունի այլեւս։ Կը մնար իր կանգնած տեղը՝ ապշած շուարած, չ'գիտնալով թէ ասկէ ետք ի՛նչպէս խօսելու է անոնց։

Ժխորը մեծցաւ։ Քօլաս Կիւնար, Քրիսթէր Լարսօն եւ Լիւունկ Պըյօրն կը շարժկոտէին եւ կը պոռային։ Հօք Մաթս, պատճառը բոլոր այս խառնակութեան, ոտքի ելաւ մէկ քանի անգամ, բայց մարդ ականջ չի կախեց իր խաղաղութեան խօսքերուն։

Դարձեալ Սթօրմ իր աչքերը ձգեց երէցին վրայ։ Նստած միեւնոյն տեղը, բիբերուն մէջ այն միեւնոյն շողիւնը՝ երէցը միշտ իր ակնարկը սեւեռած կը պահէր իր վրայ։

«Անշուշտ կը յիշէ այն խօսքերը որ ինծի կ'ըսէր, խորհեցաւ Սթօրմ, այն ատենները՝

Երբ միտքս դրի իմ մատուռս շինելու: Այո՛ իրաւունք ունէր. որովհետև, ահա արդէն ընդվըզումը, վէճն ու սխա՛լը»:

Վարժապետը խորհրդածեց տակաւին, յետոյ, ոտքի վրայ, գլուխը բարձր բռնած, հանեց գրպանէն այն փայլուն փոքր բանալին որ կը բանար ու կը գոցէր մատուռը, և դարձուց զայն լոյսին դէմ. չողիւններ անցան սրահին մէջէն:

— Այս բանալին կը դնեմ հոս, սեղանին վրայ, ըսաւ անիկա, ա՛լ անգամ մըն ալ չ'առնելու համար: Կը տեսնեմ թէ ինչ որ կ'ուզէի դուրսը թողուլ՝ ներս կը մտնէ ահա իմ սխալովս:

Դրաւ բանալին, առաւ իր գլխարկը և շիտակ գնաց երէցին քով.

— Խորապէս շնորհակալութիւն կյայտնեմ երէցին՝ որ այսօր եկաւ իմ քարոզս լսելու, ըսաւ անիկա. որովհետև եթէ այսօր ալ եկած չըլլար, երբեք պիտի չկրնար լսել այլևս:

ԴԻԽԱՑԻՆ ԱՐՇԱԻԸ

Շատեր կը խորհէին թէ Էլիաս խաղաղ պիտի չ'կրնար հանգչիլ իր գերեզմանին մէջ, որովհետև այնքան գարշելի վարմունք ունեցած էր Քարինի և փոքր Ինկմարին նկատմամբ: Կարծես դիտմամբ թէ՛ իր և թէ Քարինի դրամը վատնած էր՝ որպէսզի իր մահէն ետքն ալ տառապեցնէ Քարինը: Այնքան ծանր պարտքերու տակ ձգած էր կալուածը որ եթէ Հալֆոր պէտք եղած դրամը չ'ունենար նորէն գնելու ագարակը և վճարելու պարտքերը, դժբախտ Քարին ստիպուած պիտի ըլլար ձգելու զայն պարտատէրերուն ձեռքը: Ինկմար Ինկմարսոնենց քսան հազար քրօնը չքացած էր: Ոմանք կը կարծէին թէ Էլիաս այդ դրամը թաղած էր գետինը. ուրիշներ կը պնդէին թէ վատնած է: Կարելի չ'եղաւ գտնել վերջապէս: Երբ տանը գոյքերուն ցանկը կազմեցին, նշմարեցին թէ

տան առարկաներէն շատերը կորսուած են և օր օրի վրայ փնտռեցին ու չի գտան։

Երբ Ինկմար իմացաւ իր ազատութիւնը, Քարինի հետ խորհուրդի նստեցաւ և անոր յայտնեց թէ վարժապետութիւն պիտի ընէ։ Քարին զինք թողելու է Սթօրմենց տունը՝ մինչև որ վարժապետանոց մտնելու տարիքին հասնի։ Հո՛ն, աւանին մէջ, երէցէն Սթօրմէն գիրք փոխ առնելով պիտի կարդայ և միևնոյն ատեն պիտի օգնէ Սթօրմին՝ պզտիկ տղոց կարդալ սորվեցնելով, բան մը որ իրեն համար ալ լաւ վարժութիւն մը պիտի ըլլայ։

Քարին մտածեց քիչ մը և պատասխանեց·

— Մեր քով կենալ չ'ես ուզեր՝ կ'երևի այն պատճառով որ տանը տէրը չ'ես։

Երբ վարժապետին աղջիկը՝ Կէրթրուտ, իմացաւ որ Ինկմար դարձեալ իրենց քով պիտի դառնայ, երեսը կախեց։ Քանի որ իրենց տունը տղայ մը պիտի գար կենար՝ իրեն փափաքն էր որ այդ եկողն ըլլար կա՛մ գիւղապետին տղան Պէրթիլը, կա՛մ Հօք Մաթս Էրիքսոնի տղան Գաբրիէլը։ Կէրթրուտ կ'ախորժէր Գաբրիէլի և Պէրթիլի ընկերութենէն, որովհետև զուարթ էին անոնք։ Իսկ Ինկմարի նկատմամբ աղէկ տրամադրութիւն չ'էր զգար իր մէջ· Գորովանք ունէր այդ բարի և միշտ ազնուամիտ ընկերոջ համար, որ գերիի մը պէս հնազանդ էր իրեն· բայց անոր ձախաւերութիւնը, դանդաղութիւնը և երբեք խաղ մը չ'գիտնալը՝ սրտնեղութիւն կը պատճառէին իրեն ատեն ատեն։ Կը սքանչանար անոր աշխատասիրութեան ու խելացիութեանը վրայ, բայց իր կարողութիւնը, երբեք ծախել չ'գիտնալովը՝ նոյնիսկ իրեն տեսակ մը արհամարհանք կը ներշնչէր անիկա։

Կէրթրուտին գլուխը միշտ լեցուն էր անհեթեթ երևակայութիւններով ու երազներով՝ որոնք կը յայտնէր Ինկմարին, Ինկմար քանի մը օր բացակայ կ'ըլլար թէ չ'է։ Կէրթրուտ անհանգիստ կ'ըլլար, կարծես հետը խօսելիք մարդ չգտնելով· բայց երբ կը վերադառնար, փոքր աղջիկը չ'էր գիտեր թէ իրօք ի՛նչ բանի կարօտն էր որ քաշած էր։ Գիտէր որ Ինկմար հարուստ է և գեղին ամենէն լաւ ընտանիքին զաւակը· բայց Կէրթրուտ կարևորութիւն չէր տար այդ բոլորին և անոր հետ կը վարուէր ստորադասի մը պէս։ Սակայն երբ աղջիկն իմացաւ որ Ինկմարի հարստութիւնը փճացած է, սկսաւ լալ· մանաւանդ երբ լսեց թէ անիկա ձգելով հին ազարակը, յանձն առած է վարժապետութիւն ընել՝ բոլորովին այլայլած եղաւ։ Աստուա՛ծ գիտէ թէ սրտով ի՛նչ աղէկ բաներ փափաքած էր անոր համար։

Մանուկները վարժապետին քով լուրջ կըրթութիւն մը կ'առնէին· քիչ պարապ ժամեր և շատ աշխատանք ունէին։ Բայց գարնան՝ երբ Սթօրմ դադրեցաւ քարոզ տալէ մատուռին մէջ, մայր Սթինա ըսաւ անոր·

— Լսէ՛, Սթօրմ· թող տալու է մանուկները որ մանուկ ըլլան· միտքդ բեր հեղ մը քու մանկութիւնդ և իմ մանկութիւնս· տասը եօթը տարեկան եղած ատեննիս շատ գիշերներ մինչև լոյս պար պարած ենք։

Շաբաթ իրկուն մը պար ունեցան դպրոցին մէջ՝ երբ Հօք Գաբրիէլ Մաթսոն և դատաւորի օգնականին աղջիկը Կիւնհիլտ՝ այցելութեան եկած էին։ Կէրթրուտ ուրախութենէն խենդ դարձած էր։ Իսկ Ինկմար, գիրք մը առաւ և

նստաւ պատուհանին առջև. Կէրթրուտ քանի՛ քանի՛ անգամներ ուզեց որ զինքը քաշէ տանէ պարելու, բայց անիկա մերժեց պարին խառնուելու և մնաց վայրենի ու դեդ:

— Ի՛նչպէս որոշ կ'երևնայ հին ընտանիքի զաւակ ըլլալը, մրմնջեց մայր Սթինա. հին ընտանիքներուն մէջ երիտասարդութիւն ըսուած բանը չեն գիտեր թէ ի՛նչ ըսել է:

Այն հրճուանքը որ ունեցան պատանիները՝ գաղափար արթնցուց իրենց մէջ՝ գալիք շաբաթ օրը պարի երթալու. և գացին վարժապետէն արտօնութիւն խնդրեցին:

— Եթէ ինծի մնայ, ըսաւ մայր Սթինա՝ հրաման կուտամ որ երթաք Սթարքենց տունը. հոն չնորհքով և լաւ մարդիկ կ'ըլլան միշտ:

— Թող կուտամ որ Կէրթրուտը երթայ, աւելցուց Սթօրմ, բայց պայմանով որ Ինկմարը ընկերանայ անոր և հսկէ վրան:

Վազեցին գացին Ինկմարին քով: Ինկմար, աչքերը միշտ տնկած իր գրքին վրայ, պատասխան տուաւ կարճ ոչ մը:

— Օ՛հ, չ'արժեր իրեն աղաչել, ըսաւ այն ատեն Կէրթրուտ, և այնպիսի տարօրինակ ձայնով մը՝ որ Ինկմար նայեցաւ անոր երեսը:

Որքա՛ն գեղեցիկ, որքա՛ն վախ ազդելու չափ գեղեցիկ էր Կէրթրուտ՝ պարէն ետք: Եւ այս տգեղ ու երեսկախ էակին առջև՝ որ չ'էր գիտեր պատանի ըլլալ, անոր արհամարհանքը այնքան յստակ կերպով կ'երևէր որ Ինկմար փութաց այս ըսելու:

Քանի մը օր ետքը Կէրթրուտ և մայր Սթինա կ'աշխատէին խոհանոցին մէջ, երբ ծաղկատի

աղջիկը տեսաւ որ իր մայրը յանկարծ կեցուց ջահրակը և սկսաւ խռովա՛ծ, ականջ դնել:

— Բան մը չե՞ս լսեր, Կէրթրո՛ւտ:

— Այո՛, պատասխանեց Կէրթրուտ. մարդ կայ վե՛րը, դպրոցին մէջ:

Իրենց գլխուն վերև, դատարկ մեծ սրահին մէջ չոր տերևներու խշրտուքին և խուլ հարուածներու պէս՝ քայլերու սահումներ և չթըրտոցներ կը լսուէին:

Կէրթրուտ և իր մայրը իրենց վախէն սառ կտրեցան:

— Անկասկած մէկը կայ վերը, մրմնջեց Կէրթրուտ:

— Բայց դպրոցին մէջ մարդ չի կայ, պատասխանեց մայր Սթինա. եթէ չիտակը կուզես, երեք իրկուն է այս օրերս որ նոյն աղմուկը կը լսեմ վերէն:

Կէրթրուտ հասկցաւ թէ իր մայրը հասկցընել կուզէր թէ տանը մէջ պար պարելէն սադին՝ ճին սկսած է մէջտեղ ելլել: Եթէ մայր Սթինա յամառէր մնար այդ մտքին վրայ, այն ատեն խե՛րը՝ տես ալ պարահանդէսներուն:

— Պիտի երթամ տեսնեմ թէ ո՛վ է վերը, ըսաւ հաստատապէս Կէրթրուտ:

Բայց ծերունի կինը բռնեց անոր քղանցքէն:

— Չէ՛, չեմ թողուր որ երթաս:

— Բայց հեղ մը երթալ տեսնելու է թէ ի՛նչ կայ:

— Այն ատեն ես ալ կուգամ քեզի հետ:

Սանդուխներէն վեր ելան՝ ոտքերնուն ծայրին վրայ կոխելով. բայց երբ հասան սրահին դռան առջև և ձեռքերնին մղլակին վրայ դրին, վախը պատեց զիրենք: Մայր Սթինա ծռեցաւ

և ներս նայեցաւ փականքին ծակէն։ Նայեցաւ, նայեցա՛ւ բաւական ատեն և սկսաւ կամաց կամաց խնդալ։

— Ի՞նչ կայ ներսը, մա՛յր։

— Դուն ալ նայէ՛ և ձայն մի՛ հաներ։

Կէրթրուտ աչքը դրաւ փականքին և ահա թէ ի՛նչ տեսաւ. սենեակին մէջ սովորական կերպով շարուած սեղաններն ու աթոռները քշուած էին պատին կողմը. փոշիի ամպ մը կը բարձրանար գետնէն մինչև առաստաղը և այդ ամպին մէջ Ինկմար Ինկմարսոն կը դառնար ինք իր վրայ՝ թևին մէջ աթոռ մը գրկած։

— Խենդեցե՞ր է, ի՛նչ, Ինկմարը, ըսաւ Կէրթրուտ։

— Սո՛ւս, ըսաւ մայրը՝ ձայն քաշելով դէպի սանդուխին կողմը... պարել կաշխատի սորվիլ՝ որպէսզի իր պարուհին գալիք պարին տանէ, աւելցուց մայրը՝ գոհունակութեան կէս ժպիտով մը։

Եւ վար հասան թէ չ'է, մայր Սթինա սկսաւ խնդալ բոլոր ուժով։

— Կռնակէս սև ջուր վազցնել տուա՛ւ, յարեց մայր Սթինա։ Բայց ահա, փա՛ռք Աստծոյ, ինք ալ վերջապէս պատանի կը դառնայ։

Եւ երբ լմնցուց խնդուքը՝

— Հիմա, Կէրթրո՛ւտ, բերնէդ բառ մը անգամ չ'փախցնես այս տեսածիդ վրայ։

Հասաւ շաբաթ իրկունը. չորս պատանիները կեցած էին դպրոցին վերնադաւիթին վրայ և կը պատրաստուէին մեկնելու, մինչ մայր Սթինա աչքէ կ'անցընէր զ'անոնք։ Ամէնուն ալ վրայ-գլուխը կը պսպղար. երկու մանչերը դրեր

էին դեղին մորթէ կարճ տափատներ և հագեր էին կարմիր թեզանիքներով կանաչ. ժանձր բրդէ բաճկոնակներ։ Կէրթրուտ և Կիւնհիլտ ճերմակ և փքած լայնաթոշ թեզանիքներ ունէին. կարմիր ծաղիկներով բանուած իրենց շալը կ'իջնէր իրենց հասակին ի վար. հագած էին կարմիր աստառով եզերուած ու գծաւոր շրջազգեստներ և կապած էին իրենց շալերուն չափ կարմիր գոգնոցներ։

Գարնանային այս գեղեցիկ իրիկունով՝ ճամբայ ինկան անոնք, նախ լուռ ու մունջ։ Ատեն ատեն Կէրթրուտ գաղտագողի ակնարկ մը կը ձգէր Ինկմարսոնին վրայ և կը մտածէր թէ որքա՛ն ինքզինք չարչարեր էր՝ պարել սորվելու համար։ Այդ մենաւոր պարերուն յիշատա՞կն էր թէ ուրախութեան հեռապատկերը որ կը խանդաղատեցնէր իր սիրտը։ Իր մտածումները դարձան շողշողուն, թեթև, թևաւո՛ր։ Կէրթրուտ թողուց որ իր ընկերները մէկ քանի քայլ առաջ անցնին և ինք սկսաւ քալել անոնց ետևէն խաղաղ ու երազկոտ։ Իր աչքերը մեղմիկ կը յածէին այս ծառերուն վրայ որ այնքան շուտ կանաչազարդուած էին գարունը գալուն պէս։ Ցարասիները շտապով շարած էին իրենց փոքր ու դեղնականաչ խեժոտ տերևները, մինչ դդքիները առժամապէս քօղքուած էին կանաչ ծաղիկներով։ Լաստենիներուն տերևները աշխարհ կուգային փոթ փոթ և ճմրթկուած, բաց կաղամախիներուն տերևները դուրս կը ժայթքէին իրենց լեցուն և ողորկ կոկոններէն։

Մօտ մէկ ժամու չափ ճամբայ կար մինչև Ինկմարսկարտ հասնիլը, գետին եզերքն ի վար քալելով։ Կէրթրուտ միշտ քիչ մը ետևօք կը

քալէր: Իր մտածումները կը պատէին հիմա կարմիր լոյսերու շուրջը մարը մտնող արեգակին՝ որ կը բոցավառէր երբեմն գետին, երբեմն դարափին վրայ: Փոքրիկ գորշ Լաստենիները և պայծառ ցարասինները վայրկեան մը կը միային հրդեհի այդ ցոլքերուն մէջ, յետոյ կ՚առնէին դարձեալ իրենց բնական գոյնը:

Յանկարծ, Ինկմար խօսքի մը ճիշդ մէջտեղը կանգ առաւ:

— Ինչո՞ւ կեցար, հարցուց Կիւնհիլտ:

Ինկմար, դեփ-դեղին՝ կը նայէր իր դիմացը, դէպի հոն ուր միւսները կը տեսնէին միմիայն աղիւսագծուած արտերով և բլուրներով շրջապատուած ընդարձակ դաշտ մը. բայց դաշտին դոգը կը բարձրանար մեծ ագարակ մը և ճիշդ այդ միջոցին արեգակը կը բոցավառէր զայն իր մեռնող լոյսովը և կարմիրի կը փոխակերպէր անոր հին տանիքն ու հին պատերը:

Կէրթրուտ առաջ անցաւ արագ արագ և միւսները առաջ քաշելով՝ ըսաւ.

—Զըլլայ թէ իրեն բան հարցնէք. Ինկմարսկարտը տեսած ըլլալուն համար՝ սիրտը լեցուած է. երկու տարի է որ աղքատ է և չ՚ուզեր հոն վերադառնալ:

Իրենց ճամբան կ՚անցնէր դաշտին մէջէն և կ՚երթար ագարակին երկայնքն ի վեր՝ մինչև Սթարքին բնակարանը, որ կը գտնուէր անտառին եզերքը: Ինկմար շուտով հասաւ իր ընկերներուն:

— Քալենք ա՛յն ճամբէն, ըսաւ անոնց:

Եւ զանոնք տարաւ կածանէ մը՝ որ ոլորապտոյտ կ՚երթար անտառին սահմանածայրերէն և կը տանէր Սթարքին տունը, առանց

հանդիպելու Ինկմարսկարտի:

— Ինկմա՛ր, դուն լաւ ճանչնալու ես Սթարքը, հարցուց Հօք Գաբրիէլ Մաթսօն:

— Այո՛, լաւ բարեկամներ էինք իրարու, գոնէ առենօք:

— Ծի՞շդ է որ Սթարք ծիներուն հետ կխօսի, հարցուց Կիւնհիլտ:

— Սխա՛լ է, պատասխանեց Ինկմար, բայց այնպէս մը որ կարծես ինք ալ կիսով համոզուած ըլլար այդ բանին:

— Եթէ բան մը գիտես, մեզի ալ ըսէ, յարեց Կիւնհիլտ:

Վարժապետը մեզի ըսած է թէ հաւատալու չ՚ենք այդպիսի բաներու:

— Վարժապետը չի կրնար մեզ արգիլել որ չի տեսնենք տեսնուած բանը և չի հաւատանք գիտցուած բաներուն:

Ինկմար մեծ փափաք մը կը զգար խօսելու. հին ագարակը տեսնելով, իր մանկութեան բոլոր յիշատակները արթնցած էին սրտին մէջ:

— Քանի որ այդպէս է, պատմեմ ձեզի բան մը որուն վկայ եմ եղեր ես անձամբ: Ձըմեռ մըն էր. Հայրս ու Սթարք փայտ կը կտրէին անտառին ներսերը: Երբոր Ծնունդին օրը եկաւ, Սթարք առաջարկեց որ ինքը մնայ և հայրս իջնէ տուն և տօնի օրերուն հոն մնայ: Այդպէս ալ որոշուեցաւ: Օր մը առաջ մայրիկս զիս անոնց քով խրկեց՝ հետս տալով Ծնունդի ուտելիքներ: Առտուն կանուխ ճամբայ ելայ և կէս օրուան դէմ հասայ անտառին բացատը: Հայրիկն ու Սթարք արդէն փլցուցեր էին ածուխ դարձած փայտի դէզերը և փռած էին կարմիր ածուխները՝ որպէսզի պաղին: Ծուխը

կ՚ելլէր և պէտք էր ածուխներուն գտնուած
տեղը արգիլել որ նորէն կրակը չի բռնկի։ Ած-
խաշինութեան ամենէն դժուար ատենը այդ
ատենն է։ Այսպէս, Հայրիկս զիս որ տեսաւ,
ըսաւ անմիջապէս․ «կը վախնամ որ առանց ին-
ծի պիտի վերադառնաս տունը․ ես մինակ չեմ
կրնար ձգել Սթարքը»։ — «Բայց չէ՛, չէ՛, յա-
րեց Սթարք՝ ամբողջովին կորսուած մուխին
մէջ․ ես շատ այսպիսի օրեր տեսած եմ, մե՛ծ
Ինկմա՛ր»։

Քանի մը վայրկեան ետքը ածուխներուն
մուխը սկսաւ քիչնալ։ «Տեսնենք հիմա թէ,
ըսաւ Սթարք, մայր Պրիթան ի՛նչ է խրկեր ին-
ծի․ և եկուր տես թէ ի՛նչ գեղեցիկ բնակարան
ունինք ես ու Հայրիկդ»։ Ցոյց տուաւ ինծի այն
խուղը՝ որուն մէջ կը կենային անոնք․ Ներքին
կողմը ապառաժ մըն էր, իսկ պատերն ալ շին-
ուած էին պտերներով և եղևնիի ճիւղերով՝
«Հապա՛, զաւա՛կս, յարեց անիկա․ թերևս չէիր
գիտեր որ Հայրիկդ արքայական դղեակ մը ու-
նի իր անտառի բնակութեանն համա՛ր... ահա
քեզի պարիսպներ՝ որ կը դիմադրեն ցուրտին
ու փոթորկի՛ն»․ և աս ըսելով, բռունցքի մէկ
հարուածով կը ճեղքէր այդ պատը։

Հայրիկս մեզի կը նայէր խնդալով․ Երկուքն
ալ սեփ սև կտրած էին ածուխէն և իրենց վրա-
յէն կուգար ծուխին կծու հոտը։ Բայց Հայրիկս
այսքան զուարթ և այսքան ուրախ տրամադ-
րութեան մէջ չէի տեսեր դեռ։ Ոչ ինք և ոչ
ալ Սթարքը կրնային խուղին մէջ շիփ-շտակ
ոտքի վրայ կենալ։ Ներսը կային եղևնի ճիւ-
ղերէ շինուած երկու խշտեակներ և զոյգ մը
քար՝ որոնց մէջ կը վառէր փոքր կրակ մը։ Ու-

Հակառակ ասոր, գոհ էին անոնք։ Նստան քով
քովի և բացին բերած կողովս․ —«Ջէ՛, քեզի
բաժին չի կայ մէջը, ըսաւ Սթարք՝ Հայրիկին․
ասի Ծնունդի իմ ճաշս է»։ —«Բարեսիրտ ըլլա-
լու է խթման օրը, ըսաւ Հայրը»։ —«Այո՛, խըթ-
ման օրը չեն ձգեր որ անօթութենէն հոգին
ելլէ խեղճ ծերուկ ածխագործ մը, պատասխա-
նեց Սթարք»։ Այսպէս, կատակով կը խօսակ-
ցէին իրարու հետ․ քիչ մը ջուր էի բերեր և
զարմանքով կը տեսնէի թէ մարդ այդքան ալ
կրնա՛յ հրճուանքով կերակուր ուտել և ջուր
խմել։ —«Մայրիկիդ ըսես որ, կրկնեց Սթարք,
Մեծ Ինկմարը կերաւ իմ բոլոր կերակուրս և
ինծի բան չ՚թողուց․ իմ բաժինս նորէն խրկելու
է»։ «Շատ լա՛ւ, կըսեմ»։

«Այս միջոցին սիրտս թունդ ելաւ․ տարօ-
րինակ աղմուկ մը լսուեցաւ խուղին փոքր կրա-
կին մէջէն․ կարծես թէ մէկը խիճերու տարափ
մը կը տեղացնէր կրակետղին քարերուն վրայ։
Հայրս բան մը նշմարած չ՚էր, բայց Սթարք ը-
սաւ անմիջապէս․ «Ա՛հ, ա՛հ, չա՛տ աղէկ․
Հասկցայ եղածը»։ Եւ շարունակեց ուտել իր
կերակուրը։ Նոյն ճարճատիւնը նորէն լսուե-
ցաւ՝ աւելի զօրաւոր կերպով։ Այս անգամ
կարծես բուռ բուռ քար կը նետէին օճախին
վրայ։ «Ա՛հ, ա՛հ․ կ՚երևի թէ կ՚անցնի,» մրմն-
ջեց Սթարք՝ դուրս ելլելով։ —«Ըսածս է, պո-
ռաց դուրսէն․ ածուխնե՛րը բռնկեր են... Հան-
գիստ եղի՛ր, Մեծ Ինկմար, ես մինակս կը մա-
րեմ»։ Ես ու Հայրիկը կը մնայինք անխօս, ո-
րովհետև ո՛չ իմ և ոչ ալ անոր բերանը կը բաց-
ուէր, Յետոյ Սթարք ներս եկաւ և սկսաւ կա-
տակել․ «Շատոնց է որ այսքան ուրախ Ծնունդ
մը ունեցած չ՚էի»։

«Բայց աՀա նորէն տարօրինակ աղմուկը լսելի եղաւ. «Հա՛ւ, լա՛ւ. Հե՞ղ մըն ալ. նորէն երթամ». Եւ դարձեալ դուրս ելաւ. ածուխները նորէն կրակ էին առեր: Երբ վերադարձաւ, Հայրիկը ըսաւ անոր. «Կը տեսնեմ թէ լաւ ընկեր ունիս և ա՛լ ինծի պէտք չի մնար»: — «Այո՛, գնա՛, անվախ Ծնունդդ ըրէ քու տունդ. Հոս ինծի օգնողներ կան»: Եւ ես ու Հայրիկը իջանք ագարակը: Ամէն բան աղէկ գնաց և երբեք, ո՛չ անկէ առաջ ու ոչ ալ անկէ ետք չի լսուեցաւ որ Սթարքին ածխարարութեան ատեն փայտի դէզերը Հրդեհուած ըլլան»:

Կիւնհիլտ շնորհակալութիւն յայտնեց Ինկմարին՝ իր պատմութեանն Համար, բայց Կէրթրուտ լռութիւն պահեց, տարտամ երկիւղ մը զգալով: Վերջալոյսը կ'անհետանար. ամէն ինչ որ վարդագոյն ներկուած էր՝ կը վերածուէր կապոյտ և գորշ նրբերանգներու, բացի մէկ քանի տերևներէ, որոնց գարնանային փայլը շողալ կուտար զիրենք տակաւին՝ չվոտի մը կարմիր աչքերուն պէս:

Կէրթրուտ կը շարունակէր զարմանալ որ Ինկմար այդքան երկար խօսեցաւ: Ինկմար շիփ շիտակ բռնած էր իր գլուխը և կը քալէր Հաստատուն ոտքերով: «Բոլորովին ուրիշ մէկը կը դառնայ անիկա՝ անմիջապէս որ իր ոտքերուն տակ կը զգայ իր ագարակին Հողը, մտածեց Կէրթրուտ»: Եւ Կէրթրուտ չ'էր Հասկնար թէ ինչո՛ւ այս գաղափարը կը խռովէր զայն և այնքան անարխորժութիւն կը պատճառէր իրեն: Փորձեց մտքէն ցրուել այդ անհանգստութիւնը և Հարցուց անոր թէ պիտի պարէ՞ր:

Երկու զոյգերը Հասեր էին փոքր խրճիթի մը առջև, որուն մէջ արդէն վառեր էին ճրագ-

ները՝ նեղ պատուհաններէն Հազիւ աղօտ լոյս մը կը տեսնուէր: Կը լսուէր ջութակի նուագածութեան և պարերու դոփիւնը:

Մատղաշ աղջիկները կանգ առին բերանաբաց:

— Ի՛նչ, Հո՞ս է որ պիտի պարենք:

Խրճիթին մէջ կարծես Հազիւ երկու երեք Հոգի կրնար սեղմուիլ:

— Հա՛րկաւ Հոս է, պատասխանեց Գաբրիէլ. ներս մտէ՛ք. տունը երևցածին չափ պզտիկ չէ:

Դուռը բաց էր. սեմին վրայ երևցան պատանիներ, որոնց երեսները, պարէն տաքցած, մաղ մաղ կրակէ աւելի կարմիր էին դարձեր: Աղջիկները իրենց շալերով Հով կուտային երեսներնուն. պատանիները կը Հանէին իրենց թիկնոցակները, կանաչ բաճկոնով և կարմիր թեզանիքներով ազատ Համարձակ ցատկել-պարելու Համար:

Նորեկները ճամբայ բացին անոնց մէջէն և մտան տունէն ներս: Իրենց տեսած առաջին մարդն եղաւ Սթարքը, այն մեծ գլխով, երկայն մօրուքով, կարճ ու գէր բարի մարդը՝ որուն Համար Կէրթրուտ մտածեց իսկոյն թէ չվոտներու և ճիներու «անպատճառ գիշերուայ սերունդէն ըլլալու է»: Ծերունի Սթարքը կանգնած էր օճախին վրայ, ջութակը թևին տակ, որպէսզի պարողներուն արգելք չ'ըլլայ:

Իրօք տունը կարծուածէն աւելի մեծ էր, բայց իր խեղճութիւնը, իր աւերուն վիճակը, իր աճճիներէն ծածկուած իր մերկ պատերը, իր առաստաղին ծուխէ սևցած դարձեկները, և առանց վարագոյրի պատուհանները

ծածկոցի իր սեղանը՝ բաւական էին հաստատելու թէ Սթարք անոր մէջ կ՚ապրէր միս մինակ: Իր զաւակները Ամերիկա գացեր էին և այս ծերունի մենակեացը միայն այն հաճոյքն ունէր որ շաբաթ իրիկունները իր ջութակին ձայնով գլուխը կը հաւաքէր պատանիները:

Սենեակը կիսով մութ էր. զոյգերը կը դառնային ծանր մթնոլորտի մը մէջ: Սթարք ուժեղ կերպով կը շեշտէր չափերը. բայց երբ Ինկմար երևցաւ դռան սեմին վրայ, աղեղի այնպիսի հարուած մը տուաւ որ ջութակն ամբողջ ճռընչեց և պարողները կանգ առին իրենց կեցած տեղը:

— Ո՛չ, ո՛չ, բան չի կայ, պոռաց անիկա. շարունա՛կեցէք:

Ինկմար իր թևն անցուց Կէրթրուտի մէջքէն և Կէրթրուտ զարմացաւ: Բայց զոյգերը այնքան իրարու մօտիկ կը պարէին՝ որ կարելի չէր սպրդիլ անոնց մէջ, ուստի երկու պատանիները սկսան ոտքով չափ զարնել: Սթարք նորէն ընդհատեց իր նուագը և իր աղեղով զարնելով կրակետղի եզերքին, պոռաց.

— Կ՚ուզեմ որ տեղ բացուի Մեծ Ինկմարին զաւկին, երբ իմ տանս մէջ կը պարէ ան:

Ամէնքը դարձան և նայեցան Ինկմարին՝ որ շատ ամչցաւ այս խօսքերէն: Կերևի որ Կէրթրուտ ուժով բռնեց զայն և քաշեց տարաւ իր հետ:

Երբ պարը վերջացաւ, Սթարք մօտեցաւ Ինկմարին. բայց երբ Ինկմար իր ձեռքը դրաւ անոր ձեռքին մէջ, ծերունին փախնալ կեղծեց և հազիւ դպաւ անոր.

— Ամա՛ն, պզուչանալու է վարժապետին

նուրբ ձեռքերէն. ինծի պէս կոշտ մէկը կրնամ կոտրել զանոնք:

Տարաւ Ինկմարն ու անոր ընկերները սեղանին քով, ուրկէ անմիջապէս մէկ քանի ծերուկ անդին գացին՝ որոնք այնտեղ նստած պարին հանդիսատես կ՚ըլլային. յետոյ, գնաց իր դարակին մէջէն հաց, կարագ ու քիչ մը գարեջուր բերաւ:

— Սովոր-բար, ըսաւ անիկա, ես բան չ՚եմ հրամցներ հիւրերուս: Անոնք կը գոհանան պարով և իմ ջութակովս. բայց Ինկմար Ինկմարսօն տունէս դուրս ելլելու չէ առանց կտոր մը բան ուտելու:

Մինչ երիտասարդները կ՚ուտէին, Սթարք աթոռակ մը առաւ և նստեցաւ Ինկմարին դիմաց:

— Դո՞ւն, ըսաւ՝ նայելով անոր երեսը ժիր ժիր, դո՞ւն է որ վարժապետ պիտի ըլլաս:

Ինկմար խոնարհեցուց արտևանունքները և իր շրթունքները դողդղացին թեթևօրէն՝ կարծես խնդալու փափաքով մը խոխտալով. բայց, պատասխանեց տխուր ձայնով մը.

— Ի՞նչ ընեմ, մեր տանը մէջ յարմար գործ մը չի կայ որ տան ինծի:

— Ա՛խ, այո՛, իրա՛ւ բնաւ գործ մը չ՚ունին քեզի տալիք... բայց գիտե՞ս թէ ագարակը ե՛րբ պէտք պիտի ունենայ քեզի. Էլիաս անոր մէջ ապրեցաւ երկու տարի. Հալֆորը քա՛նի տարի պիտի ապրի արդեօք:

— Հալֆոր յաղթանդամ և առողջ մարդ է:

— Բայց ան քեզի պիտի թողու ագարակը երբ որ կարողութիւն ունենաս գնելու զայն:

— Խենթ ըլլալու է որ ծախէ Ինկմարսկար-

ալ՝ հիմա որ տէր է անոր։

Ինկմար, խօսած ատեն, իր մատներովը կը ճմռէր սեղանին, շոճիի փայտէ շինուած կոշտ սեղանին եզերքը. եւ ահա ճարճատիւն մը լսուեցաւ, որովհետեւ, կոտրած էր այն անկիւնը՝ որ կը սեղմէր անիկա։

— Եթէ վարժապետ դառնաս, յարեց Սթարք ձեռքը պարզելով օդին մէջ, Հալֆոր ագարակը քեզի պիտի չ'ձգէ երբեք։

— Ինչո՞ւ համար, ըսաւ Ինկմար։

— Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար. գոնէ մէկ անգամ արօր քշա՞ծ ես կեանքիդ մէջ։

— Ո՛չ։

— Փայտի դէզ մը պատրաստա՞ծ ես, հին շոճի մը կտրա՞ծ ես։

Ինկմար կը պահէր իր արտաքին հանդարտութիւնը, բայց սեղանին եզերքը կը շարունակէր ճարճատիլ իր մատներուն տակ։

— Է՛, է՛, ըսաւ ծերունին. կ'երեւի թէ պիտի ստիպուիմ բռնել ձե՛ռքդ։

Սթարք հաւաքեց սեղանին կոտրած կտորուանքները եւ փնտռեց անոնց տեղը։

— Ահա երիտասարդ մը որ բաւական դրամ պիտի վատնէր՝ տօնավաճառներուն մէջ ցուցադրելով ինքզի՛նք... անառա՛կ քեզի, յարեց՝ ծեծելով Ինկմարին ուսը, աղէ՛կ վարժապետի երեւոյթ ունիս։

Եւ Սթարք նորէն թռաւ դէպի օճախին վըրայ, առաւ իր ջութակը եւ սկսաւ նուագել իրաւ որ զմայլելի եղանակով մը։ Իր ոտքը, որ չափը կը զարնէր, կ'արագացնէր պարը։

— Երիտասարդ Ինկմարին փօլքա՛ն, կը պոռար ան. հայտէ՛, հօ՛փ, ամբողջ տունը կը պա-

րէ ի պատիւ երիտասարդ Ինկմարի՛ն։

Կէրթրուտ եւ Կիւնհիլտ, երկու ամենէն սիրուն աղջիկները, մէկ խաղէ իսկ ետ չ'էին մնար։ Բայց Ինկմար ընդհանրապէս կը կենար սենեակին խորը, տարիքոտ մարդոց հետ՝ որոնք շրջանակ մը կը բոլորէին անոր շուրջ, այնպէս որ կարծես անոր նայիլն անգամ իրենց գոհունակութիւն մը կը պատճառէր։ Կէրթրուտ ցաւ կը զգար՝ մտածելով թէ Ինկմար կը մոռնայ զինքը։ «Հոս ամէն բան անոր կը յիշեցնէ թէ ինք Մեծ Ինկմարին տղան է, մինչդեռ ես վարժապետին աղջիկը միայն, կը խորհէր Կէրթրուտ»։ Եւ տարօրինակ երեւցաւ իրեն որ այս մտածումը այնքան դառն է։

Պարերու միջնադադարին, երիտասարդները տունէն կ'ելլէին դուրս, գարնանային գիշերուան մէջ՝ որուն կծող զովութիւնը կ'ոգեւորէր պարողները։ Գիշերը շատ մութ էր եւ մեկնելու փափաք ունեցող չի կար. ամէնքն ալ կ'ըսէին. «Քիչ մըն ալ կենանք, քիչ մըն ալ կենանք, մինչեւ որ լուսինը ելլէ. շատ մութ է»։

Որովհետեւ Ինկմար գացած էր Կէրթրուտին քով, Սթարք եկաւ անոր մօտ։

— Պէտք է որ քեզի բան մը ցոյց տամ, ըսաւ Սթարք՝ Ինկմարին։

Բռնեց անոր ձեռքէն եւ տարաւ զայն տանը ետեւի թաւուտին մէջէն։

— Կեցի՛ր հոս եւ վա՛ր նայի՛ր։

Ինկմար աչքերը խորասուզեց ահագին ճեղքի մը մէջ, որուն խորքին մէջ կը նշմարուէր անորոշ սպիտակութիւն մը։

— Հեղե՛ղն է տեսածդ, Լանկֆորսը՛նը։

— Ես ալ գիտեմ որ Լանկֆորսը՛նն է, ըսաւ

վարձակալ Սթարքը: Կը խնդրեմ, ըսէ՛ ինծի հիմա թէ ի՞նչ կարելի է շինել այսքան սրընթաց ջուրի մը առջև:

— Սղոցարան մը, ջաղա՛ցք մը, ի՛նչ գիտեմ, պատասխանեց Ինկմար:

Ծերունին սկսաւ խնդալ և այնպէս արմուկով ու ձեռքով զարնել իր ընկերոջ որ քիչ մը նաց զայն ձգէր հեղեղին մէջ:

— Է՛, հիմա ըսէ՛, ո՞վ պիտի շինէ այդ սղոցարանը Լանկֆորսընին առջև. ո՞վ պիտի հարստանայ այստեղ. ո՞վ ետ պիտի գնէ Ինկմարսկարտը:

— Չեմ գիտեր, ըսաւ Ինկմար:

Այն ատեն Սթարք անոր պարզեց իր խորհած մէկ ընդարձակ ծրագիրը. որովհետև, երկու տարիէ ի վեր գիշեր ցորեկ մէկ մտածում ունեցած էր, սա՛ թէ՝ միջոց մը գտնէ որ Մեծ Ինկմարին զաւակը կարենայ իր հարստութիւնը ձեռք բերել: Պէտք է որ Ինկմար համոզէր Թիմս Հալֆորը՝ սղոցարան մը շինելու հեղեղին առջև և իրեն վարձու տալու:

Ինկմար կը նայէր միշտ ջուրերուն տարտամ ապխտակութեամբ:

— Օ՛ն, դառնանք հիմա պարին, ըսաւ Սթարք:

Ինկմար ձայն չի հանեց և ծերունին սպասեց համբերութեամբ. «Հին գերդաստանին զաւակն է, կը մտածէր Սթարք. ո՛չ այսօր և ոչ ալ վաղը պատասխան մը կուտայ ինծի»:

Երբ կեցած էին հոն այս երկու մարդիկը, լսեցին սուր, կռուազան հաջոցը շան մը՝ որ կը վազէր հեռո՛ւն, անտառին մէջ:

— Կը լսե՞ս, Ինկմա՛ր, հարցուց Սթարք:

— Այո՛, կը լսեմ վազող շան մը հաջոցը:

Հաջիւնը կը մօտենար, ուղիղ կուգար իրենց վրայ, այնպէս որ կարծես թէ որսորդները պիտի խուժէին նոյնիսկ տանը վրայ:

Սթարք բռնեց Ինկմարին դաստակէն.

— Եկո՛ւր, ըսաւ անոր, աճապարե՛նք:

— Ի՞նչ կայ որ հարցուց Ինկմար:

— Տո՛ւն եկուր, տո՛ւն եկուր ու ձայն մի՛ հաներ,

Բայց երբ տուն կը վազէին իրենք, կաղկանձումները լսելի եղան անոնց մօտիկն իսկ:

— Ի՞նչ շուն է աս, կրկնեց Ինկմար քանի մը անգամ:

— Նե՛րս մտիր, նե՛րս մտի՛ր:

Սթարք հրեց պատանին գաւիթէն ներս և կենալով սեմին վրա՝ դուռը քաշեց իր ետևէն:

— Եթէ տակաւին դուրսը մարդ կայ, պոռաց որոտալից ձայնով մը, թող ներս մտնէ՛:

Դուռը բռնած էր կիսաբաց և ամէն կողմէ աճապարելով ներս կուգային:

— Նե՛րս մտէք, նե՛րս մտէք, կըսեմ, կը կրկնէր անիկա՝ ոտքը գետին զարնելով:

Խրճիթին մէջ հաւաքուածները կը սկսէին խռովք ու անհամբերութիւն զգալ թէ աս ի՛նչ բան էր որ տեղի կ՛ունենար:

Վերջապէս, երբ ամէնքը ժողվըուեցան, Սթարք դրաւ դռան մղլակը և ըսաւ.

— Խե՞նդ էք որ դուրսը կը մնաք՝ երբ կը լսէք լեռան շան հաջոցը:

Նոյն պահուն՝ հաջիւնը թնդաց իրենց ականջներուն տակ, ուժգին և ահաւոր:

— Հասարակ շուն մը չէ՞ ուրեմն, հարցուց մշակ մը:

— Եթէ կորիճ ես՝ դուրս ելիր ու կանչէ զայն, Նի՛լս Ճանսօն։

Ամէնքը լռին մտիկ կընէին հաջոցին՝ որ կը դառնար, անդադար կը դառնար տանը շուրջ։ Մահաշուք բան մը կը թուէր ասիկա իրենց. իրենց մարմինը կը փշաքաղուէր և շատերը մեռելի պէս դեփ-դեղին կտրեր էին։ Ա՜, ո՛չ, սովորական շուն մը չէր ասիկա. ապահովաբար դժոխքէն փախած զարհուրելի բան մըն էր ա՛ն։

Նեղ սենեակին մէջ միայն Սթարք կը շարժէր. նախ վար իջեցուց օճախին դռնակը, ապա մարեց բոլոր լոյսերը։

— Ո՛չ, ո՛չ, կը խնդրէին կիները, մի՛ մարեր։

— Լաւ է որ գործիս չխառնուիք, պատասխանեց Սթարք։

Կիներէն մէկը քաշեց անոր թիկնոցակէն.

— Այս լեռան շունը շա՞տ վտանգաւոր է ուրեմն։

Ինք չէ, բայց իրմէ ետքը պատահելիքը վտանգաւոր է։

— Ի՞նչ պիտի պատահի իրմէ ետք։

Ծերունին, անշարժ, ականջ դրաւ։

— Ուշադրութի՛ւն, պոռաց. լսեցէք ամէնքդ ալ։

Շնչառութիւններն անգամ կանգ առին։ Հաջիւնը անգամ մըն ալ տանը շրջանն ըրաւ, յետոյ երթալով սկսաւ պակսիլ։ Շունը կ'իջնէր ճահիճին մէջէն և կը բարձրանար հովիտին միւս կողմի զառիթափներէն վեր։

Երիկմարդոցմէ մէկը վերջապէս ըսաւ.

— Ահա շունը գնա՛ց։

Առանց բառ մը ըսելու, Սթարք վերցուց

թեւը և անոր բերնին հարուած մը իջեցուց։ Եւ դարձեալ տիրեց լռութիւն։

Այն ատեն, հեռուէն, խիստ հեռուէն, Քըլաքպէրկի բարձունքներէն հզօր ձայն մը ցայտեց գիշերուան մէջ. ասիկա կը նմանէր արձագանգ տուող քամիի մը կամ եղջերուափողի մը ձայնին։ Նոյն աղմուկը պայթեցաւ՝ երկարաձգուելով, յետոյ թնդաց դարձեալ, որուն հետեւեցաւ ոտքերու զօրաւոր թփրտուք մը և անասուններու փռնգտոց մը։ Զարհուրելի աղմուկը իջաւ կատարներու բարձրութենէն վար. կ'արծես ամբողջ լեռը կուգար և որոտաձայն կը թաւալէր հովիտին մէջէն։ Տանը մէջ գըտնուողները լսեցին զայն զառիթափներուն վրայէն. լսեցին զայն անտառին սահմանածայրէն և երբ լսեցին իրենց գլխուն վրայ՝ այն ատեն ծռեցան ամէնքն ալ և գլուխնին իրենց ուսերուն մէջ քաշեցին։ «Հիմա կը ջախջախուինք» կըսէին անոնք։ Բայց մեռնելէ աւելի՝ սարսափ կը զգային մտածելով թէ Խաւարին Իշխանն է որ իրենց այնքան մօտիկէն կ'արշաւէ՝ իր դժոխային հետեւորդներովը։ Եւ այդ ահ ու սարսափին մէջ իրենց այնպէս կուգար թէ կը լսեն ճիչեր, հեծեծանքներ, քրքջումներ. բան մը կը շչէր, կը մռնչէր, կ'ոռնար, ակռաները կը կրճտէր և իմանալի կըլլային ճարճատիւններ, պոռչտուքներ, աքացիներ և խոշոր թռչնաթեւերու թրթռումներ։ Գետինը կը դողար. տունը երերաց վայրկեան մը՝ իյնալու պատրաստ։

Սակայն, բազուկ մը շրջապատած էր Կէրթրուտի մէջքը և ծաղկահաս աղջիկը լսեց որ Ինկմար կը մրմնջէ.

— Ծունկի գանք, Կէրթրո՛ւտ, և աղօթենք

Աստծոյ։

Վախը կը սառեցնէր Կէրթրուտը տակաւին. բայց, մեռնելէն աւելի՝ իր շուրջը այդքան չար ղօրութիւններ զգալն էր որ վախ կը պատճառէր իրեն։ Սակայն, երբ հազիւ թէ զգաց Ինկմարին թեւն իր վրայ՝ իր ամբողջ էութեան թմրութիւնը հալեցաւ։ Սեղմուեցաւ երիտասարդին կուրծքին։ Որքան ատեն որ Ինկմար իր քով էր, իր հոգին վախ չէր զգար այլեւս։ Եւ այս ապահովութիւնը որ ինք կ'առնէր Ինկմարէն՝ անո՛վ աւելի տարօրինակ էր որ Ինկմար ի՛նք վախ կը զգար։

Վերջապէս վայրագ աղմուկը հեռացաւ այն միեւնոյն ճամբէն, ուրկէ հեռացած էր հաչիւնը, —ճահիճներուն մէջէն եւ դէպի լեռներու միս գուխվայրը։ Բայց, Սթարքին տանը մէջ մէկը չ'էր երերար տեղէն։ Ամէնքն ալ կը պահէին միեւնոյն լռութիւնն ու միեւնոյն անշարժութիւնը։ Եթէ չ'ըլլար շնչառութեան մը ու հառաչանքի մը թեթեւ շշուկը, մարդ պիտի կ'արծէր որ ամէնքն ալ մեռած են։ Ոմանք ոտքի վրայ՝ կռթնած էին պատին. ուրիշներ կքած էին նստարաններուն վրայ, իսկ մեծամասնութիւնը ծունդի եկած՝ կ'աղօթէր անձկութեամբ։ Ժամերը կ'անցնէին. ամէն մարդ կ'իջնէր ինք իր մէջ, կը խորաշափէր իր հոգին, որոշում կուտար վարելու նոր կեանք մը՝ որ աւելի մօտ ըլլար Աստուծոյ եւ աւելի հեռու իր թշնամիներէն։ Եւ ամէն մէկը ինքնիրեն կ'ըսէր. «Այս փորձանքը մեր գլխուն եկաւ՝ իմ մեղքերուս պատճառով ես լաւ լսեցի թէ այդ անցնողները ի՛նչպէս զիս կը ծաղրէին եւ իմ անունս կը պոռային»։ Բայց Կէրթրուտ մէկ մտածում միայն

ունէր. «գիտեմ հիմա թէ երբեք պիտի չկրնամ առանձին ապրիլ Ինկմարէն. պէտք է որ միշտ անոր քով ըլլամ, որպէսզի ունենամ այն մեծ ապահովութիւնը՝ որ կը զգամ իրմէ»։

Լոյսը սկսաւ նշմարել եւ լուսածագի աղօտ նշոյլները՝ մտնելով սենեակէն ներս, լուսաւորեցին պատի գոյն երեսները։ Ատեն ատեն կը ճռուողէր թռչուն մը. Սթարքին կովը բառաչեց դէպի արօտատեղին եւ անոր կատուն՝ որ պարի գիշերները երբեք իր օճախին մէջ չէր քնանար, մլաւեց դրան առջեւ։ Բայց մինչեւ որ Արեւելքի լեռներէն արեգակը չ'ելաւ՝ մարդ չի համարձակեցաւ տեղէն երերալ։ Այն ատեն, առանց մէկ բառով ըսելու, անոնք դուրս ելան ու փախան իրարու ետեւ։

Խրճիթէն դուրս առաջին քայլն առին թէ չէ, կործանման սոսկումը նորէն բռնեց զիրենք. դրան առջեւի մեծ եղեւինը կոտրած ինկած էր արմատէն. ճիւղեր ու ծառապատնէշ պառկեր էին գետինը ցիրուցան. մէկ քանի ջղջիկներ ու բուեր ջախջախուած էին տանը պատին դէմ եւ Ֆլաքպէրկի զառիվերին վրայ խորտակուած ծառերը լայն ճամբայ մը կը ձեւացնէին։ Մարդ չէր համարձակեր բնաւ դիտելու այս աւերումը եւ ամէնքը կ'աճապարէին իջնելու դէպի դաշտերը, դէպի աւանը։

Առաւօտը կ'արթննար անոնց շուրջը, կիւրակի գեղեցիկ առաւօտ մը։ Գեղացիները ուշ անկողնէն կ'ելլէին. սակայն քանի մը ագարակներու մէջ տաւարներուն կեր տալու վրայ էին։ Տնակի մը սեմին վրայ՝ ծերունի մը կը խոգանակէր իր կիրակնօրեայ թիկնոցակը։ Քիչ մը անդին, հայր, մայր ու զաւակներ դուրս

կ'ելլէին իրենց տունէն՝ ամէնքն ալ կիրակի օրուան լաթերով և բարեկամներու այցելութեան կ'երթային մօտակայ գիւղը։ Ճշմարիտ սփոփանք մըն էր հանդիպելու մարդոց՝ որ այդքան անտեղեակ էին գիշերը անտառին մէջ պատահածին։

Պարահանդէսին մասնակցողները հասան վերջապէս գետակը, հոն ուր բնակութիւնները աւելի մօտ էին իրարու։ Եւ իրենց ծաղիկը պատռեցաւ՝ երբ նորէն տեսան եկեղեցին, և ամէն բան գտան իր սովորական վիճակին մէջ։ Նպարավաճառին նշանակը կը ճռնչէր նորէն առաջուան պէս։ Թղթատունը նորէն իր տեղն էր և պանդոկապետին շունը կը քնանար իր խըշտեակին առջև։ Երէցին պարտէզին մէջ դրուած էին ամառուան նստարանները. և նոյնիսկ գիշերը վայրակեաս մը բացուած էր։

Անոնք աւելի խաղաղ զգացին իրենց սիրտը, բայց և այնպէս մէկուն բերանը չի բացուեցաւ՝ մինչև որ ամէն մէկը չ'հասաւ իր տունը։

Երբ Կէրթրուտ դպրոցին սանդուխին վրայ հասաւ, ըսաւ Ինկմարին.

— Ինկմա՛ր, ա՛լ պիտի չ'պարեմ անգամ մըն ալ կեանքիս մէջ։

— Ես ալ, պատասխանեց պատանին։

Ինկմա՛ր, ըսաւ Կէրթրուտ, պէտք է որ երեց ըլլաս. եթէ չի կրնաս ըլլալ, գոնէ վարժապետ ըլլալու ես։ Այնքան չարիք և այնքան խաւար կայ, որոնց դէմ կռուիլ պէ՛տք է։

— Ինկմար նայեցաւ Կէրթրուտին երեսը՝

— Կէրթրո՛ւտ, ի՞նչ զգացիր ձայներէն։

— Զգացի թէ ինկեր եմ մեղքի թակարդին մէջ և սատանան գիս պիտի յափշտակէ՝ անոր

համար որ շատ պարել կ'ուզեմ։

— Հիմա ըսեմ թէ ես ի՛նչ զգացի. ինծի այնպէս կու գար որ բոլոր Ինկմարսօն նախահայրերը ինծի կը սպառնային և գիս կ'անիծէին, որովհետև կ'ուզէի փոխանակ գեղացի ըլլալու՝ ուրիշ բան ըլլալ, և փոխանակ ածուխ պատրաստելու և հողագործութիւն ընելու՝ ուրիշ բան ընել։

VI

ՃԷԼԿՈՒՄ

Այն գիշերը որ պատանիները կը պարէին Սթարքին տունը, Հալֆօր բացակայ էր և Թարին մինակ պառկած փոքր սենեակին մէջ։ Կէս գիշերին գէշ երազ մը տեսաւ։ Տեսաւ որ Էլիաս ողջ է և մեծ խնձոյք մը կուտայ։ Այն սենեակէն, ուր ան իր բարեկամներուն հետ կը խմէր, Թարին լսեց որ Էլիաս բարձրաձայն կը ծիծաղի ու խմիչքի երգեր կ'երգէ, և այնպիսի աղմուկ մը կը հանէ որ՝ խորհեցաւ թէ հիմա ուր է ուր չէ՝ անոնք պիտի կոտրեն նստարանները ու սեղանը։ Զարհուրանքէն յանկարծ արթնցաւ, բայց, աչքերը բաց՝ տակաւին ականջներուն աղմուկ ու փաթրթի կուգար։ Գետինը կը շարժէր, պատուհանները կը դողային, կղմինտրները վար կը թափէին տանիքէն, հին տանձենիները՝ որ կը հասնէին մինչև ցուիքը, իրենց չոր ճիւղերով կը ծեծէին պատերը։ Կարծես վերջին դատաստանի օրն էր։ Փրթաւ մեծ վայնասուն մը և կոտրեցաւ պատուհանի մէկ ապակին, իր կտորուանքները ցատկեցին սենեակին մէջ, և հովի ուժգին սուլումի մը մէջէն իր ականջը խլացուց այն միևնոյն ծիծաղը՝ որ հալածած էր զինք երազին մէջ։ Թարին մինչև հիմա երբեք այդպիսի սարսափ մը զգացած չ'էր։ Սիրտը դադրեցաւ բաբախելէ․ իր ամբողջ մարմինը փայտ կտրեցաւ ու սառեցաւ։ Կարծեց թէ պիտի մեռնի։

Երբ որ հովը խաղաղեցաւ և գիշերուան ցուրտ օդը սթափեցուց զինք և ոտքի ելաւ՝ երթալ գոցելու համար կոտրած փեղկը, իր թուլցած ոտքերը քայլ չ'էին փոխեր։ Բնաւ օգնութիւն չի կանչեց և նորէն պառկեցաւ հանդարտօրէն։ «Երբ որ յուզումս դադրի, պիտի կրնամ քալել» ըսաւ ինքնիրեն։ Բայց իր երկրորդ փորձն ալ նոյն ելքին յանգեցաւ։ Կթոտեցաւ, ինկաւ իր մահճակալին քովը և հոն երկնցած մնաց մինչև լուսածագ։

Խրկեցին անմիջապէս բժիշկ կանչեցին։ Բըժիշկը չի կրցաւ այսքան տարօրինակ դէպքի մը պատճառը գիտնալ և այս տեսակ մը անդամալուծութիւնը վերագրեց վախի մը ազդեցութեան։

— Շուտով կը բժշկուի, ըսաւ։

Թարին ո'և է պատասխան չի տուաւ․ ինք գիտէր որ Էլիաս մտած էր իր սենեակը, այդպէս ուզած էր ան, ուստի երբեք պիտի չ'առողջանար ինք։

Առտուն ամբողջ, դեռահաս կինը անխօս ու

մտախոհ, կը մտածէր թէ ի՛նչ բանի համար Աստուած այս փորձութիւնը խրկած էր իր վրայ։ Ամենէն անաչառ քննութիւնն իսկ կատարելով իր խղճին մէջ՝ չի կրցաւ այս անգութ պատիժն արդարացնող բան մը գտնել։

— Աստուած անիրաւ է ինծի դէմ, եզրակացուց։

Կէսօրէն ետք, իր աղաչանքին վրայ, գինետարին Սթորմին մատուռը՝ ուր Տակսոն անունով մէկը քարոզ պիտի տար։ Կը սպասէր որ քարոզիչը յայտնէ իր կրած պատուհասին խորհրդաւոր պատճառները։ Այս Տակսոնը, որ յարգուած բեմբասաց մըն էր, երբեք այսքան ունկնդիր ունեցած չ'էր մինչեւ հիմա։ Գեղն ամբողջ, զարհուրա՛ծ գիւղերուն դէպքերէն, հաւաքուած էր՝ լսելու համար Աստծոյ հզօր մէկ խօսքը, որ փարատէր այդ վախը։ Ներկայ մարդոց երեք չորրորդը չէր կրցեր ներս մտնելու տեղ գտնել, բայց Տակսոնին զօրաւոր ձայնը բաց դռներէն ու պատուհաններէն կը հասնէր բոլոր դուրսը գտնուողներուն։

Քարոզիչը նախ ծանրացաւ Դժոխքին եւ Դժոխքի տիրոջ վրայ, որ կը սողոսկի խաւարին մէջէն եւ միշտ հոգիներուն ետեւէն ինկած, անոնց դէմ մոլութեան որոգայթներ կը լարէ եւ զանոնք կ'որսայ մեղքով։ Իր խօսքերը այնքան ահարեկիչ եղան որ ունկնդիրները տեսիլքն ունեցան աշխարհի մը, ուր դժբախտ մարդիկը, անասուններու պէս նեղն ինկած, կը զգային թէ իրենցմէ ամէն մէկուն ոտքերուն առջեւ կը բացուին դժոխքին կափարիչները։ Եւ ներկաներուն մտքին առջեւ եկաւ անտառի մը հրկիզումը։ Անոնք մտիկ ընելով քարոզիչին, կար–

ծես կը զգային այն բանը՝ ինչ որ կը զգաք դուք երբ անտառ մը բռնկի ձեր շուրջը եւ կրակը սողոսկի այն մամուռին մէջ՝ որուն վրայ կանգնած էք, երբ ծուխի ամպերը թաւալին օդին մէջէն, բոցին որոտումը ձեր ականջները լեցնէ եւ կայծերը սկսին այրել արդէն ձեր զգեստները։

Այսպէս, Տակսոն հալածեց մարդիկը կրակին, ծուխին եւ յուսահատութեան մէջէն։ Բայց քշեց զանոնք իր առջեւէն մինչեւ անտառին կանաչ մէկ ցանցառուտը՝ ուր կը տիրէր զովութիւն եւ ապահովութիւն։ Յիսուս՝ նստած ծաղկալից մարգագետնին վրայ, թեւերը կ'երկնցնէր այս հալածական եւ շնչասպառ թշուառ արարածներուն. եւ անմիջապէս որ անոնք կ'երկըննային անոր ոտքերուն առջեւ, վտանգն ու պայքարը կ'անհետանար եւ իրենց հոգին չ'էր վախնար այլեւս աշխարհի թշուառութիւններէն։

Երբ լռեց Տակսոն, տեղի ունեցաւ ուժգին շարժում մը. շատ մը մարդիկ, որ անոր խօսքերուն տակ՝ Աստծոյ մասին ճշմարիտ հաւատքի մը զարթումն զգացած էին իրենց հոգւոյն մէջ, եկան շնորհակալութիւն յայտնելու անոր՝ արտասուող դէմքով։ Բայց, Քարին կը մնար անշարժ, եւ վեր վերցնելով իր արտեւանունքները քարոզիչին վերջին խօսքերուն վրայ, նայեցաւ անոր՝ կարծես յանդիմանելով զայն որ չէր կրցած բան մը ըսել իրեն։

Յանկարծ ձայն մը բարձրացաւ մատուռին առջեւէն եւ ներկաները ամենքը լսեցին հետեւեալը.

-- Վա՜յ, վա՜յ, վա՜յ անոնց՝ որ հացի տեղ քար կուտան։ Վա՜յ անոնց։

Քարին ստիպուած ըլլալով տեղը մնալ՝ մինչ ուրիշները դուրս կը խուժէին, չի կրցաւ տեսնել թէ ո՛վ էր այդ խօսողը: Իրեն ըսին թէ անծանօթ, բարձրահասակ և սև մազերով մէկն էր: Սայլակի մը մէջ նստած՝ ճամբէն կ՚անցնէր եղեր, հետն ունենալով խարտիշահեր սիրուն կին մը, որ վայրկեան մը կանգ է առեր՝ քարոզը լսելու, ապա, այն պահուն ուր սայլակը շրջուեր է, մարդը ոտքի է ելեր և պոռացեր է այդ խօսքերը: Ոմանք կարծած էին թէ կը ճանչնան կինը. կ՚ըսէին թէ Սթարքի աղջիկներէն մէկն է, որ Ամերիկա էր գացած և որ անշուշտ ամուսնացեր է այդ մարդուն հետ: Բայց դիւրին բան չ՚էր անմիջապէս ճանչնալ թէ քաղքցիի շրջազգեստ հագած այդ կինը՝ ա՛յն աղջիկը, այն փոքր աղջիկն էր, որ ատենօք մեկնեցաւ ազգային տարազով:

Քարին ալ Տակսոնէն նոյն գաղափարն ստացած էր՝ ինչ որ օտարականը, որովհետև ա՛լ հեղմըն ալ երբեք չի գնաց մատուռը: Շատ վերջերը, ամառը, երբ կրկնամկրտական մը եկաւ քարոզելու և մկրտութիւն ընելու գեղին մէջ, Քարին գնաց լսելու զայն. ու յետոյ երբ Փրկութեան Բանակը իր քարոզութիւնն սկսաւ, զինք անոնց մօտիկ ընելուտանել տուաւ: Կրօնական մեծ շունչ մը փչեց ծխականներուն վրայէն. ամէն ժողովի՝ նոր արթնութիւններ և նոր դարձեր տեղի կ՚ունենային: Ամէնքն ալ վերջապէս կը գտնէին այն բանը՝ ինչ որ երկար ատեն փնտռած էին: Բայց, քանի քարոզիչ որ լսեց Քարին, անոնցմէ ոչ մէկին խօսքը կրցաւ իր հոգին հաշտեցնել Աստուծոյ այն պատիժին հետ՝ որ Աստուած տուեր էր իրեն:

* * *

Պէրկէր Լարսոնի դարբնոցը կը գտնուէր ճամբուն մօտ. փոքր և մութ դարբնոց մը՝ որ կը լուսաւորուէր միակ լուսամուտով մը և ուր ներս կը մտցնէր ցած դռնէ մը: Պէրկէր Լարսոն կը շինէր խոշոր դանակներ, կը նորոգէր կղպանքները, անիւներուն շրջանակ և բալխերերուն երկաթ կ՚անցնէր:

Ամառուան իրկուն մը, ամբողջ դարբնոցն աղմուկի մէջ էր: Պէրկէր Լարսոն սալի մը վրայ կը տափակցնէր գամի գլուխներ: Ուրիշ սալի մը վրայ իր մեծ տղան կը կտրտէր սուրի շեղբեր: Իր երկրորդ տղան կը շարժէր փքոցը, մինչ երրորդը ածուխ կը նետէր կրակին մէջ, կը դարձնէր հոն դրուած ատրաշէկ ձողերը և զանոնք կը տանէր դարբիններուն: Չորրորդ տղան, որ եօթ տարեկան էր, կը հաւաքէր վերջացած գամերը, զանոնք կ՚ընկղմէր ջուրի տաշտի մը մէջ և կապոց կ՚ընէր:

Երբ այսպէս արտորանքով կ՚աշխատէին անոնք, երկարահասակ, թուխ մարդ մը երևցաւ դռան սեմին վրայ և պարտաւորուեցաւ կէս մէջքով ծռիլ՝ ներս մտնելու համար: Պէրկէր կանգ առաւ:

— Ներողամիտ եղէք, ըսաւ մարդը, ես յաճախորդ մը չեմ. իմ երիտասարդութեանս ատեն՝ ես ալ դարբնած եմ և հիմա չեմ կրնար դարբնոցի մը առջևէն անցնիլ՝ առանց անգամ մը ներս մտնելու և ակնարկ մը նետելու:

Պէրկէր դիտեց որ օտարականը ջղուտ ուժեղ ձեռքեր ունէր, դարբինի ճշմարիտ ձեռ-

քոր, և անոր հարցուց տունէն ու ուրկէ գալը։ Մարդը սիրով տուաւ հարկ եղած պատասխանները, բայց առանց յայտնելու իր անունը։ Պէրկէրի աչքը բաց մնաց անոր խելացի խօսքերէն և քաղաքավար ձևերէն։ Անոնք երկուքով դուրս ելան մութ ճամբուն վրայ և հոն ծերունի դարբինը սկսաւ գովել իր տղաքը։

— Ա՛խ, կըսէր, շատ դէշ օրեր տեսայ՝ մինչև որ տղաքս մեծցան և սկսան օգնել ինծի՛։ Բայց այսօր որ ամէնքս իրարու կ՚օգնենք գործերնիս շատ յաջող կ՚երթայ և պիտի տեսնես թէ քանի մը տարիէն հարուստ պիտի ըլլամ ես։

Օտարականը թեթև ժպիտ մը ունեցաւ և պատասխանեց թէ շատ ուրախ է որ Պէրկէր այդքան կորիճ տղաքներ ունի։

— Ու հիմա, յարեց անիկա, իր ծանր ձեռքը դնելով դարբինին ուսին վրայ եւ նայելով անոր բիբերուն մէջ, հիմա որ քու որդիներդ այնքան բարեսրտութեամբ քեզի կ՚օգնեն աշխարհի գործերուն մէջ, կը պահանջե՞ս անոնցմէ որ օգնեն նաեւ հոգիի գործերուն մէջ։

Պէրկէր անոր նայեցաւ ապուշ ապո՛ւշ։

— Այս հարցումս նոր է քեզի համար, յարեց անծանօթը. բայց մտածէ՛ անոր վրայ՝ մինչեւ երկրորդ անգամ մեր տեսնուիլը։

Եւ հեռացաւ ժպտելով։

Պէրկէր վերադարձաւ իր սալին՝ քերելով իր գլուխը, իր՝ արոյրի թելերէն աւելի կարծր ու դեղին մազերով ծածկուած գլուխը, եւ նորէն սկսաւ դարբնել երկաթը։ Բայց, շատ մը օրեր օտարականին հարցումը կը հետապնդէր ու կը յաճախէր զինք։

«Բան մը կայ ասոր տակը՝ որ չեմ հասկընար», կը մտածէր դարբինը։

* * *

Թիմս Հալֆորի խանութին մէջ էր. այդ խանութը՝ երբ Հալֆոր ամուսնացաւ Քարինին հետ, թողուց իր քեննեկալին՝ Քօլաս Կունարի։ Կունար ճամբորդութեան մէջ էր եւ իր կինը՝ Պրիթա Ինկմարստօթէրն էր որ կը նստէր հաշուեսեղանին գլուխը։

Պրիթա ինչպէս որ կը կրէր իր մօրը անունը, այնպէս ալ ունէր անոր գեղեցկութիւնը։ Երբեք այդքան գեղեցիկ աղջիկ մը մեծցած չէ՛ր Ինկմարսօնենց ագարակին մէջ. և անիկա ճշմարիտ զաւակն էր այդ հին ընտանեքին՝ ունենալով աննման կերպով ուղիղ, պարկեշտ և խղճամիտ հոգի մը։

Էրկանը բացակայութեանը միջոցին՝ մասնաւոր կարողութեամբ մը խելք կը հասցնէր առուտուրի և կը վարէր իր խանութը։ Եթէ ծերունի տասնապետը՝ Ֆալթ, որ խմելը շատ կը սիրէր, գար դողդոջուն ձեռքերով շիշ մը գարեջուր ուզելու, Պրիթա վճռական կերպով չ ի կ ա յ կը պատասխանէր։ Իսկ երբ աղքատ Լէնան գեղեցիկ շամփուր մը գնել ուզէր, Պրիթա կը խրկէր զայն՝ քանի մը հօխա հաճարի ալիւրի հետ։ Մանուկները դիւրին դիւրին չ՚էին կրնար իրենց ձեռքն անցած մէկ քանի տասնոցը շամիչի ու շաքարի պառկեցնել։ Եւ քանի՛ քանի անգամներ գեղին կնիկները երբ ուզած էին քաղաքի թեթև պաստառներ գնել, Պրիթա ձեռնունայն ետ դարձուցեր էր զանոնք՝ ըսելով որ երթան իրենց հօրին վրայ իրենք իրենց ձեռքով գործեն դիմացկուն կտաւներ։

Այդ օրը Պրիթա շատ յաճախորդ ունեցած չ՚էր։ Երկար ժամեր մնացեր էր մինակ, նստած

տեղը կքած, աչքերը ձգած իր առջեւը և յուսահատութենէն տագնապելով: Վերջապէս ոտքի ելաւ, անցաւ իր խանութին ետեւի կողմը, ելաւ աթոռակի մը վրայ և առաստաղի գամին կապեց ամուր չուան մը, որուն ծայրը խաղը մը կար: Դեռահաս կինը կ'աճապարէր տենդագին կերպով և քնաթաթախ ու զգայախաբ դէմքով մը, երբ յանկարծ դուռը բացուեցաւ և գանգրահեր մազերով, սեւ մօրուքով, սուր աչքերով խոշոր մարդ մը՝ անցած ըլլալով պարապ խանութէն, մտաւ փոքր սենեակը, մինչ Պրիթա չ'էր լսած անոր ոտնաձայնը: Երբ որ մարդը տեսաւ Պրիթան, ետ դարձաւ դէպի հաշուեսեղանը, Պրիթա ալ գնաց անոր ետեւէն: Մարդը նստեցաւ ծռասրուն աթոռի մը վրայ և լուռ նայեցաւ Պրիթային երեսը:

Այս նայուածքին տակ՝ որ կարծես մոգական ազդեցութիւն մը ունէր, Պրիթա՝ ոտքի վրայ, անշա՛րժ, նախ խուլ անհամբերութիւն մը զգաց. «կը կարծե՞ս թէ, կ'ըսէր ինքնիրեն, կը կարծե՞ս թէ պիտի կրնաս արգիլել՝ ինչ որ ընել կ'ուզէի. պիտի ընեմ զայն նորէն՝ մեկնածիդ պէս... չարիքն անդարման է. դուն բան մըն ալ, բա՛ն մըն ալ չ'պիտի կրնաս փոխել անկէ»:

Մարդը չարունակ սեւեռած էր իր աչքերը անոր վրայ. և Պրիթա, համր շրթունքներով, իր ներսէն կ'ըսէր անոր. «Լաւ հասկցիր զիս. մե՛ր, Ինկմարի սերունդին պատկանողներուս գործը չ'է առուծախն ու առուտուրը: Միտքս դարձնել ուզեցին որ չ'ամուսնանամ Կիւնարին հետ, բայց մենք զիրար կը սիրէինք և իրարու դէմ խօսք մը չ'էինք ըսած մինչև այն օրը՝ երբ

ան բռնեց այս խանութը... անկէ ի վ՛եր, ա՛խ, անկէ ի վե՛ր... ո՛չ, կը տեսնե՞ս, չ'եմ կրնար ընդունիլ որ անիկա գարեջուր ու գինի ծախէ գինովներուն, և խեղճերուն ձեռքէն խլէ իրենց մէկ հատիկ կովն ու խղճուկ ոչխարները, զրկելով զանոնք այսպէս: Չե՛մ կրնար: Ասոր համար ամէն գիշեր վէճ ու սոսկալի կռիւ ունինք... և Կիւնար զիս չի սիրեր այլեւս... ուստի, պէտք է որ վերջ մը տամ ասոր... ինչո՞ւ չ'ես երթար ասկէ..,»:

Բայց, հետզհետէ օտարականին նայուածքը կը խաղաղեցնէր զինք, և յանկարծ Պրիթա սկսաւ հեծկլտալ:

Մարդը հիտկուեցաւ դէպի դուռը, և, ետ դառնալով սեմին վրայ, ըսաւ անոր՝ ծանր ու քաղցր ձայնով մը.

— Զարիք մի՛ հասցներ քեզի, որովհետև կը մօտենայ ժամանակը ուր պիտի ապրիս դուն արդարութեան մէջ:

Յետոյ, մեկնեցաւ: Ծանր քայլերը թնդացին վերնագաւթակին վրայ: Պրիթա վազեց խանութի ետեւի կողմը, վերցուց չուանն ու աթոռակը, յետոյ նստեցաւ և մնաց անշարժ: Իրեն այնպէս կուգար թէ երկար ատեն թափառած է այնքա՛ն մութ, այնքա՛ն մութ գիշերուան մը մէջ՝ որ իր ձեռքն անգամ չէր կրնար տեսնել: Մոլորա՛ծ, կորսուա՛ծ, իր ամէն մէկ քայլը կը սպառնար զինք գահավիժել ճահիճի մը կամ անդունդի մը մէջ: Եւ ահա ձայն մը զինք կանչած ու ըսած էր որ ա՛լ չ'քալէ, այլ նստած մնայ մինչև լոյսին ծագիլը, Ու ինք երջանիկ էր և կը սպասէր արշալոյսին:

* * *

Աննա Լիզա, Սթարքին աղջիկը, որ շատ մը տարիներ Շիքակօ կեցած էր, հոն ամուսնացեր էր Յովհան Հէլկում անունով համերկրացիի մը հետ: Այս Շուէտացին կ'առաջնորդէր փոքր համայնք մը՝ որ իրեն յատուկ հաւատք մը և վարդապետութիւն մը կը դաւանէր: Այն նշանաւոր գիշերուան երկրորդ օրն էր որ Աննա Լիզա ու իր ամուսինը հասեր էին իրենց հայրենիքը և գացած էին Սթարքին տունը:

Հէլկում իր ժամանակը նուիրեց՝ երկար պտոյտներ ընելու գաւառին մէջ: Կը բարեկամանար բոլոր անոնց հետ՝ որ բաղդը ճամբուն վրայ իր դէմը կը հանէր և նախ անոնց հետ կը խօսակցէր կեանքի սովորական բաներու վրայ. բայց երբ կը բաժնուէր անոնցմէ մէկէն, իր ծանր ձեռքը սիրով կը դնէր անոր ուսին վրայ և սփոփանքի կամ հոգևոր արթնութեան քանի մը խօսքեր կ'ըսէր:

Սթարք գրեթէ չ'էր տեսներ իր փեսին երեսը: Ծերունի վարձկալը այս տարի կաշխատէր պատանի Ինկմարին հետ ընկերակցաբար, որ վերջապէս եկեր կը բնակէր Ինկմարսկարդ: Միասին սղոցարան մը շինած էին Լանկֆորսընի դէմ: Եւ այն օրն ուր սղոցարանն աւարտած ըլլալով, իրենց շշող սղոցները առաջին ծառի բունէն գեղեցիկ ու մաքուր տախտակներ կըտրեր էին, այդ օրը ծերունի Սթարքին համար երջանկութեան ու հպարտութեան օր մը եղած էր.

Երբ իրկուն մը Սթարք իր աշխատութենէն կը վերադառնար՝ դէմն հանդիպեցաւ իր Աննա Լիզա աղջիկը, որ սարսափահար դէմք մը ունէր և կարծես կ'ուզէր փախուստ տալ իր աչքերէն: Ծերունին փութացուց իր քայլերը դէպի տուն:

Միշտ իր տանը դռան առջև մեծ վարդենի մը կը ծաղկէր: Սթարք իր աչքին լոյսին պէս կը սիրէր զայն և չ'էր ներեր որ մէկը անոր վրայէն չէ թէ վարդ մը, այլ տերև մը անգամ փրցնէ: Զայն պաշտպանած, խնամած, պահպանած էր, որովհետև գիտէր թէ քնծմեղ ագէկները անոր արմատներուն տակ կը բնակին: Արդ, տեսաւ որ վարդենին կտրուած է: Անշուշտ իր փեսին, այդ զարշելի քարոզիչին գործն էր ասիկա: Սթարք՝ կացինը ձեռքը և մատները կծկած անոր կոթին շուրջ, մտաւ իր տունը:

Հէլկում նստած, բաց Աստուածաշունչն իր առջևը, գլուխը վեր վերցուց, հարցաքննեց ծերունիին դէմքը և սկսաւ բարձր ձայնով կարդալ.

... Եւ երբ կը մտածէք դուք թէ՝ կ'ուզենք ընել հեթանոսներու և ուրիշ երկիրներու ուրիշ ժողովուրդներուն պէս, որոնք քարերն ու ծառի կոճղերը կը պաշտեն,

Ինչպէս որ ճշմարիտ եմ ես, կ'ըսէ Տէրը, այնպէս պիտի թագաւորեմ ձեր վրայ՝ իմ հզօր աջովս, ու իմ պիրկ բազուկովս, ու իմ բարկութեամբս...

Սթարք բառ մը անգամ չհանեց բերնէն. դուրս ելաւ և այդ գիշերը պառկեցաւ յարդի մարագին մէջ:

Երկու օր ետքը, Ինկմար և ինք գացին ան-

տառը՝ փայտ կտրելու և ածուխ շինելու համար։ Ամբողջ ձմեռը պիտի կենային հոն։

* * *

Հէլկում մէկէ աւելի անգամներ երգած էր հոգևոր ժողովներուն մէջ և պարզած էր իր վարդապետութիւնը՝ ու կը համարէր միակ և ճշմարիտ քրիստոնէութիւնը։ Բայց ինք չ'ունէր Տակսոնի պերճախօսութիւնը և իր խօսքը երբեք ստեղծած չ'էր նորահաւատներ։ Անոնք որ ճամբուն վրայ կը հանդիպէին իրեն և կարճ յորդորներ միայն կը լսէին իր բերնէն, մեծ բան կը սպասէին իրմէ. դժբաղդաբար, քիչ մը աւելի խօսիլ սկսածին պէս՝ իր ճառը կ'երևնար ծանրադանդաղ ու աղքատ։

Ամառուան վերջը, Քարին ինկաւ տխուր սրտաբեկման մը մէջ։ Միշտ անկարող քալելու և առաւօտէն մինչև իրկուն իր աթոռին վրայ անշարժ, զզուա՛ծ քարոզներէն ու քարոզիչներէն, կը տապկտուէր իր անգութ հիւանդութեամբը։ Իր հայրը առենօք ախորժ կը զգար կրկնելու թէ Ինկմարսօնները վախնալիք բան չ'ունին՝ հերիք է որ կը հետևին Աստծոյ ճամբուն։ Բայց այսօր Քարին, ինչպէս կ'ըսէր իր էրկանը, գիտէր թէ նոյնիսկ աս խօսքն ալ ճշմարիտ չէր։

Օգոստոսի կիւրակէ մը Քարին մինակ նստած էր մեծ սենեակին պատուհանին առջև, և ագարակին գաղջ լռութեան մէջ, քնաթաթախ, գլուխը կախած կուրծքին վրայ, աչքերը գոցուեր ու քնացեր էր։ Իր պատուհանին տակէն հասնող խօսակցութեան մը աղմուկը արթնցուց զինք։ Չէր տեսներ թէ ո՛վ է Հալֆորին հետ խօսողը, բայց անծանօթ ձայնը ծանր ու խորին

հնչիւն մը ունէր և Քարին չ'էր յիշեր թէ այդքան գեղեցիկ ձայն մը լսած է երբեք։

— Գիտե՛մ, Հալֆո՛ր, կ'ըսէր ձայնը, անհեթեթ բան կը գտնես որ կրթութենէ զուրկ, խեղճ գարբին մը գտած ըլլայ ճշմարտութիւնը հոն՝ ուր այնքան գիտուն մարդիկ չեն գտներ։

— Այո՛, պատասխանեց Հալֆոր. չեմ գիտեր թէ ի՛նչպէս կ'ըլլայ որ այդքան վստահ ես...

«Հէլկումն է», մտածեց Քարին և ուզեց որ գոցէ պատուհանը, բայց չի յաջողեցաւ։

— Գրուած է. շարունակեց Հէլկում, որ երբ մէկը զարնէ աջ երեսիդ, պէտք է որ անոր դարձնես նաև ձախ երեսդ և պէտք չ'է որ դիմադրես քեզի չարիք ընողին։ Բայց բոլոր այս բաները, ինչպէս դեռ ուրիշներ, անկարելի է գործադրել։ Եթէ չ'պաշտպանես քու ինչքդ, մարդիկ կը յափշտակեն արտերդ ու անտառդ, կը գողնան գետնախնձորդ ու ցորենդ. կը կարծեմ նոյնիսկ թէ քու Ինկմարսկարտէդ գուղձ մը անգամ չի մնար ձեռքդ։

— Գուցէ ճիշտ է, պատասխանեց Հալֆոր։

— Ուրիշ բան մըն ալ մտածէ, շարունակեց Հէլկում, և նկատի ունեցիր քիչ մը այն գեղեցիկ արդիւնքը՝ որուն հասած ենք մենք՝ մեր քրիստոնէութեամբը։ Ա՛լ մէկը չի գտնուիր աշխարհի վրա՝ որ գողութիւն ընէ, մարդասպանութիւն ընէ և անիրաւէ այրիներուն ու որբերուն։ Չի գտնուիր մարդ մը որ ատէ կամ հալածէ իր նմանը։ Ո՛և է չար գործ ընող մը չի կայ։ Ահա թէ ի՛նչ կը նշանակէ պատուական կրօնք մը ունենալը։

— Ա՛խ, վստահաբար, ամէն բան դեռ այն-

պէս չէ՝ ինչպէս որ պէտք է ըլլար, ընդունեց մեղմիկ Հալֆօր՝ որ գրեթէ չ'էր հետաքրքրուեր այս խօսակցութեամբ և որուն քունը կարծես կը բռնէր իր աչքերը:

— Բայց, Հալֆօ՛ր, եթէ քու կամնակդ չը գործէր, պիտի չ'փնտռէի՞ր անոր պակասութիւնը և սիրտդ տեղը պիտի իյնա՞ր՝ մինչև որ չ'գտնէիր այդ պակասը: Այսպէս ալ, երբ կը տեսնես որ մարդիկ չ'են կրնար քրիստոնէական կեանք մը վարել, պէտք չէ՞ որ փնտռես նաև քու քրիստոնէութեանդ պակասութիւնը:

— Ես իմ մտքէս չեմ կրնար անցնել թէ, պատասխանեց Հալֆօր, Քրիստոսի վարդապետութիւնը կրնայ պակասութիւն ունենալ:

— Ճիշտ է որ սկիզբը պակասութիւն չ'ունէր անիկա, բայց զարմանալու բան չի կայ որ ետքէն խանգարումներ մտած ըլլան անոր մէջ: Մէկ հատիկ աւրուած անիւ մը, փոքր, պարզ անիւ մը՝ բաւական է որ կեցնէ ամբողջ մեքենան:

Վայրկեան մը լռեց՝ որպէսզի աւելի լաւ կերպով գտնէ իր խօսքերն ու խորհրդածութիւնները:

— Քեզի պատմեմ թէ, շարունակեց ան, ի՛նչ պատահեցաւ ինծի քանի մը տարի առաջ: Առաջին անգամն էր որ կը ջանայի իրապէս ապրիլ Աւետարանի համաձայն: Գիտե՞ս թէ ի՛նչպէս էր որ այսպէս եղաւ: Երբ գործարանիս ընկերները հասկցան թէ ի՛նչ տեսակ մարդ եմ ես, սկսան վրաս բարդել իրենց աշխատանքին մեծ մասը, յետոյ գործս ալ ձեռքէս խլեցին և ամենէն վերջն ալ իրենցմէ մէկուն ըրած գողութիւնը վրաս ձգեցին, որով բանտարկուեցայ:

— Մարդ ամէն ատեն այդ տեսակ չար մարդոց չի հանդիպիր, ըսաւ Հալֆօր անհամբեր ձայնով մը:

— Այն ատեն, շարունակեց Հէլկում, մտածեցի թէ բնաւ դժուար բան չէ որ մարդ քրիստոնեայ ըլլայ՝ երբ մէս մինակ է աշխարհին մէջ և ուրիշներու հետ կռուելու առիթ չ'ունի: Կը սիրէի գրեթէ բանտը, որովհետև բան մը չի կար որ գիս խանգարէր կամ արգելք ըլլար ինծի՝ վարելու արդարի մը կեանքը: Բայց, ինծի թուեցաւ թէ այսպիսի մենաւոր կեանք մը կը նմանէր ջաղացքի մը՝ որ կը դառնայ ու միշտ կը դառնայ, առանց ցորեն ունենալու իր երկանաքարերուն տակ: Քանի որ Աստուած այսքան մարդ ստեղծած է երկրի վրայ, մտածեցի, հաւանականաբար իր մտադրութիւնն ա՛ն է որ՝ անոնք փոխադարձաբար իրարու օգնեն և իրարու նեցուկ ըլլան, և ո՛չ թէ կորուստի պատճառ: Եւ վերջապէս ճանչցայ թէ սատանան բան մը գողցած էր Աստուածաշունչէն, որպէսզի քրիստոնէութիւնը ծուռ քալէ:

— Ես երբեք իշխանութիւն պիտի չ'ունենայի այդքան առաջ երթալու, ըսաւ Հալֆօր:

— Այո՛, սատանան գողցած է սա պատուէրը,— դուք ամէնքդ որ կ'ուզէք քրիստոնեայ կեանք մը վարել, պէտք է որ ձեռնտուութիւն փնտռէք ձեր մերձաւորին մէջ:

Հալֆօր անխօս մնաց, բայց Քարին՝ որ մէկ բառ անգամ փախցուցած չ'էր խօսակցութենէն, գլխով հաստատական նշան մը ըրաւ:

— Բանտէն ելայ թէ չէ, յարեց Հէլկում, գացի գտայ մէկ ընկերս և խնդրեցի որ օգնէ ինծի՝ արդար կեանք մը վարելու: Երբ որ եր-

կուք եղանք մենք՝ այդ կեանքը վարելը դիւրին դարձաւ. և երբ երեք հոգի, յետոյ չորս եղանք՝ ա՛լ աւելի հեշտացաւ անիկա։ Այսօր երեսուն հոգի ենք մենք՝ որ միասին ենք։ Կապրինք իրարու հետ համայնապէս. կը հսկենք մէկզմէկու կեանքին վրայ և արդարութեան ճամբան պարզ և մի՝ կ'երկննայ մեր քայլերուն առջև։ Շատ հեշտ է մեզի հիմա՝ վարուիլ իբրև ճշմարիտ քրիստոնեաներ, որովհետև եղբայրը չարաչար չի գործածեր իր եղբօր բարութիւնը՝ և իր ոտքերուն տակ առնելով չի տրորեր զ'այն՝ տեսնելով որ խոնարհ է ան։

Եւ որովհետև Հալֆոր շարունակ կը լռէր՝ Հէյլկում շարունակեց համոզիչ ձայնով մը.

— Շատ լաւ գիտես, Հա՛լֆոր, թէ մէկը որ մեծ ձեռնարկի մը գաղափարն ունի, ընկերակցութիւն կը կազմէ ուրիշ անձերու հետ։ Եթէ մեն մինակ ըլլայիր, չ'էիր կրնար այս ագարակը շահագործել, այնպէս չէ՞։ Եւ եթէ ծրագիր ունենայիր գործարան մը հիմնելու, կը կարծեմ թէ բաժնեկիցներ պիտի փնտռէիր։ Հապա եթէ երկաթուղի մը շինել ուզէիր, քանի քանի՛ մարդոց դիմելու հարկադրուած պիտի չ'ըլլայիր։ Ա՛րդ, աշխարհի ամենէն դժուար բանը, քրիստոնէական կեանք վարելը, կը կարծես թէ կարելի է կատարել միս-մինա՛կ, առանց օգնականի և առանց աջակիցի՛։ Եւ կամ այն է որ չ'ես ալ փորձեր մինչև իսկ, որովհետև կ'ըմբռնես թէ անկարելի է կատարել զ'այն։ Բայց ես և Ամերիկայի մէջ ինծի միացածները բարի ճամբու վրայ ենք կանգնած։ Մեր միաբանութիւնը ճշմարիտ Երուսաղէմն է՝ երկինքէն իջած։ Եւ ասոր ամենամեծ ապացոյցն ան

է որ՝ առաջին քրիստոնեաներուն վրայ իջած շնորհքը մեր վրայ ալ կը տարածուի ահա։ Մեր եղբայրներէն ոմանք կը լսեն Աստծոյ ձայնը. ուրիշներ մարգարէութիւններ կ'ընեն. իսկ ուրիշներ ալ հիւանդութիւններ կը բժշկեն...

— Դուն ալ կրնա՞ս հիւանդներ բժշկել, ընդմիջեց Հալֆոր։

— Այո՛, ըսաւ Հէյլկում, կրնամ բժշկել զ'անոնք որ կը հաւատան ինծի։

— Շատ դժուար բան է որ մարդ հաւատայ ուրիշ բանի մը՝ որ նման չէ մանկութեան ատեն իրեն սորվեցուցածին, պատասխանեց դանդաղօրէն Հալֆոր։

— Բայց և այնպէս, վստահ եմ թէ, Հալֆօ՛ր, մօտ է ժամանակը՝ որպէսզի աջակցիս ինծի, շինելու համար նոր Երուսաղէմը

Տեղի ունեցաւ լռութիւն մը և Բարին լսեց շուտով որ Հէյլկում մնաս բարով ըսաւ։ Քանի մը վայրկեան ետքը Հալֆոր ներս եկաւ և տեսնելով որ Բարին նստեր է պատուհանին առջև, ըսաւ անոր.

— Լսեցի՞ր։

— Այո՛, պատասխանեց Բարին։

— Կը յայտարարէ որ ինք կրնայ բժշկել իրեն հաւատացողները։

Բարին կարմրեցաւ թեթև մը։ Հէյլկումի վարդապետութիւնը ամառուան մէջ իր առջև քարոզուած բոլոր միւս վարդապետութիւններէն գերազանց կը գտնէր։ Անոր մէջ գործնական նպատակ մը կը գտնէր՝ ինչ որ շատ հաճելի կուգար իրեն։ Այդ վարդապետութենէն ամբողջովին գործունէութիւն ու գործ կը բըղխէր, անիկա չ'էր բուրեր այն տարտամ զգայ-

նոտութիւնը որ անհասկնալի էր իր հոգիին։ Բայց չէր ուզեր ասիկա խոստովանիլ ինք իր մէջ։

— Ես իմ հօրս հաւատքէն զատ ուրիշ հաւատք պիտի չ'ունենամ, ըսաւ Բարին։

Քանի մը շաբաթ ետքը Բարին դարձեալ նստած էր մեծ սրահին պատուհանին առջև։ Աշնանային հովը կը մռնչէր տանը շուրջը և կըրակը կը ճարճատէր օճախին մէջ։ Իր պզտիկ աղջիկը որ գրեթէ մէկ տարեկան էր և նոր ոտքի էր ելեր, կը խաղար իր ոտքերուն առջև։ Յանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ խոշոր ու թուխ մարդ մը։ Անիկա ունէր գանգրահեր մազեր, թաւ մօրուք մը, սուր նայուածք և ջղուտ խոշոր ձեռքեր, դարբի'նի ձեռքեր։ Անծանօթը բառ մը անգամ դեռ չ'արտասանած՝ Բարին գուշակեց որ Հէլկումն է ան։

Բարև տուաւ և Հալֆօրն հարցուց։

Բարին պատասխանեց թէ իր ամուսինը գեղի մէկ ժողովին գացեր է, բայց շուտով պիտի գայ։

Հէլկում նստեցաւ և առանց բառ մը ըսելու, ատեն ատեն նայուածք մը կ'ուղղէր Բարինի։

— Գիտէի թէ հիւանդ ես, ըսաւ վերջապէս։

— Այո՛, ահա վեց ամիս է որ չեմ կրնար քալել։

— Միտք ըրի որ գամ հոս՝ աղօթեմ քեզի համար։

Բարին լռեց և արտևանունքները վար իջեցնելով ինքնամփոփուեցաւ։

— Բարին չի գիտե՞ր որ ես Աստուծմէ ըն-

նորհք ընդունած եմ՝ հիւանդներ բժշկելու։

Բարին անոր վրայ անվստահ նայուածք մը ձգեց։

— Շնորհապարտ եմ որ իմ վրայ մտածեր ես. գալով միացածին, անօգուտ է անոր վրայ խօսիլ. ես դիւրութեամբ հաւատք չեմ փոխեր։

— Կրնայ ըլլալ որ այնուամենայնիւ Աստուած կ'ուզէ բնակիլ քու մէջդ, քանի որ դուն ջանացած ես միշտ արդար կեանք մը վարել։

— Զեմ կարծեր որ Աստուած ուզէ իմ մէջս բնակիլ

— Բարին հարցուցե՞ր է երբեք, ըսաւ Հէլկում՝ լռութենէ մը ետք, թէ ինչո՛ւ համար այս փորձութիւնը եկեր է իր վրայ։

Բարին չի պատասխանեց և աւելի անհաղորդական երևոյթ մը առաւ։

— Ես կը մտածեմ թէ Աստուած այս ցաւը քեզի տուաւ՝ որպէսզի փառաւորուի իր անունը։

Այս վերջին բառերը զայրացուցին դեռահաս կինը և երկու կարմիր բիծեր երևցան իր երեսներուն վրայ։ Հէլկում իրեն տարօրինակ կերպով յանձնապաստան կ'երևնար՝ որ կը կարծէր թէ իր հիւանդութիւնը առաջ եկած է, հրաշքի մը պատճառ դառնալու համար։ Աւետարանիչը մօտեցաւ և իր ձեռքը դրաւ Բարինի գլխուն վրայ։

— Կուզե՞ս որ աղօթեմ քեզի համար, ըսաւ։

Կեանքի և առողջութեան հոսանք մը անցաւ Բարինի ամբողջ էութեան մէջէն. բայց, վիրաւորուած այս բացբերնութենէն, Բարին ուժգնութեամբ ետ հրեց անոր ձեռքը և վեր վերցուց իր թևը՝ զարնելու անոր։

Հէլկում ուղղուեցաւ դէպի դուռը։

— Պէտք չ'է դուրս նետել այն բանը որ Աստուած կը խրկէ մեզի, կրկնեց Հէյկում:

— Ո՛չ, պատասխանեց Քարին դառնութեամբ, մարդ հարկադրուած է ընդունելու Աստծոյ խրկած բանը:

— Քեզի կ'ըսեմ թէ այսօր Աստծոյ շնորհքը պիտի տարածուի այս տանը վրայ:

Քարին լռեց:

— Յիշէ՛ զիս, յարեց Հէյկում, երբ զգաս վերին օգնութիւնը:

Եւ դուրս ելաւ:

Քարին շիտկուած էր իր աթոռին վրայ՝ երեսները միշտ կաս-կարմիր և երկու կարմիր բիծերովը դրօշմուած:

— Տանս մէջ անգամ ըսել է երբեք հանգիստ պիտի չի կրնամ ըլլա՛լ, մրմնջեց: Ի՛նչ տարօրինակ բան որ այսքան մարդիկ իրենք զ'ի՛րենք Աստծոյ առաքեալները կը կա՛րծեն:

Բայց յանկարծ մոռցաւ իր այս մտածումները՝ տեսնելով թէ իր մանկիկը կը մօտենայ կրակետղին: Փոքրիկ աղջիկը նշմարած էր կրակը և ուրախութեան պզտիկ ճիչերով չորս ձեռքի վրայ կը վազէր անոր: Մայրը կանչեց զ'այն, բայց մտիկ չէր ըներ անիկա. քանի մը անգամ օճախին վրայ մագլցիլ փորձելէ ետք, կրցաւ վերջապէս բարձրանալ մինչև այն տեղը՝ ուր կը վառէր կրակը:

— Տէ՛ր Աստուած, օգնութեա՛ն հասիր ինծի. Տէ՛ր Աստուած, օգնէ՛ ինծի, կը հայցէր Քարին:

Ու թէև գիտէր որ տանը մէջ իր ձայնը լսող մը չի կայ, բայց նորէն սկսաւ պոռալ:

Մինչ մանկիկը խնդալով կը ծռէր կրակին

վրայ, բոցավառ կիսայրեց մը թաւալեցաւ և ինկաւ անոր դեղին շրջազգեստին վրայ:

Նոյն վայրկեանին Քարին ոտքի կանգնած էր: Վազեց դէպի օճախը և բռնեց մանուկը: Երբ մարեց բոլոր կայծերն ու կրակի մանրուքները և վստահ եղաւ թէ իր մանկիկը ողջ-առողջ է, այն ատեն միայն տեսաւ թէ ոտքերուն վրայ կանգնած է: Քալա՛ծ էր և կրնար այլևս քալե՛լ: Իր հոգին զգաց այնպիսի մեծ ուրախութիւն մը և այնպիսի մեծ ցնցում մը՝ որ երբեք զգացած չ'էր իր կեանքին մէջ: Այսպէս ուրեմն, Աստուած առած էր զինք իր պահպանութեան և իր մասնաւոր պաշտպանութեան տակ. Աստուած իր տունը խրկած էր սուրբ մարդ մը՝ որպէսզի բժշկէ ու փրկէ զինք...

⁂

Սակայն Հէյկում շատ անգամ կը կենար Սթարքի դռան փոքր վերնադաւիթին վրայ և կը դիտէր գաւառը: Այն երկիրը որ կ'ընդգրկէր իր նայուածքով՝ ամէն օր աւելի պայծառագեղ և աւելի գեղեցիկ կը դառնար: Հողն ամբողջ դեղին և ծառերը կարմիր կամ բաց-դեղին գոյն մը ունէին: Հոս ու հոն պուրակ մը կը ծփար՝ ոսկիէ ալիքի մը պէս: Բլուրներուն վրայ տերևախիտ ծառերը՝ ցրուա՛ծ շօճիներու և եղևիններու մէջտեղ զանոնք կը կէտկէտէին կարմիր բիծերով: Խոնարհ և գորշ խրճիթի մը պէս՝ որ կրակ առած է, շուետական այս խղճուկ բնանկարը այնքան հրաշալի կերպով կը բոցավառէր՝ որ կարծես թէ արեգակին մէջ բնանկար մըն է: Բայց Հէյկում կը խորհէր թէ պիտի

դան ժամանակներ՝ ուր Աստուած պիտի շողացընէր իր սրբութիւնը այս դաշտերուն և անտառներուն վրայ, ուր ցանուած խօսքերը պիտի բարձրանային հոն արդարութեան հունձքով:

Եւ ահա երկուն մը Թիմս Հալֆոր բարձրացաւ Սթարքին բնակարանը՝ հրաւիրելու համար Հէլկումն ու իր կինը Ինկմարսկարտ:

Երբ իջան անոնք ու մտան ընդարձակ բակը, ամէն բան մաքուր ու յստակ էր հոն: Աւլեր էին ցարասիներուն տակի չոր տերևները. գործիքներն ու սայլակները՝ որ սովորաբար կը խափանէին բակը, կարգի դրուած էին: «Անշուշտ հիւրեր գտնուելու են ներսը» մտածեց Աննա Լիզա:

Իրօք, Հալֆոր երբ բացաւ մեծ սրահին դուռը, տեսան որ ներսը լեցուն է բազմութեամբ, ամէնքն ալ հանդիսաւոր սպասման մը մէջ և նստած պատին չորս բոլորը շարուած երկար նստարաններուն վրայ: Հէլկում տեսաւ որ հոն են գեղին պատուաւոր ընտանիքները,— Լիւունկ Պըյօրն և իր կինը Մարթան, Քօլաս Կիւնարը և իր կինը Պրիթան, յետոյ Քրիսթիր Լարսոնը և Իսրայէլ Թօմասոնը՝ իրենց կիներուն հետ, որոնք՝ ինչպէս Պրիթան ու Մարթան, Ինկմարի տան զաւակներն էին: Եւ ապա նշմարեց Հօք Մաթս Էրքսոնը և իր տղան Գաբրիէլը, քէհեա Կունհիլտը և դեռ ուրիշներ. ընդ ամէնը քանի չափ հոգի:

Երբ Հէլկում և Աննա Լիզա շուրջանակի սեղմեցին բոլոր ներկաներուն ձեռքը, Թիմս Հալֆոր արտասանեց սա բառերը.

— Մենք հոս քանի մը հոգիներս հաւաքուած ենք, խորհած ըլլալով այն խօսքերուն

վրայ՝ որոնք Հէլկում մեզի ըսաւ այս ամառ: Մեր մեծ մասը կը պատկանի հին գերդաստաններու՝ որոնք միշտ ուզած են հետևիլ Աստուծոյ ճամբուն. և եթէ Հէլկում կրնայ օգնել մեզի այդ ճամբուն մէջ, սիրով զինքը մեզի առաջնորդ պիտի ընդունինք:

Միւս օրը կը խօսուէր գեղին մէջ թէ Ինկմարսկարտի մէջ կրօնական նոր միաբանութիւն մը կազմուեր է, որ կը յայտնէ թէ միակ ճշմարիտ քրիստոնէութիւնը իր դաւանածն է:

VII

ՆՈՐ ՃԱՄԲԱՆ

Յաջորդ գարնան, ձիւնհալքէն քիչ ետքը, Խնկմար և Սթարք իջան վար, գեղը՝ կարգի դնելու համար իրենց սղոցարանը: Ձմեռն ամբողջ անցուցեր էին անտառին մէջ, կտրելով խոշոր շոճիներ և ածուխ շինելով անոնցմէ: Երբ Խնկմար դաշտն իջաւ, ինք անգամ կարծեց թէ կը նմանի իր թմրած որջէն վերջապէս դուրս ելլող արջի մը: Բաց երկինքը և արեգակին պայծառութիւնը՝ որոնց սովորութիւնը կորսնցուցեր էր, իր աչքերը կը խտղտացնէին: Հեղեղին շառաչիւնը և մարդոց ձայնը իր ականջները կը տանէին, և արեգակին ժխորը՝ որ կը խժլտար իր ականջներուն մէջ, ճշմարիտ մարտիրոսութիւն մը կը պատճառէին իրեն: Եւ սակայն, չափազանց մեծ հաճոյք մը կը զգար: Գիտէ Աստուած որ իր շարժուձեւն ու իր ընթացքը բան մը չէին մատներ, բայց, այդ գարնան, ցարասիներու նոր ընձիւղները իրմէ աւելի դալար չ'էին զգար ինքզինքնին: Ի՛նչ հաճոյք պառկիլ ճշմարիտ անկողնի մը մէջ, ուտել տաք կերակուր և վայելել Քարինի գգուանքը՝ որ մօր մը չափ գորովալից է: Քարին իրեն համար նոր զգեստներ կարել կուտար և վայրկեանն անգամ մը խոհանոցէնդուրս ելլելով, ինչպէս կ'ընէր իր փոքր եղած ատեն, անոր ձեռքերուն մէջ կը թխէր համով բան մը:

Հապա ո՛րքան արտակարգ բաներ անցեր դարձեր էին՝ ձմեռն ամբողջ անտառն անցուցած իր ատենուան միջոցին: Իր ականջին հասած էր Հէյկումին քարոզած վարդապետութիւններուն տարտամ արձագանգը միայն: Բայց երբ Հալֆոր և Քարին իրեն կը խօսէին՝ իրենց ունեցած հիմակուան երջանկութեան վրայ և երբ կը պատմէին թէ ի՞նչպէս իրենք ու իրենց բարեկամները կը ջանային իրարու օգնել՝ Աստըծոյ ճամբուն վրայ, կը մնար ափ ու բերան կտրած:

— Կը յուսանք թէ դուն ալ մեզի հետ պիտի ըլլաս, ըսաւ Քարին:

Խնկմար պատասխանեց թէ ինք ալ այդպիսի փափաք մը ունէր, բայց պէտք էր որ նախ խորհէր անոր վրայ:

— Ամբողջ ձմեռը բաղձանքս ան էր որ դուն ալ մասնակից ըլլաս մեր երանութեան, յարեց քոյրը: Մենք այլեւս երկրիս վրայ չէ որ կ'ապրինք, այլ երկինքէն իջած նոր Երուսաղէմին մէջ:

Ինկմար ուրախ եղաւ իմանալով որ Հէյկում հեռացած չ'էր իրենց երկրէն, որովհետեւ՝ անցեալ ամառ անիկա շատ անգամ եկած էր սղոցարանը և իրենք բարեկամ դարձած էին իրարու: Ինկմար սքանչացած էր անոր՝ կեանքին մէջ առաջին անգամ տեսնելով այդքան պերճախօս, այդքան արու և այդքան ինքնավստահ մէկը: Եւ երբ ստիպողական գործի ատեն գարբինը կը հանէր իր վերարկուն և մէկ կողմ կը նետէր, Ինկմար չ'էր կրնար զմայլելէ դադրիլ՝ մտածելով թէ այդքան ալ մարդ արագ ու լաւ կրնա՞յ աշխատիլ:

Այդ միջոցին Հէյկում բացակայ էր, բայց շուտով պիտի գար:

— Պիտի տեսնես, պիտի տեսնես՝ հեզ մը որ հետը խօսիս, կ'ըսէր Գարին ամէն անգամ որ անոր խօսքը կ'ըլլար:

Ինկմար կարծես համոզուած էր, թէև քիչ մը նեղուելով, թէ կրնար բան մը ըլլալ՝ որուն թերևս երբեք չ'հաւանէր իր հայրը:

— Բայց, կը պատասխանէր Գարին, ես կը խորհիմ թէ հաւանութիւն պիտի տար մեզի հայրը, ինք որ մեզի սորվեցուց միշտ հետևիլ Աստծոյ ճամբուն:

Ամէն բան շատ լաւ էր. և Ինկմար երբեք մտքէն անցուցած չ'էր թէ այդքան քաղցրութիւն կարելի է գտնել չէն-չէնլիքի մէջ: Մէկ բան մը պակաս էր իր երջանկութեան,— ոչ ոք բան կը խօսէր ո՛չ Սթօրմենց, ո՛չ ալ Կէրթրուտի վրայ: Տարիէ մը ի վեր տեսած չ'էր Կէրթրուտը: Բայց անցեալ ամառ ամէն օր, ամէն վայրկեան կը խօսէին իրեն՝ թէ՛ Կէրթրուտի և թէ վարժապետին վրայ: Անշուշտ այս լռու-

թիւնը պարզ դիպուածի մը արդիւնք ըլլալու էր. բայց ի՞նչ միջոց կայ ազատելու քու անհանգստութենէդ, երբ ամչկոտութիւնդ արգելք կ'ըլլայ հարցումներ ընելու քեզ տանջող հետաքրքրութեան մասին՝ որ դուշակող մը չի կայ:

Բայց եթէ պատանի Ինկմար շատ հանդիստ կը զգար ինքզինք, անդին՝ ծերունի Սթարքն ալ կ'երևնար լռակեաց, մռայլոտ ու անհանգիստ:

— Ինծի կուգայ թէ անտառին կարօտովը կը տապկուիս, անոր ըսաւ Ինկմար՝ իրկուն մը, երբ նստած միասին ծառի կոճղի մը վրայ, կ'ուտէին իրենց նախընթրիքը:

— Այո՛, վկայ է Աստուած որ շատ կ'ուզէի անտառէն վար իջած չ'ըլլալ:

— Բայց ի՞նչ բանն է որ սիրտդ կը նեղացընէ:

– Կը հարցնե՞ս. դուն ալ գիտնալու էիր ինծի պէս թէ Հէյկումին ըրածը աղէկի չ'երթար:

Ինկմար պատասխանեց թէ ընդհակառակը ինք լսած էր որ կ'ըսէին թէ Հէյկում կարևոր մարդ մը եղած էր:

— Օ՛հ, այո՛, ու ի՛նչ կարևորութիւն որ՝ գեղը տակն ու վրայ ըրած է:

Ինկմար զարմանքով կը նշմարէր որ Սթարք ամէնափոքր սէր մը անգամ չ'էր ցոյց տար իր սեփական ընտանիքին նկատմամբ: Անոր միակ հոգը աշխարհքին մէջ Ինկմարսկարտն ու Ինկմարսօններն էին:

— Իմ կարծիքս ան է որ Հէյկումի վարդապետութիւնը լաւ է, ըսաւ Ինկմար, հարկադրուած ըլլալով փեսան պաշտպանել աներոջը առջև:

— Ինչո՞ւ չէ, մրթմրթաց քթին տակէն ծերունին, անոր նայելով խոժոռ դէմքով մը։ Եւ կը կարծես թէ Մեծ Ինկմա՞րն ալ բարի պիտի գտնէր այդ վարդապետութիւնը։

Ինկմար պատասխանեց թէ իր հայրն ալ կասկած չի կայ որ պիտի հեռանէր Հէլկումի վարդապետութեան՝ արդար կեանք մը վարելու համար։

— Ի՛նչ, ըսել է այնպէս կը խորհիս թէ Մեծ Ինկմարը համամի՛տ պիտի գտնուէր որ դև ու նեռ անուանեն բոլոր զանոնք՝ որ նոյն միաբանութեան չ'են պատկանիր, և իր յարաբերութիւնները պիտի կորէ՛ր իր հին բարեկամներուն հետ՝ լոկ անոր համար որ անոնք իրենց հին հաւատքէն չ'են դառնի՛ր։

— Չեմ խորհիր թէ, յարեց Ինկմար, Հէլկումի, Հալֆորի և Թարինի պէս մարդիկ այդպէս վարուին։

— Եթէ կրնաս՝ փորձէ անգամ մը չ'ընդունիլ իրենց դաւանանքը, ու տես թէ ի՛նչպէս կը վարուին քեզի հետ։

Ինկմար վրան կարագ քսուած իր հացէն փրցուց լայն շերտ մը և թխեց բերանը։ Ա՛հ, ո՛րքան ցաւալի է որ Սթարք այսքան դէշ տրամադրուած էր։

— Ո՛հ, այո՛, հառաչեց ծերունին՝ լռութենէ մը ետք. այս այսպէ՛ս է. ահա դո՛ւն, Մեծ Ինկմարին զաւակը, և մէկը չի հարցներ քու կարծիքդ, մինչդեռ իմ Աննա Լիզաս ու իր էրիկը գեղին երեւելիներուն հետ կը նստին կ'ելլեն։ Գեղին երեւելիները ծախքեր կ'ընեն՝ զանոնք հիւրասիրելու համար, կը նուաստանան անոնց

առջև և ամէն օր խնճոյքներու կը հրաւիրեն զ'անոնք։

Ինկմար կը ծամէր իր հացը՝ առանց պատասխան տալու։

— Ահա՛, գեղեցիկ վարդապետութիւն ըսուածը ա՛ս է, շարունակեց Սթարք։ Այսպէս, գեղին կէսը միացեր է Հէլկումին, որուն ազդեցութիւնը մարդ չ'է ունեցեր հոս, ոչ ալ մինչև անգամ Մեծ Ինկմարը։ Անիկա զաւակները կը բաժնէ իրենց ծնողքէն, որովհետև իրեն հետևողները մնալու չեն եղեր մեղաւորներուն մէջ։ Իր մէկ նշանին վրայ՝ եղբայրը կը բաժնուի իր եղբօրմէն, բարեկամը՝ իր բարեկամէն և նշանածը՝ իր նշանածէն։ Անիկա ուժ ունեցաւ այս ձմեռ գժտութիւն ձգելու ամէն տան մէջ։ Օ՛հ, այո՛, Մեծ Ինկմար գոհ պիտի ըլլար այս բոլոր բաները տեսնելո՛վ. և թերևս պիտի քաջալերէ՛ր ալ զանոնք. օ՛հ, մազի չափ անգամ կասկած չի կա՛յ։

Ինկմար աչքերը իր շուրջը կը պտտցնէր՝ կարծես փախելու տեղ մը փնտռելով։ Կը զգար որ Սթա՛րք կը չափազանցէր, բայց և այնպէս իր ներքին գոհունակութիւնն ալ պղտորած էր։

— Չ'եմ ուրանար թէ, շարունակեց ծերունին, Հէլկում հրաշալի բաներ ալ կ'ընէ. ինք էր որ յաջողեցաւ իրարու հետ հաշտեցնել այնպիսի մարդիկ, որոնք դեռ երէկ իրարու երես անգամ տեսնել չ'էին ուզեր։ Կ'առնէ հարուստէն ու կուտայ աղքատին, մարդոց՝ իրարու վրայ փոխադարձ հսկողութիւն կատարել կուտայ, առանց անպատեհութիւն առաջ բերելու։ Միայն թէ իմ գանգատս անոնց համար է՝ որ հաւատակից չ'են իրենց և որոնք սատանայի

զաւակ կ՚անուանեն…։ Բայց, գուցէ դուն այդպէս չես խորհիր…։ Ատենօք, Մեծ Ինկմարին օրով, հոս ամէնքը այնքան սիրով կ՚ապրէին իրարու հետ որ մեր ժողովուրդը կը համարուէր Տալէքարլիի ամենէն խաղաղասէրն ու ամենէն սիրելին։ Այսօր, հրեշտակ՝ սատանայի դէմ, ոչխար՝ այծի դէ՛մ։

— Ա՜խ, ո՜րքան կ՚ուզէի որ աշխատութեան ժամն ըլլար, կը մտածէր Ինկմար՝ համբերանքն հատած. ինչպէ՜ս ազատելու է այս խօսակցութենէն»։

Եւ, շարունակեց Սթարք, թերեւս շատ ատեն չ՚անցած՝ ամէն կապ ու յարաբերութիւն պիտի դադրի իմ ու քու մէջ ալ։ Եթէ իրենց կողմն անցնիս, անոնք թող պիտի չ՚տան որ ինծի գաս երեւաս։

Ինկմար ոտքի ելաւ՝ յիշոց մը արձակելով։

— Այո՛, եթէ այդպէս շարունակես զառանցել, կրնայ ըլլալ որ պատահի ըսա՛ծդ, պոռաց Ինկմար։ Ինծի կուգայ թէ՝ գիտնալու էիր որ ինծի մարդ խաֆա չի կրնար բռնել իմ ընտանիքիս դէմ. գալով Հէլկումին, ան ալ պատուական եւ շատ կորիճ մարդ մըն է։

Այս խօսքերը լռել հարկադրեցին ծերունի վարձակալը՝ որ վայրկեան մը ոտքը ելաւ տեղէն ու գնաց։ Կ՚երթար ուանը, իր բարեկամներէն տասնապետ Ֆալթին տունը։

— Հազար տարի կայ որ, ըսաւ քթին տակէն, խելացի մէկու մը հետ չ՚եմ խօսած։

Միւս առտուն, երբ ժամը հինգին ատեններն Ինկմար սղոցարանը գնաց, Սթարք իրմէ առաջ արդէն հոն էր։

— Այսօր, ըսաւ Սթարք, պիտի կրնաս Հէլ-

կումը տեսնել։ Երէկ ուշ ատեն Աննա Լիզային հետ եկաւ։ Կարծեմ վազեր եկեր են իրենց մեծ հանդէսէն, որ քու հաւատափոխութիւնդ կատարեն։

— Է՜, ահա նորէն կը սկսի՜ս, ըսաւ Ինկմար։

Ծերունիին խօսքերը՝ գիշերը մինչեւ լոյս ականջէն անդին չ՚էին գացեր. եւ եթէ գլուխը կը ճաթեցնէր եւ չ՚էր կրնար վճռել թէ անոր ըսածները իրաւացի՞ են թէ անիրաւ, միւս կողմէն՝ չ՚էր ալ ուզեր երբեք որ իր առջեւ չարախօսէն իր ազգականներուն վրայ։

Սթարք լուռ մնաց վայրկեան մը, յետոյ սկսաւ խնդալ կամացուկ։

— Ինչո՞ւ կը խնդաս, հարցուց Ինկմար՝ ջաղացքին դուռը վերցնելու վրայ։

— Կը խնդամ վարժապետենց Կէրթրուտին վրայ։

— Կէրթրուտի՞ն վրայ. պատճառն ի՞նչ է։

Պատճառն այն է որ գեղին մէջ կըսեն թէ ա՛ն միայն ազդեցութիւն ունի Հէլկումին վրայ։

— Կէրթրուտ ի՞նչ գործ ունի Հէլկումին հետ որ։

Երիտասարդը չէր վերցներ ջաղացքին դուռը, որովհետեւ, անգամ մը որ սղոցը բանիլ սկսէր, ա՛լ իրարու խօսք չ՚էր լսուեր։

— Բայց, գիտցածս, պատասխանեց Սթարք՝ Իկնմարին նայելով աչքին պոչովը, արգիլեր էիր ինծի որ այդպիսի բաներու վրայ խօսիմ։

Ինկմար թեթեւ մը ժպտեցաւ։

— Օ՜, ըսաւ ան, դուն շատ լաւ կրնաս բա-

նը այնպէս մը ընել՝ որ նպատակիդ հասնիս:

— Է՛ ուրեմն, կիւնհիլտին, քէհեային աղջըկան երեսէն է, այդ յիմար աղջկա՛ն...

— Բայց յիմար աղջիկ չէ ան, ընդմիջեց Ինկմար:

— Ի՛նչ կ'ուզես՝ ան ըսէ, յիմար թէ խելօք, եղածն ա՛ն է որ անիկա Ինկմարսկարտ կը գտնուէր, երբ անոնք հիմնեցին իրենց աղանդը: Աղջիկը տուն դառնալով՝ իր ծնողքին յայտնեց թէ՝ միակ ճշմարիտ կրօնքն ընդունած ըլլալով, պիտի երթար՝ Հալֆորին քով պիտի բնակէր: Իր ծնողքը պատճառն հարցուցին, որուն պատասխանեց թէ՝ արդար կեանք մը վարելու համար: Իրեն ըսին թէ՝ տանը մէջ ալ կրնար արդար կեանք վարել: Բայց անբանը պնդեց թէ անկարելի է, քանի որ իրենք ալ միևնոյն հաւատքը չ'էին ընդունած: «Ըսել է՝ բոլոր անոնք որ քու հաւատքիդ կը պատկանին՝ պիտի երթան Ինկմարսկա՞րտ պիտի բնակին» հարցուց քէհեան: Ո՛չ, մինակ ես պիտի երթամ, որովհետև, միւսները բարեբախտաբար արդէն կ'ապրէին քրիստոնեաներու հետ միասին: Քէհեան ու իր կնիկը, երկու պատուական մարդիկ, աշխատեցան անուշութեամբ զ'ինքը համոզել: Բայց աղջիկը յամառեցաւ և իր ընդդիմութիւնը այնքան բարկութիւն շարժեց իր հօրը՝ որ զ'ինք բանտարկեց իր սենեակին մէջ...

— Բայց խօսքդ կէրթրուտին վրա՛յ էր հապա, պոռաց Ինկմար:

— Համբերէ՛ անոր կուգամ... միւս օրը՝ երբ կէրթրուտ ու Սթինա մայրիկ բուրդ կը մանէին իրենց խոհանոցին մէջ, ներս մտաւ քէհեային կնիկը, և ինք որ ընդհանրապէս այնքան զուարթերես էր, այդ օրը մեռելի պէս տխուր էր.—«ինչո՞ւ մալուլ ես» հարցուց Սթինա մայրիկ:—Ինչպէ՞ս մարդ մալուլ չ'ըլլայ, երբ իրեն ամենէն սիրելի բանը կը կորսնցնէ»: Ա՛խ, եթէ ձեռքէս գար ու ծեծէի զանո՛նք..

— Որո՞նք.

— Հէլկումն և Աննա Լիզան, ո՞վ...կը հաւտա՞ս, Ինկմա՛ր, անոնք գիշերանց գացեր են քէհեային տունը և փախցուցեր են կիւնհիլտը:

Ինկմար բացագանչութիւն մը արձակեց:

— Ճշմարի՛տ կ'ըսեմ որ աղջիկս աւազակի մը հետ ամուսնացե՛ր է, պոռաց ծերունին: Կէս գիշերին՝ անոնք ծեծեցին պզտիկ սենեակին պատուհանը և հարցուցին կիւնհիլտին թէ ինչո՞ւ Ինկմարսկարտ չ'էր եկեր: Աղջիկը անոնց պատմեց թէ հայրը բանտարկեր էր զինք. այն ատեն Հէլկում յայտնեց թէ սատանան է որ իր հօրը այդպէս ընել տուած է: Ծնողքը լսեր են այս բոլորը...

— Լսե՞ր են:

— Այո՛, միւս սենեակէն, իրենց անկողնին մէջէն լսեր են Հէլկումին բոլոր ըսածները:

— Հապա ինչո՞ւ չ'են վռնտեր զանոնք:

— Չեն վռնտեր, որովհետև կուզէին որ կիւնհիլտ ինք իր կամքովը հնազանդի: Ծերունի ծնողները, որ միշտ բարի ու գորովալի եղեր են, իրենց մտքէն չ'էին անցներ որ աղջիկնին կը փախի. կը սպասէին իրենց անկողնին մէջ, համոզուած թէ կի նհիլտ պիտի մերժէր և պիտի չ'երթար:

— Ըսել է գնա՞ց:

— Այո՛, Հէլկում կը պնդէր. և երբ ծնողները հասկցան որ աղջիկը ա'լ ուժ չ'ունէր դի—

մադրելու՝ թող տունին որ երթայ։ Մարդիկ կան որ այսպէս են...։ Բայց միւս օրը, մայրը զըղջաց եւ վազեց վարժապետին տունը ու խնդրեց Կէրթրուտէն որ համոզէ Կիւնհիլտը. որովհետեւ ;քէհեան յայտարարած էր թէ պիտի չ'փնտռէ իր զաւակը եւ անոր երեսը պիտի չ'տեսնէ՝ մինչեւ որ ինք իր յօժար կամքով տուն չ'դառնայ։

— Է՛, Կէրթրուտ ի՞նչ ըրաւ։

— Գնաց գտաւ Կիւնհիլտը, բայց անիկա խուլ մնաց.

Եւ երբ Կէրթրուտ դուրս կ'ելլէր, հանդիպեցաւ Հէլկումին, դժբախտութեան պատճառին։ Գնաց ուղիղ անոր քով եւ սկսաւ վիճիլ անոր հետ ու քիչ մնաց որ ծեծէ զ'այն։

— Այո՛, լաւ խօսիլ գիտէ Կէրթրուտ, ըսաւ Ինկմար սքանչացումով.

— Անիկա Հէլկումին ըսաւ թէ՝ իր վարմունքը կը նմանէր հեթանոս ռազմիկի մը եւ ոչ թէ քրիստոնէութիւն սորվեցնող ուսուցչի մը, քանի որ գիշերանց եկեր, այսպէս իր տունէն առեւանգած էր դեռահաս աղջիկ մը։

— Է՛, ատոր ի՞նչ պատասխանեց Հէլկում։

— Վայրկեան մը մտիկ ըրաւ, յետոյ խոստովանեցաւ թէ Կէրթրուտ իրաւունք ունէր՝ ցասկոտութիւնը դէչ խորհրդատու էր եղեր իրեն։ Եւ կէսօրէն ետք՝ Հէլկում աղջիկը տարաւ իր ծնողքին տունը։

— Կէրթրուտ կտրիճ է, ըսաւ Ինկմար ժպտելով. իրա՛ւ, Հէլկում ալ թէեւ քիչ մը ցասկոտ է, բայց պատուական մարդ է։

— Օ՛հ, ըսել է բանն այսպէս կը հասկնաս դո՛ւն, վրայ բերաւ Սթարք։ Ես կը կարծէի թէ Հէլկումին ցոյց տուած այդքան ակնածու-

թիւնը Կէրթրուտին նկատմամբ, գէթ քեզի զարմանք պիտի պատճառէր։

Մնացին լուռ՝ թէ մէկը, թէ միւսը, յետոյ Սթարք շարունակեց.

— Գեղացիներէն շատերը տեղեկութիւն կը հարցնեն քու մասիդ. կը փափաքին գիտնալ թէ ո՞ր կողմը պիտի անցնիս։

— Կարծեմ թէ կարեւորութիւն ունեցող բան մը չ'է իմ ո՛ր կողմ անցնիլս։

— Կը տեսնե՞ս, այս գեղին մէջ մենք կ'ուզենք որ մէկը կառավարէ եւ վարէ մեզ։ Մեծ Ինկմարը չ'ի կայ այլեւս. վարժապետը կորսնցուցեր է իր ազդեցութիւնը, իսկ երէցն ալ արդէն երբեք ազդեցութիւն չէ ունեցած։ Ահա թէ ինչո՛ւ որքան ատեն որ չեզոք մնաս այսպէս, մարդիկ պիտի երթան Հէլկումին ետեւէն։

Ինկմար ձեռքերը վար կախեց՝ պարտասած ձեւով մը։

— Բայց, քանի որ չեմ գիտեր թէ ո՛րն է իրաւացին։

— Ամէնքը կը սպասեն որ մեզ ազատես Հէլկումէն։ Վստահ եղիր որ ձմեռը անտառ-անցնելով՝ շատ մը ձանձրոյթէ ազատ մնաց գըլուխնիս։ Այն օրէն որ նոր աղանդին չ'պատկանողներուն սկսեր են դեւ ու դժոխքի շուն պոռալ, կեանքը անտանելի դարձած է հոս։ Երեւակայէ՛ անգամ մը որ մանուկները անգամ քարոզ տալ սկսեր են եւ ուզեր են մինչեւ իսկ քարոզել Սթորմին։

— Կարելի՛ բան չ'է։

— Հա՛ կ'ըսեմ. նոյնիսկ անոնցմէ քսան հո-

դի, իրկուն մը, դպրոց կ'երթան՝ նոր հաւատքին դարձնելու Աթօրմը որ գլաղած էր իր գիրը գրելով։

Ինկմար չկրցաւ իր խնդուքը զսպել։

— Խեղճ Աթօրմը այն աստիճան բերանբաց էր մնացեր՝ որ չ'էր գիտեր թէ ի՛նչ ընէ ու ի՛նչ ըսէ անոնց։ Բարեբախտաբար, այդ ատեն Հէյկում կը գտնուէր խոհանոցը։ Կէրթրուտին քով...

— Հէյկումը Կէրթրուտին քո՞վ։

— Այո՛, կխնճիլտին խնդիրէն ի վեր, անոնք լաւ բարեկամներ են դարձեր մէկմէկու... Եւ Հէյկումն է որ կը վռնտէ այդ մանուկները, որովհետեւ հասկցեր էր վերջապէս որ շատ ծիծաղելի բան էր եղածը։

Ինկմար դիտեց որ Աթարք իրեն կը նայի այն տարօրինակ աչքով՝ ինչ աչքով որ որսորդ մը ինկած արջի մը կը նայի, ստոյգ չ'ըլլալով թէ արդեօք անիկա վերջին հարուած մըն ալ պիտի կրնայ տա՞լ թէ չէ իրեն։

— Ի՞նչ է սպասելիքդ ինծմէ, մրմնջեց երիտասարդը։

— Ի՞նչ պիտի սպասեմ որ. լակոտին մէկն ես դուն և երկու դատարկ ձեռքերէդ զատ՝ բան մըն ալ չ'ունիս վրադ։

— Մեղա՛յ իմ Աստուծոս, ի՛նչ, ըսել կ'ուզես որ խեղդե՞մ Հէյկումը։

— Չէ՛, բայց կրնայիր հարկադրել զ'ինք որ ձգէ հեռանայ ասկէ. ասով ցոյց պիտի տայիր մարդոց թէ բան մը կ'արժես դուն։

Ինկմար երեսը անդին դարձուց ծերունի վարձակալէն, և սրոցը շարժման մէջ դը-

րաւ։ Բերանը կը քերուէր որ անդադար հարցուփորձ ընէ Կէրթրուտին վրայ և հասկնայ թէ արդեօք ան ալ միացե՞ր է Հէյկումին։ Բայց, այնքան հպարտ էր որ՝ չ'էր ուզեր իր յուզումը յայտնի ընել տալ։

Ժամը ութին, Ինկմար դարձաւ ագարակը՝ նախաճաշ ընելու և, սովորականին պէս, սեղանին վրայ գտաւ լաւ ուտելիքներ՝ որ կը վերապահէին իրեն համար։ Երբ վերստին տեսաւ Հալֆօրն ու Բարինը, անոնց քաղցրութիւնն ու ժպիտը իրեն անճշմարտանման երեւցուցին Աթարքին խօսքերը, և իր հոգին թեթեւցաւ։ Բայց շուտով Կէրթրուտին միտքը այն աստիճան խեղդեց զինքը՝ որ չ'էր կրնար կերակուրն ուտել։

— Երկա՞ր ատեն է որ վարժապետենց չ'ես գացեր, Բարի՛ն, յանկարծ հարցուց Ինկմար։

— Այո՛, պատասխանեց Բարին՝ առանց վարանելու. չ'եմ ուզեր ամբարիշտ մարդոց տունն երթալ-գալ։

Այս պատասխանը մտմտալ տուաւ իրեն։ Լռէ՞ր թէ խօսէր։ Խօսիլը՝ նշանակէր թերեւս կռիւի բռնուիլ իր ընտանիքին հետ. բայց լռելն ալ այնպէս կարծել պիտի տար թէ՝ ինք ալ համամիտ է բանի մը՝ որ գէշ կը համարէր։

— Ես ամենափոքր ամբարշտութիւն մը անգամ չ'եմ տեսեր վարժապետենց տունը, պատասխանեց երիտասարդը, ես որ՝ չորս տարի ապրեցայ հոն։

Բարին, ինք ալ, Ինկմարի պէս վարանեցաւ որ խօսի՞ թէ լռէ. բայց, աչք առնելով

նոյնիսկ վիրաւորել իր եղբայրը, նախամեծար սեպեց ըսել ճշմարտութիւնը. ուստի, պատասխանեց թէ քանի որ անոնք չ'էին ուզեր լսել Աստծոյ կոչը, իրաւացի է որ մարդիկ զանոնք ամբարիշտ համարէին:

— Մանուկներու դաստիարակութիւնը, միջամտեց Հալֆոր, շատ կարեւորութիւն ունեցող բան է:

— Սթորմ կրթեր է ամբողջ գեղը, ինչպէս նաև քեզ, Հալֆօ՛ր, պատասխան տուաւ Ինկմար:

— Բայց, անիկա մեզի երբեք չի սորվեցուց արդար կեանք վարել, ըսաւ Բարին:

— Կարծեմ թէ, Բարի՛ն, դուն միշտ աշխատած ես արդար կեանքը վարել:

— Մտի՛կ ըրէ, Ինկմա՛ր. ապրիլ հին հաւատքին համաձայն՝ կը նշանակէ ծառի կլոր կոճղի մը վրայ քալել. մարդ րոպէ մը կրնայ ոտքի վրայ կենալ, բայց վայրկեան մը ետքը կ'իյնայ: Իսկ եթէ իմ նմաններս ձեռքէս բռնեն՝ ես կրնամ, առանց սահելու և իյնալու՝ հետեւիլ արդարութեան նեղ ճամբուն:

— Այն ատեն այդ ճամբուն մէջ արժանիք մը չ'ըլլա՛ր:

— Դժուար է անիկա միշտ, բայց անկարելի չ'է:

— Ինչ որ է. բայց ի՞նչ ցաւ ունիս վարժապետին դէմ:

— Անոնք որ մեզի հաւատակից են՝ իրենց տղաքը հանեցին անոր քովէն:

— Է՛, վարժապե՞տն ի՛նչ ըրաւ:

— Օրէնքին համաձայն, գիւղական պահակը խրկեց տղաքն ուզելու:

— Ըսել է, ատոր վրայ հիմա աւրուած էք հետը:

— Մենք կը զբաղինք միայն մեր եղբայրներովը:

— Իսկ ձեզի եղբայր չ'եղողները թշնամի կը նկատէք, այնպէս չէ՞:

— Մենք հեռու կը մնանք այն մարդէն՝ որ մեզ մեղքի մէջ կը ձգէ:

Խօսակցութիւնը որքան որ կ'երկարէր, անոնք այնքան կը ցածցնէին իրենց ձայները: Ամէն բառ, ամէն համր մրմունջ իրենց բերնին մէջ՝ կ'աւելցնէր իրենց անձկութիւնը:

— Բայց ես կրնամ ողջունել քեզ Կէրթրուտի կողմէ, աւելցուց Բարին՝ ձայնով մը որ բռնազբօսիկ կերպով զուարթ էր: Հէլկում անոր հետ այս ձմեռ շատ խօսեցաւ, և այս իրկուն, մեզի ըսաւ թէ՝ թերևս քիչ ատենէն նոր քոյր մըն ալ պիտի ունենանք:

Դողդղաց Ինկմարին շրթունքը: Առաւօտն ամբողջ՝ սպասած էր մահացու հարուածին և ահա գնդակը կը ժանէր իր մարմինը:

— Ա՜հ, մրմնջեց ան՝ գրեթէ աննշմարելի ձայնով մը. ա՜հ, նոր քոյր մը պիտի ունենանք... որքա՜ն բաներ տեղի ունեցած են այստեղ, այն օրէն ի վեր որ ես վերը, անտառին մէջ եմ եղեր:

Այսպէս ուրեմն, Հէլկում ինկեր էր Կէրթըրուտին ետևէն և անոր ալ որոգայթներ լարեր էր:

— Ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս հիմա, վըրայ բերաւ յանկարծ Ինկմար՝ կորսուած ման-

կան մը յուսահատական շեշտովը։

— Դուն ալ պիտի մնաս մեզի, ըսաւ աշխուժով Հալֆոր։ Հելկում վերադարձեր է, և երբ երկուքդ խօսիք անգամ մը իրարու հետ՝ շուտով դուն ալ պիտի ընդունիս մեր հաւատքը։

— Կրնայ ըլլալ որ չ'ուզեմ հաւատքս փոխել, ըսաւ Ինկմար՝ հեռացնէ աւելի խուլ ձայնով մը։

Հալֆոր և Քարին անխօս մնացին մեռելներու պէս։

— Կրնայ ըլլալ որ չ'ուզեմ հայրիկին հաւատքէն զատ ուրիշ հաւատք ընդունիլ, կրկնեց Ինկմար։

— Այդպիսի բան մը մի՛ ըսեր, քանի դեռ Հելկումին հետ չ'ես խօսակցեր, ըսաւ Քարին։

— Բայց վերջապէս, ձեր կողմը պիտի չ'անցնիմ։ Այն ատեն պիտի չ'ո՛ւզէք թերևս որ ձեր տանը մէջ բնակիմ, շարունակեց ան՝ ոտքի ելլելով և անդին հրելով իր աթոռը։

Որովհետև կը յամենար անոնց պատասխանը, երիտասարդը զգաց թէ տեսակ մը քայքայում տեղի կ'ունենար իր մէջ ու իր շուրջը՝ բայց, չխակուեցաւ աւելի քաջասիրտ երևոյթով մը։

«Քանի որ դեռ հոս եմ, մտածեց, լաւ է որ ամէն բան պարզուի»։

— Կ'ուզեմ իմանալ թէ, ըսաւ ան, ի՞նչ է հապա ձեր դիտաւորութիւնը սղոցարանին նկատմամբ։

Հալֆոր ու Քարին իրարու երես նայեցան, քաշուելով պատասխան տալէ։

— Լա՛ւ յիշէ որ, ըսաւ Հալֆոր, աշխարհիս մէջ քեզի չափ սիրելի մէկը չ'ունինք մենք։

— Այո՛, բայց ի՞նչ է ձեր դիտաւորութիւնը սղոցարանին նկատմամբ։

—Նախ սղոցելու եկիր քու փայտերդ, Ինկմա՛ր։

Այս խուսափուկ բառերը կայծակի մը նմանեցան։

— Թերևս Հելկո՞ւմ վարձու պիտի բռնէ սղոցարանը, բացագանչեց։

Իր այս ուժգնութիւնը չփոթեցուց իր փեսան ու քոյրը․ այն րոպէէն որ արտասանուեր էր Կէրթրուտի անունը, ամէն համաձայնութիւն անկարելի կ'երևնար։

— Թող որ Հելկում անգամ մը խօսի հետդ, ըսաւ Քարին։

— Թող խօսի, բայց կ'ուզեմ գիտնալ թէ ի՛նչ բանի համար հոս կը վերադառնայ։

— Դուն լաւ գիտես որ՝ մենք քու բարիքդ կ'ուզենք, այնպէս չէ՞։

— Շա՛տ լաւ, բայց Հելկում պիտի վարձէ սղոցարանը, չէ՞։

— Այնպիսի աշխատութիւն մը կը փնտռենք Հելկումին համար, որ անոր յարմար ըլլայ և կարողանայ մնալ հոս։ Կը մտածէինք որ՝ եթէ մեր հաւատքը ընդունիս, կրնաք երկուքդ ընկեր ըլլալ մէկմէկու, որովհետև Հելկում չարքաշ աշխատող մըն է։

— Երբէ՞ն ի վեր է որ, Հալֆօ՛ր, կը վախնաս խօսքդ շիտակ ըսել․ քեզի մէկ բան կը հարցնեմ ես․ Հելկում վարձու պիտի ա՞ռնէ սղոցարանը թէ ոչ։

— Այո՛, պիտի առնէ, եթէ դիմադրես դուն Աստծոյ։

— Շնորհակալ եմ, Հա՛լֆոր։ Հիմա կը հասկընամ թէ շահս ինչ պիտի ըլլայ՝ եթէ ձեր հա-

ւաքն ընդունիմ, և վնաս ինչ պիտի ըլլայ եթէ բնաւ չ'հետևիմ ձեզի.—պիտի կորսնցնեմ Կէրթրուտը, սղոցարանը և մեր հին տունը:

Կռնակը դարձուց և դուրս ելաւ սենեակէն:

Բակին մէջ երիտասարդը մտածեց՝ «վերջացնե՛նք խնդիրը», և խոշոր քայլերով ուղղուեցաւ դպրոցին կողմը:

Երբ բացաւ Սթորմենց դուռը, անձրև մը կը թօնար, գարնանային ճշմարիտ գաղջ ու բարակ անձրև մը: Պարտէզն ամբողջ պտկեր էր ու կը ծաղկէր, և հողը այնպիսի յանկարծական կանաչով մը ծածկուած էր՝ որ մարդ կը կարծէր թէ խոտերը բուսեր են: Վերնագաւիթակէն Կէրթրուտ կը դիտէր անձրևը և երկու բարձր վայրի կեռասենիներ՝ որոնց տերևները բացուեր էին արդէն, իրենց ճիւղերը կը տարածէին անոր գլխուն վրայ:

Ինկմար վայրկեան մը կանգ առաւ երկաթէ ցանկորմին առջև՝ զարմացա՛ծ այս սխրալի և թարմ խաղաղութենէն: Իր յուզումը կը հանդարտէր: Գոցեց դուռը՝ առանց աղմուկի, և գնաց դէպի Կէրթրուտը՝ որ չ'էր տեսեր տակաւին զինք: Բայց երբ մօտեցաւ անոր, կանգ առաւ և բռնեց իր շունչը. զ'այն ձգած էր պատանի և ահա տասներկու ամիս ետքը կը գտնէր նրբահասակ, ճկուն ու հպարտ աղջիկ մը: Մազերը սև, վիզը նուրբ, դէմքը աղուամազ փետուրի սպիտակութեամբ՝ վառ և առողջ կարմիրով մը կը գունաւորուէր այտերուն վրայ: Իր աչքերն ունէին աւելի խոր նայուածք մը՝ տարտամ նուաղկոտութեամբ մը բեռնաւոր և իր լուսաճաճանչ զուարթութիւնը փոխուած էր

քնքուշ պայծառութեան մը: Այս կերպարանափոխութեան առջև, հանդիսաւոր հանդարտութիւն մը իջաւ Ինկմարի մէջ՝ մեծ տօնի օրերու առաւօտեան նման, և այնքան գեղեցիկ էր ինչ որ կը զգար ինք՝ որ կուզէր ծնրադրել և շնորհակալութիւն յայտնել Աստծոյ:

Երբ Կէրթրուտ նշմարեց զ'ինք, իր ամբողջ անձը փայտ կտրեցաւ և փոքր կնճիռ մը փորուեցաւ իր յօնքերուն մէջտեղ: Այդ օրը Ինկմարի մտածումները սովորականէն աւելի արագ կը յաջորդէին մէկմէկու: Գուշակեց թէ Կէրթրուտ ուրախ չ'էր եղած՝ զ'ինքը տեսնելով, ուստի սեղմուեցաւ իր սիրտը: «Հա՛, կը տեսնեմ որ ձեռք ձգեր են քեզ», ըսաւ ինքնիրեն: Եւ նորէն անձկութեամբ համակուած, յանկարծ հարցուց աղջկան որ՝ այո՞ թէ ոչ, պիտի միանա՞ր Հէլկումին ու Հէլկումեաններուն թէ չ'է: Կէրթրուտ պատասխանեց թէ՝ այո՛:

—Լաւ մը խորհե՞ր ես թէ Հէլկումեանները թող պիտի չ'տան որ տեսնուիս իրենց հաւատակից չ'եղողներուն հետ:

Կէրթրուտ մեղմիկ պատասխանեց թէ խորհած էր.

-- Հայրդ ու մայրդ հաճութիւն ունի՞ն:

-- Դեռ բան մը չ'են գիտեր անոնք:

— Բայց, Կէրթրո՛ւտ...

— Լռէ՛, Ինկմա՛ր, պէտք է որ այդպէս վարուիմ՝ իմ հոգուս խաղաղութեանն համար: Աստուա՛ծ կը ստիպէ զիս:

— Ո՛չ, Աստուած չ'է, ըսաւ Ինկմար այլ...

Բայց աղջիկը այնպիսի ուժգին շարժումով մը իրեն նայեցաւ, որ Ինկմար ընդմիջեց իր ը-

սեւլիքը և աւելցուց միայն.

— Եկած եմ քեզի ըսելու թէ ես երբեք պիտի չ'միանամ Հէլկումեաններուն և եթէ դուն անոնց կողմն անցնիս, մենք պիտի բաժնուինք իրարմէ ընդմիշտ։

Կէրթրուտ այնպիսի երեւոյթ մը առաւ թէ չ'էր հասկնար որ այդ սպառնալիքը ի՛նչ տեսակէտով կ'ուղղուէր իրեն։

— Կ'աղաչեմ, յարեց Ինկմար, մի՛ ըներ այդ բանը՛։

— Մի՛ խորհիր թէ թեթեւօրէն կը վարուիմ, Ինկմա՛ր. շա՛տ երկար խորհած եմ։

— Վնաս չ'ունի, անգամ մըն ալ խորհի՛ր։

Կէրթրուտ երեսը անդին դարձուց անհամբերութեամբ։

— Մտածէ՛ նոյնիսկ Հէլկումին շահուն համար, պոռաց երիտասարդը՝ որուն բարկութիւնը կը շատնար։

Եւ բռնեց աղջկան ձեռքէն. բայց աղջիկը ինքզինք ազատեց անկէ։

— Դուն քեզ կորսնցուցած ես, Ինկմա՛ր։

— Այո՛, պիտի կորսնցնեմ խելքս այն ամէնուն երեսէն՝ որ կ'ընէ հոս Հէլկո՛ւմ։ Բայց՝ պէտք է որ ասոնք ամէնը վերջ մը գտնե՛ն։

— Ի՞նչ բանն է որ վերջ գտնելու է։

— Ուրիշ օր մը կ'ըսեմ թէ ի՛նչ բանն է։

Կէրթրուտ ուսերը թօթուեց։

— Կեցի՛ր բա՛րով, Կէրթրո՛ւտ, ըսաւ Ինկմար, և լաւ յիշէ թէ երբեք պիտի չ'կրնաս մտնել Հէլկումեաններուն մէջ։

— Միթէ ի՞նչ ես դրեր, Ինկմա՛ր, հարցուց աղջիկը՝ որ կը պաշարուէր խռովքով։

— Կեցի՛ր բարով, կեցի՛ր բարով. բայց լաւ մտածէ ըսածիս վրա՛յ։

Ինկմար կը հեռանար արդէն աւազուտ ծառուղիէն և բռնած էր ագարակին ճամբան։ «Եթէ ես ալ հայրիկին չափ խելացի ըլլայի, կ'ըսէր ինքնիրեն, եթէ ես ալ Մեծ Ինկմարին իշխանութիւնն ունենայի, ինչպէ՞ս պիտի վարուէի։ Ահա կորսնցնելու վրայ եմ բոլոր սիրածներս և ելք մը չ'եմ տեսներ...»։ Բայց այն պարագային որ այդ դժբախտութիւնը դար իր գլխուն՝ վստահ էր թէ սուզի պիտի նստէր անիկա Հէլկումին։ Եւ Հէլկումին հանդիպելու գաղափարը գինքը տարաւ Սթարքին տունը։

Երբ դռան առջև հասաւ, բարկաճայթ ձայներու աղմուկ մը եկաւ ականջին. և այն պահուն որ ճամբէն ետ պիտի դառնար՝ սա բառերը լսեց. «Մենք երեք եղբայր ենք և այսքան հեռու տեղէ եկած ենք քեզմէ հաշիւ ուզելու, Եօա՛ն Հէլկո՛ւմ, մեր փոքր եղբօրը մասին՝ որ Ամերիկա գնաց և մտաւ քու միաբանութեանդ մէջ, խենդ դարձած քու քարոզներէդ...»։

Ինկմար ետ դարձաւ արտորանքով։ Ուրիշներ ալ ուրեմն իրեն պէս՝ գանգատի էին եկեր Հէլկումին, այդ վիշտ սերմանողին քով։ Իջաւ սղոցարանը. բայց, այն պահուն որ սղոցը կը ճռնչէր և հեղեղը կը մռնչէր, ճիչ մը պատռեց օդը։ Երիտասարդը ուշադրութիւն չի դարձուց ամբողջովին գրաւուած ըլլալով այն բուռն ատելութեամբ որ զ'ինք կը գրգռէր Հէլկումին դէմ։ Իրեն այնպէս եկաւ թէ երկրորդ ճիչ մըն ալ ականջին դպաւ և ենթադրեց թէ առաքեալն

ու օտարականները իրենց բանակէնը կռփամարտի՝ դարձուցեր էին: «Ա՜խ, շատ աղէկ բան պիտի ըլլար՝ եթէ օտարականները ծեծի տակ սատկըցնէին զինք» մտածեց Ինկմար: Երրորդ ճիչ, մը, վտանգի ենթարկուած մարդու մը ճիչը լսելի եղաւ իր գլխուն վերև, և երիտասարդը սկսաւ մագլցիլ հեղեղն ի վեր աճապարանքով:

Որքան որ կը մօտենար՝ այնքան աւելի յըստակ կը լսէր Հէլկումի յուսահատական կոչերը. և երբ հասաւ տանը սեմին, կարծես գետինն անգամ կը դողար մէկմէկու տրուած հարուածներէն: Ինկմար ամեն ատեն ունէ դուռ կը բանար զգուշաւոր ծանրութեամբ մը. բայց այս անգամ շատ աւելի կամացուկ բացաւ զայն և սողոսկեցաւ տանը մէջ՝ երկչոտ և ցախաւել կերպով մը:

Հէլկում, կարճ կացին մը բռնած ձեռքը, կռնակը տուած էր պատին. երեք օտարականները, երեք ամրակազմ տղամարդիկ, ձեռքերնին մէկ մէկ փայտի կոճղ՝ որ կը ճօճէին լախտերու պէս, պաշարեր էին զայն և գրոհ կուտային անոր վրայ: Անոնք ուրիշ զէնք չ'ունէին իրենց քով, որովհետև եկեր էին լաւ ծեծ մը միայն քաշելու համար Հէլկումին. բայց այն վայրկեանին որ Հէլկում կացինը քաշեց, անոնք բռնուեցան արեան ծարաւէ, և հիմա մահուան կամ կեանքի խաղ մըն էր որ տեղի կ'ունենար՝

Անոնք հազիւ ակնարկ մը ձգեցին Ինկմարի, բռնադատ շարժուձևերով այս խոշոր տղուն վրայ. իսկ Ինկմար ալ այս տեսարանին վրայ կը նայէր բաներու պէս՝ որոնց շատ կը փափաքի մարդ և որ յանկարծ կ'երևնան երազի մէջ: Ատեն ատեն Հէլկում սուր ճիչ մը կ'արձակէր՝

«Անշուշտ չ'ես խորհիր որ քեզի օգնութեան հասնելու չափ անմախ կ'ըլլամ», կը մրմնջէր Ինկմար: Նոյն վայրկեանին, օտարականներէն մէկը յաջողեցաւ այնպիսի ծանր հարուած մը իջեցնել Հէլկումի գլխուն, որ Հէլկում ձգեց կացինը ձեռքէն և կքեցաւ: Այն ատեն, միւսները ձգեցին իրենց կոճղերը և քաշեցին իրենց դանակները:

Մտածում մը ճեղքեց անցաւ Ինկմարին ուղեղէն. հին առած մը կ'ըսէր թէ իր դերդաստանին բոլոր մարդիկը իրենց կեանքին մէջ անպատճառ կա՛մ անշահութիւն մը, կա՛մ փոքր ցածութիւն մը գործելու էին: Կարգը այսօր իրե՞ն եկած էր արդեօք: Յանկարծ, յարձակողներէն մէկը տեսաւ որ՝ ձեռք մը բռնեց զինք ետևէն, վեր վերցուց և դուրս նետեց տունէն: Միւսն ալ դեռ ատեն չ'ունեցած ետին դառնալու, նոյն վիճակին ենթարկուեցաւ. իսկ երրորդը՝ որ Հէլկումին վրայ ծռեր էր, չիտկուեցաւ թէ չէ՝ մէկ հարուածով ինք ալ ինքզինք գտաւ իր ընկերներուն քով:

— Է՛հ, անոնց պոռաց Ինկմար խնդալով, խելքերնիդ պիտի չ'ժողվէ՞ք գլուխնիդ:

Ինկմար գրեթէ գոհ պիտի ըլլար որ յարձակում մը կրէր, որովհետև իր բոլոր ուժը գործածելու զգացումը կ'եռացնէր իր սիրտը:

Երեք եղբայրները դարձեալ յարձակումը պիտի շարունակէին, բայց իրենցմէ մէկը մարդ մը նշմարեց կածանին վրայ և փախուստի նշան տուաւ: Միայն թէ, փախելէ առաջ՝ ցատկեց Ինկմարին վրայ և դանակի հարուած մը իջեցուց անոր ծոծրակին:

— Ա՛ռ քեզի որ մեր գործին կը խառնուիս, պոռա՛ց անոր։

Եւ երբ Ինկմար կ'երերար ինք իր վրայ՝ միւսը փախաւ, բարձրաձայն ծիծաղով մը։

Քանի մը վայրկեան ետքը Քարին կը գտնէր Ինկմարը՝ նստած դրան սեմին մօտ, վիզին վրայ վէրքով մը, իսկ սենեակին մէջ ալ Հէլկումը, որ կրթնած էր պատին, արիւնլուայ դէմքով և ձեռքը դրած կացինին վրայ։ Քարին նշմարած չ'էր փախստականները, ուստի կարծեց որ եղբայրն է յարձակած Հէլկումին վրայ և զ'այն խոշտանգած։ Մայրական ոճիրին յիշատակը արթնցաւ յանկարծ իր մտքին մէջ և այս տեսարանին սոսկումը գրեթէ ուշաթափ ըրաւ զինք։

Վազեց Հէլկումին քով։

— Ո՛չ, ո՛չ, պոռաց Հէլկում. առաջ Ինկմարը՛։

— Մարդասպանը առաջ չ'են խնամեր իր ցոհէն, պատասխանեց Քարին խիստ կերպով։

— Առաջ Ինկմարը՛, առաջ Ինկմարը՛, կը պոռար Հէլկում՝ որ ոտքի էր ելեր և իր գըրգըռման մէջ՝ կացինը կը ճօճէր անոր առջև։ Ա՛ն է որ զարկաւ մարդասպաններուն և իմ կեանքս փրկե՛ց։

Երբ Քարին վերջապէս հասկցաւ տեղի ունեցածը, դարձաւ դէպի Ինկմարը, բայց երիտասարդը կ'երթար և արդէն անցած էր բակէն՝ իր դեդևուն քայլերովը։ Քարին վազեց անոր ետևէն՝

— Ինկմա՛ր, Ինկմա՛ր.

Ինկմար գլուխն անգամ ետ չի դարձուց՝ Քարին չուտով հասաւ անոր և բռնեց թևէն։

— Կեցի՛ր, Ինկմա՛ր, որ կապեմ վէրքդ։

Ինկմար քաշեց իր թևը անոր ձեռքէն և շարունակեց իր ճամբան։ Կոյրի մը պէս՝ կը քալէր չինուած ճամբէն դուրս։ Արիւնը՝ որ կը մղէր իր զգեստներէն, կը հոսէր իր մուճակներէն մէկուն մէջ և ամէն մէկ քայլին՝ դուրս կը վազէր։ Քարին կը հետևէր այս կարմիր հետքերուն՝ գալարելով ձեռքերը։

— Կեցի՛ր, Ինկմա՛ր, ո՞ւր կ'երթաս։

Ինկմար կ'երթար անտառին կողմը՝ ուր մէկը չի կար իրեն օգնութիւն հասցնող. և իր քոյրը կը քալէր անոր ետևէն, աչքերը միշտ սևեռած արիւնոտ մուճակին վրայ՝ որուն հետքերը երթալով աւելի կարմիր կը դառնային։

— Օրհնեա՛լ ըլլաս, Ինկմա՛ր, որ փրկեցիր Հէլկումը. տղամարդու քաջասրտութիւնն ու ուժը ունեցար դո՛ւն։

Բայց Ինկմար կը հեռանար՝ առանց մտիկ ընելու անոր։ Այն ատեն, Քարին կտրեց անոր առաջքը և փակեց անոր ճամբան։ Աչքերը խոնարհա՛ծ, Ինկմար հեռացաւ անկէ և մրմնջեց միայն.

— Գնա՛, Հէլկումը խնամէ։

— Կուզէի քեզի ըսել թէ, Ինկմա՛ր, ես ու ու Հալֆոր զղջացինք այս առտուան խօսքերուն վրայ և ճիշտ եկած էի Հէլկումին յայտնելու որ, հակառակ ամէնուն, սղոցարանը քու ձեռքդ պիտի մնայ։

— Տո՛ւր հիմա զ'այն Հէլկումին, պատասխանեց Ինկմար։

Եւ, սայթաքելով քարերուն ու ծառի կոճղերուն դէմ, կը քալէր և կը շարունակէր քալելը։

— Ներէ՛ ինծի, կ'ըսէր Քարին՝ կապուած

անոր քայլերուն, ներէ՛ ինծի՝ եթէ սխալեցայ և խորհեցայ թէ կռուած ես Հէլկումին հետ... ի՞նչ կրնայի գիտնալ:

— Կրնայիր գիտնալ իրօք թէ եղբայրդ մար-դասպան էր:

Իր ոտքերուն տակ կոխկրտուած խոտը՝ կը չխկուէր արփինով ոգեզցա՛ծ: Եւ Հէլկումի այդ անունը չարունակ վար չ'էր իյնար անոր շրթունքներէն՝ յիշեցուց Քարինի թէ որպիսի՜ ատելութիւն ունէր եղբայրը այդ մարդուն դէմ: Եւ Քարին զգաց Ինկմարի ըրածին ամբողջ գե-ղեցկութիւնը:

— Շատ մեծ գովասանքի ու պատիւի պիտի արժանանաս քու այսօրուան ըրածիդ համար: Պիտի չ'ուզէիր մեռնիլ՝ այսքան գեղեցիկ փառք մը չ'վայելած:

Ինկմար խնդաց՝ դառն խնդուքով մը և քը-րոջը նայեցաւ իր տժգոյն ու տակնուվրայ եղած դէմքովը:

— Գնա՛, գնա՛, գիտեմ թէ ո՛վ է քու խնա-մել փափա՛քածդ:

Իր երերուն քայլերը հիմա իրենց ետև կը թողէին շարունակական արեան գիծ մը: Եւ այս արիւնը՝ խելքը գլխէն կը տանէր Քարինին և սրտմտութեան կը մատնէր այն մեծ սէրը՝ զոր միշտ ունեցած էր իր եղբօրը համար: Բայց, իր վշտին խորէն, Քարին հպարտ էր իր եղբօրմով, նման ուժեղ ընձիւղի մը, որ կը բուսնի ազնիւ հին ծառի մը վրայ:

— Ինկմա՛ր, կեանքդ քեզի չի պատկանիր. դուն անոր հաշիւը պիտի տաս Աստծու և մար-դոց: Ինչ որ ձեռքէս կուգայ՝ կեանքը հաճելի ընելու համար քեզի, ըսէ որ ընեմ:

Ինկմար բռնեց ծառի մը բունը՝ չ'իյնալու համար և պատասխանեց թերահաւատ խնդու-քով մը.

— Կրնա՞ս ընդունիլ, օրինակի համար, որ Հէլկումի Ամերիկա երթայ:

Քարին՝ աչքերը խոնարհեցուցած արեան այն փոքր ճապաղիքին վրայ որ կը յայտնէր՝ Ինկմա-րի ձախ ոտքին շուրջ; կը ջանար պատկերացնել այն զոհողութիւնը՝ զոր իր եղբայրը կը պահան-ջէր իրմէ: Ըսել է՝ հարկ պիտի ըլլար որ դուրս ելլէ երկնային այն դրախտէն՝ որուն մէջ ապ-րած էր ամբողջ ձմեռը և իջնէ մեղքի տխուր և թշուառ աշխարհքը:

Երկնասարդը աչքերը ձգեր էր անոր աչքե-րուն մէջ: Իր դէմքը դեղին և տժգոյն էր. մորթը փակչած էր իր բքունքի ոսկորներուն. քիթը բարկցեր էր՝ մեռելի քթի պէս: Բայց իր սորին թանձր շրթունքը ամեն ատենէ աւելի տխրաբար վար կը կախուէր և իր բերնին շուրջի խիստ գիծը ա՛լ աւելի կը խորունկնար:

— Ինծի չի թուիր որ ես ու Հէլկում կարող ենք միևնոյն գեղին մէջ ապրիլ. բայց, կը տես-նեմ որ ինծի կ'իյնայ տեղի տալը:

— Ո՛չ, ըսաւ վերջապէս Քարին. եթէ թող-տաս որ վէրքդ կապեմ, կը խոստանամ որ Հէլ-կում ձգէ հեռանայ ասկէ:

«Աստուած մեղի ուրիշ նեցուկ մը պիտի կրնայ տալ՝ կը մտածէր Քարին: Ե՛ս, անկարելի է որ չ'հնազանդիմ Հէլկումին»:

Ինկմար փաթթել տուած էր իր վէրքը, որ վտանգաւոր չ'էր, բայց զինքը դատապարտած էր մէկ քանի օր հանգիստի: Պառկած էր տանը

վերի յարկը և Քարին որ նստած անոր սնարին քով՝ կը լսէր անոր զառանցելը, լաւ հասկըցաւ թէ անոր վշտերուն միակ պատճառը Հէլկումն ու սղոցարանը չ'էր:

Իրիկուան դէմ, երբ ջերմը թողուց զ'այն, քոյրը ըսաւ անոր.

— Վարը մէկը եկեր է՝ որ քեզի հետ խօսիլ կը փափաքի:

Երիտասարդը պատասխանեց թէ շատ յոգնած էր, ուստի չ'էր կրնար ընդունիլ:

— Ինծի կուգայ թէ այս այցելութիւնը աղէկ պիտի ըլլայ քեզի համար, վրայ բերաւ Քարին:

Եւ Կէրթրուտ ներս մտաւ: Երբ անիկա անկողնին մօտեցաւ, Ինկմար ձեռքերը աչքերուն վրայ դրաւ:

— Զիս տեսնել չ'ե՞ս ուզեր ուրեմն, մրմնջեց Կէրթրուտ:

Ինկմար գլուխը ցնցեց:

— Բայց և այնպէս հարկ է որ գիտնաս...

— Թէ դուն Հէլկումին աղանդն ընդունած ես, թերևս:

— Ո'չ, Ի'նկմար, հարկ է որ գիտնաս...

Կէրթրուտ ծունկի եկաւ անկողնին քով, անդին ըրաւ երիտասարդին ձեռքը՝ որ ծածկեր էր աչքը, յետոյ կարմրեցաւ, վարանեցաւ և ըսաւ վերջապէս.

— Անցեալ տարի երբ դուն հեռացար մեր տունէն, ես սկսած էի սիրել քեզ սրտանց:

Ինկմար ինք ալ կարմրեցաւ, բայց իր դէմքը անմիջապէս վերստացաւ ծանր և կասկածոտ արտայայտութիւն մը:

— Կը հառաչէի քու ետևէդ...

Ինկմար տարակոյսի ժպիտ մը ունեցաւ և մեղմակի գգուեց անոր ձեռքը՝ շնորհակալութիւն յայտնելով իր բարութեանն համար:

—... Բայց, ոչ իսկ մէկ անգամ չ'եկար այլևս զ'իս տեսնելու: Կարծես չի կայի պէս էի քեզի համար:

— Գիտես թէ գալ չ'էի ուզեր, մինչև որ գործերս աղէկ չ'ըլլային և կարողութիւն չ'ունենայի քեզ կնութեան խնդրելու:

— Իսկ ես կը խորհէի թէ մոռցեր ես զ'իս, աւելցուց Կէրթրուտ, մինչ արցունքները կը լեցուէին թարթիչներուն տակ: Չ'ես կրնար երևակայել թէ ի՛նչ տխուր տարի մը անցուցի: Հէլկում բարի եղաւ ինծի համար և մխիթարեց զ'իս: Կը կրկնէր ինծի թէ սիրտս պիտի խաղաղէր՝ եթէ ամբողջովին զ'այն Աստծու տայի:

Երիտասարդը կը նայէր անոր՝ իր աչքերուն մէջ բոլորովին նոր յոյսով մը:

— Երբ այս առաւօտ քեզ տեսայ, սարսափեցայ, որովհետև կը վախնայի թէ ընաւ պիտի չ'կրնայի դիմադրել քեզի և նորէն հոգեկան պայքար պիտի ունենայի:

Լուսաճաճանչ ժպիտ մը տարածուեցաւ միշտ անխօս Ինկմարի դէմքին վրա:

— Բայց այս իրկուն, երբ պատմեցին ինծի թէ օգնութեան հասած էիր անոր՝ զ'որ կատէիր, ա՛լ չի կրցայ ինքզինքս բռնել...

Ծաղկատի աղջկան դէմքը արիւնի գոյն էր առեր: Եւ, ծռած ըլլալով Ինկմարի ձեռքին վրայ, Կէրթրուտ իր շրթունքները փակցուց անոր:

Այն ատեն, երիտասարդին այնպէս թուեցաւ թէ մեծ զանգակները կը հնչային իր ա-

կանչներուն մէջ և կ՚աւետէին Ծնունդը կամ Զատիկը։ Խաղաղութիւն մը, կիւրակէներու սուրբ և խորին խաղաղութիւնը տարածուեցաւ իր հոգիին մէջ։ Սէրը՝ մեղրէն աւելի քաղցր, իր լեզուին վրայ էր և կը տարածուէր իր մէջ՝ երանական հեշտութեամբ մը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I

ՃԻՂԿՈՒՄԻՆ ՆԱՄԱԿԸ

Անտառին մէջ, պառաւ կին մը դուրս կ'ելլէ իր հիւղակէն, կը գոցէ դուռը և բանալին կը դնէ վերնագաւիթակին տակ, իր սովորական տեղը։ Թէև լուր օր է, բայց պառաւը հագած է իր կիրակնաւուր լաթերը։ Քանի մը քայլ կ'առնէ, յետոյ ետևը կը դառնայ՝ կը նայի իր խեղճուկ հիւղակին՝ որ կը կենայ կանգուն, փոքր և նսեմ, ձիւնով ծածկուած եղևիններն տակ։ Կը նայի անոր՝ մեծ սիրով մը։

«Ես ապրեցայ այստեղ երջանիկ օրեր, ըսաւ պառաւը։ Այո՛, այո՛, Տէրը կուտայ և Տէրը կ'առնէ»։

Եւ կը հեռանայ կածանէն, խիստ ծերացած, խիստ դիւրաբեկ, բայց տակաւին ուղիղ և չի-

տակ՝ նման այն անձերուն զ՚որս ի գո՛ւր տարի-
քը կը ջանայ կորացնել:

Ունի նուրբ ճերմակ մազեր, գեղեցիկ դէմք
մը և այնչափ քաղցր կերպարանք մը՝ որ մարդ
զարմանք կը զգար լսելով անոր խռպոտ, հան-
դիսաւոր և դանդաղ խօսքը, ծերունի մարգա-
րէի մը ձեւով: Ճամբան երկար է իր քայլերուն
համար. Եւս կ՚ինարատօթէր Հէլկուսեաններու
մէկ ժողովին կ՚երթայ Ինկմարսկարտ, որովհե-
տև նոր վարդապետութեան ամենէն ջերմեռանդ
հաւատացեալներէն մէկն է ինք:

«Աւա՜ղ, կը մտածէ ան քալելով, ի՜նչ եր-
ջանիկ օրեր էին այն ատենները՝ երբ գեղին կէ-
ոը Հէլկուսին կողմէ անցած էր. ո՞վ մտքէն
կրնար անցնել որ այդքան մարդիկ պիտի հե-
ռանային նոր հաւատքէն և հինգ տարի ետքը
քան հոգիէ աւելի պիտի չ՚մնայի՛նք»:

Կը յիշէր այն անցած օրերը ուր ինք աղ-
քատ, միայնակ և տարիներէ ի վեր մոռցուած
իր անտառին վերջալոյսին մէջ, յանկարծ եղ-
բայրներ ու քոյրեր գտած էր՝ որոնք եկած
գտած էին զ՚ինք իր մենաւորութեանը մէջ,
և ձիւնը գետինը ծածկած ատեն՝ ճամբայ բա-
ցած էին իրեն համար՝ մինչև իր հիւղակին դու-
ռը և չոր փայտ կտրած ու լեցուցած էին իր
սայլատունը: Կը յիշէր Բարինը, անոր քոյրերը
և գեղին ամենէն երևելիներուն մէջէն դեռ
ուրիշ անձեր. կը յիշէր սիրով այն համեստ ճա-
շերը՝ որ ունեցած էին իր գորշ հիւղակին մէջ,

«Աւա՜ղ, կը մրմնջէր, ո՛րքան մարդիկ ան-
փոյթ գտնուած են փրկութեան օրուան նկատ-
մամբ. և պատճառը պիտի իջնէ մեր գլուխնե-
րուն վրայ: Կուգայ ամառը և մենք ամէնք»

պիտի կորսուինք, որովհետև մեզմէ քիչերը պա-
տասխանեցին կոչին և անոնք ալ որ պատասխա-
նեցին՝ չի յարատևեցին ընաւ»:

Պառաւը հիմա իր մտածումները կը դարձնէ
Հէյկուսի նամակներուն, այն նամակներուն՝ որ
Հէյկուսեանները կը նկատեն իբրև Առաքելական
Թղթեր և կը կարդան իրենց ժողովներուն մէջ,
ինչպէս ուրիշները Աւետարանը կը կարդան:

«Ատեն մը կար, կ՚ըսէ պառաւը, երբ անոր
խօսքը կաթի ու մեղրի պէս էր: Անիկա մեզի
կը քարոզէր համբերատար ըլլալ անոնց մասին,
որ մեր հաւատքը ընդունած չէին, և քաղցրու-
թեամբ վարուիլ անոնց հետ՝ որ մեզ ձգած հե-
ռացած էին: Կը սորվեցնէր հարուստներուն՝ ի-
րենց գթութիւնը փայլեցնել հաւասարապէս թէ
արդարներուն և թէ անարդարներուն վրայ:
Բայց, ատենէ մը ի վեր, մաղձ ու զօլայ կորեր
է անիկա մեզի դէմ: Իր նամակներուն մէջ պա-
տիժէ ու փորձութենէ զատ ուրիշ բանի վրայ
չի խօսիր»:

Պառաւ Եւան հասած էր անտառին եզրը,
ուրկէ կը տիրապետէր և կը նայէր ամբողջ հո-
վիտին:

Փետրուարի այս գեղեցիկ օրուան մէջ, ձիւ-
նածածկ դաշտերը կը պարզէին իրենց սպիտա-
կութիւնը մինչև հորիզոնը: Հովի ոչ մէկ շունչ
կը հպանցէր այս անբիծ սփռոցին վրայէն՝ որուն
տակ բոյսերը կը հանգչէին իրենց ձմեռնային
քունով: Եւ պառաւը կը մտածէր թէ այս բոլոր
գաւառը՝ որ կը քնանար հիմա իր խաղաղ քու-
նը, պիտի վերազարթնուր միմիայն՝ որպէսզի
կործանուէր ծծումբի հեղեղներու տակ: Իր աչ-
քերը, որ Աստուածաշունչի պատկերներուն յա-

ճախանքն ունէին, կը տեսնէին այդ դաշտերը արդէն կրակով ծածկուած՝ ինչպէս որ այսօր ծածկուած էին ձիւնով:

«Մեզի որոշ խօսքերով չ'ըսեր անիկա, կը մտածէր պառաւ Նեան, բայց միշտ կը խօսի մեծ փորձութեան մը վրայ: Աւա՜ղ, ո՜վ զարմանք պիտի ունենար որ այս գիւղը կրէր Սոդոմի պատուհասը և քարուքանդ ըլլար Բաբելոնի պէս»:

Պառաւ Նեա Կինարստօթէրը չ'եղաւ որ տան մը առջեւէն անցնի և ինքնիրեն չ'պատկերացնէ թէ, մօտաւոր երկրաշարժի օրուան մէջ, ի՜նչպէս պիտի երերան անոնք իրենց հիմին վրայ և փըլչին, իբր թէ անոնց պատերը աւազի վրայ շինուած ըլլային: Չեղաւ որ մէկու մը հանդիպի և չ'մտաբերէ թէ ինչպէ՜ս դժոխքի ճիւաղները պիտի հալածեն զ'այն ու լափեն:

«Ահա վարժապետենց Կէրթրուտը, ըսաւ ինքնիրեն, հանդիպելով ճամբուն վրայ սիրուն աղջկան մը: Իր աչքերը կը շողան ու կը պըսպըղան՝ ձիւնին վրայ ինկած արեւու բիծերու պէս: Ուրախ է որ աշնան պիտի պսակուի երիտասարդ Ինկմար Ինկմարսօնին հետ: Կը տեսնեմ որ կարժ մը բուրդ ունի իր թեւին տակ. կ'երեւի իր մաշճակալին համար վարագոյրներ կամ իր ապագայ տանը համար գորգ պիտի հիւսէ: Բայց անիկա դեռ հիւսուածքը չ'աւարտած՝ արդէն կործանումը պիտի գայ մեր գըլխուն»:

Պառաւը տրտում նայուածքներ կը ձգէ իր շուրջը, անցնելով եկեղեցիին թաղէն, որուն շքեղութիւնը իր գէշին կ'երթայ. բոլոր այս ճերմակ ու դեղին տուները՝ իրենց փայտէ որմադրուագներուն տակ և իրենց բարձր պատու-

հաններովը՝ գետին պիտի տապալին իրենք ալ, ճիշտ այն աղքատիկ հիւղակին հետ, որ պատուհանի տեղ հազիւ ծակ մը ունի և որուն պատերուն դարձեկներուն մէջտեղ մամուռը ճերմակ կապած է: Կանգ կ'առնէ թաղին մէջտեղը, և գայրոյթով համակուած, ուժով իր գաւազանը գետնին կը զարնէ.

— Այո՛, այո՛, պոռաց՝ այնքան սաստկութեամբ որ անցորդները ետեւին դարձան. այո՛, այն մարդիկը՝ որ հոս կը բնակին, ետ մղեցին Քրիստոսի Աւետարանը և հետեւեցան Սատանայի Աւետարանին. անոնք չի լսեցին Յաւիտենականին ձայնը՛ և մենք ամէնքս իրենց երեսէն է որ պիտի կորսուի՜նք: Տէր Աստուածը անոնց անիրաւութիւնը մեզի քաւել պիտի տայ մահով:

Երբ անցաւ կամուրջէն անդին, մէկ քանի Հէլկումեաններ եկան միացան իրեն,—Կիւնար տը Բօլաս ու իր կինը Պրիթան, յետոյ Հօք Մաթս Էրիքսօն ու իր տղան Գաբրիէլը, ինչպէս նաև քէհեայ Կիւնհիլտը: Գեղեցիկ տեսարան մը կը պարզէին այս մարդիկը՝ որ կը քալէին, իրենց նախշուն հագուստներով, ճերմակ ձիւնով ծածկըուած ճամբէն: Բայց Նեային այնպէս կուգար թէ անոնք բանտարկեալներ էին՝ որ կախուելու կ'երթային, կամ կենդանիներ՝ որ սպանդ կ'առաջնորդուէին: Մանաւանդ որ անոնք կը քալէին՝ աչքերնին գետին խոնարհած և կռնակնին ծռած վհատութեան բեռին տակ: Անոնք յուսահատած էին թէ արդարութեան թագաւորութիւնը պիտի հաստատուէր երկրիս վրայ և Նոր Երուսաղէմը երկինքի մէկ ամպէն վար պիտի իջնէր. իսկ հիմա, տասանորդուած, հարկադըրուած ընդունելու որ գուր յոյսերով օրօրուած

էին, զգալով թէ բան մը կոտրած էր իրենց սրտին մէջ. դառնապէս տխուր՝ իրենց կեանքը մեծ վտանգի տակ դրած և զ'այն կորսնցուցած ըլլալնուն համար կը քալէին Հէլկումեանները դանդաղաքայլ, կը հառաչէին, կը կենային՝ նորէն կը հառաչէին և իրարու ըսելիք բան չ'էին գտներ։

«Ինչո՞ւ համար այսքան տխուր են հապա անոնք, մտածեց պառաւը, եթէ մօտեցող աշխարհք-կործումէն չ'են վախնար և չ'են ուզեր ըմբռնել նշանակներուն իմաստը։ Բայց ես իրենց բացատրեցի անոնց իմաստը։ Անոնք որ կը բնակին պարզ երկնքի տակ՝ դաշտին մէջ, նոյն կերպով չ'են կրնար ըմբռնել սոսկալի բաները, ինչպէս որ կ'ըմբռնեն անտառին մթութեան մէջ միս մինակ ապրողները»։

Պառաւ Նեան նշմարեց թէ Հէլկումեանները խռովուած էին որ Հալֆոր զ'իրենք այսպէս ըսած օր մը ժողովի հրաւիրած էր։ Արդեօք նոր դժբախտութեանց լո՞ւրը պիտի տրուէր իրենց։ Անոնք իրարու երես կը նայէին և գլխով կը հարցաքննէին խռովատանջ և կասկածոտ ակնարկով մը։ Անոնցմէ ամէն մէկը կարծես կը հարցնէր միւսին. «Հապա դո՞ւն, դո՛ւն որքան ատեն պիտի մնաս մեր մէջ։ Աւելի աղէկ պիտի չ'ըլլա՞ր մէկ հարուածով ջնջել այս միաբանութիւնը, եղբայրական միութեան այս կեանքը՝ որ կը սկսէր լուծուիլ արդէն։ Ցանկարծական մահը աւելի դերադաս չէ՞ դանդաղ հոգեվարքէն»։

Մինչ այս տրտում-տխուր մարդիկը կը շարունակէին իրենց ճամբան, ձմեռուան փայլուն արեգակն ալ իր ճամբան կը շարունակէր կա-

պոյտ երկնքի բարձրութեանց մէջ։ Ձիւնէն բարձրացող ուժգին և առողջ ցոլութիւն մը քաջասրտութիւն և զուարթութիւն կ'արթնցնէր անոնց մէջ։ Եւ, եղեւնապատ կողերով լեռներու կատարէն լռին ու լայն պայծառութիւն մը կը տարածուէր ամբողջ հովիտին վրայ։

Վերջապէս, հասան Ինկմարսկարտ և բարձրացան ձիւնածածկ քիւով վերնագաւիթակին աստիճաններէն։

Ագարակին մեծ սրահին մէջ, առաստաղի գերաններուն մօտէն կախուած էր պատկեր մը՝ որ մէկ դարու հնութիւն ունէր և անկասկած շինուած էր գեղին մէկ հին նկարիչին ձեռքով։ Անիկա կը ներկայացնէր բարձր պարիսպներով քաղաք մը, որոնց ետևէն, շատ աւելի բարձրէն՝ կ'երկարէին սրածայր ատամներով կատարներ։ Անոր մէջ որոշակի կը տեսնուէին գեղացիներու կանաչ կիցահողէ շինուած տանիքներ, ինչպէս նաև աւատապետներու ճերմակ տուներուն հերձաքարէ տանիքները. կը տեսնուէին պղնձապատ աշտարակներ՝ նման Մայր Քրիստինի եկեղեցիին, որ կը գտնուի Ֆալունի մէջ։ Քաղաքին առջև կը պտտէին կարճ անդրավարտիքներ և գանգրաւոր կօշիկներ հագած ազնուականներ, ձեռքերնին մէկ մէկ կնիւն. իսկ խոշոր դռնէն դուրս կ'ելլէր կախ կառք մը՝ որուն մէջ նստած էին սպիտակահեր և գլուխնին հովանիի լայն գլխարկներ դրած կիներ։ Պատկերին տակ պսակագիր գեղեցիկ տառերով գրուած է—Անիկա Երուսաղէմն է, Աստծոյ սուրբ քաղաքը։

Շատ հաղուադէպ էր որ աչքերը վեր վերնային՝ մինչև այդ պատկերը, և ինքնաբերաբար այցելողներուն մեծ մասը նոյնիսկ լուր անգամ չ'ունէր անոր գոյութեան մասին: Բայց այդ օրը, հապալասիի կանաչ պսակ մը շրջանակած էր զայն, այնպէս որ բոլոր նայուածքները իրեն կը դրաւէր: Եւա կիւնարստօթէր անմիջապէս տեսաւ զ'այն և խորհեցաւ. «Այս տեղ լուր ունին որ բնաջինջ պիտի ըլլանք մենք, անոր համար՝ մեզի դիտել կուտան երկնային քաղաքը»:

Քարին և Հալֆոր դիմաւորեցին իրենց հրաւիրեալները, անոնցմէ ա'լ աւելի տխուր ու պակուցեալ:

«Այո', այո', կրկնեց ինքնիրեն Եւա, անոնք գիտեն թէ ժամանակը մօտ է»:

Որովհետև ամենէն տարիքոտը ինք էր, նըստեցաւ սեղանին վերի ծայրը. իր առջև դրուած էր ամերիկեան դրօշմաթուղթով նամակ մը:

— Մեզի նամակ մըն ալ եկած է մեր սիրելի եղբայր Հէլկումէն, ըսաւ Հալֆոր. ատո'ր համար է որ ժողովի հրաւիրեցի եղբայրներն ու քոյրերը:

— Կը կարծեմ թէ կարևոր նամակ մը ըլլալու է, պատասխանեց յամրաբար Քօլաս Կիւնար:

— Այո', յարեց Հալֆոր, մեզի կը բացատրէ թէ ի'նչ կը հասկնայ մեծ փորձութիւն ըսելով:

— Կը կարծեմ թէ մեզնէ մէկը չի կայ որ վախնայ Տիրոջը համար նեղութիւններ կրելէ, ըսաւ Կիւնար:

Տակաւին Հէլկումեաններէն շատերը չ'էին եկած և երբ կը սպասէին անոնց, պառաւ Եւան

իր հեռատես աչքերը ձգած նամակին վրայ, միտքը կը բերէր ներսէն ու դուրսէն գրուած և եօթը կնիքով կնքուած այն գիրքը՝ որուն վրայ կը խօսի Յայտնութիւնը: Եւ իրեն այնպէս կուգար որ՝ եթէ ձեռք մը դպնար այդ նամակին, երկինքէն վար պիտի իջնէր ազրայէլը: Վեր վերցուց աչքը և նայեցաւ Երուսաղէմին:

«Այո', այո', մրմնջեց, շատ կը փափաքիմ երթալ այդ քաղաքը՝ որուն դռները ամենէն փայլուն ապակիին պէս մաքուր ոսկիէ են»: Եւ սկսաւ մտքին մէջ ըսել.

Պարիսպին հիմերը զարդարուած էին ամեն տեսակ թանկագին քարերով: Առաջ'ին հիմը յասպիսէ էր, երկրորդը շափիւղայ, երրորդը քաղկիդոն, չորրորդը զմրուխտ, հինգերորդը սարդեղունգ, վեցերորդը ակնաքար, եօթներորդը...

Պառաւ կինը այնքան համագրաւուած էր իր սիրելի յայտնութեամբ՝ որ վեր ցատկեց, խորունկ քունէ մը արթնցածի պէս, երբ Հալֆոր Հալֆորսօն ձեռքն երկնցուց նամակին: Բայց, զ'այն առնելէ առաջ՝ ըսաւ.

— Կը կարծեմ թէ նախ հոգևոր երգ մը երգելու ենք: Երգենք 224 րդ. համարը.

Իմ պաշտելի' Երուսաղէմ—իմ գեղեցիկ ոսկեայ քաղաք—իմ ճոխ ու տաք հայրենակա'ն տուն...

—Եւա սփոփանքի հառաչ մը արձակեց, երբ որ տեսաւ թէ ճակատագրական վայրկեանը

չ'է հասած դեռ։ «Աւա՛ղ, մտածեց գրեթէ ամօթահար, ինծի պէս պառաւն ալ մեռնելէ վախնայո՞ւ է»։

Հոգեւոր երգը վերջացաւ, Հալիֆոր առաւ նամակը և սկսաւ կարդալ այն չեշտով՝ ինչ չեշտով որ քարոզ մը կը կարդար․

«Սիրելի եղբայրներ ու քոյրեր, շնո՛րհք և խաղաղութիւն։ Մինչև հիմա հաւատացած էինք, դուք և ես, թէ՝ մենք միայնակ էինք մեր հաւատքին մէջ։ Բայց, գո՛վեալ է Աստուած․ մենք հոս եղբայրներ գտանք, որ կը խորհին մեր խորհուրդը և կ'ապրին մեր կեանքը։

«Գիտցէ՛ք ուրեմն թէ հոս իսկ կ'ապրէր, ասկէ քսան տարի առաջ, մարդ մը՝ Եդուարդ Կորտոն անունով։ Կ'ապրէր իր կնոջը հետ՝ Աստծոյ երկիւղին մէջ։ Եւ երկուքն ալ, յուզուա՛ծ մարդոց մէջ տիրող մեծ թշուառութենէն՝ կը խնդրէին Աստուծմէ որ շնորհք տայ իրենց, թեթևցնելու համար այդ թշուառութիւնը։

«Արդ, պատահեցաւ որ Եդուարդ Կորտոնի կինը ճամբորդութիւն մը կատարէ ծովու վրայ, նաւաբեկութեան բռնուի ու իյնայ ալիքներուն մէջ։ Եւ երբ կը գտնուէր մահուան վտանգին մէջ, լսեց Աստծոյ ձայնը․ և այս ձայնը կը հրամայէր իրեն՝ մարդոց սորվեցնել միութեամբ ապրիլ։

«Եւ կինը ազատեցաւ ծովէն ու մահէն, և եկաւ իր ամուսնին ու պատմեց անոր՝ Աստծոյ պատգամը։ Այն ատեն ամուսինը ըսաւ․ «Մեծ պատգամ մըն է ասիկա։ Այնպիսի մեծ պատգամ մըն է որ աշխարհիս վրայ միս մինակ տեղ մը արժանի է զ'այն ընդունելու։ Հաւաքենք մեր բարեկամները և երթանք Երուսաղէմ՝ քարոզելու Աստծոյ այս սուրբ պատգամը»։

«Եդուարդ Կորտոն ու իր կինը և ուրիշ երեսուն մարդիկ՝ մեկնեցան Երուսաղէմ։ Անոնք կատարեալ միաբանութեամբ ապրեցան միևնոյն տանը մէջ, բաժնելով իրենց ունեցածը և հսկելով մէկզմէկու վրայ։ Եւ իրենց քով կը կանչէին անոնք աղքատներու մանուկները․ և անոնք կը խնամէին հիւանդները։ Բայց անոնք չէին քարոզեր ո՛չ տաճարներուն մէջ և ոչ ալ հրապարակներուն վրայ, որովհետև կ'ըսէին․ «Մեր կեանքն է որ պիտի խօսի մեր տեղը»։

«Եւ այն մարդիկը որ զ'անոնք տեսան գործի մէջ, կ'ըսէին անոնց մասին․ «Ցիմարներ են ասոնք»։ Բայց ամենէն մեծ հակառակորդներն եղան Պաղեստին եկած այն քրիստոնեաները՝ որոնք կ'ուզէին քրիստոնեայ դարձնել Հրէաներն եւ Մահմետականները, որովհետև անոնք կ'ըսէին․ «Ո՞վ են այս օտարականները որ բնաւ չ'են քարոզեր․ անշուշտ ասոնք հոս եկած են գէշ կեանք մը վարելու և հեթանոսներուն մէջ իրենց ուզածին պէս հաճոյանալու համար»։ Ու անոնք այնպիսի վայնասուն մը փրցուցին անոնց դէմ՝ որ ծովերէն անցաւ և լսելի եղաւ իրենց հայրենակիցներու ականջին։

«Արդ, Երուսաղէմ մեկնած այդ մարդոց մէջ կը գտնուէր հարուստ այրի կին մը՝ իր երկու զաւակներուն հետ։ Եւ անիկա եղբայր մը թողուցած էր իր հայրենիքին մէջ։ Ու մարդիկ կ'ըսէին այդ եղբօրը․ «Ինչպէ՞ս կրնաս թոյլ տալ որ քու քոյրդ՝ քեռորդիներուդ հետ գէշ

կեանք մը վարէ ծոյլ մարդոց ընկերակցութեամբ, որոնք կ'ապրին իր ստակովը»: Եւ եղբայրը դատ բացաւ քրոջը դէմ, որովհետեւ կ'ուզեր որ քոյրն իր զաւակները Ամերիկա ձգէ: Այս դատին պատճառով այրին Ամերիկա եկաւ՝ իր զաւակներուն, Եդուարդ Կորտոնի ու իր կընոջը հետ: Անոնք տասնըչորս տարի Երուսաղէմ մնացած էին, և երբ հոս վերադարձան՝ Լրագիրները լեցուեցան անոնց անուններով և որոնք խենդ ու խաբեբայ կ'անուանէին զ'անոնք»:

Երբ որ նամակին այս տեղը հասաւ, Հալֆոր կանգ առաւ և իր կարդացածը աւելի պարզ բառերով կրկնեց, որպէսզի ամէնքն ալ լաւ մը հասկնան զ'այն: Յետոյ, շարունակեց իր ընթերցումը.

«Լրագիրներուն գրածները կարդացինք թէ չէ՝ սկսանք խորհիլ թէ այդ մարդիկը մեր հաւատալիքն ունէին: Եւ նամակ մը գրեցինք որ գան մեզ տեսնեն: Ու անոնք հնազանդեցան մեր կոչին: Այն ատեն հասկցանք թէ սխալած չ'էինք և Աստծոյ շնորհքը մղած էր մեզ իրարու մօտ:

Եւ երբ անոնք կը պատմէին շքեղութիւնները Աստծոյ քաղաքին՝ կիսայլի սպիտակ լեռան վրայ, երանի կուտայինք իրենց՝ որ կոխած էին Յիսուսի կոխած ճամբաները: Եւ մեզմէ մէկը անոնց ըսաւ. «Մե՞նք ինչու պիտի չ'հետեւինք ձեզի՝ դէպի Երուսաղէմ»:

«Ու անոնք պատասխանեցին. «Դուք չ'էք կրնար հետեւիլ մեզի, որովհետեւ Աստծոյ սուրբ քաղաքը լի է անհամաձայնութեամբ ու պայ-

քարով, թշուառութեամբ ու հիւանդութեամբ, չարութեամբ և աղքատութեամբ»:

«Եւ մեզնէ մէկը աղաղակեց. «Թերեւս Աստուած է որ ձեզ մեր քով բերաւ՝ որպէսզի մենք ալ հետեւինք ձեզի և կռուինք ձեզի հետ բարի կռիւը»:

«Այն ատեն, մենք ամէնքս լսեցինք Աստըծոյ ձայնը որ կը շշնչէր մեր սրտերուն մէջ և կ'ըսէր մեզի. «Այո՛, այո՛, ա՛տ է իմ կամքս»:

«Հարցուցինք անոնց թէ կ'ուզէ՞ին մեզ ալ ընդունիլ իրենց մէջ, թէև տգէտ և խեղճ ըլլայինք մենք. ու անոնք պատասխանեցին թէ կ'ուզեն: Եւ ամբողջ ժամանակը Սուրբ Հոգին մեր վրայ էր ու մեծ ուրախութիւն մը կը զգայինք մենք, ու կ'ըսէինք մեզի. «Հիմա կը տեսնենք որ Աստուած կը սիրէ մեզ, քանի որ կը խրկէ մեզ այն նոյն Երկիրը՝ ուր խրկեց իր Որդին»:

«Բայց այն ատեն մեզմէ մէկը ըսաւ. «Հապա Շուէտի մեր եղբայրները՞»: Եւ մենք պատմեցինք ու ըսինք Երուսաղէմի մեր եղբայրներուն «Մենք՝ մեր այս տեղ գտնուածներէն շատ աւելի բազմաթիւ ենք, որովհետեւ եղբայրներ ու քոյրեր ունինք որ մնացեր են Շուէտի մէջ՝ տունը: Եւ անոնք դժուարին կռիւ մը կը մղեն արդարութեան համար, որովհետեւ ստիպուած են ապրիլ մեղաւորներու մէջ և ուխտադանցութեան դժնդակ փորձութիւնները կրել»:

«Եւ Երուսաղէմի մեր եղբայրները ըսին. «Թողէք որ Շուէտի ձեր եղբայրներն ու քոյրերն ալ հետեւին մեզի Սիոնի մէջ և մասնակցին մեր սուրբ աշխատանքին»:

«Եւ մենք նախ շատ ուրախացանք՝ մտածելով որ դուք ալ մեզի պիտի հետեւիք, բայց շուտով տխրեցանք. «երբեք, կը մտածէինք մենք, անոնք պիտի չի կրնան երեսի վրայ ձգել իրենց մեծ ագարակները, իրենց արգաւանդ արտեր, և իրենց սովորական զբաղմունքները»: Եւ Երուսաղէմի մեր եղբայրները պատասխանեցին. «Մենք ոչ արգաւանդ արտեր, ոչ ալ մեծ ագարակներ ունինք անոնց ընծայելիք. բայց անոնք պիտի քալեն այն ճամբաներուն վրայէն՝ որոնց վրայ կոխած են Յիսուսի ոտքերը»:

«Մենք կը վարանէինք տակաւին և անոնց ըսինք.

«Անոնք երբեք պիտի չ'ուզեն մեկնիլ երկիր մը՝ ուր իրենց լեզուն հասկցող չի կայ»:

«Բայց Երուսաղէմի մեր եղբայրները պատասխանեցին. «անոնք պիտի հասկնան այն բաները որ Պաղեստինի քարերը կը խօսին մեր Փրկիչին վրայ»:

«Եւ մենք ըսինք. «Թերևս անոնք պիտի չ'ուզեն իրենց ունեցած-չ'ունեցածը բաժնել օտարներուն և ըլլալ մուրացկաններ: Թերևս անոնք պիտի չ'ուզեն հրաժարիլ իրենց պատուաւոր դիրքերէն, որոնհետև գիւղին առաջնակարգ մարդիկն են»:

Եւ Երուսաղէմի մեր եղբայրները պատասխանեցին. «Մենք ոչ պատիւ և ոչ ալ հարստութիւն ունինք անոնց տալիք, բայց մենք անոնց պիտի տանք մեր Փրկիչին, Յիսուսի նեղութիւնները՝ որ բաժնեն մեզի հետ:

«Եւ հիմա կ'ըսեմ ձեզի, սիրելի եղբա՛յրներ ու քոյրեր, մի՛ վիճիք միասին. այլ, երբ կարդացած ըլլաք ասիկա, կեցէք լուռ և հանդարտ, ու սպասեցէ՛ք ուշադիր. և ըրէք այն՝ ինչ որ Աստծոյ ձայնը հրամայէ ընել ձեզի»:

Հալֆոր ծալլեց նամակը ու ըսաւ.

— Հիմա, մնանք լուռ ու հանդարտ, ինչպէս որ մեզի կը հրամայէ Հէյկում:

Եւ շունչ մը անգամ լսելի չ'եղաւ այլևս Ինկմարսկարտի մեծ սրահին մէջ: Պառաւ Եւան ալ մնաց համր՝ միւսներուն պէս, սպասելով որ Աստուած խօսի իրեն: «Այո՛, կը մտածէր ան, կը հասկնամ Հէլկումին դիտաւորութիւնը. մենք Երուսաղէմ պիտի երթանք որ ազատինք աշխարհք-կործանումէ: Տէրը կ'ուզէ մեզ փրկել ծծումբի հեղեղներէն և խնայել մեզի կրակի անձրևը: Եւ մեզմէ արդար եղողները պիտի լսեն անոր ձայնը ու իրենց փրկութիւնը»: Եւա վայրկեան մը իսկ կանգ չ'առաւ այն գաղափարին վրայ թէ՝ զոհողութիւն մըն էր ձգել իր օճախը, իր հայրենիքը, ծննդավայրի բարի հողն ու կանաչ անտառները և այն գետը՝ որ կ'անցնի անոնց մէջ այնքան բարեկամաբար: Ուրիչներ ահուդողով մտածեցին թէ հարկ պիտի ըլլար փոխել կեանքը և հրաժարիլ ծնողքէ ու ամբողջ ընտանիքէ. բայց ինք չի մտածեց երբեք: Աստուած կ'ուզէր փրկել զ'անոնք՝ ինչպէս առենօք փրկած էր Ղովտն ու Նոյը: Կը կանչէր զ'անոնք շքեղ և գերբնական կեանքի մը՝ իր Սուրբ Քաղաքին մէջ: Եւ այս պառաւ կնոջ համար էր որ կարծես Հէլկում գրած էր անոնց թէ՝ ողջ ողջ երկինք պիտի տարուէին:

Ամէնքը, գոց աչքերով, կ'իջնէին իրենք իրենց մէջ և շատերը այնպիսի անձկութեամբ մը կը տագնապէին՝ որ պաղ քրտինք մը պատած էր իրենց ճակատներուն վրայ: Արևը խոնարհած էր և կը շողար տակաւին հորիզոնին հաւասարութեան վրայ: Իր սուր ճառագայթները, որ

ձախուած սենեակին մէջ, արեան գոյն նշոյլ մը կը դնէին այդ տժգոյն դէմքերուն վրայ։ Վերջապէս Լիւնիկ Պըյօրնի կինը վար սահեցաւ նստարանէն և ծունկի եկաւ տախտակամածին վրայ։ Եւ Անկէ ետք, ուրիշներ ծունկի եկան. և շատեր միևնոյն ատեն խորին հառաչ մը հանեցին ու իրենց դէմքը պայծառացաւ։ Եւ Քարին Ինկմարստօթէր ըսաւ սքանչագին ձայնով մը.

— Ես կը լսեմ Աստծոյ ձայնը՝ որ զ'իս կը կանչէ։

Կիւնհիլտ ձեռքերը վեր բարձրացուց յափշտակութեամբ և արտասուալից դէմքով.

— Ե՛ս ալ, կրկնեց անիկա, պիտի կրնամ մեկնիլ. Աստծոյ ձայնը կը կանչէ զ'իս։

Յետոյ, Քրիսթէր Լարսօն ու իր կինը պոռացին՝ գրեթէ միասին.

— Կը լսե՛մ, կը լսե՛մ թէ պէտք է մեկնիմ. Աստծոյ ձա՛յնն է։

Կոչը եկաւ ամենուն ալ, մէկը միւսին ետեւէն, և բոլոր վիշտերն ու բոլոր անձկութիւնները հեռացան իրենցմէ։ Անհուն բերկրութիւն մը կը թեւածէր անոնց գլուխներուն վերև։ Ալ չէին մտածեր ո՛չ իրենց ագարակները և ոչ ալ իրենց ազգականները, այլ կը տեսնէին միայն իրենց միաբանութիւնը որ կը ծաղկէր անդէն Աստծոյ սուրբ քաղաքին մէջ։

Բայց Հալֆոր դեռ ո՛եւէ ձայն չ'էր լսեր։ Դժնդակ պայքար մը կը մղէր և կը տանջուէր ու կը կրկնէր ինքնիրեն. «Աստուած չ'ուզեր կանչել զ'իս՝ միւսներուն պէս, անո՛ր համար որ ես աւելի կապուած եմ իմ արտերուս ու մարգերուս՝ քան թէ իր խօսքին»։

Քարին մօտեցաւ իր էրկանը և ձեռքը դրաւ անոր ճակտին վրայ։

— Պէտք է որ խաղաղ մնաս, Հալֆո՛ր, և լռութեամբ մտիկ ընես։

Հալֆոր իր ձեռքերը այնքան ուժով իրարու միացուց որ՝ խաղերը չըթչըթացին։

— Թերևս Աստուած զ'իս երթալու արժանի չի դատեր... մրմնջեց։

— Այո՛, Հալֆո՛ր, պիտի գաս. բայց, պէտք է որ խաղաղ մնաս, պատասխանեց Քարին։

Եւ Քարին ծունկի եկաւ անոր քովն ի վեր ու իր թեւը անցուց անոր մէջքին շուրջ։

— Մտիկ ըրէ՛ հիմա, Հալֆո՛ր, և աներկիւղ եղի՛ր։

Քանի մը վայրկեան ետքը՝ Հալֆորին դիմագծերը թուլցան։

— Կը լսեմ, կը լսե՛մ բան մը՝ որ հեռուէն կուգայ։

— Հրեշտակներու քնարներն են որ կը նախակարապետեն Աստծոյ ձայնը, ըսաւ կ՛նը։ Աւե՛լի խաղաղ կեցիր, Հա՛լֆոր։

Եւ Քարին սեղմուեցաւ անոր կուրծքին դէմ՝ բան մը որ երբեք ըրած չ'էր ուրիշ մարդոց ներկայութեան։

— Ո՛հ, պոռաց Հալֆոր իր ձեռքերը իրարու զարնելով, կը լսե՛հիմա. այնքան ուժով եկաւ ձայնը՝ որ թնդաց ականջներուս մէջ. «Դուն պիտի երթաս իմ Երուսաղէմի սուրբ քաղա՛քս»։ Դուք ամէնքդ ալ այդպէ՞ս լսեցիք։

— Այո՛, այո՛, պոռացին անոնք, մենք ամէնքս ալ այդպէս լսեցինք։

— Բայց, պառաւ Եւա Կիւնարստօթէրը սկըսաւ հեծեծել։

— Իսկ ես բան մը չի լսեցի՛. Աստուած թոյլ չի տար որ ես ալ ձեզի հետ գամ: Ես Ղովտին կինն եմ: Եւ ես չ'եմ կրնար փախչիլ ձեզի՛ հետ: Եւ ես աղի արձան պիտի կարի՛մ:

Անիկա կուլար անձկութենէն. Հէլկումեանները հաւաքուեցան անոր բոլորտիքը՝ աղօթելու համար. բայց ոչ մէկ ձայն չ'էր գար իրեն, ուստի իր անձկութիւնը դարձաւ զարհուրիչ:

— Ես բան պիտի չկրնամ լսել, կ'ըսէր ան. բայց և այնպէս, պէտք է որ զիս ալ տանէք հետերնի՛դ: Զիս երեսի վրայ պիտի չ'թողուք, պիտի չ'ձգէք որ խեղդուիմ ծծումբի հեղեղին մէ՛ջ:

— Համբերանք ունեցիր, Եւա՛. դո՛ւն ալ պիտի լսես Ձայնը այս գիշեր կամ վաղը:

— Դուք պատասխան չ'էք տար իմ հարցումիս, կը պաղատէր Եւա. պիտի տանէ՞ք զիս, եթէ նոյնիսկ կոչը չի գայ ինծի:

— Պիտի գա՛յ, պիտի գա՛յ, պոռացին Հէլկումեանները:

— Պատասխան պիտի չ'տա՞ք ինծի ուրեմն:

— Սիրելի՛ Եւաս, մենք չ'ենք կրնար տանիլ քեզ, եթէ Աստուած չ'հրաւիրէ. Բայց մի՛ վախնար ընաւ, պիտի հրաւիրէ:

Այն ատեն, պառաւը՝ որ ծունգի եկած էր, չիտկեց յանկարծ իր վատուժ մարմինը և իր գաւազանին ծայրովը զարկաւ տախտակամածին.

— Դուք մտադրած էք մեկնիլ և զիս ձգել հոս որ կորսուի՛մ: Այո՛, դուք մտադրած էք մեկնիլ՝ առանց զիս հետերնիդ տանելու, և ես պիտի կորսուի՛մ:

Կոյր ատելութիւն մը կը դողացնէր իր ձեռքերն ու ոտքերը, և պառաւ Եւան վերերևցաւ

անգամ մըն ալ այնպէ՛ս՝ ինչպէս որ եղած էր իր երիտասարդութեան ատենը, կրքոտ և բուռն:

— Չե՛մ ճանչնար այլևս ձեզ, պոռաց անիկա: Չե՛մ ուզեր փրկուիլ ձեր ձեռքո՛վ: Հեռո՛ւ ամէնքդ ալ ինծմէ. Դուք կը ձգէք կին ու զաւակ, հայր ու մայր, որպէսզի ձեր անձը ազատէք: Դուք յիմարնե՛ր էք որ կը ձգէք ձեր պատուական արտերը: Դուք դիւահարնե՛ր էք՝ որ կը վազէք սուտ մարգարէներու ետե՛ւէն: Ձե՛ր վրայ է որ պիտի թափին ծծումբն ու բոցերը: Դուք էք որ պիտի կորսուիք: Իսկ մենք, որ կը մնանք մեր տուներուն մէջ, մենք պիտի՛ ապրինք:

II

ԾԱՌԻՆ ԿՈՃՂԸ

Փետրուարի այդ գեղեցիկ օրուան վերջալոյսին՝ երկու երիտասարդներ, ճամբուն վրայ ոտքի, կը խօսին միասին:

Երիտասարդը անտառէն իջած է՝ բերելով այնքան խոշոր ծառի կոճղ մը որ ձին հազիւ կրնայ քաշել: Եւ սակայն, խեղճ կենդանին մեծ շրջան մը ըրած է և ծառին կոճղը անցնելով ամբողջ եկեղեցիին թաղը, եկած հասած է դըպրոցի ճերմակ շէնքին սեմին առջև: Հոն, մինչ ձին կը հևար, դեռահաս աղջիկ մը վար իջած էր իսկոյն՝ դիտելու ծառին կոճղը:

Աղջիկը չի կշտանար անոր վրայ զմայլելով Որքա՜ն երկայն, զօրաւոր և ուղիղ է ան: Ի՜նչ հաստատուն և առանց վարսկի գերան. Ի՜նչ թուխ ու մաքուր գեղեցիկ կեղև: Երիտասարդը

կը պատմէ թէ այս շոճին առաջ բուսած էր Բըլաքպէրկի հիւսիսային կողմը, հեռո՜ւն, աւազուտ գետի մը վրայ: Կը պատմէ, ծանր գորովով մը, թէ ո՛ր օրը կտրուեցաւ, ո՛րքան ատեն չորցաւ անտառին մէջ և քանի մատ է իր շրջագիծն ու լայնութիւնը: Ծաղկատի աղջիկը գետին վրայէն հազարաւոր կտրուած շոճիներու ծփալն ու անցնիլը տեսած էր, բայց երբեք մըտքէն չ՚էր անցուցած թէ ծառի պարզ կոճղ մը կրնայ այսքան գոհունակութիւն պարգևել:

— Աւա՜ղ, Ինկմա՛ր, ըսաւ աղջիկը. դեռ ասիկա առաջինն է միա՜յն:

Եւ, իր ուրախութեան մէջ, սիրտը սեղմըւեցաւ յանկարծ՝ մտածելով թէ հինգ տարուան նեղութիւն ու աշխատանք պէտք եղած էր՝ մինչև որ Ինկմար կրցած է անտառէն փոխադրել ծառի առաջին կոճղը՝ որով պիտի շինէր իրենց նոր տունը:

Իսկ Ինկմար կը կարծէ թէ բոլոր դժուարութիւնները հարթուած են:

— Պիտի տեսնես որ, Կէրթրո՛ւտ, եթէ կարողանամ, քանի դեռ ձիւնը պինդ է, վար իջեցնել փայտը՝ տունը շուտով շինուած պիտի ըլլայ:

Վաղուց արեգակը մարը մտած է. ցուրտը կծու կը դառնայ: Ձին կը ցնցէ գլուխը և իր սմբակով կը քերէ պնդացած ձիւնը. անոր ճակատին վրայ ինկած մազի փունջը և ամբողջ բաշը կը ճերմկնան եղեամէն: Բայց երկու երիտասարդները ցուրտ չ՚են զգար. անոնք տաք են, շինելով իրենց տունը՝ մառանէն մինչև յարդանոցը: Եւ երբ տունը կ՚աւարտի, կսկսին կահաւորել զ՚այն:

— Պատին երկայնքը, հո՛ն, կ՚ըսէ Ինկմար, պիտի դնենք նստարանը։

— Բայց մենք նստարան չ՚ունինք՝ որ գիտնամ, կ՚ըսէ Կէրթրուտ։

Երիտասարդը կը խածնէ իր շրթունքները՝ կ՚ուզէր որ երկար ատեն գաղտնի պահէ այդ նստարանը՝ որ արդէն շինուած, պատրաստուած է կահագործին քով. և ահա չ՚է կրցած պահել գաղտնիքը՛։

Այն ատեն Կէրթրուտ ինք ալ կ՚ուզէ յայտնել իր մէկ քանի փոքր գաղտնիքները։ Հինգ տարիէ ի վեր շինած է մազէ ձեռագործներ ու հիւսած է ժապաւէններ, որոնք ծախեր է. և անոնց դրամովը գնած է սաներ, վառարաններ, սկաւառակներ, պնակներ, ասուիններ, աղուա-փետուրներ, սփռոցներ, գորգեր...։ Այդքան մը հարստութիւնը շլացուց Ինկմարը՝ որ չի գիտեր թէ ինչպէ՛ս շնորհակալութիւն յայտնէ։ Եւ յանկարծ, կ՚ընդհատէ իր խօսքերը, կը նայի Կէրթրուտին, և, ինչպէս միշտ, կը մնայ անխօս այն ապշեցուցիչ մտածման առջև՝ թէ այսքան քաղցր ու այսքան պատուական էակ մը իրենը պիտի ըլլայ օր մը։

— Ի՞նչ կը մտածես, Ինկմա՛ր, կը հարցնէ դեռահաս աղջիկը։

— Կը մտածեմ թէ տանը մէջ ինչ որ ամենէն լաւ բանը պիտի ըլլայ, ա՛ն է որ՝ քեզ պիտի ունենամ։

Կէրթրուտ բան չի պատասխաներ, այլ իր ձեռքով կը փայփայէ ծառին խոշոր կոճղը, ա՛յն կոճղը՝ որ պիտի կրէ իրենց տան ծանրութիւնը։ Գիտէ թէ ապահովութիւնն ու մտերմութիւնը պիտի բնակին իր հետ, որովհետև այն երիտա-

սարդը՝ որուն հետ կ՚ամուսնանայ, բարի և ուժեղ, հաւատարիմ ու վեհանձն է։

Այս պահուն, պառաւ կին մը կ՚անցնէր ճամբէն. կը քալէր արագ-արագ և ինքն իր դէմ կը խօսէր բարձր ու զայրացկոտ ձայնով մը։

— Այո՛, այո՛, կ՚ըսէր անիկա. անոնց երջանկութիւնը այնքան պիտի տևէ՝ որքան լուսածագը կը տևէ արշալոյսի ատեն. և երբ փորձութիւնը գայ, անոնց հաւատքը պիտի փրթի իյնայ՝ մամուռէ հիւսուած չուանի մը պէս։ Եւ անոնց կեանքը երկար խաւար մը պիտի ըլլայ։

— Մեզի՞ համար է որ կ՚ըսէ, հարցուց աղջիկը։

— Մեզի համար ինչո՛ւ ըլլայ, պատասխանեց երիտասարդը։

III

ԻՆԿՄԱՐՍԱՐՏ

Միւս օրը շաբաթ էր։ Երէցը տուն կը վերադառնար իրիկունը ուշ ատեն՝ սաստիկ փութին։ Հիւանդի մը քով էր գացեր հիւսիսային կողմը՝ մեծ անտառին տակ և ահագին տաժանքով կը ջանար ճամբայ բանալ ու տուն դառնալ։ Ձին կը թաղուէր ձիւնին մէջ և շատ անգամներ քիչ էր մնացեր որ բալխիրը շրջուէր։ Երէցն ու իր ծառան շատ անգամ ստիպուած էին վար իջնել և գետինը տրորելով՝ ճամբայ մը բանալ։

Գիշերը շատ մութ չ'էր. լուսինը՝ լայն ու կլոր, կը վազէր ձիւնաբեր ամպերուն արանքէն, որոնց մէջ իր լոյսը բաց մոխրագոյն ծակեր կը շինէր։ Երբ մարդ երեսը դէպի վեր դարձնէր, գլխու պտոյտ կը զգար՝ տեսնելով սառած միջոցին մէջ այն ճերմակ միլիոնաւոր կէտերուն պարելն ու պտուտկիլը։

Երկու ճամբորդները ամեն տեղ միևնոյն դժուարութիւններուն չ'էին հանդիպեր։ Հոն ուր հովը ձիւնը աւլած էր սառնակին վրայէն, կ'անցնէին արագութեամբ։ Հոն ուր ձիւնը բարձր, բայց թեթեւ ու փխրուն էր, բալխիրը կ'անցնէր դարձեալ՝ առանց դժուարութեան։ Միայն թէ, տեղ տեղ, փոթորիկը ձիւնէ պատնէշներ դիզած էր. այն ատեն, հարկ կ'ըլլար շեղիլ ճամբէն, խոյանալ արտերուն մէջէն, աչք առնելով գլխիվար գլորիլ փոսի մը մէջ, կամ ձին երեսին վրայ բերել ձողապատի մը ցիցերուն դէմ։

Երէցն ու իր ծառան ամենամեծ վախով կը խօսէին իրարու հետ՝ այն ահագին ձիւնաշեղջին վրայ, որ փոթորիկները սովորաբար կը դիզէին Ինկմարսկարսի մօտ գտնուող հին ու շատ բարձր ցանկապատի մը քովերը։

— Անգամ մը որ յաջողինք անկէ անցնիլ, կը մրմնջէին անոնք, ա'լ տուն հասած կ'ըլլանք։

Եւ երէցը կը յիշէր թէ շատ անգամ խնդրած էր Մեծ Ինկմարէն որ քակէ այդ ցանկապատը, ուր ձիւնը անընդհատ կը դիզուէր։ Բայց Ինկմարսկարսի բնակիչները իրարու յաջորդած էին և ցանկապատը մնացեր էր ցանկապատ։

Եւ իրաւ, շուտով նշմարեցին ագարակը, և ագարակին մօտ ձիւնը՝ պատի մը պէս բարձր ու ապառաժի մը պէս հաստատուն։ Կարելի չ'էր շեղիլ. պէտք էր շիտակ երթալ ձիւաղին դէմ։ Ծառան՝ վհատած, առաջարկեց երթալ Ինկմարսկարսէն օգնական մարդ բերել։ Բայց երէցը չի հաւանեցաւ։ Հինգ տարիէ ի վեր բա

մը անգամ փոխանակած չ՚էր Քարինի հետ․ և անկէ աւելի անհաճոյ բան չի կայ՝ երբ մարդ կը հանդիպի հին բարեկամներու, որոնց հետ աւրուած է։

Կամայ ակամայ ձին պարտաւորուեցաւ ելլել ցից զառիվերէն վեր․ բայց գագաթը հասաւ թէ չ՚է, ձիւնը որ մինչև այն ատեն դիմացած և կրած էր զ՚ինք, տեղի տուաւ և ձին սուզուեցաւ, կորսուեցաւ ճամբորդներուն աչքին տակ, որոնք զ՚այն կը փնտռէին տակաւին։ Միևնոյն ատեն, կոտրեցաւ նաև բալխիրին թևերէն մէկը։ Անկարելի էր ճամբան շարունակել։

Քանի մը վայրկեան ետքը՝ երէցը կը բանար Ինկմարսկարտի մեծ սրահին դուռը։

Ջոր փայտի կրակ մը կը բոցավառէր օճախին մէջ․ Օճախին մէկ կողմ նստած էր տանտիրուհին և կը մանէր բարակ գզուած բուրդ մը․ իսկ անոր ետևը, երկար կարգով՝ աղախիններն ու բանուորուհիները կը մանէին խծուծ ու քթան։ Օճախին միւս կողմը վերապահուած էր էրիկմարդոց․ անոնք տուն կը դառնային՝ յոգնած փայտ կրելէն․ ոմանք կը հանգչէին, ուրիշներ կը զբաղէին փոքր գործերով՝ որոնք իրենց խաղի պէս կուգային․ այսպէս՝ կրկուտ կը կտրտէին, փոցխին ատամները կը սրէին կամ կացինի կոթեր կը տաշէին։

Երբ երէցը ներս մտաւ և պատմեց իր գըլխուն եկած փորձանքը, ամէնքը սկսան շարժիլ։ Ծառաները մեծ թիեր առած՝ գացին ձին իր թաղուած տեղէն դուրս հանելու․ և մինչ Հալֆոր կ՚առաջնորդէր երէցը սեղանին քով և կը խնդրէր նստելու, Քարին ալ իր աղախինները կը փութացնէր դէպի խոհանոցը և անոնց պատ-

րաստել կուտար սուրճ ու մեծարանքի ընթրիք մը։ Քարին ինք իր ձեռքով կրակին առջև փըռեց իր հիւրին թրջած մուշտակը, վառեց առկախ լամբը և իր ջահրակը մօտեցուց սեղանին, ինք ալ մասնակից ըլլալու համար երկու էրիկմարդոց խօսակցութեան։

Երէցը մտածեց․ «Եթէ Մեծ Ինկմարն ալ ողջ ըլլար՝ ասկէ աղէկ ընդունելութիւն պիտի չ՚գտնէի»։

Հալֆոր նախ խօսեցաւ ճամբաներու վիճակին վրայ, յետոյ երէցին հարցուց թէ աղէկ գինով ծախե՞ր էր իր ցորենը և վերջապէս նորոգել տուե՞ր էին իր երիցատունը։ Քարին տեղեկութիւն հարցուց երիցուհիին առողջութեանը վրայ, որ միշտ հիւանդ էր։

Քիչ ետքը երէցին սպասաւորը եկաւ յայտնելու թէ ձին հանած էին ձիւնին տակէն, բալխիրին թևը վերանորոգած էին, հետևաբար կարելի էր ճամբայ իյնալ։ Բայց, Քարին ու Հալֆոր հրաւիրեցին երէցը որ ընթրէ ու ապա մեկնի, և այնքան պնդեցին որ երէցը ընդունեց։

Բերին սուրճը․ արծաթէ մեծ սրճամանը կը պսպղար ափսէին մէջտեղը, շաքարամանին քով, արծաթէ հին շաքարամանին՝ որ մէջտեղ կը հանէին միայն հարսնիքի և մահուան օրերուն․ և արծաթէ երեք բարձր ըմպանակներու վրայ դիզուած էին կարկանդակներ։ Երէցը, զարմացումէն, խոշոր խոշոր կը բանար իր փոքր, կլոր աչքերը։ Ձեռքով շփեց, նորէ շփեց իր ճակատը, ինչպէս որ մարդ երազի մը մէջ կ՚ընէ՝ վախնալով որ կ՚արթնցնեն զ՚ինք այդ երազէն։

Հալֆոր անոր ցոյց տուաւ Ինկմարսկարտի անտառին մէջ անցեալ աշնան իր սպաննած մէկ

եղնիկին մորթը: Մորթը փռեցին գետինը. և որովհետև երէցը տակաւին այդքան մեծ ու այդքան գեղեցիկ եղնիկի մորթ տեսած չ'էր, Բարին բան մը փսփսաց իր ամուսինին ականջին ի վար և Հալֆոր խնդրեց երէցէն որ զ'այն նըւէր ընդունի:

Եւ սակայն, Բարին կ'երթար, կուգար, որմադարաններէն դուրս կը հանէր արծաթէ չինուած հին, սքանչելի գործ մը: Սեղանին վրայ կը փռէր սփռոց մը՝ որուն լայն եզերքները վանդակակերտ ասեղնագործութիւն ունէին: Ու սեղանին վրայ այնքան դգալ ու պատառաքաղ շարեց որ՝ կարծես թէ մեծ խնճոյք մը կար: Կաթն ու քչիկ մը գարեջուրը լեցուցին արծաթեայ ահագին փարչերուն մէջ. և ճաշէն ետք՝ երբ երէցը մնաս-բարով ըսաւ, Հալֆոր Հալֆորսոն անձամբ՝ իր երկու սպասաւորներուն հետ, ընկերացաւ անոր, ճամբայ բացաւ ձիւնի շեղջերուն մէջէն և ամուր ձեռքերով բռնած բալխիրը՝ տարաւ իր հիւրը մինչև անոր տանը բակը:

Երէցը ողջ-առողջ հասաւ իր երիցատան վերնադաւթակին վրայ, և չափազանց ուրախ որ նորէն ձեռք բերած էր հին բարեկամները՝ սըրտագին մնաս բարով մը կ'ըսէր Հալֆօրին: Բայց, դեղագին կը տնտնար, իր գրպանները կը խառնէր, ուրկէ վերջապէս դուրս հանեց ծալլուած թուղթ մը: Երկնցուց զ'այն երէցին: «Յայտարարութիւն մըն է ասիկա, ըսաւ Հալֆօր, որ վաղը չ'է միւս օր պիտի կարդացւի եկեղեցիին մէջ: Եթէ երէցը բարեհաճի առնել զ'այն, տեղ չի մնար այլևս թղթատարով խրկելու»:

Երէցը իր լապտերը վառեց թէ չ'է, բացաւ թուղթը և կարդաց. Ընկմարսկարտի

հողը ծախու հանուած է, անորտէրերը որոշած ըլլալով Երուսաղէմ մեկնիլ...:

Երէցը չի կարդաց մնացածը:

— Վա՛խ, մրմնջեց անիկա, աչքերը խորասուզած իր մտածումներուն մէջ. ահա թէ ինչպէ՛ս վերջը վերջը մեր ալ գլխուն կը պայթի՛. բա՛ն մը՝ ուրկէ շատոնց և այնքան շատ կը վախնայի՛...

IV

ՀՕՔ ՄԱԹՍ ԷՐԻՔՍՕՆ

Գարնան գեղեցիկ առաւօտով մը, գեղացի մը ու իր զաւակը ճամբայ ինկած էին դէպի այն մեծ դարբնոցները, որ կը գտնուէին գեղին հարաւային կողմը․ և որովհետև իրենք կը բնակէին գեղին հիւսիսային ծայրը, ստիպուած էն գրեթէ քալել անցնիլ գեղին մէկ ծայրէն միւսը։ Իրենց չուրջը նոր ցանուած արտերը սկսեր են արդէն ծածկուիլ թարմ ու փափուկ խոտով։ Անոնք կը տեսնեն հաճարի արտերուն պարարտ կանաչութիւնը և գեղեցիկ մարգագետինները՝ զ'որս շուտով առւոյտը պիտի կարմրցնէ և խընկաւետէ։ Անոնք կ'անցնին տուներու ու դարձեալ տուներու առջևէն՝ որոնք կը ներկեն կամ որոնց պատուհաններն ու վերանտաները կը շինեն։ կ'անցնին պարտէզներու երկայնքէն՝ որոնք

կը փորեն և կը փոցխեն։ Բոլոր իրենց դէմ ելլողներուն մուճակները կաւով ցեխոտած են և ձեռքերը հողոտ, որովհետև ամէնքն ալ կուգան իրենց արտերէն և իրենց ցանկապատ բանջարանոցներէն՝ ուր կաղամբ ու գետնախնձոր, բողկ ու ստեպղին տնկած են։

Գեղացին չի կրնար ինքզինք զսպել՝ կեցնելու զ'անոնք և հարցնելու թէ ի՛նչ տեսակի գետնախնձոր տնկած՛ են կամ ե՞րբ սերմանած են իրենց վարսակը։ Չի կրնար տանիլ հորթ մը կամ մտրուկ մը՝ առանց սաստիկ փափաք զգալու՝ իմանալ անոր տարիքը։ Չի տեսներ ագարակ մը, առանց հաշուելու թէ քանի կով կրնայ սնանիլ հոն և ի՛նչ գումար կրնայ վաստկուիլ՝ մտրուկներ մեծցնելով անոր մէջ։

Տղան անընդհատ կը ջանայ իր հօրը մտածումները ուրիշ բանի վրայ դարձնել։

— Չե՞ս խորհիր թէ, կ'ըսէ տղան, քիչ ատեն ետքը այսպէս պիտի անցնինք նաև Սարօնի հովիտէն ու Հրէաստանի անապատէն։

Տարտամ ժպիտ մը կը շողայ ծերունիին դէմքին վրայ։

— Բաղցր պիտի ըլլայ, կը պատասխանէ հայրը, քալել Մեր-Տիրոջը քալած տեղերէն։

Բայց, անմար կիր բեռցուած երկու սայլեր կուգան իրենց կողմը։

— Նայի՛ր, Գաբրի՛էլ, կը շարունակէ ծերունին, նայի՛ր։ Ո՞վ է այս կիրը բերողը։ Կըսեն թէ կիրը շատ կը պարարէ հողը։ Կը մնայ որ աշնան տեսնենք հե՛ղ մը։

— Աշնա՞ն, հա՛յր, կը մրմնջէ տղան՝ կշտամբական շեշտով մը։

— Այո՛, կը փութայ պատասխանել հայրը․

գիտեմ թէ աշնան ես պիտի ապրիմ Յակոբի վրաններուն տակ և Թագաւորական այգիին մէջ որթատունկ պիտի տնկեմ :

— Ա մ է ն, կ'աւելցնէ տղան, ամէ՛ն :

Կը շարունակեն իրենց ճամբան, այնքան թարմօրէն ծաղկած այս նորահաս գարնան մէջ: Փոսերուն մէջ ջուրը կը ծփայ · անձրևները թըրմած և հերձատած են ճամբաները: Աչքդ ո՛ր կողմ որ պտտցնես՝ ընելիք աշխատանք կը տեսնաս: Եւ մարդ բուռն բաղձանք կ'ունենայ փորել այդ կակուղ հողը՝ նոյնիսկ իր դրացիին արտին մէջ:

— Ա՜խ, կ'ըսէ դանդաղօրէն գեղացին, ճըշմարիտը որ կ'ուզես՝ աղէկ պիտի ըլլար որ աշնան ծաղկի հողս, երբ աշխատանքը վերջացած ըլլար: Դժուար կուգայ ինծի ճամբայ ելլել գարնան, ճիշդ այն պահուն՝ երբ մարդ կը փափաքի հոն երթալ յագեցած ամբողջովի՛ն:

Տղան ուսերը կը թօթուէ, համակերպա՛ծ ծերունիին շաղփաղփանքին :

— Երեսունը մէկ տարի կայ որ գնեցի, երբ դեռ շա՛տ երիտասարդ էի, գեղին հիւսիսային կողմը՝ կտոր մը անմշակ և վայրի հող: Տակաւին երբեք հողն ու քարհատը այդքան կարծր տեղի չ'էին հանդիպած : Հողին կէսը՝ ճախին, միւս կէսն ալ քարքարուտ երէզ մըն էր: Այս երէզին մէջէն մէջքս կոտրելով հանեցի քարերը, բայց, խա՛չ որ, ինծի այնպէս կուգայ թէ հիմա ալ դարձեալ կրնամ մէջքս երկու կտոր ընել՝ ուրդելու և չորցնելու համար ճախինը:

— Այո՛, անշուշտ, կ'ըսէ տղան, գործ ունիս կատարելիք · անոր համար է որ Աստուած քեզ կը կանչէ այսօր իր Սուրբ Երկիրը :

— Առաջները, կը շարունակէ գեղացին, կը բնակէի խրճիթի մը մէջ՝ որ ածխագործի մը խուղին պէս բան մըն էր: Շինուած էր ծառի կոճղերով՝ որոնց վրայէն կեղևն ալ կեղուըուած չ'էր, ու ծածկուած էր պնդացած հողով: Իբր թէ տուն ունէինք, բայց երբ անձրև գար, ա՜խ, որքան տաժանելի օրեր էին, ջուրը վար կը կաթէր՝ մանաւանդ գիշերը: Կովն ու ձին ալ ինծմէ աղէկ տեղի մը մէջ չ'էին մնար : Ձմեռուան առջի բերանը՝ զ'անոնք կը կապէի տեսակ մը մութ ներքնատան մէջ:

— Հա՛յր, ըսաւ տղան, ինչո՞ւ այդքան խօսքը կ'ընես այդ ափ մը հողին՝ որուն վրայ այնքան նեղութիւն կրած ես :

—Բայց, մտածէ անգամ մը ուրախութիւնս՝ երբ կրցայ շինել խոշոր գոմեր և երբ տաւարը տարուէ տարի շատցաւ ու պէտք եղաւ որ գոմերը նորէն ընդարձակե՛մ: Ա՜խ, եթէ ծախած չ'ըլլայի հողերս՝ պիտի նորոգէի ախոռին տանիքը: Եւ ճիշդ ատենն էր, հի՛մա, որ ցանքը վերջացած է :

— Հա՛յր, ըսաւ տղան, դուն ցորեն պիտի սերմանես այն երկիրը՝ ուր մաս մը կ'իյնայ փուշերուն մէջ, մաս մը՝ ճամբուն վրայ, մաս մը՝ քարերուն վրայ և մաս մը՝ ընտիր հողին մէջ:

— Գալով այն հին բնակարանին, շարունակեց գեղացին, որ շիներ էի իմ առաջին խրճիթէս ետք, կը խորհէի քակել այս տարի և անոր տեղը շինել երկու յարկանի տուն մը · ի՛նչ պիտի ընէինք այնքան փայտը որ այս ձմեռ սայլով կրեցինք · այդքա՛ն յոգնութիւն քաշեցինք,

թէ՛ մենք, թէ ձիերը։

Որդին կը սկսի անհանգստութիւն մը զգալ։ Իրեն այնպէս կու գայ որ կարծես հայրը կը հեռանայ իրմէ և այլևս հոգեկան այն տրամադրութեան մէջ չի գտնուիր՝ ինչպէս որ պատշաճ էր, զոհողութիւն մը ընելու համար Աստծոյ։

— Այո՛, կ'ըսէ տղան. բայց ի՞նչ կարժէ նոր տունն ու ախոռը՝ երբ մարդ միտքը բերէ այն մաքուր կեանքի երանութիւնը, որ պիտի անցընէ միևնոյն հաւատքով ոգևորուած մարդոց հետ։ Ա լ է լ ո ւ ե ա՛։

— Գիտեմ, կը պատասխանէ ծերունին, թէ երջանկութեան բաժին մը վերապահուած է մեզի։ Այսպէ՛ս, կ'երթամ ընկերութեան ծախելու իմ ագարակս։ Եւ երբ քիչ ետքը վերադառնամ այս ճամբէն, ամէն բան վերջացած պիտի ըլլայ, — բան մը պիտի չ'ունենամ այլե՛ս։

Որդին անխօս կը մնայ, գո՛հ որ իր հայրը փոխած չ'է մտադրութիւնը։

Քիչ յետոյ կ'անցնին բլուրին վրայ կառուցուած գեղեցկաշէն ագարակի մը առջևէն. անոր ճերմակ տունը՝ իր վէրանտայով, վեր կը բարձրանայ բարձր կաղամախիներուն ետևէն՝ որոնց մութ արծաթագոյն բուները կ'ուռին աւիշով։

— Նայի՛ր, նայի՛ր, կ'ըսէ հայրը։ Ահա այսպէս տուն մը կ'ուզէի ես. պատշգամ մը ու վրան ալ վէրանտա մը, շատ մը քանդակներ, և մուտքի դռան առջև ալ բարակ ու խիտ խոտերով խոշոր մարմանդ մը։ Դուն ալ չե՞ս գտներ որ շատ աղուոր բան մը պիտի ըլլար, Գաբրիէ՛լ։

Պատասխան չի կայ. և հայրը կը հասկնայ որ իր տղան լսել չ'ուզեր ագարակին վրայ խօսուածը։ Ինք ալ կը լռէ. բայց անդիմադրելի կեր-

պով իր մտածումները դարձեալ միևնոյն բանին կը վերադառնան։ Իր հողին նոր գնողը ինչպէ՞ս պիտի գործածէ ձիերը. ի՞նչպէս հոգ պիտի տանէ ցանքերուն։

«Ա՛խ, կը մտածէ ան, սխալ կ'ընեմ ընկերութեան ծախելով։ Պիտի կտրտեն անտառն ամբողջ և պիտի ձգեն որ տունը աւեր-աւերակ դառնայ։ Իմ չորցուցած ճախինս նորէն ճախին պիտի ըլլայ և ցարասիներու անտառը նորէն պիտի ծածկէ դաշտը»։

Հասան դարբնոցները. հոն նոր տեսարան մը կ'արթնցնէ իր ուշադրութիւնը։ Կը նշմարէ նոր սիստէմի սայլեր ու ցաքաններ, և կը յիշէ թէ ի՜նչ մեծ փափաք մը ունէր գնելու հնձող մեքենայ մը։ Կը նայի իր գաւկին, այդ գեղեցիկ երիտասարդին և կ'երևակայէ որ անիկա նստած է շքեղ ու կարմիր հնձող մեքենայի մը վրայ. շաչեցնելով իր մտրակը բարձրահասակ խոտերուն մէջ՝ որոնք կը հնձուին։ Եւ այս երևակայական հնձող մեքենային աղմուկը կը հալածէ զ'ինք մինչև գործատան գրասենեակը. կը լսէ թեթև խշրտոցը կտրուած խոտերուն, խրտչած ճռուողիւնը թռչուններուն և բզզիւնը միջատներուն

Վաճառման թուղթը հոն է, մօտիկը, սեղանին վրայ. սակարկութիւնը վերջացած է, գինը որոշուած. կը մնայ ստորագրել միայն պայմանագիրը։ Կը կարդան զ'այն իրեն. կը լսէ թուումի մասանցը անտառին, արտերուն և մարգագետնի տէօնիւմներուն, անշարժ կալուածներուն և անասուններուն. և իր դիմագիծերը կը խստանան։

«Ո՛չ, կ'ըսէ ինքնիրեն, պիտի չ'ըլլայ ասի-

կա» :

Ընթերցումը կը վերջանայ և Ծերունին յայտարարելու վրայ է թէ միտքը փոխեր է, երբ իր տղան կը ծռի ու անոր ականջին կ'ըսէ․

— Հա՛յր, կա՛մ ես, կա՛մ ագարակը։ Ինչ որոշում ալ որ տաս, ես պիտի չի կենամ, պիտի մեկնիմ։

Ագարակին գաղափարը այնքան գրաւած էր զինքը որ բնաւ միտքն եկած չ'էր թէ իր տղան՝ առանց իրեն ալ կրնար մեկնիլ։ Ըսել է, այսպէ՛ս, իր տղան պիտի ձգէր հեռանար զի՛նք։ Ահա խելքի չ'հասնելիք բանը․ որովհետև, եթէ Գաբրիէլ տունը մնայ ուզած ըլլար՝ ինք անտարակոյս մեկնիլը միտք պիտի չ'բերէր։ Բայց, հասկնալի բան է որ հայրը պէտք է հետևի իր զաւկին։

— Գրեցէք հոս Հօք Մաթս Էրիքսօն։

Ծերունին կ'առնէ գրիչը, և այս վճռական ժամուն, իր աչքին դէմ կուգայ այն պայմանագրութիւնը՝ որ երեսուն տարի առաջ զ'ինքը տէր կը դարձնէր կտոր մը անմշակ և վայրի հողի․ կը տեսնէ ինքզինք, երբ այն ատեն՝ ստորագրելէ ետք պայմանագրութիւնը, գնաց աչքէ անցնելու իր ստացուածքը և ըսաւ ինքնիրեն․ «Ահա ինչ որ Աստուած տուաւ քեզի․ ահա գործքու ամբողջ կեանքիդ համա՛ր»։

Ընկերութեան տեսուչը կը կարծէ թէ անոր վարանման պատճառն այն է որ ճիշտ չի գիտեր թէ ո՛ւր ստորագրել պէտք է․ ուստի, դարձեալ ցոյց կուտայ տեղը․

— Ահա հոս․ գրեցէք հոս Հօք Մաթս Էրիքսօն։

Ծերունին կսկսի գրել խոշոր գրեր։

«Ասիկա, կը մտածէ ծերունին, ասիկա՛, կը գրեմ իմ հաւատքիս և իմ փրկութեանս համար, իմ Հէլկումեան սիրելի բարեկամներուս և մեր համայնական կեանքին համար, և անոր համար՝ որ մինակ չի մնամ, քանի որ ամէնքը կը մեկնին, կ'երթան»։

Եւ կը կազմէ իր առաջին անուան երեք գրերը․ Հօք։

«Ասիկա ալ կգրեմ իմ Գաբրիէլ զաւկիս համար, այն բոլոր բարութիւններուն համար՝ որ անիկա ունեցաւ իր ծերունի հօրը նկատմամբ, որպէսզի չի կորսնցնեմ այսքան ազնիւ տղայ մը և վկայեմ իրեն թէ իրմէ աւելի սիրելի բան չ'ունիմ աշխարհքիս մէջ»։

Այսպէս է որ կգրուի ահա իր երկրորդ անուանը,— Մ ա թ ս։

Իսկ ասիկա ալ, կը մտածէ ան՝ գրիչը մօտեցնելով թուղթին... ասի՛կա, հապա ասիկա ի՛նչ բանի համար կը գրեմ...»

Եւ ահա իր ձեռքը կը շարժի ինքնաբերաբար և կ'աւրէ թանձր գծերով այդ դարչելի թուղթը վերէն մինչև վար։

«Ասիկա, այո՛, ասիկա՝ կ'ընեմ այսպէս, որովհետև խեղճ ծերունի մըն եմ ես՝ հարկադըրուած մշակելու հողը, հերկելու ու սերմանելու այն տեղը՝ ուր քրտինք թափած եմ»։

Հօք Մաթս Էրիքսօն խիստ տագնապալի երևոյթ ունի՝ երբ կը դառնայ Ընկերութեան տեսուչին և անոր ցոյց կուտայ թուղթը։

— Տեսուչը թող ներողամիտ գտնուի ինծի, կըսէ․ դիտաւորութիւնս էր ծախել ագարակը, բայց կը տեսնեմ որ անհնար է...

V

ՎԱՃԱՌՈՒՄԸ

Ինկմարսկարտի աճուրդը տեղի ունեցաւ մայիս ամսուան մէջ։ Ի՜նչ գեղեցիկ օր էր, Տէր Ա՛ստուած, չիտակ ամառուան եղանա՜կ։ Էրիկ մարդիկ հանած էին իրենց երկար մուշտակները և կը պտտէին կարճ ներքնակներով. կիները հագեր էին արդէն այն ուռուցիկ թեզանիքները՝ որոնց ճերմակութիւնը ամառուան գալուստը կը ծանուցանէ։

Վարժապետին կինը փութաց աճուրդին երթալու։ Կէրթրուտ չ'էր ուզեր ընկերանալ անոր, իսկ Սթօրմ ալ զբաղած էր։ Սթինա մայրիկ բացաւ դասարանին դուռը և նշանով մնաս բարով ըսաւ իր ամուսնին։ Վարժապետը այդ պահուն կը խօսէր Նինուէ մեծ քաղաքին կործանման վրայ, և իր դէմքը այնքան ահարկու

արտայայտութիւն մը ստացած էր որ խեղճ աղջիկները իրենց վախէն կիսամեռ էին դարձեր։

Ճամբուն երկայնքին՝ մայր Սթինա կանգ կ'առնէր ծաղկած վայրի կեռասենիներուն և այն փոքր հողակոյտերուն առջև՝ ուր կ'անուշահոտէին ճերմակ քօղահերձերը։

«Կը հարցնեմ ձեզի թէ, կը մրմնջէր, այսքան գեղեցիկ բան կարելի՞ է տեսնել նոյնիսկ Երուսաղէմի՛ մէջ»։

Մայր Սթինա անոնցմէ էր որոնք երկու անգամ աւելի կը սիրէին իրենց գեղը՝ այն օրէն ի վեր որ աղանդաւորները Սոդոմ անունը կուտային անոր և կը խօսէին թէ պէտք է ձգել-հեռանալ անկէ։

Մայր Սթինա քաղեց ճամբուն եզերքը բուսած ծաղիկներէն և զ'անոնք կը դիտէր տեսակ մը գուրգուրանքով։

«Եթէ իրաւ անոնց ըսածին չափ գէշ մարդիկ ըլլայինք մենք, կը մտածէր անիկա, Աստուած պիտի թողուր որ ցուրտը չարունակէ և ձիւնը ծածկէ գետինը։ Դիւրութեամբ պիտի կրնար ջնջել մեզ։ Բայց քանի որ մեր Տէր-Աստուածը գարունը կը վերադարձնէ մեզի՝ իր ծաղիկներով, ըսել է որ յայտնապէս մեզ արժանի կը դատէ ապրելու»։

Երբ մայր Սթինա Ինկմարսկարտ հասաւ, անհանգիստ ակնարկ մը պտտցուց իր չորս բոլորը։

«Ներսէս կուգայ որ ետ վերադառնամ, ըսաւ ինքնիրեն. չ'եմ կրնար տեսնել որ այսպէս քար ու քանդ ըլլայ այս հին տունը»։

Բայց էապէս, պառաւ կինը շատ հետաքրքիր էր տեսնելու թէ ի՛նչ պիտի պատահի։

Ինկմարսկարտը ծախու հանուածին պէս», Ինկմար ուզած էր գնել զ'այն: Դժբախտաբար երեք հարիւր ոսկիէն աւելի չ'ունէր, իսկ Պէրկսանայի Դարբնոցներու Ընկերութիւնը հազար երկու հարիւր յիսուն ոսկի կ'առաջարկէր Հալֆորին: Ինկմար յաջողած էր փոխատուներ գտնել, բայց ընկերութիւնը բարձրացուց իր առաջարկած գինը մինչև հազար հինգ հարիւր ոսկիի․ և Ինկմարի աչքը կտրած չ'էր այդքան խոշոր պարտքի մը տակ մտնել: Ոչ միայն ագարակը ընդմիշտ պիտի ելլէր ընտանիքին ձեռքէն, քանի որ Ընկերութիւնը երբեք իր գնածը անգամ մըն ալ չ'էր ծախեր, այլ տակաւին—ու ամենէն դժնդակն էր ասիկա—Ինկմար գրեթէ ապահովաբար հարկադրուած ըլլալով ձգել Լանկֆորսընի սղոցարանը, անօթի պիտի մնար: Ա՛լ մնաս բարով Կէրթրուտի հետ իր ամուսնութիւնը՝ որ տեղի պիտի ունենար աշնան: Ո՞վ գիտէ նոյնիսկ թէ պիտի չ'հարկադրուէր պանդխտութեան երթալ՝ աշխատանք գտնելու: Երբ մայր Սթինա կը խորհէր ասոնց վրայ՝ կը զայրանար Քարինի ու Հալֆորի դէմ:

«Սրտանց կը փափաքիմ որ, մրմիջեց մայր Սթինա, Քարին Ինկմարսատօթէր չ'խօսի հետս․ որովհետև, պիտի չի կրնամ ինքզինքս զսպել՝ իրեն ըսելու համար թէ ո՛րքան գէշ կը վարուի Ինկմարի հետ և յանցանքը իրենն է եթէ Ինկմար չ'կրնայ տէր ըլլալ իր ստացուածքին: Կըսեն կը մնան թէ շատ, շա՛տ դրամ պէտք է իրենց ճամբորդութեանն համար․ բայց քիչ մը զարմանալի է միևնոյն ատեն որ Քարին սիրտ կ'ունենայ այս հին տունը ծախելու Ընկերութեան մը՝ որ կկտրտէ անտառները և կործ կը

ձգէ արտերը»:

Մինակ Դարբնոցներու տեսուչները չ'էին Ինկմարսկարտը գնել ուզողները: Հարուստ Պէրժէր Սվէն Փէրսօնն ալ մէջտեղ ելած էր: Սվէն Փէրսօն վեհանձն մարդ էր․ և եթէ բաղդը բերէր ու ինք դառնար ագարակին տէրը՝ պիտի չ'մերժէր Ինկմարին, վարձու տալ սղոցարանը․ որովհետև, կը մտածէր մայր Սթինա․ Սվէն Փէրսօն պիտի չ'մոռնայ թէ ատենօք ինք Ինկմարսկարտի մէջ աշխատած է իբրև հօտաղ և Մեծ Ինկմարը եղած է զինքը հարստութեան հասցնողը:

Աճուրդի եկողներէն մեծ մասը տունէն ներս չ'էր մտներ, այլ կը մնար բակին մէջ: Մայր Սթինա նստեցաւ փայտի դէզի մը վրայ և կը դիտէր չորս բոլորտիքը՝ ինչպէս որ մարդ կը դիտէ իր սիրած մէկ տեղը, զ'որ այլևս պիտի չ'տեսնէ անգամ մըն ալ:

Բակին երեք կողմէն կը բարձրանային շէնքերը, իսկ մէջտեղը շինուած էր՝ ցիցերու վրայ, մարագը: Ոչ մէկ բան ցոյց կուտար թէ այնքան հին է այս տունը, բացի մուտքի դրան քանդակազարդ քիւով հին վերնադաւթակէն, ինչպէս նաև լուացարանին առջև միւս աւելի հին այն վերնադաւթակէն՝ որուն քիւը կռթնած էր ծանր և մաշած սիւներու վրայ: Մայր Սթինայի աչքին առջև կուգային բոլոր հին Ինկմարսօնները՝ որ իրենց ծանր քայլերով մաշեցուցեր էին այս վերնադաւթակներուն աստիճանները և այս բակին սալաքարերը: Կ'անցնէ՛ին իր աչքերուն առջևէն, աշխատանքէն վերադառնալով իրկունը և ներս մտնելով իրենց օճախէն, ամէնքն ալ բարձրահասակ, քիչ մը աղեղած, միշտ

երկչոտ, կարծես վախնալով անգաղտնապահ ըլլալէ կամ շատ նստելէ: Միտքը կը բերէր այն բոլոր աշխատանքն ու այն բոլոր պարկեշտութիւնը՝ որոնց ապաստարան եղած են այս պատերը․

«Ահա թէ ի՛նչ է որ ծախու կը հանեն․ թող տալու չ'էր որ ըլլար ասիկա․ իմաց տալու էր Թագաւորի՛ն»:

Մայր Սթինա երբեք այսքան դառն տխրութիւն պիտի չ'զգար՝ եթէ իր իսկ օճախն ըլլար ծախու հանուածը:

Վաճառումը տակաւին սկսած չ'էր, բայց բազմութիւնը կը խռնուէր արդէն: Ոմանք կը մտնէին ախոռները՝ աչքէ անցնելու համար տաւարը․ ուրիշներ կը դիտէին բակին մէջ դիզուած գործիքները, կացին, սղոց, սայլակ ու արօր: Ու ամէն անգամ որ մայր Սթինա ախոռներէն գեղացիներուն դուրս ելլելը կը տեսնէր, բարկութիւն կը զգար:

«Ահա մայր Ինկան ու մայր Սթաֆան որ իրենց համար մէկ մէկ կով են գտեր: Օ՜հ, ինչքան պիտի պարծենան որ Ինկմարսկարդի հին ցեղէն կովեր ունին»:

Երբ խեղճ Նիլսը՝ որ ողորմելի վանիկի մը մէջ կ'ապրի, իր վիճակի նշանը ձգեց արօրի մը վրայ․ «խաչոր, մտքէն ըսաւ մայր Սթինա, Նիլս ինքզինք պէկ պիտի կարծէ՝ երբ քշէ այն արօրը՝ որով հողը հերկած է Մեծ Ինկմարը»:

Ամէն վայրկեան նոր հասնողներ կը հաւաքուէին ծախու առարկաներուն շուրջ: Էրիկ մարդիկ իրարու կը հարցնէին մինչև անգամ զարմանքով թէ ի՞նչ բանի կը գործածուէին կարգ մը այնքան հին ձևով գործիքներ՝ որոնք չ'էին տեսեր երբեք: Եւ ոմանք իրենց զարմանքէն

չ'էին կրնար խնդուքնին բռնել հին բալխիրներուն վրայ, որոնցմէ մէկ քանին չքեղօրէն կարմիր ու կանաչ ներկուած էին և որոնց սարքը պճնազարդուած էր խառներփեան ճիճի-պիճիներով ու ճերմակ ժժմակներով: Ու մայր Սթինայի այնպէս եկաւ թէ՝ կը տեսնէ հին Ինկմարսօնները որ նստած այդ հնօրեայ բալխիրներուն մէջ, կ'անցնին հանդիսաւորապէս․ հանդէսի կ'երթան կամ հարսնիքէ կը վերադառնան, հարսը նստած իրենց քովն ի վեր: «Որքա՜ն պատուական մարդիկ որ մէկ անգամէն պիտի թողուն-երթան այս գի՛ւղը» ինքնիրեն կ'ըսէ մայր Սթինա․ որովհետև իրեն այնպէս կուգար թէ ինչքան ատեն որ անոնց գործիքներն ու անոնց սայլակները հոս էին տակաւին, այդ հին դէմքերը կը բնակէին ագարակին մէջ:

«Ո՞ւր է հապա Ինկմարը, ինքնիրեն հարցուց մայր Սթինա: Եթէ իմ դժուարիս այսքան շատ կ'երթայ, հապա իրե՞ն ինչքան դէշ պիտի երթայ»:

Քանի որ օդը այսքան գեղեցիկ էր, փոխանակ տանը ներսը զ'իրար հրմշտկելու, աճուրդարարը առաջարկեց վաճառումը կատարել բակին մէջտեղը: Սպասաւորներն ու աղախինները դուրս բերին՝ ուրեմն սնտուկներ ու պայուսակներ՝ որոնց վրայ շուշաններ ու վարդեր նկարուած էին և որոնցմէ շատերը հարիւր տարիէ աւելի մնացեր էին հին ու մին ամաններու սենեակին մէջ: Բերին նաև արծաթէ փարչեր, պղընձէ հին սաներ, ջարհակներ և անկողնի կազմածներ: Եւ կիները, հաւաքուած աման-չամաններուն շուրջը, կը վերցնէին ու կը շրջշրջէին զ'անոնք:

Մայր Սթինա բան գնելու միտք չ'ունէր բնաւ, բայց յիշեց յանկարծ այն տեսակ մը գործիքը՝ որուն վրայ կտաւ կը գործեն. ուստի, ինք ալ մօտեցաւ։ Աղախիններէն մէկը կուգար այդ միջոցին, գրկած երկու աճապին հին Աստուածաշունչներ՝ այնքան ծանր իրենց արծաթեայ կոմարիշոյք ու կաշիէ կազմովը, որ աղջիկը եր ու խամթ էր եղեր բեռան տակ։ Կարծես թէ մայր Սթինայի երեսին հարուած մը իջեցուցին. անմիջապէս ետ դարձաւ և գնաց, նստեցաւ իր փայտի դէզին վրայ։ Այսօր այլեւս մէկը չի կար որ գործածէր այդ գրաբար հին Աստուածաշունչները, բայց և այնպէս խելքին չէր հասներ թէ Բարին կրնար ծախու հանել զ'անոնք։ Թերևս այդ Աստուածաշունչներէն մէկն էր որ կը կարդար Ինկմարսկարտի տիրուհին՝ այն օրը, երբ լուր բերին իրեն թէ արջը փարատած էր իր ամուսինը։ Եւ պառաւ կնոջ միտքը կուգային բոլոր այն բաները՝ որ լսած էր Ինկմարսոններուն վրայ։ Ամէն մէկ առարկայ իր պատմութիւնն ունէր։ Հոն, սեղանին վրայի տա արծաթէ օղերը՝ Ինկմար Ինկմարսոններէն մէկը խլած էր այն Շւտոններուն ականջէն, որոնք կը բնակին Քլաքպէրկի լեռը։ Լաւ կը ճանչնար տա հին Թիկնաթոռակը. անոր վրայ էր որ ամէն կիւրակէ, Ինկմար Ինկմարսոնը, նստեցուցած, իր մանկութեան ատեն, Եկեղեցի կը տանէին։ Եւ ամէն անգամ որ Ինկմար Ինկմարսոն ճամբան իրեն ու իր մօրը առջեւէն կանցնէր, իր մայրը կը դնէր ձեռքն իրեն ուսին վրայ և կըսէր.

— Սթինա՛, խոնարհութիւն մը ըրէ՛, Ինկմար Ինկմարսոնն է որ կ'անցնի։

Եւ կը զարմանար որ իր մայրը երբեք այս բարեւը չ'էր մոռնար Ինկմարին, մինչդեռ այդքան խստապահանջ չ'էր ըլլար դատաւորին համար. բայց ըմբռնած էր որ իր պառաւ մայրը, աղջիկ եղած ատեն, ինք ալ երբ պտտած էր Եկեղեցիին ճամբուն վրայ, իր մայրը նոյնպէս ձեռքը դրած էր անոր ուսին վրայ և ըսած.

— Խոնարհութիւն մը ըրէ՛, որովհետև Ինկմար Ինկմարսոնը կ'անցնի ահա։

«Աստուած գիտէ թէ, հառաչեց մայր Սթինա, արտմութեանս միակ պատճառը ան չ'է որ կը յուսայի օր մը Կէրթրուտը այս հին տանը տիրուհին տեսնել։ Ինծի այնպէս կուգայ թէ բոլոր այս առարկաններուն ցրումը դեղին վերջը կը նշանակէ»։

Եկաւ երէցը՝ լուրջ ու տխուր. քալեց շիտակ դէպի տունը և մայր Սթինա ենթադրեց թէ Բարինին ու Հալֆորին քով կ'երթայ՝ Ինկմարին գործը պաշտպանելու։ Քանի մը վայրկեան ետքը ներս մտաւ Պէրկսանայի վերակացուն, Սղոցարաններու Ընկերութեան պատուիրակը, որուն ետեւէն անմիջապէս հասաւ նոյնպէս Պէրժէր Սվէն Փէրսոնը։

Փէրսոն քիչ մը կեցաւ բակին մէջ՝ դիտելու առարկանները. և պտտելով՝ պտտելով՝ կանգ առաւ խոշոր մօրուքով կարճուկ ծերունիի մը առջև, որ մայր Սթինային հետ նստած էր միեւնոյն փայտի դէզին վրայ։

— Սթարք արդեօք ի՞նչ տեղեկութիւն ունի, հարցուց անիկա. Ինկմար պիտի գնէ՞ խընդրոյ առարկայ եղող անտառը։

— Կըսէ թէ ոչ, պատասխանեց Սթարք, բայց ինծի կուգայ թէ շուտով պիտի փոխէ միտքը։

Եւ կարճուկ ծերունին աչքը քթթեց՝ հասկցնելով Սվէն Փէրսոնին թէ վարժապետին կինը հոն էր, ուստի չէր ուզեր խօսիլ։

— Ինծի կուգայ թէ, յարեց Սվէն Փէրսոն, շատ շահաբեր գործ է և ամեն օր այդ տեսակ առաջարկ մը չեմ կրնար ընել· եթէ այսօր կ'ընեմ՝ Մեծ Ինկմարին յիշատակին համար է։

— Լաւ գործի մը համար, լաւ առաջարկ է, վրայ բերաւ Սթարք· բայց ինք կ'ըսէ թէ ուրիշ տեղ արդէն սակարկութիւն կնքած է։

— Լաւ խորհա՞ծ է թէ ի՛նչ պիտի ըլլայ իր կորուստը, աւելցուց Սվէն Փէրսոն՝ շարունակելով կամաց կամաց իր ճամբան։

Մինչև այս ատեն՝ Ինկմարենց ընտանիքին ո՛և է մէկ անդամը երևցած չ'էր բակին մէջ· յանկարծ նշմարեցաւ Ինկմարը՝ կռթնած պատի մը, անշարժ և աչքերը դրեթէ գոցած։ Մէկ քանի հոգի առաջ անցան՝ բարև տալու իրեն, բայց զինք տեսան այնքան տժգոյն, դէմքը ա՛յնքան այլայլած իր ներքին պայքարէն՝ որ ետ կեցան։ Շատեր նոյնիսկ չի նշմարեցին իր ներկայութիւնը՝ ա՛յնքան որ կանգնած էր անխըլրտ· իսկ անոնք որ անգամ մը տեսած էին զ'ինք՝ չ'էին կրնար այլևս իրմէ զատ ուրիշ բանի վրայ մտածել։ Այս երիտասարդին կեցուածքը, կռնակը տուա՛ծ այն տանը պատին՝ զոր պիտի կորսնցնէր, արգիլեց այն կատակները, շատակրատութիւններն ու հեգնանքները՝ որոնք սովորաբար կը փոխանակուին վաճառումներու ատեն։

Վերջապէս հասաւ աճուրդի ժամը։ Ցառաջ մէջղաթճին՝ բարձրացած իր աթոռին վրայ, պո-

ռաց նախ հին արօր մը։ Ինկմար տեղէն անգամ չ'երերաց՝ իբր թէ քար կամ փայտ եղած ըլլար ինք։

— Ա՛խ, Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ չ'երթար, կ'ըսէին մարդիկ· ինչո՞ւ կը կենայ՝ հանդիսատես ըլլալու այս կսկծալի տեսարանին· իրօք որ Ինկմարսոնները ուրիշներէն բոլորովին տարբեր ընթացք մը ունի՛ն։

Իջաւ մուրճի առաջին հարուածը։ Ինկմար կրեց անոր բաղխումը· դողդղաց, բայց անմիջապէս վերստացաւ իր անշարժութիւնը։ Սակայն ամեն մէկ հարուած կը ցնցէր զ'ինք երկարատև դողդղուքով մը։

Երկու ագարակապաններ անցան մայր Սթինայի առջևէն, որ լսեց թէ կը խօսին Ինկմարի վրայ։

— Սակայն և այնպէս, կ'ըսէր մէկը, եթէ ուզած ըլլար ամուսնութեան խնդրել հարուստ աղջիկ մը, պիտի կրնար ի՛նք գնել Ինմարսկարտը, բայց կը խօսուի թէ՝ պիտի ամուսնանայ վարժապետենց Կէրթրուտին հետ։

— Այո՛, պատասխանեց միւսը· ըսողներ ալ կան թէ գեղին երևելիներէն մէկը առաջարկած է Ինկմարսկարտը գնելով իրեն տալ, եթէ ամուսնանայ իր աղջկան հետ։ Ինք այնքան լաւ ընտանիքի մը զաւակն է որ՝ իր աղքատութեանը նայող չ'ըլլար։

«Ա՛խ, մածեց մայր Սթինա, ի՛նչ օրհնութիւն պիտի ըլլար՝ եթէ Կէրթրուտ պէտք եղածին չափ դրամ ունենար և օգնէր անո՛ր»։

Մէկիկ մէկիկ ծախուեցան հողագործական գործիքները, և թէլլալը անցաւ բակին միւս մէկ մասին մէջ, ուր խրարու վրայ դիզուած էին

տունը գործուած սրակակեղէնները, գորգերն ու մաշճակալի վարագոյրները. Թէլլայը կ'երերցնէր զանոնք օդին մէջ և անոնց խառնուրդեան գոյները, անոնց եզերազարդերն ու անոնց վրայ անեղնագործուած կանաչները կը փողփողէին արևուն տակ: Այս պաստառի կտորներուն վէտվէտումը արթնցո՞ւց ինկժարը. երիտասարդը ակամայ վեր վերցուց իր արտևանունքները: Մէկ վայրկեան իր արիւնոտ աչքերը տրտում նայուածքով մը դիտեցին այս քարուքանդումը, յետոյ նորէն փակուեցան: Մայր Սթինա շփոթուեցաւ՝ կարծես պոռալու համար թէ ասիկա չ'էր կրնար այսպէս շարունակուիլ, թէ պէտք էր կեցնել այնքան ճիւաղային այս բանը, բայց նորէն նստեցաւ իր տեղը՝ մտածելով թէ ինք աղքատ էր ու անկարող:

Ցանկարծ, խոր լռութիւն մը տիրեց. Քարին ինկժարատօթէր դուրս կ'ելլէր տունէն: Գեղացիները ինչ որ կը խորհէին իր մասին և իր ըրածին վրայ, անվրէպ տեսանելի եղաւ, որովհետև երբ անիկա բակէն կ'անցնէր՝ մէկը իր ձեռքը չ'երկնցուց անոր, այլ ամէնքն ալ մէկ կողմ քաշուեցան և անոր կը հետևէին իրենց լռին անհաւանումովը: Ամեն տանէ աւելի կորաքամակ, երեսներուն վրայ երկու կարմիր բիծեր, շարշրկուած, նիհարած՝ Քարին ունէր նոյն վշտահար դէմքը, ինչ որ այն հին օրերուն, երբ իր դժուարին կռիւը կը մղէր Ելիասին դէմ:

Եկաւ մինչև վարժապետին կնոջ քով և հրաւիրեց զ'այն որ ներս մանէ տունը:

— Չէի գիտեր թէ մայր Սթինան հոս է, ըսաւ:

Պառաւը չկամ ձևեր ըրաւ, բայց Քարին յաղթեց անոր ընդդիմութեանը՝ ըսելով.

— Ուրախ պիտի ըլլայինք որ մոռցուէր ամէն անհամաձայնութիւն, հիմա երբ արդէն կը մեկնինք մենք:

Եւ երբ անոնք դէպի ներս կը քալէին, մայր Սթինա համարձակեցաւ ըսել անոր.

— Ծանր օր մը ըլլալու է այս օրը Քարինի համար:

Քարին հառաչեց՝ առանց պատասխանելու:

— Չեմ հասկնար թէ Քարինի սիրտը ի՛նչպէս կը բաւէ որ ծախուին բոլոր այս հին բաները:

— Մարդ իր ամենէն շատ սիրածն է որ նախ զոհելու է Տիրոջ, պատասխանեց Քարին:

— Բայց, տարօրինակ կը գտնեն...

Քարին ընդմիջեց զ'այն.

— Տէրն ալ տարօրինակ պիտի գտնէր որ իրմէ գողնային բան մը այն բոլորէն՝ որ իրեն տրուած են:

Մայր Սթինա խածաւ իր շրթունքները. ա՛լ չէր կրնար Քարինի ուզել այն մեղադրանքները՝ որ որոշած էր ընել անոր, այնքա՛ն ազնուութիւն և մեծանձնութիւն կար այս Քարինին մէջ:

Այն պահուն որ մայր Սթինա կը բարձրանար վերնագաւթակը, ձեռքը դրաւ Քարինի թևին վրայ և անոր ցոյց տալով ինկժարը՝

— Հոն ըլլալը տեսա՞ր, ըսաւ:

Քարին կարծես աւելի կորացաւ, և, առանց աչքերը իր եղբօրը կողմը դարձնելու.

— Տէրը ինք ե՛լք մը գտնէ, հառաչեց. Տէրը ինք ե՛լք մը գտնէ:

Մեծ սրահը, ու նստարաններն ու մաշճա-

կալները փակցուած էին պատին, դրեթէ ցոյց չէր տար վաճառման սակուլը: Բայց, գեղեցիկ պղնձեղէնները ա՛լ չ'էին փայլեր պատերուն երկայնքն ի վար. Ննջախորշերը՝ դատարկուա՛ծ վարագոյրներէ և անկողնի կազմածէ, կիսաբաց մնացեր էին, և որմադարաններու կապաններկ դռները՝ որ առենօք կիսաբաց կը մնային, այցելուներուն ցոյց տալու համար արծաթեայ երկար փարչերով և սկահակներով լի անոնց դարակները, գոց էին հիմա: Սենեակին մէջ բացի Երուսաղէմի նկարէն՝ ուրիշ զարդ մնացած չէր: Հոն լեցուած էին ազգականներ ու Հէլկուեմեաններ: Անոնցմէ ամէն մէկը, հարկադրիչ քաղաքավարութեամբ, վար դրուած էր՝ շնորհքով պատրաստուած սեղանի մը գլուխը:

Փոքր սենեակին դուռը գոց էր: Հոն տեղի կ'ունենային ագարակին վաճառման սակարկութիւնները: Անկէ կը լսուէին բարձր ձայներ, մանաւանդ Երէցին ձայնը: Բայց, մեծ սրահին մէջ մարդիկ լուռ կը մնային կամ կը խօսէին միայն ցած ձայնով: Բոլոր մտքերը, բոլոր մտածումները լարուած էին դէպի փոքր սենեակը՝ ուր կը ծեծուէր Ինկմարսկարտի բաղդը:

Մայր Սթինա դարձաւ դէպի Գաբրիէլ Մաթսոնը.

— Կ'ենթադրեմ, հարցուց անոր, թէ յուսալի չէ որ ագարակը նորէն Ինկմարի ձեռքն անցնի:

— Օ՛հ, իր տուած գինը շատ շա՛տ աւելցեր է, պատասխանեց Գաբրիէլ: Կըսեն թէ Քարմսոնտի պանդոկապետը հազար վեց հարիւր ոսկի տուած է, ընկերութիւնն ալ հազար եօթը հարիւր յիսունի հանած է: Երէցը կը ջանայ հա-

մոզելու Հալֆորը՝ որ ընկերութեան տալու տեղ՝ պանդոկապետին տայ:

— Հապա Պէրժէր Սվէն Փէրսօնը:

— Ո՛ևէ գին չի տուաւ ան այսօր:

Կը լսուէր Երէցին համոզիչ ձայնը. ու թէև անկարելի էր բառերը հասկնալ, բայց յայտնի էր որ քանի ան կը խօսէր, ըսել է դեռ վերջնական որոշումը չ'էր տրուած:

Վայրկեան մը լռութիւն տիրեց. յետոյ պանդոկապետը ուժեղ և տարօրինապէս յստակ ձայնով մը ըսաւ.

— Հազար ութը հարի՛ւր ոսկի կուտամ. ո՛չ թէ անոր համար որ ագարակը այդքան կ'արժէ, այլ անոր համար որ չ'եմ ուզեր անոր ընկերութեան ձեռքն իյնալը:

Այս բառերուն անմիջապէս ետևէն լսելի եղաւ սեղանին զարնուած բռունցքի հարուած մը և ընկերութեան վերակացուն պոռաց որոտագոչ ձայնով մը.

— Ես երկու հազար ոսկի կուտամ. և կը կարծեմ թէ Քարին ու Հալֆոր անկէ աւելին չ'են ակընկալեր:

Մայր Սթինա ոտքի ելաւ՝ դեփ-դեղին կըտրած, և վերադարձաւ բակը: Հօս ինչ որ կը տեսնէր՝ ողբալի և դառնակսկիծ էր. բայց, այդ գոց սենեակին մէջ լսուած աճուրդի աղմուկը՝ շատ աւելի զարհուրելի կը թուէր:

Կտաւեղէնները ծախուած էին. Թէլլալը նորէն տեղ փոխած էր: Կարգը եկած էր հին արծաթեղէններուն, ոսկեդրուագ խոշոր փարչերուն և սկահակներուն՝ որ ԺԷ. դարու արձանագրութիւններ կը կրէին: Երբ գլուխներէն վեր

բարձրացուեցաւ արծաթեայ առաջին փարշը, Ինկմար քայլ մը առաւ դէպի առաջ՝ կարծես թող չ'տալու համար որ ծախուի: Բայց կանգ առաւ անմիջապէս և ետ դառնալով՝ կռթնեցաւ պատին:

Քանի մը վայրկեան ետքը՝ ծերունի գեղացի մը կը մօտենար, ձեռքը բռնած փարշը, և կը դնէր զ'այն զգուշութեամբ՝ երիտասարդին ոտքերուն առջև:

— Ասիկա իբրև յիշատակ պահէ այն բոլոր բաներէն՝ որ քու ստացուածքդ պէտք էր ըլլային:

Ինկմարի մարմինը ցնցուեցաւ. դողդղացին իր շրթունքները, և ջանաց արտասանել մէկ քանի բառ:

— Պէտք չի կայ որ հիմա խօսիս, յարեց ծերունին. ուրիշ ատե՛ն, ուրիշ ատե՛ն:

Հեռացաւ մէկ քանի քայլ, յետոյ յանկարծ նորէն ետ դարձաւ.

— Լսեցի որ՝ եթէ ուզես, կրնաս եղեր տէր դառնալ ագարակին: Ինծի կուգայ թէ՝ անկէ աւելի մեծ բարիք չ'ես կրնար ընել ամբողջ գեղին:

Ինկմարսկարտի մէջ հին ծառաներ կային, որ հոն էին եկեր իրենց մանկութենէն, և հիմա խոր ծերութեան հասած՝ կը շարունակէին մնալ այնտեղ: Անձկութիւնը ամենէն շատ զ'անոնք էր որ կը խեղդէր դժնդակօրէն: Կը վախնային որ եթէ ագարակը ուրիշի ձեռք անցնի՝ դուրս պիտի վռնտուին իրենց օճախէն և պիտի հարկադրուին ձեռք առնել մուրացկանի ցուպը: Ինչ ալ ըլլար, այս խեղճ ծերունիները գիտէին

թէ ասկէ ետք այլևս իրենց հին տէրերուն պէս զ'իրենք հոգացող մէկը պիտի չ'ունենային: Անոնք ամբողջ օրը թափառած էին բակին մէջ՝ անկարող ըլլալով տեղ մը նստիլ: Այս արգահատելի ուրուականները, շլմորած և անզօր, ոտքերնին աղէն անդին կը քաշքշէին՝ իրենց մարած և կարմրածիր աչքերուն մէջ անձկալից նայուածքով մը: Վերջապէս անոնցմէ մէկը, հարիւրամեայ ծերունի մը՝ խորհեցաւ երթալ Ինկմարին քով և նստիլ անոր մօտիկը, քարի մը վրայ, կարծես այն միակ տեղը ուր կարելի էր քիչ մը հանգստութիւն գտնել: Եւ երբ պառաւ Լիզան ու հին կովարած Մարթան տեսան այս բանը, իրենք ալ անմիջապէս դըգըլ-դըգ եկան նստեցան երիտասարդին քով: Բան մը չ'էին ըսեր անոր, բայց այն տարտամ զգացումն ունէին թէ անիկա կրնար բան մը ընել իրենց, անիկա որ այսօր Ինկմար Ինկմարսոնն էր: Երիտասարդը մեծարագ աչքերով կը դիտէր զ'անոնք և կը տեսնէր անոնց մէջ՝ տարիներու այն բոլոր աշխատանքը, որ նուիրուած է եղեր իր ընտանիքին: Կը թուի թէ՝ մտածեց որ իր առաջին պարտականութիւնն էր խաղաղ մահ մը ապահովել անոնց՝ իրենց վաղնջական յարկին տակ: Իր նայուածքը՝ բակին մէջ փնտռեց Սթարքը: Տեսաւ զ'այն և գլխու նշան մը ըրաւ անոր:

Սթարք՝ առանց բառ մը ըսելու, առանց շարժում մը ընելու՝ անցաւ տունէն ներս և մտաւ փոքր սենեակը: Հո՛ն, սեմին մօտ՝ սպասեց յարմար առիթին, կատարելու համար իր պատգամաւորութեան պաշտօնը:

Երէցը՝ ոտքի վրայ կեցած սենեակին մէջտեղը, կը խօսէր Քարինի ու Հալֆորի հետ՝ որոնք երկուքն ալ անշարժ էին և դիակէն աւելի փայտ կտրած։ Վերակացուն, սեղանին առջև նստած՝ վստա՛հ որ կարող է ամէնէն ձեռնտու գինը տալ, կը սիգար իր յաղթանակին մէջ։ Քարմսունոի պանդոկապետը՝ պատուհանին մօտ, քրտնաթաթախ ճակատով, ձեռքերը դողդոջուն, սոսկալի կերպով յուզուած էր։ Պէրժէր Սվէն Փէրսօն նստած էր սեղանի վերի ծայրը. իր խոշոր, իշխանական դէմքը յուզման ոչ մէկ նշան կ'արտայայտէր։ Մատները իրարու անցուցած էր փորին վրայ և կարծես բթամատները արագ արագ շարժելէ զատ ուրիշ բանի վրայ չ'էր մտածեր։

Նոր երէցը լռեց, Հալֆոր ակնարկ մը նետեց Քարինին, կարծես խորհուրդ հարցնելու համար. բայց, Քարին աչքերը վեր չ'առաւ։

Քանին ու ես, ըսաւ Հալֆոր, հարկադրուած ենք մտածելու թէ օտար երկիր մը կ'երթանք, ուր մեր եղբայրներն ու մենք պիտի ապրինք մեր ծախած բաներուն ստակովը։ Միմիայն ճամբու համար՝ ծախս պիտի ունենանք եօթը հարիւր յիսուն ոսկի։ Եւ դեռ պէտք է որ տուն մը վարձենք հոն և հագնելիքի ու ուտելիքի համար ալ բան ունենանք։

— Ու յետոյ, ընդմիջեց վերակացուն, խելքի դէմ բան չէ՞ Քարինէն ու Հալֆորէն պահանջել որ իրենց ստացուածքը ընկերութեան, չ'ձգելու համար՝ վնասով ծախեն. ճշմարի՛տ, շատ լաւ պիտի ընէին ընդունելով իմ տուած գինս՝ որ գէթ զ'իրենք պիտի ազատէր այս թախանձանքներէ՛ն։

— Շատ ճիշդ է որ, հաստատեց Քարին՝ մենք ստիպուած ենք ընդունելու ամէնէն աւելի բարձր գինը։

Բայց երէցը դիւրաւ չ'էր վհատեր. և արդէն, երբ ինք ամպիոնին վրայ կանգնած չ'ըլլար ու խնդիրը երկրային բաներու մասին խօսին ըլլար, մէկը չի կար որ իրեն չափ աղէկ տրամաբանէր ու ճառէր։

— Բայց և այնպէս, Քարին ու Հալֆոր, ըսաւ երէցը, այնքան սրտով կապուած են այս հին ագարակին՝ որ նոյնիսկ յիսուն, հարիւր ոսկիի պակասը յանձն կ'առնեն, հերիք է որ իրենց ստացուածքը անցնի բաղձալի ձեռքերու մէջ, կարող ըայն խնամելու։

Եւ, յուզելու համար Մեծ Ինկմարին աղջըկան սիրտը, համրեց մէկ քանի ագարակներ՝ որ ընկերութեան ծախուած ըլլալով, աւեր-աւերակ դարձած էին։ Քարին չիտկեց իր գլուխը։

«Օ՛ն, կ'ըսէր մտքէն երէցը, վերջապէս գեղացի կինը արթննալու է անո՛ր մէջ»։

Երէցը եզրակացուց.

— Գիտեմ որ եթէ ընկերութիւնը միտքը դրած է անպատճառ գնել Ինկմարսկարտը, պիտի կրնայ միշտ բարձրացնել գինը։ Բայց, Քարին ու Հալֆոր պէտք է ըսեն վերջնական գինը՝ որպէսզի գեղացիները գիտնան իրենց ընելիքը։

Հալֆոր բազմահոգ դէմքով մը նայեցաւ իր կնոջ՝ որ ծանրութեամբ վեր վերցուց թարթիչները և պատասխանեց.

— Ստոյգ է որ իմ ու Հալֆորին փափաքն էր ծախել մեր նմաններուն և մեկնիլ, վստահ ըլլալով թէ՝ հոս նորէն ամէն բան պիտի շարունակուի առաջուան պէս։

— Այո՛, վրայ բերաւ Հալֆօր, եթէ ընկերութեան տեղ ուրիշ մը տայ մեզի երկու հազար ոսկին, անո՛ր պիտի ծախենք։

Սթարք մեծաքայլ անցաւ սենեակէն և եկաւ Պէրժէր Սվէն Փէրսօնի ականջէն բան մը փսփսաց։ Ասոր վրայ, իսկոյն Պէրժէր ոտքի ելաւ։

— Քանի որ Հալֆօր կը գոհանայ երկու հազար ոսկիով, ե՛ս կը վճարեմ, ըսաւ ան։

Հալֆօրի դէմքը կարկամեցաւ ջղաձգօրէն․ ուզեց խօսիլ և մէկ քանի անգամ բառերը կուլ տուաւ՝ պատասխանելէ առաջ հետեւեալը․

— Շնորհակալ եմ Պէրժէր Սվէն Փէրսօնէն․ ուրախ եմ որ ագարակը այսքան լաւ տիրոջ մը կը ձգեմ։

Սվէն Փէրսօն՝ խիստ յուզուած, արցունք մը աչքին պոչին վրայ, սեղմեց Քարինի ձեռքը։

— Քարին կրնայ վստահ ըլլալ, ըսաւ անիկա, որ այստեղ ամէն բան պիտի մնայ այնպէս ինչպէս որ ծանօթ է իրեն։

Եւ որովհետև Քարին կը հարցնէր թէ ինք անձա՞մբ պիտի գայ բնակելու Ինկմարսկարտ՝

— Ո՛չ, պատասխանեց Սվէն Փէրսօն հանդիսաւոր ձայնով մը և կանգ առնելով ամէն մէկ բառին վրայ․ այս ամառ պիտի ամուսնացնեմ իմ փոքր աղջիկս և անոր իբր օժիտ պիտի տամ ագարակը։

Յետոյ, դարձաւ երէցին՝ շնորհակալութիւն յայտնելու անոր ալ․

— Երէցին փափաքը պիտի կատարուի, յարեց․ բայց, որո՞ւ մտքէն կ'անցնէր թէ՝ երբ ես ատենօք իբրև աղքատ հօտաղ մը հոս կուգայի, պիտի կրնայի օրին մէկը Ինկմար Ինկմարսօն մը վերահաստատել Ինկմարսկարտի մէջ։

Ամէնքը զարմանքով անոր նայեցան, առանց հասկնալու թէ ի՛նչ ըսել կ'ուզէր այդ խօսքերով․ բայց Քարին աճապարանքով դուրս ելաւ։ Անցնելով մեծ սրահը, ինքզինքը ժողվեց, իր շալը հանգուցեց գլխուն վրայ՝ լաւ ծալք մը տալու համար անոր, և յարդարեց իր գոգնոցը։ Յետոյ, անցնելով բակէն մեծավայելուչ կերպով, մարմինը շիփ-շիտակ, աչքերը խոնարհած և յամրաքայլ, մօտեցաւ Ինկմարին ու բռնեց անոր ձեռքը։

— Կուզամ աչքդ լուսելու, Ինկմա՛ր, ըսաւ Քարին, ձայնով մը՝ զոր կը դողդղացնէր ուրախութիւնը։ Մենք իրարու սիրտ կոտրեցինք այս գործին մէջ, բայց, քանի որ Աստուած գլացաւ ինծի բարեբախտութիւնը՝ քեզ ալ միացած տեսնելու մեզի հետ, փառք կուտամ իրեն՝ թոյլ տուած ըլլալուն համար որ տէր դառնաս Ինկմարսկարտի։

Ինկմար պատասխան չի տուաւ․ իր ձեռքը մնաց անխլիրտ և թոյլ՝ իր քրոջը ձեռքին մէջ․ և երբ Քարին ձգեց ձեռքը, Ինկմար կեցաւ քրոջը առջև նոյնքան տրտում՝ որքան որ եղած էր ամբողջ օրը։

Բոլոր անոնք որ սակարկութեանց մէջ միջնորդ եղած էին՝ եկան խնդակցութիւն յայտնելու Ինկմար Ինկմարին։

— Բարեբաղդութի՛ւն որ նորէն Ինկմարսկարտը կը մնայ Ինկմար Ինկմարսօնի՛։

Ուրախութեան նշոյլ մը սահեցաւ Ինկմարի երեսին վրայէն և ինք ալ մտքէն կրկնեց․ «Ինկմար Ինկմարսօնը Ինկմարսկարտի մէջ»։ Բայց իսկոյն բոպէ մը ետքը՝ իր դէմքը համակեցաւ պժգանքի և անսահման յոգնութեան արտայայտութեամբ մը։

Լուրը շրջանն ըրած էր ագարակին, բարձրացուցած էր շշուկ, արթնցուցած էր հետաքրքրութիւններ և նոյնիսկ սփոփման արցունքներ. բերած ծերուններու աչքերուն մէջ: Ալ լուռ չի կար թէլլային: Գեղացի և համբայ, ամէնքն ալ կը խառնուէին Ինկմարի շուրջ:

Բայց, այս հրճուալից բազմութեան մէջ՝ Ինկմար նշմարեց Սթինա մայրիկը, որ աչքերը իր վրայ յառած, կը կենար քիչ մը մեկուսի, Սթինա մայրիկը՝ դեփ-դեղին, խեղճ և ծերունի երեւոյթով: Երբ իրենց նայուածքները իրարու հանդիպեցան, Սթինա մայրիկ ետին դարձաւ և ճամբայ ինկաւ դէպի իր տան կողմը: Այն ատեն, Ինկմար յանկարծօրէն դուրս ելաւ զ'ինքը շրջապատողներուն մէջէն, և վազեց Սթինա մայրիկին ետեւէն, հասաւ անոր: Ծռեցաւ պառաւ կնոջ վրայ և անոր ըսաւ կերկերուն ձայնով մը ու այնպիսի դէմքով մը, որուն ամէն մէկ գիծը կը դողդղար վշտէն.

— Դա՛րձիր Կէրթրուտին քով, մայր Սթինա՛. ըսէ իրեն թէ դաւաճանեցի իրեն և ինքզինքս ծախեցի ագարակին համար: Աղաչէ՛ իրեն որ այլեւս չի մտածէ ինծի պէս թշուառականի մը վրայ:

VI

ԿԷՐԹՐՈՒՏ

Տարօրինակ բան մը սպրդած էր Կէրթրուտի հոգիին մէջ, բան մը՝ զոր չ'էր կրնար ո՛չ կառավարել, ոչ ալ զսպել, բան մը՝ որ տիրապետելու վրայ էր իր ամբողջ անձը: Այս բանը սկըսաւ ա՛յն օրուընէն՝ երբ իմացաւ թէ Ինկմար լքեր է զ'ինք, և այդ օրուընէ ի վեր անագորոյն վախ մը ունէր թէ կը տեսնէ զայն կամ կը հանդիպի անոր՝ ճամբան, եկեղեցիին մէջ կամ ուրիշ տեղ: Թէեւ չէր գիտեր թէ այդպիսի հանդիպում մը ի՛նչ ահարկու բան կրնայ ունենալ, բայց անհանդուրժելի ցաւ մը կը նախազգար: Կէրթրուտ կը փափաքէր որ տունէն գիշեր ցորեկ դուրս չ'ելլէ՝ որպէսզի վստահ ըլլայ թէ պիտի չ'հանդիպի անոր: Բայց, աւա՜ղ, իրեն հոգեկան վիճակն ունեցող թշուառ աղջիկ մը ըստիպուած էր աշխատիլ պարտէզին մէջ, օրական

բազմաթիւ անգամներ երթալ-գալ արօտին ան-
վերջանալի ճամբէն և կովեր կթել. շատ անգամ
զինք կը խրկէին աւանին նպարավաճառին քով՝
շաքար, ալիւր և տանը համար պէտք եղած ուրիշ
բաներ գնելու։ Եւ ճամբայ կ'ելլէր թէ չէ՝ ան-
միջապէս գլխուն շալը վար կը քաշէր իր խո-
նարհած աչքերուն վրայ և կը սկսէր վազել՝
կարծես ետևէն դև ինկած ըլլար։ Եւ ամէն ան-
գամ որ արտերուն ու մարգերուն մէջ սպրդող
փոքր կածաններ կը տեսնէր, կը մտնէր անոնց
մէջ՝ բոլոր այն տեղուանքը, ուր կը կարծէր թէ
Ինկմարը հաւանական չ'է որ հանդիպի իրեն։
Բայց, վախը չ'էր հեռանար սրտէն, որովհետև
չի կար տեղ մը՝ ուր Ինկմար չի կրնար իր դէմ
ելլել։ Եթէ գետակին վրայէն թիավարելով եր-
թար՝ կարող էր ըլալ որ Ինկմար ալ այդ միջո-
ցին իր փայտերը ջուրն ի վար տար. եթէ եր-
թար անտառին մէջ պահուելու, կրնար հո՛ն ալ
դէմ հանդիպիլ, յոտոցը ուսին։ Երբ պարտէզը
քաղհանք կընէր՝ յանկարծ գլուխը վեր կը վեր-
ցընէր խռովալից, կարծելով թէ Ինկմարին ծա-
նօթ ոտնաձայնն է որ կուգայ, և կը պատրաս-
տըուէր փախչիլ։ Եւ դառնօրէն կը մտածէր թէ
Ինկմար տան հիւրերուն մէջ ամենէն ընտանին
էր, հետևաբար ո՛չ շունը կը հաջէր անոր վրայ
և ոչ ալ ծառուղիներուն մէջ պտտող աղաւնի-
ները կը փախչէին թևաբախ աղմուկով։

Այս ահուգողը ոչ թէ չէր պակսեր, այլ
ընդհակառակը կ'աւելնար օր աւուր։ Իր ամբողջ
յուսահատութիւնը վերածուած էր զարհուրան-
քի. և իր անդադար նուազող հոգեկան ուժը
չէր կրնար հակազդել անոր։ «Եթէ այսպէս եր-
թայ, քիչ ատենէն ալ չ'պիտի կրնամ տունէն

դուրս ելել։ Աստուա՛ծ, իմ Աստուա՛ծս, ազա-
տէ՛ զիս այս աճարեկութենէս. Հայրս ու մայրս
անհեթեթ կը գտնեն արդէն վարմունքս, իսկ
ուրիշներ ալ պիտի խորհին որ խենդեցեր եմ։
Տէ՛ր Աստուածս, օգնութեա՛ն հասիր ինծի»։

Այսպէս, գիշեր մը Կէրթրուտ տարօրի-
նակ երազ մը տեսաւ։ Տեսաւ որ կէսօրէ մը
ետք՝ կոմկիթը թևին տակ, կովերը կթելու
կ'երթար հեռաւոր արօտի մը մէջ, անտառին
ծայրը։ Նեղ կածաններէ, կը քալէր արտերուն
երկայնքէն՝ այնքան չարաչար յոգնած, որ ոտ-
քերը կարծես գետնին կը գամուէին։ «Ի՞նչ է
պատահեր ինծի» կը հարցնէր մտքէն։ Եւ ինքն-
իրեն պատասխան կուտար թէ ‹դուն յոգնած
ես, որովհետև ծանր վիշտ մը կը քաշես ե-
տևէդ»։ Երբ վերջապէս Կէրթրուտ մակաղա-
տեղին հասաւ, տեսաւ որ կովերը չի կան հոն։
Աղջիկը սկսաւ փնտռել զանոնք հոս ու հոն, ե-
ղևիններու թփուտին ետև, ցարասիններուն
տակ, առուակին քովերը, երբ յանկարծ պա-
տռուածք մը նշմարեց ձողափակին մէջ՝ դէպի
անտառին կողմը։ Այն ատեն, ձեռքերը գալա-
րեց յուսահատութենէն։ «Ես որ այսքա՛ն յոգ-
նած եմ, ինչպէ՛ս հիմա ամբողջ անտառը ոտք
պիտի քաշեմ՝ տաւարներս գտնելու համար։»
Եւ մտաւ խիտ ճիւղերուն մէջ, դժուարին
ճամբայ մը բանալով սուր գիհիներուն և թէ-
ղօշներուն մէջէն, որոնց փուշերը զ'ինքը կը
խայթէին։ Եւ ահա կածանը դարձաւ հարթ-
հաւասար, հեշտ, քիչ մը սահուկ իր ոտքերուն
տակ՝ գետինը ծածկող դեղին տերևներուն և
թուխ սաղուկներուն պատճառով։ Եւ արևին
ճառագայթները կը խաղային ծառներուն սօ-

րոտը և ոսկեգոյն դեղին ժամուռներուն վրայ։ Ու իր անձկութիւնը կը թեթեւնար, այնքա՜ն գեղեցիկ և բարեացակամ էր բարձր անտառը։

Յանկարծ, եղեւիններուն ետեւէն դուրս ելաւ ծերուկ կին մը՝ Մա՛րէն, այն լափոնցի պառաւը, որ բախտ նայող էր։

— Սպասէ՛, սպասէ՛, որ քեզի բան մը ցոյց տամ, ըսաւ վհուկը։

Եւ, ծունգի գալով ճամբուն մէջտեղը, իր փոխտ մատներովը շրջանակ մը գծեց գետինը թափած ասղուկներուն մէջ և այդ շրջանակին մէջ դրաւ պղնձէ սկահակ մը։

— Նայի՛ր սկահակին մէջ և պիտի տեսնե՛ս։

Կէրթրուտ ծռեցաւ անոր վրայ և սարսռաց, որովհետև անոր տակը կը ցոլար Ինկմարին դէմքը։

Ու պառաւը նոյն վայրկեանին երկար ասեղ մը դրաւ աղջկան մատներուն մէջ։

— Ա՛ռ այս ասեղը և փորէ անոր աչքերը․ փորէ՛, փորէ՛, քանի որ լքեց քե՛զ։

Կէրթրուտ վարանեցաւ քիչ մը, բայց դաժան և զարմանահրաշ փափաք մը ունեցաւ հնազանդելու պառաւին խօսքերուն։

— Ինչո՞ւ համար անիկա երջանիկ ու հարուստ պիտի ըլլայ, յարեց պառաւը, իսկ դուն աղքատ ու տանջահար։ Լաւ խոթէ՛ ասեղը, խոթէ՛ անոր բիբը՛։

Կէրթրուտ ուժով կոխեց ասեղը երկու անգամ։ Եւ ասեղը, առանց սկահակին յատակին դպնալու, մխուեցաւ կակուղ բանի մը մէջ և դուրս ելաւ կաս-կարմիր։

Աղջիկը այնպէս սաստիկ յուզում մը կրեց՝ որ արթնցաւ քունէն և սկսաւ հեծկլտալով լալ

խելացնոր կերպով։

— ստուա՛ծ չ՚ընէ, ա՜խ, Աստուա՛ծ չ՚ընէ որ վրէժ լուծել ուզեմ անկէ, կը հեծեծէր։

Հազիւ քնացած էր որ նոյն երազը նորէն տեսաւ։ Աղջիկը նորէն կը գտնուէր արօտի կածանին վրայ՝ փնտռելով իր կովերը մեծ անտառին մէջ։ Կը վախնար որ դարձեալ իր դէմը կելլէ լափոնցի պառաւը․ բայց, յանկարծ, խոտերու երկու խոշոր թուփերու մէջէն գետինը կէս մը բացուեցաւ և անկէ դուրս ելաւ գլուխ մը, գլուխ մը՝ որ կը կենար պզտիկ մարմինի մը վրայ։ Եւ Կէրթրուտ ճանչցաւ Փէթէրը, այն խենթը՝ որ քալած ատեն միշտ ինք իր դէմ կը խօսէր և կը բնակէր անտառը՝ հողէ խրճիթի մը մէջ․ շատ անգամ կասկածած էին թէ այս խենդն է որ ագարակներուն կրակ կուտայ, ասոր անոր թելադրութեամբ։ Կէրթրուտ անոր մօտենալով, հարցուց կատակով թէ չէ՞ր կըրնար Ինկմարսկարտը վառել՝ քանի որ Ինկմար այդ հին ագարակը նախամեծար համարած էր իր սէրէն։ Ու ահա, աղջիկը սարսափով տեսաւ թէ՝ խենդը իրաւի տեղ դնելով կատակը, սկըսաւ վազել դէպի դաշտին կողմը։ Կէրթրուտ կը վազէր անոր ետեւէն՝ որ չ՚թողու, բայց եղեւիններու ճիւղերը կ՚արգիլէին զ՚ինք․ իր ոտքերը կը թաղուէին փոսերուն մէջ կամ կը սայթաքէին քարերուն վրայ․ և երբ հասաւ անտառին եզերքը, տեսաւ որ արդէն հրդեհին լոյսերը կը շողային ծառերուն մէջէն։

Իր երազին գարշելի սարսափը արթնցուց զ՚ինք երկրորդ անգամ։ Նստաւ իր անկողնին մէջ, երեսն ի վար թափելով ափ ափ արցունք ու վախնալով որ նորէն կրնայ գէշ երազ տես-

նել, անշարժ նստած մնաց մինչեւ առտու։

«Տէ՛ր իմ Աստուած, Տէ՛ր իմ Աստուած, կը մրմնջէր, չեմ գիտեր եղեր նոյնիսկ թէ ի՛նչ չարիք կայ իմ մէջս. օգնէ՛ ինծի, Աստուած իմ. վկայ ես դուն՝ որ երբեք մտքէս չ'եմ անցուցած վրէժ առնել Ինկմարէն… միշտը մը տանգա որ է, այո՛, վտանգաւո՛ր, վտանգաւո՛ր»։

Ցորեկն ամբողջ, Կէրթրուտի այնպէս կուգար թէ՝ նոյն երազը կը տեսնէ։ Իր մղձաւանջը այնքան զօրաւոր և այնքան դժուարախիլ եղած էր՝ որ աղջիկը չ'էր կրնար ինքզինք ազատել անկէ։ Եւ մտքէն չէր հեռանար այն չար ուրախութիւնը որ զգացեր էր ասեղը խոթելով Ինկմարի աչքերուն մէջ ու կը տանջուէր։

Կէսօրէն ետք, առաւ իր կովկիթը և գնաց կովերը կթելու, սովորականին պէս, գլխուն շալը աչքերուն վրայ քաշած և աչքերը գետին խոնարհած։ Կերթար իր երազին մէջ տեսած պզտիկ կածաններէն և ճանչցաւ անոնց եզերքը բուսած ծաղիկները։ Իր այդ տարօրինակ կիսաքուն վիճակին մէջ չէր կրնար զանազանել իրականութիւնը երազէն։

Հասնելով արօտատեղին՝ տեսաւ որ կովերը չի կան և սկսաւ փնտռել զ'անոնք առուին քովերը, ցարասիններուն տակ և եղեւիններու թըփուտին ետեւ։

Իրեն այնպէս կուգար որ կովերը պիտի գտնէր այդ տեղ և պիտի տեսնէր զանոնք՝ եթէ միայն իրաւ տակաւին երազի մէջ չէր ինք։ Իսկոյն պատռուածք մը տեսաւ ձողափակին մէջէն և նշմարեց հետքեր՝ որոնք կովերը իրենց

կճղակներով խորունկ խորունկ թողեր էին անտառին կակուղ հողին մէջ և որոնք կ'երթային դէպի հեռաւոր հիւղը։

— Հա՛, հիմա հասկցա՛յ թէ ո՛ւր են գացեր, - ըսաւ Կէրթրուտ. այս առտու Լիկքարտցիները իրենց նախիրը կը տանէին դէպի հիւղը. կերեւի թէ մեր կովերն ալ անոնց ետեւը ինկած՝ գացեր են մրա՛սին։

Վայրկեան մը, անհանգստութիւնը ցրուեց իր թմրութիւնը։ Կէրթրուտ որոշեց բարձրանալ մինչեւ վերի հիւղակը և փութացուց քայլերը ժայռոտ ճամբան ի վեր՝ մագլցելով։

Բայց, երբ դժուարին զառիվերի մը վրան հասաւ, ճամբան յանկարծ իր ուղղութիւնը փոխեց և դարձաւ միակտուր ու ապառնկերով ծածկուած։ Ճիշդ իր երազին մէջ տեսած կածանն էր. այդ միեւնոյն ծառերուն տեսքը, որոնց բունին տակ արեւի միեւնոյն ճառագայթները կը խաղային միեւնոյն դեղին մամուռներուն վրայ, զինքը ընկղմեց տեսակ մը քնաթաթախութեան մէջ։ Իր տարտամ նայուածքները կը պտտէին եղեւիններու վրայ, զարմանալով որ անոնց վրայ չէր երեւնար անտառին խորութեանց մէջ բնակող խորհրդաւոր էակներէն մէկը։ Բան մը չերեւցաւ իր աչքին, բայց իր հոգիին խորէն տարօրինակ մտածումներ կը բարձրանային։

Եթէ վրէժ լուծէի Ինկմարէն, թերեւս անցընէր այս ահ ու դողը և թերեւս վերջիվերջոյ չ'խենդենայի։ Սիրտս պիտի չ'թեթեւնա՞ր որ Ինկմար ալ կրէր այն տառապանքը՝ ինչ տառապանք որ ես կը կրեմ, ո՛վ գիտէ։»

Եղեւիններու մէջէն բացուած սիրուն կածա-

նը կերկարէր անվերջ: Կէրթրուտ ժամէ մը աւելի էր որ կը քալէր անկէ, երբ հասաւ ծաղիկներով և թարմ խոտերով ծածկուած բացատ մը: Մէկ կողմէն կը բարձրանար ցից բըլուր մը, իսկ միւս կողմերը եզերուած էին լաստենիներով, ցարասիներով և ողկուզաձև ճերմակ ծաղիկներով զարդարուած սնիներով: Հոն առու մը՝ որ վար կիջնէր բլուրէն, կ'ոռոգէր բացատը և կը հոսէր ճեղքի մը մէջ՝ որ ծածկուած էր ուռճապարդ բուսականութեամբ մը փթթած թփիկներու տակ:

Կէրթրուտ ճանչցաւ այդ տեղը. առուակը կը կոչուէր Սև Ջուր, որուն վրայ տարօրինակ բաներ կը պատմէին: Մարդիկ անոր մէջէն անցած ատեն գերբնական տեսիլքներ ունեցած էին. տղուն մէկը, անկէ անցած ատեն, տեսած էր այն հարսնեւորները՝ որ ճիշդ այդ պահուն աւանին եկեղեցին կը մտնէին. ածխագործին մէկը տեսած էր թագաւոր մը՝ թագը գլուխը և մականը ձեռքը, որ թագադրութեան կ'երթար:

Աղջիկը զգաց որ սիրտը կը լեցուի:

«Տէ՜ր Աստուած, ե՞ս ի՛նչ պիտի տեսնամ արդեօք. Տէ՜ր, օգնէ՛ ինծի:»

Անգամ մը խորհեցաւ որ ետ դառնայ:

«Բայց ոչ. պէտք է որ անցնիմ առուէն, հեծեծեց. պէտք է որ անցնիմ ու կովերս ետ բերեմ: Տէ՜ր իմ Աստուածս, մի՛ թողուր որ գէշ բան մը տեսնեմ. մի՛ թողուր որ փորձութեան մէջ իյնա՜մ»:

Չէր համարձակեր ոտքը դնելու այն տափակ քարերուն վրայ՝ որ առուին մէջ շարուած էին մէկ եզերքէն դէպի միւսը: Երբ վերջա-

պէս մտաւ առուին մէջ և հասաւ մէջտեղը, տեսաւ միւս եզերքին վրայ — ո՛չ թէ հարսնեւոր կամ թագակիր թագաւոր մը—, այլ միայնակ մարդ մը՝ որ դուրս կ'ելլէր անտառէն և կամաց կամաց կը յառաջանար ծաղկած մարգագետնին վրայէն: Երիտասարդ էր անիկա և բարձրահասակ. գանգրահեր մազեր կը շրջանակէին իր ձուաձև գեղեցիկ դէմքը և կ'իջնէին մինչև ուսերը: Սև, երկար վերարկու մը կը հասնէր մինչև ոտքերը: Անոր աչքերէն լոյսի հեղեղ մը կը ժայթքէր և երբ իր ակնարկը հանդիպեցաւ Կէրթրուտի ակնարկին, աղջիկը հասկցաւ թէ անիկա տեղեակ էր ամէն բանի և մեծ գթութիւն մը կը զգար իրեն նկատմամբ, որ ինք կը չարչարուէր երկրային չնչին բաներու համար ու իր հոգին հիւանդ էր դարձեր վրէժխնդրութեան հոգէն: Եւ քանի առաջ կուգար անիկա դէպի իր կողմը, այնքան իր ամբողջ էութիւնը կարծես կ'ողողուէր երանաւէտ խաղաղութեամբ ու արեգակով: Եւ երբ անցաւ անիկա, անհետացած էր նաև իր դառն վիշտն ալ:

Աղջիկը իրարու միացուց ձեռքերը և յափշտակութեամբ աչքերը վերցուց դէպի երկինք.

— Ես Յիսուսը՛ տեսայ, աղաղակեց, ես տեսայ իմ Փրկի՛չս. անիկա խլեց իմ վիշտերս և ես այլևս մէկը չեմ կրնար սիրել այս աշխարհքիս մէ՜ջ:

Կեանքի բոլոր աղբիւրները փոքրկացան իր աչքին. երկար տարիները իրեն թուեցան միայն փոքր կէտ մը միջոցին մէջ. և երկրի բոլոր ուրախութիւնները իրեն երևցան խե՜ղճ, աննշան և զո՛ւրկ խորութենէ: Եւ գիտցաւ միևնոյն ա-

տեն թէ ի՛նչպէս պէտք է վարէր իր կեանքը՝ որպէսզի ազատէր մութ ահ ու դողերէն և հեռու ըլլար չար խորհուրդներէ. պիտի երթար Հէլլուժեաններուն հետ Երուսաղէմ։

Ա՛յս մտածումը ծնունդ առաւ իր հոգիին մէջ՝ երբ տեսաւ Ցիտուսին անցնիլը։ Աղջիկը Փրկիչին աչքերո՛ւն մէջ կարդացած էր զ՛այն։

* * *

Ցունիսի այն գեղեցիկ օրը ուր Պէրժէր Սվէն Փէրսոն իր աղջկան ու Ինկմար Ինկմարսոնի հարսնիքը ըրաւ, առտուն կանուխ երիտասարդ կին մը եկաւ հարսնետունը և փեսան հարցուց։ Կինը յաղթակազմ ու նրբահասակ էր. իր գըլխուն շալը՝ որ գրեթէ կը ծածկէր ամբողջ դէմքը, իր տակէն հազիւ ցոյց կուտար ճերմակ այտի մը նուրբ ազուամաղը և երկու կարմիր շըրթունքներ։ Թևէն կախած էր կողով մը, որուն մէջ կը տեսնուէին ձեռքով գործուած ժապաւէններ և մազով հիւսուած ապարանջաններ։ Դիմած էր պառաւ աղախինի մը՝ որ երբ գնաց տանտիրուհիին յայտնեց, անիկա պատասխանեց իսկոյն.

— Գնա՛ ըսէ թէ Ինկմար Ինկմարսո՛նը հիմա անմիջապէս եկեղեցի պիտի երթայ, ժամանակ չունի իրեն հետ խօսելու։

Օտարական կինը հեռացաւ ագարակէն և մինչև կէսօր այլևս չ'երևցաւ։ Երբ հարսանեկան թափորը եկեղեցիէն տուն վերադարձաւ, կինը նորէն երևցաւ և Ինկմար Ինկմարսոնը հարցուց։ Այս անգամ դիմեց երիտասարդ ծառայի մը՝ որ պարապ կեցած էր ախոռին սեմին վրայ։ Ծառան գնաց յայտնեց իր տիրոջը։

— Ըսէ՛ իրեն թէ, ըսաւ Սվէն Փէրսոն, Ինկմար Ինկմարսոն հիմա սեղանի պիտի նստի, ժամանակ չ'ունի իրեն հետ խօսելու։

Օտարական կինը հառաչեց, ձգեց հեռացաւ և մինչև իրիկնամուտը մէջտեղ չ'ելաւ։ Իրիկնամուտին, դիմեց տղայի մը՝ որ դուրսի դռան վանդակորմին վրայ նստեր կ'օրօրուէր. տղան շիտակ ներս գնաց և նոր հարսին յայտնեց թէ կին մը եկեր ու Ինկմարը տեսնել կուզէ.

— Ըսէ՛ իրեն թէ Ինկմարը կպարէ իր հարսին հետ և ժամանակ չունի ուրիշի մը հետ խօսք խօսելու։

Երբ տղան այս պատասխանը բերաւ, օտարականուհին յիշեց այն գիշերը՝ որ անցուցեր էին Սթարքի տունը, ժպտեցաւ և ըսաւ.

— Ո՛չ, դուն կը խաբես զիս, Ինկմար Ինկմարսոնը չի պարեր հարսին հետ։

Չի հեռացաւ և ոտքի վրայ կեցաւ վանդակորմին քով։

Քանի մը վայրկեան ետքը՝ նոր հարսը ինքնիրեն ըսաւ. «Ես սուտ մը խօսեցայ պսակիս օրը՛»։ Զղջաց, մօտեցաւ Ինկմարին և յայտնեց թէ օտարական կին մը կայ բակին մէջ՝ որ կը փափաքի բան մը ըսել իրեն։

Ինկմար դուրս ելաւ և տեսաւ Կէրթրուտը։

Այն ատեն, Կէրթրուտ դէպի ճամբուն կողմը գնաց և Ինկմար հետևեցաւ անոր. քալեցին լուռ ու մունջ՝ մինչև որ բաւական հեռացան տունէն։ Այս վերջին շաբաթները ծերացուցեր էին երիտասարդը. իր դէմքը տարէց մարդու խոհունութեան և խոհականութեան տպաւորութիւնը կ'ընէր։ Այն օրէն ի վեր որ հարուստ դարձած էր՝ ա՛լ աւելի առջևոք ծռած և ա՛լ աւելի խոնարհ կ'երևնար։ Տեսնելով Կէրթրուտը, ո՛և է ուրախութիւն չ'զգաց։ Ամէն օր կը

ջանար ինքզինք համոզել թէ՝ իր կատարած սակարկութիւնը մեծ բարեբախտութիւն մը եղած էր։ «Մեզի, Ինկմարսօններուս համար՝ Ինկմարսկարտէ մէջ վար ու ցանք ընելէն աւելի արժէքաւոր բան չի կայ այս աշխարհի՛ս մէջ»։ Բայց, Կէրթրուտը կորսնցուցած ըլլալու ցաւէն աւելի սա՛ մտածումը անտանելի էր իրեն համար որ՝ կրնային ըսել թէ չի յարգեց ինք իր խօսքը։ Եւ, աղջկան ետեւէն քալելով, կը մտածէր արհամարհանքի այն խօսքերը՝ որոնք Կէրթրուտ իրաւունք ունէր իր ճակտին զարնելու։

Կէրթրուտ նստաւ ճամբուն եզերքը՝ քարի մը վրայ, կողովը վար դրաւ իր առջևը և յետոյ գլխուն շալը աւելի ցած քաշեց։

— Նստի՛ր, ըսաւ Ինկմարին՝ անոր ցոյց տալով ուրիշ քար մը։ Բաւական բաներ ունիմ քեզի ըսելիք։

Ինկմար նստեցաւ, գրեթէ գոհ՝ որ այսքան խաղաղ կը զգար ինքզինք։ «Ինծի այնպէս կուգար որ, կը մտածէր Ինկմար, շատ աւելի դըժընդակ բան մը պիտի ըլլար Կէրթրուտին հանդիպիլն ու անոր հետ խօսիլը»։

— Ես չ՚պիտի գայի քեզ անհանգիստ ընելու հարսնիքիդ օրը, ըսաւ Կէրթրուտ, եթէ հարկադրուած չ՚ըլլայի։ Ես պիտի ձգեմ, հեռանամ երկրէն և ընդմիշտ... և արդէն մինչև հիմա մեկնած կ՚ըլլայի՝ եթէ դէպք մը հարկադրած չ՚ըլլար զիս յետաձգելու մեկնումս...

Մարդու մը պէս, որ փոթորկին սպասելով ուսերը վեր կը բարձրացնէ և գլուխը կը ծռէ, Ինկմար կը մնար լուռ և կը մտածէր. «Կէրթրուտ պարա՛պ տեղը պիտի խօսի. եթէ Ինկմարսկարտը ձեռքս չ՚անցնէր՝ ես կը մեռնէի»։

— Ինկմա՛ր, շարունակեց Կէրթրուտ,—և իր երեսը կաս-կարմիր կտրեցաւ, թէև հազիւ կերևէր շալին տակէն—կը յիշես անշուշտ թէ սակէ հինգ տարի առաջ մտադրութիւն ունէի մըտնելու Հէլկումեաններու աղանդին մէջ։ Միրտս Աստծոյ տուած էի. ե՛տ առի զայն՝ քեզի տալու համար. բայց, քանի որ ես լքեցի Քրիստոս, ես ալ լքուեցայ անոր կողմէ՝ զ՚որ կը սիրէի...

Ինկմար հասկցաւ որ Կէրթրուտ կը յայտնէր թէ դարձեալ մտած է նոր կրօնին մէջ, և դառնութեան խոր յուզում մը կրեց այս բանէն։ Մտածելով թէ Կէրթրուտ ալ երուսաղէմուորներուն հետ պիտի երթար դէպի Երուսաղէմ, ըզգաց այն ցաւը՝ ինչ որ պիտի զգար եթէ անդեւ իր նշանածն եղած ըլլար։

— Սխալ ես, Կէրթրո՛ւտ. Աստուած այս վիշտը չի խրկեց քեզի՝ իբրև պատիժ։

— Ա՛խ, չէ՛, ո՛չ թէ իբրև պատիժ, այլ զիս իրեն տանելու համար։ Ես հիմա այնքան երջանիկ եմ՝ Աստծոյ ընտրեալը և իրմէ կանչուած ըլլալուս համա՛ր։

Ինկմարին դէմքը խստացաւ՝ խոհականութեան և հաշիւի արտայայտութեամբ մը։ «Ցի՛թեան և հաշիւի... »

— Ձեմ ըմբռներ թէ ծնողքդ ի՛նչպէս պիտի թոյլ տան որ բաժնուիս իրենցմէ։

— Թոյլ չ՚են տար, պատասխանեց Կէրթրուտ, և նոյնիսկ կը կարծեմ որ՝ եթէ իմացրուտ

տամ իրենց, հայրը բռնութիւն պիտի բանեցնէ՝ գլխ վար դնելու։ Այս պատճառով, գաղտնի պիտի փախչիմ։ Անոնք պիտի կարծեն թէ տունէ տուն պտտելով ժապաւէններս կը ծախեմ և մինչև որ Կօթէնպուրկ հասնելով, միանամ ուխտաւորներուն՝ անոնք տեղեկութիւն պիտի չ'ունենան մեկնումէս։

Ինկմար, տակնուվրայ եղած, կուզէր անոր ըսել որ ըրածը շատ գէշ բան է և ծնողքին զարհուրելի վիշտ մը կը պատճառես, բայց բռնեց ինքզինք։

—Այո՛, շարունակեց աղջիկը, հայրն ու մայրը շատ մե՛ղքս կուգան, բայց ստիպուած եմ երթալու Յիսուսի ետևէն։—Եւ մեղմիկ մը ժպտեցաւ՝ Յիսուսի անունը արտասանած ատեն։—Յիսուս ազատեց զ'իս իմ հոգիիս հիւանդութենէն և իմ մտածած չարութիւններէս։

Եւ կարծես այս խօսքերը վերադարձուցած ըլլային իր քաջասրտութիւնը, Կէրթրուտ դէպի ետև նետեց գլխուն շալը և ուղիղ նայեցաւ Ինկմարի աչքերուն մէջ։ Ինկմար զգաց որ Կէրթրուտ զինք բաղդատութեան կը դնէր ուրիշ պատկերի մը, անտեսանելի պատկերի մը հետ, և զգաց թէ ո՛րքան փոքր ու չքոտի է ինք։

— Գիտե՛մ, շատ տխուր բան պիտի ըլլայ ասիկա հօրս ու մօրս համար, յարեց աղջիկը։ Հայրս ծերացեր է հիմա և շուտով պիտի հարկադրուի ձգել վարժապետութիւնը։ Հազիւ պիտի կրնան ապրուստ մը գտնել. և երբ հայրս զբաղում չ'ունենայ՝ սիրտը նեղ պիտի ըլլայ և մօրս կեանքն ալ հեշտ պիտի չ'ըլլայ։ Երկուքն ալ ցաւով պիտի անցընեն իրենց օրը։ Անշուշտ, այդպէս պիտի չ'ըլլար՝ եթէ ես իրենց քով մնայի։

Կէրթրուտ կանգ առաւ և Ինկմարին այնպէս թուեցաւ թէ՝ անոր հոգւոյն մէջ բան մը կը սկսէր արտասուել ու հեծեծել։

— Կ'ըմբռնե՛մ, Կէրթրու՛տ, հարկ չի կայ անպատճառ որ խնդրես ինձմէ՝ հոգ տանելու անոնց։ Մեծ շնորհք մըն է որ կ'ընես ինծի. ինծի՝ որ դրժեցի քեզի։ Կրնաս վստահ ըլլալ որ շատ աւելի ազնիւ վերաբերում պիտի ունենամ անոնց նկատմամբ, ինչ որ չ'ունեցայ հանդէպ քեզի։

Այն մտահոգ զգուշաւորութիւնը՝ որ դրոշմուած էր Ինկմարի դէմքին վրայ, փարատեր էր. «Ա՛խ, կը մտածէր անիկա, որքա՛ն բարի է Կէրթրուտ. և ես կը կարծէի որ եկեր է նախատելու ու տանջելո՛ւ զիս. մինչդեռ, եկեր է՝ իմ հոգատարութեանս յանձնելու իր ծնողքը, ինչպէս նաև ցոյց տալու որ իր սիրտը կը ներէ ինծի»։

— Գիտէի թէ այդ պատասխանը պիտի տայիր, վրայ բերաւ աղջիկը։ Ու հիմա, ուրի՛շ բան մը ունիմ ըսելիք։

Իր ձայնը այն ատեն առաւ ուժգին և զըւարթ շեշտ մը։ Ինկմար երբեք լսած չ'էր այդքան գեղեցկախօս ձայն մը, ոչ ալ ձայնի այդքան քաղցր ու արծաթահունչ թրթռում մը։

— Հիմա, պէտք է որ քեզի մեծ նուէր մը ընեմ...։ Անցած շաբթու տունէն ելայ՝ Կօթէնպուրկ երթալու մտքով, բայց առաջին գիշերը մնացի Պէրկսանայի դարբնոցը՝ դարբինի մը այրիին, Մարիա Պուվինկի տունը։ Այս անունը աղէկ միտքդ պահէ՛, Ինկմա՛ր, որպէսզի եթէ երբեք չքաւորութեան մէջ մնայ անիկա, օգնես իրեն։

Երիտասարդը խոստացաւ՝ գլխու նշանով մը։ Ինկմար կ'ըսէր ինքնիրեն. «Ի՜նչքան գեղեցիկ է Կէրթրուտ. ի՜նչ պիտի ընեմ՝ եթէ ա՛լ չ'տեսնեմ զ'ինքը. Թող բարին Աստուած օգնութեան հասնի ինծի՝ եթէ ես անիրաւ գտնուեցայ զ'ինքը գոհելո՜վ հին ագարակի մը։ Արտ ու անտառ կրնա՞ն սիրելի էակի մը տեղը բռնել. պիտի կրնա՞ն երեսս ի վեր խնդալ՝ ուրախութեանս ատեն, կամ մխիթարել զիս՝ տրտմութեանս պահուն։ Ո՞վ պիտի կրնայ մխիթարել մեզ, երբեք՝ երբ կորսնցնենք մեր սիրած անձը»։

— Մարիա Պուլինկ զիս պառկեցուց իր խոհանոցին ետեւի մէկ փոքր սենեակին մէջ։ «Հանգիստ պիտի քնանաս այս գիշեր, ըսաւ այրին ինծի, որովհետեւ անկողնի այս կազմածները Ինկմարսկարտի ծախուած ապրանքներէն գնած ենք։» Բայց, պառկեցայ թէ չէ, զգացի թէ գունտ բան մը կայ բարձին մէջ և տեսայ որ խոշոր կուլթերով կոշտ կար մը կարուած է։ Քակեցի կարը՝ որպէսզի մէջէն դուրս հանեմ զիս անհանգստացնող բանը, և ահա գտայ առասանուած ծրար մը՝ վրան գրուած քու անունդ։

Ինկմար մտիկ չ'էր ըներ մեծ ուշադրութեամբ։ Ջմայլանքով կը դիտէր Կէրթրուտի սիրուն շարժումները. «սակայն և այնպէս, կը խորհէր անիկա, միայն ագարակին համար չ'էր որ գոհեցի ես այս աղջիկը. գեղն ամբողջ պէտք ունէր ինծի։» Բայց երիտասարդը կը զգար որ այսուհետեւ իրեն դժուար պիտի ըլլար ինքզինքը համոզել և քնացնել խղճին խայթը։

— Ահա՛ այն ծրարը՝ որուն վրայ անունդ գրուած է. տա՛մ քեզի։

Եւ Կէրթրուտ ձեռքը խոթելով սակառին մէջ, դուրս հանեց փոքր ծրար մը և երկնցուց Ինկմարին։ Ինկմար առաւ զ'այն անզգալաբար. «ո՛չ, կըսէր ինքնիրեն, Կէրթրուտ չի գիտեր թէ ի՜նչքան վտանգաւոր կը դառնայ ինծի համար՝ այդքան քաղցր և այդքան բարի երեւնալով ինծի, աւելի աղէկ էր որ խօսէր ինծի կծու ու չար խօսքեր։ Եւ ինչո՞ւ շնորհակալութիւն ինծի՝ զինք լքած ըլլալուս համար. կը յայտնէ սարսափելի՛ բան է աս։»

— Ինկմա՛ր, յարեց Կէրթրուտ այնպիսի ձայնով մը՝ որ սթափեցուց զայն. ինծի կուգայ թէ այդ երեսբարձին վրայ կը պառկէր Էլիաս՝ Ինկմարսկարտի մէջ հիւանդ եղած ատենը։

Եւ նորէն առնելով ծրարը երիտասարդին թոյլ ձեռքէն, քակեց զ'այն։ Ինկմար լսեց նոր պանքտոմսներու խշրտուք մը և տեսաւ որ Կէրթրուտ համրեց քսան հատ հազար Փրանքնոցներ։

— Ահաւասի՛կ, Ինկմա՛ր, ահաւասիկ ժառանգական բաժինդ՝ որ փնտռուած ու չ'էր գտնուա՜ծ. Էլիաս պահեր է եղեր զ'այն իր երեսբարձին մէջ։

Մշուշ մը իջաւ Ինկմարի աչքերուն վրա։ Չէր կրնար բռնել պանքտոմսներու այն խուրձը՞ որ Կէրթրուտ իրեն կ'երկնցնէր. և թղթերը թափեցան գետինը։ Կէրթրուտ ստիպուեցաւ հաւաքել զ'անոնք և ի'նք դնել անոր գրպանին մէջ։ Ինկմար կ'երերար և շատ խմած մարդու մը պէս՝ գոցեց իր բռունցքը և շարժեց օդին մէջ։

— Ա՜խ Աստուած, Աստուա՜ծ, կը հեծեծէր անիկա։

Յետոյ, իր երկու ձեռքերը ծանրապէս ինկան աղջկան ուսերուն վրայ։

— Շա՛տ լաւ վրէժ կը լուծես, շա՛տ լաւ։

— Վրէ՛ժ կը լուծեմ, Ինկմար, գոչեց աղջիկը սարսափահար։

— Ինչո՞ւ այս դրամը չի բերիր. եթէ բերած ըլլայիր...

— Ո՛չ, կուզէի սպասել պսակիդ օրուանը։

— Եթէ բերած ըլլայիր, Սվէն Փէրսօն թող պիտի տար որ գնէի իրմէ ագարակը և ես չ'էի կորսնցներ քեզ։

— Ինչ որ ալ ըլլար՝ շա՛տ ուշ էր արդէն, Ինկմար. շատ ուշ էր անցած շաբթուն, շատ ուշ՝ այսօր, շատ ուշ՝ ընդմիշտ։

Ինկմար նստած էր քարին վրայ, ձեռքերը դրած աչքերուն դէմ և կը հեծեծէր։ Հարսնետան մէջ կը սկսէին անհանգիստ ըլլալ Ինկմարի բացակայութենէն և աս ու ան վերնագաւթակը ելած՝ կը պոռային.

—Ինկմա՛ր, Ինկմա՛ր։

—Այո՛, հարսը ինծի կը սպասէ, ըսաւ Ինկմար կսկծագին անձկութեամբ մը։ Ա՛խ, Կէրթրո՛ւտ, Կէրթրո՛ւտ, ես լքեցի քեզ՝ որովհետև հարկը կը ստիպէր զիս... չ'էի կարծեր որ մարդկային կարողութեամբ կարելի պիտի ըլլար փոխել բաները... բայց դուն սպաննեցիր սրտիս բոլոր ուրախութիւնը և քու կամքովդ թշուառ դարձուցիր զի՛ս։

Կուլար սաստկապէս և արտասուագեղ։

—Երբէ՛ք, երբէ՛ք քեզի համար չ'եմ զգացած այն՝ ինչ որ կը զգամ այս իրիկուն. երբէք քեզ չեմ սիրած այնպէս՝ ինչպէս կը սիրեմ այս վայրկեանիս։ Չէի գիտեր թէ սէրը այս-

քա՛ն դառն և այսքա՛ն սարսափելի բան է եղեր։

Կէրթրուտ մեղմիկ դրաւ իր ձեռքը անոր գլխուն վրայ։

—Երբէ՛ք, Ինկմա՛ր, երբէք միտքս չ'է եղած վրէժ լուծել քեզմէ։ Բայց ինչքան ատեն որ սիրտդ կապուած ըլլայ այս աշխարհի բաներուն, կապուած պիտի մնայ տխրութեան հետ։

Երբ Ինկմար գլուխը վեր վերցուց իր հեծեծանքներուն մէջէն, Կէրթրուտ մեկնած էր։ Իսկ ագարակէն մարդիկ կը վազէին՝ զինք փնտռելու։ Բռունցքովը ուժգին հարուած մը իջեցուց իր նստած քարին, և յամառութիւնը խորշոմներ փորեց իր ճակտին վրայ

—Կրնայ ըլլալ որ, գոչեց անիկա, ես ու Կէրթրուտ անգամ մըն ալ զ'իրար կը տեսնենք. ու կրնայ ըլլալ որ այն ատեն բաները ուրիշ կերպարանք առնեն։

Մե՛նք, Ինկմարսօններս, ճանչցուած ենք այնպիսի մարդիկ՝ որ ձեռք կը բերենք բան մը, երբ փափաքինք անոր։

VII

ՆԱԽԿԻՆ ԵՐԷՑԻ ՄԸ
ԱՅՐԻ ԵՐԷՑԿԻՆԸ

Ամէն մարդ, պէտք է չիտակը խօսիլ, կը ջանար համոզել Հէլկումեանները որ ետ կենան ճամբայ ելլելէ։ Ու այնքա՜ն, այնքա՜ն կաղաչէին՝ որ կարծես լեռներն ու հովիտներն ալ լեզու ելած, կը կրկնէին. «մի՛ երթաք, մի՛ երթա՛ք։» Գեղին երեւելիներն անգամ կը ջանային ետ կեցնել զ'անոնք իրենց այդ ձեռնարկէն։ Գեղին դատաւորն ու ոստիկանապետը հանգիստ չէին տար անոնց ու կը հարցնէին թէ, օրինակի համար, ի՞նչ վստահութիւն կար որ այդ Ամերիկացիները խաբեբաներ չէին։ Ի՞նչ, ճամբայ ինալ ու չգիտնալ թէ ուր՛ւ հետ. ճամբայ ինալ դէպի երկիր մը՝ ուր ո՛չ օրէնք կար և ոչ կարգ կանոն, երկի՛ր մը՝ ուր մարդ քայլ գըլուխ կրնար աւազակներու յարձակման ենթարկ-

ուիլ, երկիր մը՝ որ ճամբայ անգամ չ'ունի և ուր ճամբորդները հարկադրուած են իրենց բեռները ձիու մը վրա բեռցնել, իբր թէ մարդ լաբոնական անտառներուն մէջ գտնուէր։ Գեղին բժիշկը կը կրկնէր թէ՝ պիտի չկրնան դիմանալ այնտեղի կլիմային։ Երուսաղէմը տենդի և ծաղկախտի բոյն է։ Հէլկումեանները կը պատասխանէին որ իրենք գիտեն այդ ամէնը և նոյնիսկ ատոր համար է որ ճամբայ կ'ինան. իրենք կերթան՝ տենդին ու ծաղկախտին դէմ կռուելու, ճամբաներ շինելու և արտերը վարելու, հանգիստ վերածելու։ Գոնէ Աստծոյ երկիրը ալ անարօրադիր պիտի չմնար և պիտի փոխուէր ճշմարիտ դրախտի մը։

Եկեղեցիին դիմաց կ'ապրէր նախկին երէցի մը այրին. ծերացեր էր սոսկալի կերպով. այն օրէն որ ելած էր երիցատունէն, կը բնակէր փոստի տան մեծ ձեղնայարկին մէջ։ Անյիշելի ժամանակէ ի վեր, հարուստ ագարակատիրուհիներ, երբեմն մէկը, երբեմն միւսը՝ կիւրակէները եկեղեցի եկած ատեն սովորութիւն ըրած էին մտնելու անոր քով և անոր տալու թարմ հաց, կարագ ու կաթ։ Երիցուհին անմիջապէս հացեղուհիարճամանը կրակին մէջ կը քշէր. և այցելուհիներէն այն որ կրնար ամենէն ուժովը պոռալ՝ կը սկսէր խօսիլ պառաւ կնոջը հետ, որ գարկը բանուած էր։ Իրեն կը հուրբելի խլութեան մը բանուած էր։ Իրեն կը պատմէին չարթուած լուրերը, բայց տարակուսելի էր թէ կը լսէ՞ր արդեօք զ'անոնք։

Միշտ փակուած իր սենակին մէջ, երբեմն երկար ատեն մռայլութեան կը մատնուէր։ Ցերեկը տոյ, մէկը կանգնէր իր դռան առջեւէն, կը նըշմարէր շրջուած ճերմակ վարագոյրներուն ճեղքէն անոր զառամ դէմքը և կը մտածէր. «մոռ-

նալու չէ խեղճ կնիկը՝ որ միս մինակ մնացեր է․ վաղը երբ մեր հօրթը մորթենք չի մոռնամ կտոր մըն ալ իրեն բերելու։» Շիտակ գիտցող մը չի կար թէ այս պառաւը գեղին ի՛նչ բաներէն լուր ունի և ի՛նչ բաներ չի գիտեր։ Ամէն օր ալ աւելի ծերացած, կարծես ալ չ՛էր հետաքըրքրուեր այս աշխարհի ոչ մէկ բանովը և իր ժամանակը կանցնէր կարդալով ու կարդալով քարոզագրքի երկու հաւաքածուներ, որոնք արդէն գոց գիտէր։ Իր պառաւ սպասուհին կը հագուեցնէր զինքը և խոհանոցի գործերը կը տեսնէր։ Երկուքն ալ կը վախնային գողէ ու սուկէ, և իրկունները ճրագ չէին վառեր, հըր-դեհէ վախնալով։

Հելկումի վարդապետութեան յարողներէն շատերը ատենօք փոքր նուէրներ կը բերէին իրեն․ բայց, այն օրէն որ հաւատքնին փոխած և միւս գեղացիներէն բաժնուած էին, ոտք անգամ չէին դներ այրիին դռնէն ներս։ Ոչ ոք կրնար ըսել թէ այրին հասկցած էր ասոր պատճառը․ և ոչ ոք կրնար ըսել թէ մինչև իր ականջին ալ եկած հասա՞ծ էին գաղթողներու մասին տարածուած շշուկները։

Օր մը, պառաւը հրամայեց իր սպասուհիին երթալ ձի ու կառք բերել, որովհետև կը փափաքէր պտոյտ մը կատարել։ Սպասուհին ապշահար, փորձեց քիչ մը ընդդիմանալ, բայց պառաւը քարէ մը աւելի խուլ մնաց։ Միմիայն աջ ձեռքին ցուցամատը վեր բարձրացուց օդին մէջ և յայտարարեց․

— Կառքով դուրս ելլել կուզեմ, Սառա՛ Լէնա, գնա կառք մը ու ձի բեր։

Սառա Լէնան ստիպուեցաւ հնազանդիլ և

վազեց երէցին քով՝ յարմար կառք մը խնդրելու։ Ցետոյ, ահագին չարչարանքով մաքրեց մուշտակէ հին վզնոց մը և թաւիշէ գլխարկ մը, որոնք ետևէ ետև քսան տարի անգործածելի մնացած էին՝ քափուրի մէջ պահուած։ Վերին աստիճանի դժուարին բան մը եղաւ նաև ծերունի կինը սանդուխներէն վար իջեցնելն ու կառքին մէջ տեղաւորելը։ Այնքան դիւրաբեկ դարձած էր խեղճ կինը՝ որ կըսես թէ փչելով ճրագի մը պէս կրնար մարիլ։

Կառքին մէջ տեղաւորուեցաւ թէ չէ՝ հրամայեց կառապանին որ ձիերը մորակէ դէպի Ինկմարսկարտ։

Ինկմարսկարտի մէջ ալ քիչ չ՛զարմացան այս այցելութենէն։ Տնեցիները դուրս ելան, վերցուցին զ՛ինք զգուշութեամբ և տարին մեծ սրահը՝ ուր բազմաթիւ Հելկումեաններ հաւաքուած էին սեղանին շուրջ, որովհետև անոնք սովորութիւն ըրած էին միասին ճաշել՝ խմբե-լով թէյ և ուտելով բրնձէ և ուրիշ տեսակ թեթև կերակուրներ, որպէսզի կարողանան դիւրութեամբ ճամբորդել անապատին մէջէն։

Սենեակին ամէն ծերունի կինր մէկ ակնար-կով ընդգրկեց ներկայ եղող բոլոր անձերը։ Ա. նոնցմէ ոմանք փորձեցին խօսել իրեն հետ, բայց բառ մը անգամ չի լսեց ինք։ Վեր վեր-ցուց ձեռքը և սա խօսքերն ըսաւ յաճախ խու-լերու յատուկ չոր ու կարծր ձայնովը։

— Դուք ա՛լ չ՛էք գար իմ քովս, ուստի ես եկայ ձեր քով՝ ըսելու համար թէ պէտք չ՛է որ մեկնիք Երուսաղէմ։ Գէշ քաղաք մըն է անիկա․ հոն է որ զոհեցին մեր Փրկիչը։

Քարին ուզեց պատասխանել, բայց ծերունի կինը շարունակեց՝ առանց լսելու զ՛այն․

— Գէշ քաղաք մըն է անիկա, չար մարդերով լեցուն։ Հո՛ն է որ խաչեցին Յիսուս։ Ես հոս եկայ, որովհետև այս տունը միշտ բարի տուն մը եղած է. ինկմարսօնը յարգելի անուն մը եղած է. միշտ յարգելի անուն մը եղած է անիկա։ Դուք պէտք է որ մնաք մեր գեղին մէջ։

Յետոյ, դարձուց կռնակը և դուրս ելաւ։ Անիկա ըրած էր՝ ինչ որ կարելի էր ընել, և կրնար մեռնիլ խաղաղութեամբ։ Վերջին գործն էր որ կեանքը պահանջած էր իրմէ։

Քարին լացաւ, երբ ծերունի կինը ծառուղին հասաւ։

— Իրա՛ւ աղէկ բան չէ գուցէ մեկնիլը, մրմնջեց անիկա։

Եւ գոհ էր միևնոյն ատեն որ այրի երէցկինը ըսաւ.«ինկմարսօնը միշտ յարգելի անուն մը եղած է։»

Առաջին ու վերջին անգամն եղաւ ասիկա, ուր տեսնուեցաւ Քարին ինկմարստօթէրի վարանումը՝ սուրբ ձեռնարկին առջև։

VIII

ՄԵԿՆՈՒՄԸ

Յուլիսի գեղեցիկ առտու մը՝ կառքերու և սայլերու երկար շարոց մը մեկնեցաւ ինկմարսայլերէն։ Երուսաղէմի ուխտաւորները վերջապէս աւարտած էին իրենց պատրաստութիւնները և ճամբայ կլլնային դէպի կայարանը։

Երբ երկայն շարոցը ճեղքեց գնաց գեղէն, անցաւ խեղճուկ հիւղակի մը առջևէն՝ որուն անունն էր Նիքէյսմիրա։ Հոն կը բնակէին անպիտան մարդիկ, քիչ մը մարդկային այն դիրաէն՝ որ առաջ կուգայ, երբ բարին Աստուած իր աչքերը անդին կը դարձնէ և ուրիշ բանով կը զբաղի։ Հոն կային աղտոտ և ցնցոտապատ լաճեր որ առտուընէ մինչև իրկուն անցող-դարձողներուն հայհոյանք կ՚ընէին, պառաւ մը՝ ծերուկին մը, որ սովորաբար նստած կըլլար ճամբուն

եզերքը, և էրիկ մը ու կնիկ մը՝ որ միշտ կը կռուըտէին ու զիրար կը ծեծէին։ Մարդ չէր տեսեր երբեք անոնց աշխատիլը. ու գիտցող չի կար թէ՝ անոնք շատ աւելի գողութեա՞մբ կապրէին թէ մուրացկանութեամբ։

Երբ գաղթողներու շարոցը անցաւ այս խեղճ ու թշուառ հիւղին, այս տեսակ մը աւերակին առջևէն՝ ուր կարծես տարիներ ծուխ ու անձրևը թագաւորած էին, ծերունի կինը տնկուած էր ոտքի վրայ՝ ամուր և ուղիղ, այն տեղը՝ ուր սովորաբար իր գինովութիւնը կօրօրուէր քրթմնջելով. և չորս մանուկներ կանգնած էին անոր քովը, չորսն ալ լուացուած, սանտրուած և կարելի եղածին չափ մաքուր հագուած։

Երբ առաջին սայլակին մէջ նստողները տեսան զ'անոնք, դանդաղեցուցին իրենց գընացքը և անոնց առջևէն այնքան կամաց ոտքով մը սկսան անցնիլ՝ որ ձիերը հազիւ թէ կը քալէին։ Եւ ուխտաւորները սկսան լալ ափ ափ, մեծերը լռին հեծեծանքներով, մանուկները ճիչերով։ Անոնք չի կրցան հասկնալ թէ ի՛նչու ոչ մէկ բան այնքան արցունք խլած էր իրենցմէ՝ որքան Լէնան, այդ մուրացկանը, երբ տեսան զ'այն ոտքի կանգնած, թշուառ ու վատուժ խրամին եզերքը։ Տակաւին այսօր ալ իրենց աչքերը կը թրջին՝ երբ կը յիշեն թէ այդ օրը անիկա բերանը օղի չ'էր առած և դուրս ելած ու ամուր ոտքերով կանգնած էր, լուացած ու սանտրած իր մանուկները՝ որպէսզի յարգանք մը ընէ իրենց մեկնումին համար։

Երբ որ անցան իրենք, Լէնան, մուրացկա՛ն կինը, ինք ալ սկսաւ լալ։

—Անոնք երկինք կերթան՝ Յիսուսի հանդիպելու, ըսաւ անիկա իր զաւակներուն։ Անոնք երկինք կ'երթան, իսկ մենք պիտի մնանք հոս, ճամբուն եզերքը։

* * *

Երբ կառքերու և սայլերու երկայն շարոցը անցաւ գեղին կէս հողերէն, հասաւ շարժական կամուրջը՝ որ կ'օրօրուէր գետին ջուրերուն վրայ։ Դժուարին տեղ մըն էր ասիկա։ Պէտք էր իջնել ցից զառիթափէ մը. յետոյ, կամուրջին մէջտեղը տեսակ մը աղեղ կձևացնէր՝ նաւակներու և փայտէ լաստերու անցքին համար. իսկ միւս եզերքը այնպիսի դերբուկ կերպով վեր կը բարձրանար զարափը՝ որ մարդ ու ձի կը սարսռային։ Ասոր վրայ աւելցուցէք որ կամուրջին գերանները շուտ շուտ կը փտէին և անդադար վերանորոգուիլ կ'ուզէին։ Սառոյցի հալքը գիշեր ցորեկ կը սպառնար կտոր կտոր ընել զ'այն, և գարնանային առատ ջուրերը իրենց յորդած ատեն՝ շատ անգամ կտորուանքներ կը խլէին անկէ, որոնք կը քշէին կը տանէին մինև Պէրկսանայի Դարբնոցներուն ջրվէժները։

Բայց գեղացիները հպարտ էին և ուրախ՝ այդ կամուրջն ունենալնուն համար։ Մտածեցէք որ՝ եթէ չունենային, ամէն անգամ գետին մէկ ափէն միւսն անցնելու համար պէտք պիտի ըլլար գետանաւ մը կամ նաւակ մը։

Կամուրջը ճկեցաւ և ճռնչեց գաղթականներու բեռին տակ, և ջուրը՝ որ կը պղպջար գերաններուն մէջէն, տղմոտեց ձիերուն ոտքերը։

Ամէնքն ալ մեծ յուզում մը զգացին՝ որ վերջին անգամ կ'անցնէին անոր վրայէն: Մինչ տուները, արտերը և անտառները բաժնուած էին զանազան տէրերու մէջ, այս կամուրջը ամէնուն ստացուածքն էր. ուստի, իրենց վիշտը շատցաւ այն միևնոյն զգացման տակ՝ որ կը զգային համաշունչ սրտով մը:

Բայց, միայն այս կամո՞ւրջն ունէին հասարակաց: Իրենց ամէնուն ստացուածքը չէ՞ր նաև այն բոլորը՝ ինչ որ իրենց նայուածքները կը տեսնէին այս շարժական կամուրջէն. իրենց ամէնունը չէ՞ր այս լայն գետը՝ որ հովիտներուն մէջէն մինչև լեռները կը թաւալէր իր խաղաղ և ամառուան մը պայծառութեանը պէս լուսաճաճանչ իր ալիքները: Իրենց ամէնուն ստացուածքը չէ՞ր սա՛ եկեղեցին, որ կը բարձրանար հեռո՛ւն, ցարասիներուն ետևը, սա ճերմակ և գեղեցիկ դպրոցը և սա երիցատունը: Ի՛րենցն էին այդ բաները. անոնք խորապէս դրոշմուած էին իրենց աչքերուն մէջ. ու ասկէ ետք ա՛լ չ'պիտի տեսնէին զ'անոնք անգամ մըն ալ:

Երբ հասան կամուրջին մէջտեղը, երգեցին կրօնական երգ մը.

«Մենք զ'իրար պիտի տեսնենք հեղ մըն ալ, հեղ մըն ալ մենք զ'իրար պիտի տեսնենք, Եդեմին մէ՛ջ»:

Մէկը չի կար զ'իրենք լսող. բայց անոնք կ'երգէին կապոյտ բլուրներուն համար, գետին ջուրերուն համար, ծառերուն համար՝ որոնք գեփիւռը վար կը խոնարհեցնէր իրենց անցած ատենը: Եւ յուզումէն սեղմուած իրենց կոկորդէն դուրս ելաւ միաս բարովի սա երգը.

«Լսէ՛ մեզի, գեղեցիկ ու քաղցր հայրենիք.

լսեցէք մեզի, թաւախիտ պուրակներու մէջ ծածկուած կարմիր ու ճերմակ տուներ, սիրակա՛ն տուներ, դաշտե՛ր ու արօտներ, դո՛ւն ալ երկար հովիտ՝ որ դալարիքդ եկեր հերձեր է ճկուն գետը: Խնդրե՛նք Աստուծմէ՝ որ հեղ մըն ալ զ'իրար տեսնենք: Երանի՛, ա՛խ, երանի՛ որ կարող ըլլայինք զ'իրար տեսնել երկինքին մէջ»:

* * *

Երբ կառքերու և սայլակներու երկար շարոցը անցաւ կամուրջէն՝ ճեղքեց մտաւ եկեղեցիին թաղը:

Գերեզմաննոցին մէջ կրանիթէ լայն սալ մը կար՝ գորշագոյն, տափակ և ժամանակէն մաշած, անանուն ու անթուական և որ սակայն անյիշելի ատեններէ ի վեր գիտէին թէ անոր տակ թաղուած էր Լիունկարտներու ընտանիքէն գեղացի մը: Ատենօք, իրենց մանկութեան ատեն՝ երբ Լիունկ Պըյօրն Օլօֆսօն Երուսաղէմ ուխտի կ'երթար՝ եկած նստած էր այդ քարին վրայ՝ իր եղբօրը Փէրի հետ: Թէև իրարու հետ շատ լաւ էին, բայց յանկարծ վէճի բռնուած և իրարու դէմ զայրացած էին: Իրենց յիշողութենէն ելած էր թէ ի՛նչ բանի համար կռուած էին այն ատեն մէկմէկու հետ, բայց ինչ որ երբեք մոռցած չ'էին, սա՛ էր թէ իրենց կռուին տաք ատենը՝ յամր և որոշ հարուածի մը ձայնը լսած էին իրենց նստած քարին վրայ: Երկու մանուկները ձայներնին վար դրած էին և իրարու ձեռքէ բռնելով՝ փախեր էին: Եւ անկէ ի վեր՝ ինչքան որ այդ քարը կը տեսնէին, միշտ կը յիշէին այդ պատահարը:

Երբ Լիունկ Պըյօրն գերեզմաննոցն հասաւ,

նշմարեց որ Փէր եկած նստած է նոյն սալաքարին վրայ, գլուխը առած իր ձեռքերուն մէջ։ Կեցուց իր ձին, նշան ըրաւ ընկերներուն՝ որ սպասեն իրեն, յետոյ վար իջաւ կառքէն, սրունքները բանալով անցաւ պզտիկ պատին վրայէն և գնաց նստեցաւ իր եղբօրը քով։

Եղբայրը խկոյն ըսաւ իրեն.

— Ագարակը ծախեցի՛ր, Պըյօ՛րն։

— Այո՛, Աստծու տուի ունեցած չ'ունեցածս։

— Օ՜հ, յարեց եղբայրը մեղմօրէն, անիկա քուկդ չ'էր սակայն։

— Ի՞նչպէս։

— Ո՛չ, անիկա ընտանիքին կը պատկանէր։

Լիոււնկ Պըյօրն պատասխան չի տուաւ. գիտեր թէ՝ այն վայրկեանէն որ եղբայրը եկած նստած էր հոն, երկուքն ալ հաշտարար խօսքերէ զատ ուրիշ բան պիտի չ'կրնային ըսել իրարու։ Ուստի, կը սպասէր լուին ու աներկիւղ։

— Ագարակը ես նորէ՛ն գնեցի, ըսաւ Փէր։

Լիոււնկ Պըյօրն դողդղաց։

— Ա՜հ, սիրտդ չ'էր դիմանար որ անիկա ելլէր ընտանիքին ձեռքէն։

— Ես այդքան հարուստ չ'եմ որ միմիայն այդ նպատակին համար գնէի, պատասխանեց եղբայրը։

Պըյօրն անոր երեսը նայեցաւ՝ հարցական ձևով մը։

— Գնեցի զ'այն՝ որպէսզի օրին մէկը բան մը ունենաս գտնելիք հոս։

Պըյօրն զգաց թէ արցունքները կը լեցուին կոկորդին մէջ և հեկեկաց բարձրաձայն։

— Գնեցի՝ որպէսզի զաւակներդ օրին մէկը

տեղ մը ունենան հոս, երբ վերադառնան...։

Պըյօրն փաթթուեցաւ եղբօրը վզին և փայփայեց զ'այն։

— ...Եւ, շարունակեց Փէր, որպէսզի իմ սիրելի հարսս գուցէ օրին մէկը մխիթարութիւն մը ունենայ՝ մտածելով թէ տուն մը և օճախ մը ունի միշտ այստեղ։

— Փէ՛ր, ըսաւ Պըյօրն, ելի՛ր կառքին մէջ և մեկնի՛ր Երուսաղէմ. ե՛ս հոս պիտի մնամ։ Դուն ինծմէ աւելի արժանի ես երթալու Աւետեաց Երկիրը։

— Ո՛չ, պատասխանեց Փէր յուզեալ ժպիտով մը, իմ տեղս հոս աղէկ է։

Այն ատեն, Պըյօրն իր գլուխը ձգեց եղբօրը ուսին վրայ։

— Հիմա, ներէ՛ ինծի, ըսաւ։

Ոտքի ելան երկուքն ալ և իջան ճամբան։ Փէր ուժգին սեղմեց Պըյօրնի կնոջ ձեռքը։

— Ագարակը նորէն ե՛ս գնեցի, ըսաւ անոր. լաւ գիտցիր որ ուզած ատենդ կրնաս վերադառնալ։

Յետոյ, բռնեց եղբօրը զաւակներէն երիցագոյնին ձեռքը.

— Յիշէ՛ թէ հող մը ունիս այս տեղ՝ որ քու սեփականութիւնդ է և կրնաս վերադառնալ օր մը հայրենիքդ։

Եւ այսպէս գնաց մէկիկ մէկիկ եղբօրը բոլոր զաւակներուն, մինչև՝ փոքրիկ Իրիքին քով՝ որ հազիւ երկու տարեկան էր և լեզու չէր հասկընար։

— Մի՛ մոռնաք ամէնքդ ալ, պզտիկնե՛ր, ըսելու միշտ պզտիկ Իրիքին՝ թէ ագարակ մը և հողեր ունի այստեղ, որոնց կմնայ գալ տէր

Ըլլալ օր մը՝ երբ ուզէ:

Եւ կորաւանը չարունակեց իր ճամբան:

* * *

Երբ կառքերու և սայլերու երկար շարոցը անցաւ գերեզմանոցէն, հարկ եղաւ որ ճեղքէ ծնողքներու և բարեկամներու խուռն բազմութիւն մը: Ամէնքն ալ ձեռք կմեկնէին և կուզէին մնաս-բարովի քանի մը խօսք ըսել. Աւելի հեռուն, ճամբուն վրա խռնուած էին այս մեկնումը դիտելու եկած հետաքրքիրներ: Շատեր ելած էին վերնագաւթակներուն վրայ, ուրիշներ վար կախուած էին պատուհաններէն և շատեր ալ կը մագլցէին ձողափակերէն վեր: Իսկ անոնք որ գեղէն դուրս կը գտնուէին, ելեր էին բլուրներու և բլրակներու վրայ՝ նշաններ ընելով և բաներ շարժելով:

Կառքերու երկար շարոցը դանդաղօրէն անցաւ քէհեա Լարս Թլէմանցոնի տանը առջև: Հո՛ն, Թափորը կանգ առաւ և Կիւնհիլտ վար իջաւ, մնաս բարով ըսելու իր ծնողքին:

Աղջիկը, մեկնելու որոշում տուած օրէն ի վեր, բնակեր էր այլևս Ինկմարսկարտի մէջ: Նախամեծար համարած էր հոն բնակիլ՝ քան թէ տուն երթալ և ամէն օր վէճ ու խօսք ունենալ իր ծնողքին հետ, որոնք հակառակ էին իր տարագրութեան գաղափարին: Երբ ոտքը գետին դրաւ, տեսաւ անմիջապէս որ տունը ամայի և կարծես մեռած էր: Մէկը չ'երևնար բակին մէջ, մարդ չկայ պատուհանները և երկաթորմն ալ փակ: Անցաւ այն ատեն քարակի մը վրայէն և գնաց մինչև մուտքի դռան առջև՝ որ գոց էր. գոց էր նոյնպէս խոհանոցին

դուռը, որ ներսէն կը փակուէր մղլակով մը: Թիչ մը ատեն պարապ տեղը հրելէն ետք, Կիւնհիլտ փայտի կտոր մը խոթեց ճեղքին մէջ և վեր վերցուց մղլակը:

Խոհանոցը պարապ էր. պարապ էին նաև մեծ սրահը և փոքր սենեակը: Եւ որովհետև չ'էր ուզեր մեկնիլ՝ առանց նշան մը ձգելու թէ հանդիպած է տունը, աղջիկը բացաւ այն գրասեղանը՝ ուր հայրը սովորութիւն ունէր դնելու մելանն ու գրիչները: Անմիջապէս չի գտաւ մելանը, բայց խառնելով խառնելով գզրոցները հանդիպեցաւ իրեն շատ ծանօթ մէկ արկղիկին: Մայրը նուէր առած էր այդ արկղիկը՝ իր հարսնութեան օրը և զ'այն շատ անգամներ ցոյց տըւած էր իր փոքր աղջկան: Ճերմակ լէօքէ շինուած տուփ մըն էր, որուն շուրջ բոլորը կային ծաղկենկարներ: Կափարիչին վրայ կը տեսնուէր հովիւ մը՝ որ սրինգ կը նուագէ իր ճերմակ գառներու նախիրին: Ատենօք Կիւնհիլտին մայրը անոր մէջ կը պահէր իր ամենէն սիրելի յիշատակներն ու իր ամբողջ հարստութիւնը, - իր մօրմէն մնացած նշանի մատնին, իր հօրմէն մնացած հին ժամացոյցը և իր ականջին օղերը: Երբ աղջիկը բացաւ տուփը, անոր մէջ գոհարեղէններուն տեղ գտաւ նամակ մը, պարզ նամակ մը, այն նամակը՝ որ Կիւնհիլտ երկու տարի առաջ գրած էր Մօրա ճամբորդած միջոցին և ուր կը պատմէր ծովուն վրայ իրեն պատահած արկածը: Նաւակը շրջուած էր և իր ընկերներէն շատերը խեղդուած էին, այնպէս որ իր ծնողքը կարծած էին թէ ինք ալ խեղդուած է: Բայց ահա այդ նամակը փարատած էր անոնց երկիւղը. և Կիւնհիլտ հասկցաւ որ իր մայրը

Երբ ստացած էր զ'այն, այնքան ուրախ եղած էր որ ամէն բան հանած էր իր հարսանեկան տուփին մէջէն, ու անոնց տեղը դրած էր այդ միակ նամակը, իբրեւ իր ամենէն թանկագին բանը։ Աղջիկը մեռելի մը պէս դեփ դեղին կտրեցաւ եւ իր սիրտը սկսաւ ճմլուիլ։

— Գիտեմ որ մայրս սպաննած կըլլամ հիմա, մրմնջեց անիկա։

Չ'ուզեց բան մը գրել այլեւս. դուրս ելաւ փալ թափալ եւ լռին բարձրացաւ սայլին վրայ։ Ճամբու ամբողջ երկայնքին, նստած անշարժ, ձեռքերը ծունկերուն վրայ եւ աչքերը յամառօրէն սեւեռած դատարկութեան մէջ՝ կը խորհէր.

«Ես սպաննեցի մայրս։ Ասկէ ետք այլեւս ուրախութեան ոչ մէկ օր պիտի ունենամ՝ նոյնիսկ Սուրբ Տեղին վրայ։

***

Այն ամբողջ տեւողութիւնը՝ որ կառքերու ու սայլերու երկար շարքը կ'անցնէր գեղին հողերուն մէջէն, ո՛չ արտերուն մէջ քաղհանք ընող մը, ոչ ալ քաղուած չոր խոտերը փոցխող մը կար։ Այդ առաւօտ աշխատանքը դադար առած էր, որովհետեւ ամէնքն ալ իրենց կիրակնօրեայ հագուստներով, ոմանք հետի, ոմանք կառքով, ճամբուն վրայ կը սպասէին ուխտաւորներուն՝ որպէսզի քիչ մը տեղ ընկերանան անոնց։ Շատեր ընկերացան մղոն մը տեղ, ուրիշներ՝ երկու մղոն, ու շատեր ալ մինչեւ կայարանը։

Մէկ մարդ մը միայն կ'աշխատէր, ան ալ Հօք Մաթս Էրիքսոնն էր։ Չէր ուզած հնձել իր մարգագետինը — ինչ որ հասարակ խաղի մը

չափ դիւրին բան էր իրեն համար —, այլ՝ իր երիտասարդութեան օրերուն նման, ձեռք զարկած էր քարերը խակցնելու կտոր մը հողի մէջէն եւ զայն ալ արտի վերածելու։

Կարաւանը անցած միջոցին՝ Գաբրիէլ ճամբէն նշմարեց իր հայրը, որ կ'երթար կուգար իր ցանկապատին մէջ, կը վերցնէր քարերը, կը փոխադրէր զ'անոնք եւ այնպէս ուժով կը նետէր որ՝ կը կոտրտէին ու կայծ կը հանէին։ Հօք Մաթս գլուխն անգամ վեր չի վերցուց։ Կը դատէր իր քարերուն հետ, եւ անոնցմէ ոմանք ա՛յնքան ծանր կ'երեւային որ Գաբրիէլ զարմացաւ թէ ա՛ղէկ որ չ'էր կոտրեր իր հօրը մէջքը։ Երիտասարդը՝ ուշադրութիւն չ'ընելով ձիուն, որուն սանձէն բռնած էր, կը քալէր՝ աչքերը դարձուցած ծերունիի հօրը վրայ,

Հօք Մաթս կ'ողնաբեկէր՝ նման այն հեռաւոր օրերուն, ուր իր զաւակը փոքր էր եւ ինք կը կռուէր հողին հետ խոշորցնելու համար իր արտը։ Կառքերու շարքը հեռացած չ'էր տակաւին՝ երբ փրթաւ մորիկ մը եւ սկսաւ գալ խոշոր անձրեւ մը։ Մինչ ամէն մարդ կը վազէր ծառերու տակ, Հօք Մաթս վարանեցաւ վայրկեան մը, ու յետոյ սկսաւ նորէն վերցնել իր ծանր քարերը։

Կէսօրուան դէմ իր աղջիկը երեւցաւ տանը սեմին վրայ եւ յայտնեց թէ ճաշը պատրաստ է։ Հօք Մաթս անօթի չ'էր, բայց եւ այնպէս մըտածեց հեղ մը որ պէտք է կտոր մը բան առնէր բերանը, սակայն վախնալով որ իր աշխատանքը պիտի ընդհատէ՝ աւելի կատաղօրէն շարունակեց իր գործը։

Իր կինը Գաբրիէլին ընկերացած էր մինչեւ

կայարանը․ վերադարձաւ ուշ ատեն, մին մինակ, նստած սայլակին մէջ և մօտեցաւ ամուսնին՝ ըսելու համար անոր թէ հիմա իրենց զաւակը շատ հեռացած էր արդէն․ բայց ծերունին աւելի ուժով մխեց իր քլունկը ժայռերուն մէջ և շարունակեց երթալ ու գալ առանց լսելու կնոջ խօսքերը։

Դրացիները ալ ամբողջ օրը լռին դիտած էին զայն, դուրս կ'ելլէին և ներս վերադառնալով կ'ըսէին․ «Հո՛ն է տակա՛ւին»։

Հասաւ իրիկունը՝ պայծառ ու տժգոյն, և Հօր Մաթիւ կ'աշխատէր անդադար․ կարծես վիշտը կը սպասէր որ շունչ մը առնէ անիկա՝ որպէսզի զգետնէ զայն։ Իր կինը եկաւ անոր քով և կանգնած անշարժ՝ կը նայէր անոր։ Արօտավայրի գետինը խակուած-մաքրուած էր․ քարերու կոյտը խոշորցած էր, բայց մարդը՝ միշտ ծռած իր հսկայական բեռան տակ, կ'անցնէր ու կը դառնար վերջալուսային ստուերին մէջ։

Մթութիւնը դարձաւ խորունկ․ ա՛լ չէ՛ր տեսնուեր անիկա, բայց կը լսուէր անոր աղմուկը․ և երբ կը նետէր իր քարերը՝ կայծերը կը ցայտէին իր շուրջը։

Յանկարծ, երբ տեղէն կը հանէր ժայռի կտոր մը, քլունկը փախաւ իր ձեռքէն։ Ծռեցաւ որ վերցնէ, բայց ահա գետին փռուեցաւ ամբողջ մարմնովը և դեռ ոտքի ելլել իսկ չ'խորհած, քնացեր էր․․

* * *

Երբ կառքերու և սայլերու երկար շարոցը անցաւ վերջապէս եկեղեցիի թաղէն ու հովիտէն, մտաւ փոքր անտառի մը մէջ։ Այդ անտառին մէջ էր որ պանդխտողները առաջին անգամ տեսան թէ երկու մարդիկ ընկերացած էին իրենց՝ որոնք չ'էին ճանչնար։ Ճամբան՝ ամբողջովին զբաղած ըլլալով ճաս-բարոճներով ու երթաս-բարոճներով, երբեք ուշադրութիւն չ'էին դարձուցած այս անծանօթ սայլակին, բայց անտառին խաղաղութեան մէջ իրենց աչքին ինկաւ անիկա։ Երբեմն անիկա առաջ կ'անցնէր բոլոր սայլերէն և կարաւանին գլուխը կ'ըլլար, երբեմն կը դանդաղեցնէր իր ընթացքը և ետ կը մնար միւսներէն։ Աշխատանքի հասարակ սայլ մըն էր անիկա, նման այն սայլերուն՝ որ ամէն օր կը գործածուին բանջարավարութեան համար։ Եւ ահա ճիշդ այս պատճառով էր որ կարելի չ'էր գտնել թէ որո՛ւ սայլակն է ան։ Անոր ձին ճանչցող մըն ալ չիկար։ Զ'այն վարողն էր կորաքամակ, խորշոմած ձեռքերով և երկայն, ճերմակ մօրուքով ծերունի մը։ Ապահովաբար օտարական մըն էր այդ մարդը։ Բայց, իր քով կին մը նստած էր՝ որ չ'էր կրնար օտարական մը ըլլալ․ մարդ չ'էր կրնար տեսնել իր դէմքը, որովհետև սև շալ մը առած էր իր գլխուն և ձեռքերով զ'այն այնպէս բռնած էր իր երեսին դէմ՝ որ աչքերն անգամ կարելի չ'էր նշմարել։ Անոր դիրքէն ու հասակէն դատելով՝ ոմանք կ'ըսէին թէ սա՛ է, ոմանք ալ թէ՝ նա։

— Կինհիլա անմիջապէս ըսաւ․

— Իմ մա՛յրս է։

Իսկ Իսրայէլ Թոմասոնի կինը կը պնդէր թէ իր քոյրն է, մինչ Թիմս Հալֆօր կ'ենթադրէր թէ՝ պառաւ Եւա Կիւնարստօթէրն է, որուն հրաւէր եղած չ'էր սակայն իրենց հետ գալու։

Յայլակը ընկերակցեցաւ իրենց՝ ամբողջ ճամբու ընթացքին և կինը ոչ իսկ մէկ անգամ գլխէն չի վերցուց կամ երեսէն չի հեռացուց իր քօղը։ Ոմանք կ՚ըսէին որ իրենց սիրելիներէն մէկն է, ուրիշներ ալ թէ՝ վախնալիք մէկն է․ իսկ մեծամասնութեան կարծիքն ան էր թէ, գիւղը ձգած իրենց սիրելիներէն մէկն է։

Շատ անգամ, ճամբուն լայն տեղերը երկու անծանօթներն առաջ անցան դարձեալ միւս կառքերէն, բայց անմիջապէս կեցնելով իրենց ձին՝ թողուցին որ կարաւանը նորէն առաջ անցնի իրենցմէ։ Այդ ատենները խորհրդաւոր կինը կը մնար նստած, երեսը դարձուցած պանդըխտողներուն կողմը, և չ՚էր դադրեր նայելէ անոնց, բայց ո՛և է նշան մը չ՚ըրաւ մէկուն և մարդ չի կրցաւ գիտնալ թէ ո՛վ էր ծածկուողը իր սև քօղին տակ։

Անիկա ընկերացաւ անոնց՝ մինչև կայարանը։ Կը յուսացուէր որ հոն կարելի պիտի ըլլայ տեսնել իր դէմքը։ Բայց, երբ վար իջան կառքերէն և ետևնին դարձան, աներևոյթ եղած էր անիկա։

Սայլերու և կառքերու երկար շարոցը վերջապէս հասած էր կայարանը։

Նոր շինուած էր երկաթուղին, և կայարանը՝ նոփ-նոր, կը բարձրանար մաքրուած, խարկուած ընդարձակ գետնի մը վրայ՝ անտառին ամենամռայլ ծոցին մէջ։ Ո՛չ արտ, ո՛չ պարտէզ․ ընդարձակ ամայի տեղեր միայն՝ ուր դեռ նոր կտրուած են ծառերու բուները և դիզուած կը մնան արմատներ ու խիճեր, և ուր յուսալի է որ ընկերութիւն մը պիտի գայ շուտով շէնքեր շինելու։ Արդէն այս առանձնութեան մէջ

շինուած են երկու խանութ, լուսանկարչի աշխատանոց մը և պանդոկ մը։ Հոս ալ կը հոսէր Տալէֆը․ վայրի և կատաղի՝ դուրս կ՚ելլէր խոր անտառներէ և կը գահավիժէր փրփրալից փոքր հեղեղներով։ Պանդխտողները չ՚էին ճանչնար այն լայն ու վեհաշուք գետը՝ որմէ բաժնուած էին առաւօտուն։ Հոս այլևս չի կային ծիծղուն հովիտներ՝ որ դիտէին։ Ամէն կողմէ եղևիններու անտառախիտ բարձրութիւններ կը փակէին իրենց հորիզոնը։

Երբ վար իջեցուցին մանուկները, անոնք սկսան լալ։ Դեռ երէկ խիստ ուրախ էին՝ որ Երուսաղէմ կերթան․ բայց, տունէն մեկնումը արցունք քաղած էր անոնց աչքերէն և ահա կայարանը տեսնելով, ճշմարիտ յուսահատութեան մը մատնուած էին։

Անոնց ծնողքները՝ զբաղած ըլլալով ճամբորդական պայուսակները կառախումբին բեռնակառքը փոխադրելով՝ թողուցեր էին զ՚իրենք իրենց գլխուն։ Այն ատեն, շրջանակ մը կազմելով խորհուրդ ըրին և մեծերը պզտիկներուն ձեռքէն բռնելով, հեռացան մանուկները՝ երկուք առ երկուք, մէկը մեծ և մէկը պզտիկ։ Աւազներուն և կորթ հողերուն մէջէն բռնեցին անոնք դէպի մռայլ անտառը տանող միևնոյն ճամբան։

Կին մը յանկարծ խելք ըրաւ որ անոնց քիչ մը ուտելիք տայ և կանչեց զ՚անոնք։ Եւ պատասխան տուող չ՚եղաւ․ այն ատեն այր մարդիկ սկսան վազել այն հետքերուն կողմը՝ որ բոլոր այդ փոքր ոտքերը թողած էին աւազին վրայ։

Նշմարեցին զ՚անոնք անտառին մէջ, որ կը քալէին միշտ երկուք առ երկուք, մէկը մեծ

ա մէկը պզտիկ։

Երբ հեռուէն ձայն տալով կանչեցին զ'անոնք, մանուկները գլուխնին եւս չի դարձուցին եւ շարունակեցին քալել։ Վազեցին, հասան անոնց. այն ատեն՝ անոնք փորձեցին փախչիլ, բայց պզտիկները այլեւս ուժ չ'ունէին հետեւելու միւսներուն, ուստի կանգ առին ամէնքն ալ ճամբուն վրայ՝ դողդղացին եւ արտասուալից։

— Ո՞ւր կ'երթաք այսպէս, մանո՛ւկներ։

Ամենէն փոքրերը սուր ճիչեր արձակեցին, իսկ մանչերուն երիցագոյնը պատասխանեց։

— Մեր ի՛նչուն պէտք Երուսաղէմ երթալը. մենք կ'ուզենք տուն վերադառնալ։

Եւ տակաւին երկար ատեն՝ կայարանը բերուելէ եւ վակոններուն մէջ տեղաւորելէ ետքն ալ, անոնք կը հեծկլտային ու կը կրկնէին.

— Մեր ինչո՛ւն պէտք Երուսաղէմ երթալը, մենք կուզենք տուն վերադառնալ։

ՆԱԽԱԲԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Ահա վէպ մը տարօրինակ քմայքի եւ խորին գիտողութեան, չափազանց շուէտական եւ ալ աւելի մարդկային, աքանչելի եւ պարզ, արտագին ու ալբերգական, կազմուած կարճ փիակներով՝ ուր կը վերբերին միեւնոյն անձնաւորութիւնները եւ որոնցմէ ամէն մէկը ուրիշ բան չ'է՝ եթէ ոչ միեւնոյն հարցին եւ միեւնոյն դէպքին ցուցադին, նկարչագեղ կամ հրապուրիչ երեսը, — վէպ մը այնքան յանկուցիչ՝ որքան քիչ վիպական, գեղջկական փոքր ա՛ղբիւր՝ որուն գուլալութիւնը կը ցոլացնէ, զով կամ խորշոմերես, ծիծղուն կամ լուրջ, աշարեկ կամ զմայլուն, հնամենի գիւղի մը բոլոր դէմքերը եւ հնամենի գաւառի մը ամբողջ բնութիւնը եւ անոր ամբողջ երկինքը. այսպէ՛ս է Տիկ. Սէլմա Լակէրլօֆի գործը՝ զոր կը ներկայացնենք ֆրանսացի ընթերցողին, համոզուած թէ՝ ամէն օր մեր գրականութիւնն հարստացնող օտար վէպերուն մէջէն ոչ մէկը պիտի կրնար թողուլ աւելի թափանցանց բանաստեղծութեան մը եւ աւելի կենդանի իրականութեան մը յիշատակը՝ քան այս։

Պատմութիւնն է ասիկա տալէքարլեան համայնքի մը մէկ ամենահին ընտանիքին, զոր նախահայրերու ոգիին համար ունեցած իր հաւատարմութիւնը հզօր և յարգելի դարձուցած է, և զոր աւետարանչական քարոզութեան տենդը կը խորտակէ, արմատախիլ կ'ընէ, կը խլէ իր հողէն, կը նետէ օտարութեան մէջ՝ բացի իր անդամներէն մէկէն, Երուսաղէմի ճամբաներուն վրայ։ Թէ ի՛նչ տեսակ մարդիկ էին այդ պարկեշտ, կոշտ, պարզամիտ և լռասէր գիւղացիները, թէ ի՛նչ էր անոնց հպարտութիւնը, անոնց խուլ ցասկոտութիւնը, անոնց երևակայութեան աստիճանը, անոնց կրօնական զգացումը և անոնց ներքին կեանքը, — այդ ամէնը ցոյց կուտայ մեզի, տարօրինակ և եղերական ձևի մը տակ, վէպին այն դրուագը, որ կը ծառայէ իբրև ներածութիւն։ Բայց, մարդ հազիւ անկէ դուրս կ'ելլէ, ինչպէս պիտի ելլէր դերբուկ կիրճէ մը, և ահա տեսարանները կը յաջորդեն մէկմէկու և կուգան իրարու ետևէ՝ հունձքերու հովիտներու, պուրակներու և բլուրներու այլազանութեամբը։

Զմեռնային իրիկուն մը վարժապետի մը յարկին տակ. սիրային խոստովանութիւն մը գայլուկենիի փոքր պարտէզի մը մէջ. կնիկտեսի եկած մարդիկ՝ որ սեղանի նստած են այրիի մը տանը մէջ. մահը ծերունի գեղացիի մը՝ որ կը լուսաւորուի իր երիտասարդութեան մէկ յիշատակովը. ընտանեկան ներքին կեանքի պատկերներ՝ որոնց գոյնն ու կատարելութիւնը մեզի կը յիշեցնեն Թէնիէռի արտայայտման եղանակը։ Յետոյ, հաւատացեալներու ժողով մը՝ ուր յանկարծ կը պայթին այն բոլոր բաժանումները

որոնց սերմը կը գտնուի բողոքական եկեղեցիին մէջ—գիւղացիներու սնոտիապաշտական զարհուրանքը՝ երբ յանկարծ անտառին մէջ կիկլոպէ մը կը բռնուին—գործնական ոգիի տէր ու միսթիք բանուոր մը որ իբր առաքեալ, կ'անցնի, ճամբաներուն վրայ կեցնելով մարդիկը և իր յանկարծական ու ընտանեկան պատուական հարցումներովը կը խթէ խղճմտանքները—նախանձի բռնկումը պատանեկան սրտի մը մէջ—աւետարանչականներու մէկ ժողովը՝ ուր Աստծոյ ձայնը չ'լսող միակ հոգին ա՛ն է որ զոհաբերելիք բան չ'ունի—երիտասարդի մը և դեռահաս աղջկան մը հովուերգութիւնը, գրեթէ հոմերական, որոնք ուշադրութեամբ կը դիտեն իրենց ամուսնական տանը շինութեան ծառայելիք առաջին ծառի կոճղը—օճախ մը՝ որ կը լուսաւորուի, փուքի մը առեն, ընդունելու համար հին բարեկամ մը՝ որուն հետ աւրուած են եղեր, և անոր վերջին անգամ մըն ալ տալու համար հին բարեկամութեան պատրանքը—ծերունի գեղացի մը՝ որ իր զաւկին սիրոյն համար, կուզէ գրկուիլ իր հողէն և որ չի կրնար—աճուրդով վաճառումը, իբր մեղք համարուող վաճառումը հին ագարակի մը և իր բոլոր ապրանքներուն ու իր բոլոր թանկագին յիշատակներուն, և վաճառումը մինչև անգամ արծաթեայ կափարիչներով հին Աստուածաշունչերուն—յուսահատութիւնը դեռատի աղջկան մը՝ որ դրժուած է իր սիրոյն մէջ և որ վրէժխնդրութեան կիրքէն գրգռուած է— և վերջապէս, մեկնումը պանդխտողներուն, այդ մեկնումը՝ որուն իւրաքանչիւր հանգրուանը գեղին մէջէն՝ նոյնքան սրտայոյզ է որքան Բալվէրի մէկ կա-

յարանը:

Եւ այս այլազան տեսարանները տալու մէջ, վ՚որս չ՚են կրնար պատկերացնել այս մէկ քանի տողերը, ի՜նչ ճկունութիւն և գիւտի ի՜նչ ճոխութիւն: Ո՛չ մէկ փնտռտուք, ո՛չ մէկ ճիգ: Մանրամասնութիւնները կը ծնին առատօրէն, ճշգրիտ, միշտ բնական. կը կարծես թէ հեղինակը միայն ծռած և գետնէն ժողված է զ՚անոնք: Բմայքոտ և անփոյթ երևոյթով այս մատենագրութեան տակ՝ ամբողջ ժողովուրդի մը ընտանեկան և բարոյական կեանքն է որ կը յօրինուի ու կը զարգանայ: Իւրաքանչիւր դէպքը նման է այն նեղ փապերուն՝ որոնց մէջէն մարդուն կը յատնուի լայն բնանկար մը: Հոգիները կը թաթաւուին անտառին և հերկերուն անուշահոտութեամբը, ձիներուն գոլորշիովը և գարնան խոնաւութեամբը: Անձնաւորութիւնները, նոյնիսկ ամենէն աննշանները, կը հարկադրուին մեր յիշողութեան՝ իրենց շարժուձևերովը, իրենց դիրքովն ու շեշտովը՝ որ ամբողջ նկարագիր մը կը յայտնէ: Անոնց գիտակցութենէն է որ կը ծնին դէպքերը. անոնց կիրքերէն է որ կը բղխի գերբնականը: Անոնք կը մնան գեղացի, խոհուն և յամառ, մինչև իրենց գեղեցկագոյն զոհաբերութեանց մէջ: Կրօնական ոգին անոնց ցախաւերութեան կուտայ երբեմն չեմ գիտեր կէս քրմական ի՜նչ շնորհք մը: Եւ այն միևնոյն գաղափարները՝ որ մեզ կը տանին և մեզ կը յուզեն մեծ թատերաբեմերու վրայ, Աստծոյ սէրը, պատիւը, փառքը, հանրային կարծիքը,— կ՚առաջնորդեն նաև զ՚անոնք, կը շրջափոխեն նաև զ՚անոնք իրենց յետնեալ գաւառին մէջ, բլրակներու և անտառի

իրենց փոքրիկ լեռնահովիտին մէջ:

Զմայլելի՛ իրապաշտութիւն, բայց ամբողջովին թաթաւուն համակրութեամբ, Մարդոց և իրերու համակրութիւնը - զ՚որ այնքան յաճախ կը գտնենք հիւսիսի գրականութեան մէջ և, որ այնքան պակաս է մեր բնապաշտութեան — կը փոխակերպէ իրականութիւնը՝ բանաստեղծութեան, առանց այլայլելու զ՚այն: Բանաստեղծութիւն կը գտնուի ամէն տեղ՝ ուր որ մարդ իր սիրտը կը դնէ, ամէն տեղ՝ ուր սիրոյ յայտնատեսութիւնները կը զտեն և կը խորացընեն իմացականութեան գիւտերը: Տիկին Լակէրլօֆ կը սիրէ իր Տալէքարլիին բնութիւնը, կը սիրէ անոր գեղացիները: Բայց ինք կը պահուի անոնց ետև՝ նախանձախնդիր խնամքով մը: Գիտէ թէ հեղինակի մը ճշմարիտ անձնաւորութիւնը այնքան աւելի ինքզինք զգալի կը դարձնէ իր գործին մէջ՝ որքան նուազ երևնայ իր անձը հոն: Դուք չ՚էք հանդիպիր մէկ նկարագրութեան իսկ՝ որ արուեստագէտին կամահաճութեան թոյլ տայ միջամուխ ըլլալու անոր իսկական տաղանդին: Բնանկարները նկարագըրուած են միայն այն պահուն՝ ուր անոնք անձնաւորութեանց մէջ կը փոխակերպուին ըզգացումներու կամ գաղափարներու: Մեզի անծանօթ չի մնար անոնց հոգին կերտող ձգտումներէն և ժառանգական պայքարներէն ոչ մէկը, չէ թէ անոր համար որ՝ կանխաւ ծանուցուած են անոնք մեզի, այլ անոր համար որ մենք բաւական ապրած ենք անոնց անցեալը՝ ճանչնալու համար զ՚անոնք իրենց ներկային մէջ: Ամէն վէպ պայքարի մէջ կը դնէ աւանդութիւնն ու իտէալը, աւանդութիւնը՝ զ՚որ ոմանք սովորա-

մոլութիւն կ'անուանեն և իտէալը՝ զ'որ ուրիշներ ցնորք կը կոչեն բայց այս բառերէն մէկն անգամ արտասանուած չ'է։ Վիպասանուհի ծընած, Տիկին Լակէրլօֆ կը պատմէ և պատմել կ'ուզէ միայն։ Ինչպէս որ չի դատեր իր հերոսները, այնպէս ալ անիկա վէճի չ'ենթարկեր գաղափարները։ Այդ բանը մե՛ր, ընթերցողներուս գերն է։ Անիկա կը գոհանայ ամէն ինչ տրամադըրելի ընելով մեր աչքերու զուարճութեանը և մեր մտքի կրթութեանը։ Իր թեթև և ապահով ձեռքը կ'ընտրէ, կը պատրաստէ, կը կարգաւորէ և պատուհաններ կը բանայ լռին՝ լայն հորիզոններու վրայ։ Մենք չ'ենք տեսներ երբեք ո՛չ իր դէմքը, ո՛չ իր ժպիտները և ոչ իր արցունքները։ Որովհետև կան յաճախ լաւագոյն վէպեր՝ նման հէքիաթի այն պալատներուն, ուր հիւրերը զ'իրենք առաջնորդելու համար ուրիշ բան չ'էին տեսներ, եթէ ոչ օդին մէջ ջահակիր ձեռքերը։

ԱՆՏՐԷ ՊԷԼԷՍՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ - Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL017129

— ԳԻ՛Ն 35 ՍԷՆԹ —